

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՇՈՏ ԶԱՔԱՐԻ

**ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՆՈՐԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ  
ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ  
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՇՈՏ ԲՈՐԻՍԻ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ,  
ՊՐՈՖԵՍՈՐ

ԵՐԵՎԱՆ 2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                               |            |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------|
| <b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....</b>                                                                                                     | <b>3</b>   |
| <b>ԳԼՈՒԽ I. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՈՐԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ .....</b> | <b>9</b>   |
| 1.1. Բանկային համակարգի արդի հիմնախնդիրները և զարգացման միտումներն աշխարհում և Հայաստանում .....                              | 9          |
| 1.2. Ֆինանսական նորաստեղծությունների տեսական հիմնահարցերը բանկային համակարգում .....                                          | 32         |
| 1.3. Բանկային համակարգում ֆինանսական զարգացածության և նորաստեղծությունների միջազգային փորձի վերլուծությունը.....              | 55         |
| <b>ԳԼՈՒԽ II. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՈՐԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ .....</b>                                                 | <b>70</b>  |
| 2.1. ՀՀ առևտրային բանկերի կողմից մատուցվող ծառայությունների վերլուծությունը .....                                             | 70         |
| 2.2. Ժամանակակից բանկային ծառայությունների ներդրման և զարգացման հետ կապված ռիսկերը ՀՀ-ում .....                               | 90         |
| 2.3. ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների ներդրման հեռանկարների վերլուծությունը .....                      | 113        |
| <b>ԳԼՈՒԽ III. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՈՐԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ .....</b>      | <b>129</b> |
| 3.1. ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների մշակման և ներդրման ուղիները .....                                | 129        |
| 3.2. ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների արդյունավետության գնահատումը .....                               | 142        |
| <b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....</b>                                                                                                | <b>154</b> |
| <b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....</b>                                                                                    | <b>157</b> |
| <b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....</b>                                                                                                      | <b>166</b> |



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Արենախոսության թեմայի արդիականությունը:** Բանկային համակարգի ֆինանսական նորաստեղծություններն<sup>1</sup> ընդգրկում են մի շարք հայեցակարգային մոտեցումներ, որոնք անհրաժեշտ է որդեգրել՝ մրցունակ բանկային համակարգ և տնտեսություն ունենալու համար: Այս ոլորտին առնչվող հիմնախնդիրները գտնվում են հայ և արտասահմանյան հետազոտողների ուշադրության շրջանակներում, դա է պատճառը, որ մի շարք գիտական աշխատանքներում բարձրացվում են հարցեր, որոնք յուրաքանչյուր երկրի բանկային համակարգում լուծվում են յուրովի: Բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների ներդրման առնչությամբ առաջ են քաշվում բազմաթիվ մոտեցումներ, տեսակետներ, առանձին երկրների հաջողված փորձի ներդրման տարբերակներ, որոնք կարող են ծառայել ՀՀ ֆինանսական և բանկային համակարգերի նորաստեղծական հենքի վրա ինտեգրացված զարգացմանը: Պետք է նշել, որ բանկային համակարգի զարգացման նորաստեղծական մոտեցումները, հատկապես, կարևոր նշանակություն են ստանում ճգնաժամային իրավիճակներում, քանի որ գիտական հեղաշրջումները և նորաստեղծական նոր գաղափարներն են ճգնաժամերից հանել համաշխարհային տնտեսությունը՝ փակելով այս կամ այն կանդրատեղյան երկարատև պարբերաշրջանը և վերջ տալով «ինովացիոն կամ նորամուծական դադարի»<sup>2</sup> փուլին:

Նորաստեղծությունների նկատմամբ առևտրային բանկերի ունեցած հետաքրքրությունը պայմանավորված է նորամուծական նախագծի իրականացման արդյունքում ստացվող վերջնական արդյունքի՝ նոր բանկային արտադրանքի և ծառայությունների մատուցման ծավալով, այսինքն՝ այն ապագա եկամտի չափով, որը պետք է ստացվի նորամուծական նախագծի իրականացումից: ՀՀ բանկային համակարգի շարունակական զարգացման համար, գլոբալացման ներկա պայմաններում, լավագույն ուղի է դառնում նորաստեղծական գործընթացների ակտիվացումն ու ներդրումը բանկային ծառայությունների ոլորտում: Բանկային ծառայությունների զարգացման ժամանա-

<sup>1</sup> Ատենախոսության մեջ «նորաստեղծություն», «ինովացիա», «նորամուծություն» կատեգորիաներն ունեն համարժեք նշանակություն և կիրառություն:

<sup>2</sup> Polterovich V., The Innovation Pause Hypothesis and the Strategy of Modernization, Voprosy Ekonomiki, 2009, vol. 6, <http://econpapers.repec.org/article/nosvoprec/2009-06-1.htm>

կակից ուղղությունների մեջ, հատկապես, մեծ նշանակություն են ստանում կորպորատիվ բանկային նորաստեղծական արտադրանքի<sup>3</sup> ներդրման ու իրացման հիմնախնդիրները, որոնք առևտրային բանկերին ապահովում են շուկայական բարձր մրցունակություն, դրամական հոսքերի հսկայական ծավալներ և շահույթի աճ:

Նորաստեղծական ծառայություններ մատուցող բանկային համակարգի ձևավորման և իրական գործուն մեխանիզմներ մշակելու համար շատ երկրների բանկային համակարգերում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, սակայն իրական առաջխաղացում՝ ժամանակակից տեխնոլոգիաների, մոդելների, մեխանիզմների ներդրման առումով ապահովել են քչերը, քանի որ շատ դեպքերում դրանց իրագործման հետ կապված առաջացել են լուրջ խոչընդոտներ:

Հետազոտության թեմայում բարձրացված հիմնախնդիրները կարող են փոխել ՀՀ բանկային համակարգի ֆինանսական նորաստեղծությունների տեղայնացման դինամիկան: Ինչով էլ պայմանավորված է դրանց մանրակրկիտ ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Վերոնշյալ խնդիրների լուծման, ֆինանսական նորաստեղծությունների կառավարման արդյունավետ մեխանիզմների մշակման ու կիրառման և բանկային համակարգի զարգացման երկարաժամկետ ռազմավարության մշակման անհրաժեշտությամբ էլ պայմանավորում են ատենախոսության թեմայի արդիականությունը և հրատապությունը:

***Արենախոսության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:*** Հետազոտության օբյեկտը ՀՀ առևտրային բանկերն են՝ իրենց ֆինանսական նորաստեղծությունների ներդրման համակարգերով, իսկ ուսումնասիրության առարկան՝ ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների ներդրման գործում միջազգային առաջավոր փորձի տեղայնացման հայեցակարգային հիմնախնդիրն են, ինչպես նաև ֆինանսական նորաստեղծությունների ներդրման ուղիներն ու արդյունավետության բարձրացման մեխանիզմները:

***Արենախոսության նպատակը և խնդիրները:*** Ատենախոսության հիմնական նպատակն է՝ ֆինանսական նորաստեղծությունների ներդրման արդյունավետության

<sup>3</sup> Salazar F., Barbosa K., and Rocha B., Assessing Competition in Banking Industry: a multiproduct approach., Journal of Banking & Finance 50 (2015) pp. 340-362, <http://isiarticles.com/bundles/Article/pre/pdf/41746.pdf>

բարձրացման հայեցակարգային և մեթոդաբանական հիմնախնդիրների, միջազգային փորձի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա մշակել և առաջարկել ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների ներդրման ու կատարելագործման գիտականորեն հիմնավորված ռազմավարական կառուցակարգեր՝ ֆինանսական նորաստեղծությունները բանկային համակարգի զարգացման հիմնաքարը վերաճելու նպատակով:

Նշված նպատակի իրականացման համար ատենախոսությունում դրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել բանկային համակարգի արդի հիմնախնդիրներն ու զարգացման միտումները,
- ուսումնասիրել և վերլուծել բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների տեսական և հայեցակարգային հիմնահարցերը,
- առավել համապարփակ և ամբողջական վերլուծել բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների արդյունավետության բարձրացման ու միջազգային փորձի ներդրման հնարավորությունները,
- վերլուծել ՀՀ առևտրային բանկերի կողմից մատուցվող ֆինանսական ծառայությունների ոլորտում առկա հիմնախնդիրները,
- ուսումնասիրել ժամանակակից բանկային ծառայությունների ներդրման և զարգացման հետ կապված ռիսկերն ու հիմնախնդիրները ՀՀ-ում,
- ուսումնասիրել և վերլուծել ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների ներդրման հեռանկարները,
- առաջարկել ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների ներդրման ուղիներ և կառուցակարգեր,
- ներկայացնել ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների արդյունավետության բարձրացման մեխանիզմները և մշակել արդյունավետության գնահատման մեթոդ:

***Արենախոսության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:*** Հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել ֆինանսների, տնտեսագիտության, կառավարման, նորաստեղծություն-

ների ժամանակակից տեսությունների հիմնադրույթները, հայեցակարգերը, մոդելներն ու մեթոդները, բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների միջազգային փորձի ներդրման բնագավառում տեղ գտած բարեփոխումները, հայ և արտասահմանյան հետազոտողների կողմից դրանց արդյունավետության բարձրացման բնագավառում կատարած ուսումնասիրությունները, ինչպես նաև զարգացող և զարգացած երկրների օրենքները և իրավական ակտերը:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել՝ ՀՀ ԿԲ-ի, ՀՀ կառավարության, ՀՀ ԱՎԾ-ի, ՀՀ ֆինանսների, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունների, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի, Եվրոպական կենտրոնական բանկի հրապարակումները, զեկույցները և պաշտոնական տեղեկագրերը, ինչպես նաև տարբեր փորձագետների գնահատականներն ու հետազոտությունները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային, իրավիճակային, ինդուկցիայի և դեդուկցիայի, վիճակագրական, խմբավորումների և համեմատական վերլուծությունների, հարցումների, տնտեսաչափական վերլուծությունների մեթոդներ:

***Արեւնախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:*** Հետազոտությունում ստացվել են գիտական մի շարք արդյունքներ, որոնցից նորույթը հետևյալն է՝

- Բացահայտվել են միջազգային բանկային պրակտիկայում կիրառվող ժամանակակից ֆինանսական նորաստեղծությունները՝ ըստ նորամուծական կլաստերների, և հիմնավորվել ՀՀ բանկային համակարգում դրանց ներդրման հնարավորությունները, տեղայնացման մոտեցումներն ու մեխանիզմները:
- ՀՀ բանկային համակարգի ֆինանսական հիմնական ցուցանիշների և նորաստեղծությունների ներդրման հեռանկարների վերլուծության արդյունքում բացահայտվել ու հիմնավորվել է, որ համակարգում առկա հիմնախնդիրները չհաղթահարելու պարագայում ներդրվող ֆինանսական նորաստեղծությունները ծառայելու են ոչ թե տնտեսության, այլ մեծամասամբ բանկային համակարգի՝ տնտեսությունից անկախ զարգացմանը:

- ՀՀ բանկային համակարգի հաճախորդների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման հիման վրա բացահայտվել են ֆինանսական նորաստեղծությունների և ժամանակակից բանկային ծառայությունների կիրառման հիմնախնդիրները՝ նախանշելով դրանց լուծման ուղիներն ու հեռանկարները:
- Մշակվել և առաջարկվել է բանկային ծառայությունների արդյունավետության գնահատման մեթոդ, որի միջոցով բացահայտվել է բանկային նորամուծական ֆինանսական ծառայությունների և հաճախորդների բավարարվածության միջև փոխկապվածությունը, որը հիմնավորվել է այն պայմանավորող գործոնների ու համապատասխան վարկածների (հիպոթեզների) ստուգման միջոցով:

***Արենախոսության արդյունքների գործնական նշանակությունը:*** Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունն այն է, որ մշակված գիտական և գործնական բնույթի առաջարկությունները կարող են օգտագործվել պետական կառավարման և առևտրային բանկերի կողմից ֆինանսական նորաստեղծությունների միջազգային փորձի ներդրման հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթեր մշակելու գործընթացում, ինչպես նաև ՀՀ բանկային համակարգում մրցունակության բարձրացման ուղիների մշակման և տնտեսության մեջ սեփական ֆինանսական նորաստեղծություններով հանդես գալու ժամանակ:

Ատենախոսության տեսական և գործնական որոշ արդյունքներ կարող են օգտակար լինել բանկային համակարգի ֆինանսական նորաստեղծություններով և տնտեսության զարգացման հիմնախնդիրներով զբաղվող ֆինանսիստների, բանկային համակարգի կառավարման մասնագետների և տնտեսագետների համար:

***Արենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:*** Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Բանկային գործի և ապահովագրության» ամբիոնի նիստում:

Ատենախոսության գիտական նորույթ հանդիսացող արդյունքները և, հատկապես, մշակված արդյունավետության գնահատման մեթոդը, որը բացահայտում է տարբեր գործոնների ազդեցությունը հաճախորդների բավարարվածության մակարդակի

վրա՝ ընդունվել և ներառվել է «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի առաջիկա տարիների աշխատանքների կազմակերպման միջոցառումների ծրագրում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված վեց գիտական հոդվածներում:

***Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:*** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 165 էջի վրա՝ առանց հավելվածների:

# **ԳԼՈՒԽ I. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՈՐԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

## **1.1. Բանկային համակարգի արդի հիմնախնդիրները և զարգացման միտումներն աշխարհում և Հայաստանում**

Համաշխարհային տնտեսության և ֆինանսական համակարգում տեղի ունեցող վերջին զարգացումները հանդիսանում են ամբողջ համաշխարհային ֆինանսական ճարտարապետության վերանայման նախապայմանը, քանի որ համաշխարհային տնտեսության զարգացումն առանց միասնական գործող կանոնների չի կարող զարգանալ: Եվ պետք է նշել, որ աշխարհը երբեք այսքան միասնական չի եղել (G20՝ Մեծ քսանյակ, G8՝ Մեծ ութնյակ<sup>4</sup> և այլն) տարբեր միությունների շրջանակում ծագած ֆինանսատնտեսական խնդիրներ դեմ պայքարելու և դրանց լուծում տալու հարցերում: Համաշխարհային տնտեսության մեջ խոշոր դերակատարում ունեցող ֆինանսական հսկաները (ԱՄՆ դաշնային պահուստային համակարգ (ԴՊՀ), Եվրոպական կենտրոնական բանկ (ԵԿԲ), Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ) և այլն) ստեղծել են յուրահատուկ ֆինանսական կառավարման մեխանիզմներ և կորպորատիվ համակարգի (կորպորատոկրատիա) միջոցով կառավարում են ամբողջ համաշխարհային տնտեսությունը:

Անդրադառնալով ԱՄՀ-ի կողմից 2014 թվականի հոկտեմբերին հրապարակված «Համաշխարհային ֆինանսական կայունության զեկույցին (GFSR-Global Financial Stability Report)», որը վերնագրված է «Ռիսկեր վերցնել, իրացվելիություն և ստվերային բանկային գործունեություն», (“Risk Taking, Liquidity, and Shadow Banking”)<sup>5</sup>, նկատում ենք, որ համաշխարհային ֆինանսական շուկաներում առկա են լուրջ ռիսկեր, կա ստվերային բանկային մեծ համակարգ, որոնք առաջիկայում կազդեն նաև համաշխարհային ողջ ֆինանսական համակարգի վրա: Վերոնշյալ զեկույցից պարզ է դառնում նաև, որ աշխարհում պահուստների մակարդակը 2013թ.-ին կազմել է մոտ

<sup>4</sup> Այժմ առանց ՌԴ-ի Մեծ Յոթնյակ է կրկին:

<sup>5</sup> Global Financial Stability Report October 2014, Risk Taking, Liquidity, and Shadow Banking, Curbing Excess while Promoting Growth, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 163. <http://www.imf.org/external/pubs/ft/gfsr/2014/02/pdf/text.pdf>.

12.1 տրլն ԱՄՆ դոլարի, արժեթղթերի շուկայի կապիտալիզացիան հասել է 62.5 տրլն ԱՄՆ դոլարի, բանկերի ակտիվները գերազանցել են 120.4 տրլն դոլարը, իսկ պարտատոմսեր, բաժնետոմսեր և բանկերի ակտիվներ համախմբված ցուցանիշը կազմել է 282.7 տրլն ԱՄՆ դոլար, որը կազմել է համաշխարհային ՀՆԱ-ի 378.5%-ը: Սա նշանակում է, որ ֆինանսական համակարգը շատ ավելի հզոր դիրքեր ունի, քան իր չափերով հասել է համաշխարհային ՀՆԱ-ն, դեռ չենք խոսում դերիվատիվների կամ ածանցյալների շուկայի մասին, որոնք ըստ առանձին փորձագետների հաշվարկների գերազանցում են 1.5 կվադրիլիոն ԱՄՆ դոլարը, այսինքն՝ գերազանցում են անգամ տրիլիոնը: Եվ ինչպես նշում են որոշ տեսաբաններ, դա «դանդաղ աշխատող ժամանակային ռումբ» է, որն ամեն վայրկյան կարող է կործանել ողջ համաշխարհային ֆինանսական համակարգը: Աշխարհում ամենազարգացած բանկային և ֆինանսական համակարգ ունի ՀՆԱ-ի համեմատությամբ Լյուքսեմբուրգը, քանի որ պարտատոմսեր, բաժնետոմսեր և բանկերի ակտիվներ համախմբված ցուցանիշն այդ երկրում կազմում է ՀՆԱ-ի 3152.1%-ը: Հարկ ենք համարում նշել, որ բանկային ակտիվներով աշխարհի առաջատարն է Եվրոյի գոտին, որտեղ դրանք հասնում են գրեթե 32.4 տրլն ԱՄՆ դոլարի, իսկ ԱՄՆ-ում դրանք կազմում են 15.9 տրլն ԱՄՆ դոլար: Սա նաև ստիպում է մտածել, որ այս երկու տարածաշրջանների միջև առկա է ոչ միայն ֆինանսական համագործակցություն, այլ բանկային համակարգերի միջև առկա մրցակցություն, աշխարհի ֆինանսական շուկայում գերիշխող դիրք զբաղեցնելու համար: Իսկ արժեթղթերի շուկայի կապիտալիզացիայի մակարդակով ԱՄՆ-ը 22.5 տրլն ԱՄՆ դոլար ցուցանիշով համաշխարհային առաջատարն է և 2 անգամ գերազանցում է Եվրոպական Միության կապիտալիզացիայի մակարդակը: Այսինքն՝ ԱՄՆ-ը ունի կապիտալիզացիա, իսկ ԵՄ-ը բանկային ակտիվներ, իսկ մրցապայքարը ընթանում է հենց այս հարթությունում: Դա է վկայում նաև 2012թ.-ի սեպտեմբերից ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի կողմից քանակական մեղմում (Quantitative easing (QE))<sup>6</sup> իրականացնելու և Եվրոպական կենտրոնական բանկի կողմից երկարաժամկետ վերաֆինանսավորման գործառնություններ (LTRO- long-term refinancing operation<sup>7</sup>) իրականացնելու մրցավազքը, որից ետ չեն մնում նաև համաշխարհային ֆինանսական

<sup>6</sup> <https://www.creditwritedowns.com/2011/06/qe1-versus-qe2-versus-q3.html> [Վերջին մուտք 21.10.2016թ.]:

<sup>7</sup> [http://lexicon.ft.com/Term?term=long\\_term-refinancing-operation--ltro](http://lexicon.ft.com/Term?term=long_term-refinancing-operation--ltro) [Վերջին մուտք 22.10.2016թ.]:



համակարգում մեծ դերակատարում ունեցող Ճապոնիայի, Անգլիայի և Չինաստանի բանկերն՝ իրականացնելով քանակական մեղմման (QE) իրենց սեփական տարբերակը կամ քաղաքականությունը՝ հավակնելով հաղթել «արժույթային պատերազմում» և բարելավել համաշխարհային տնտեսության մեջ իրենց երկրի տեսակարար կշիռը:

Աղյուսակ 1.1.1

**Կապիտալի շուկայի ծավալի առանձին ցուցանիշները 2013թ.-ին<sup>8</sup>**

(տրլն դոլար)

|                                          | ՀՆԱ             | Ընդհանուր պահուստներ (-ոսկին) | Արժեթղթերի շուկայի կապիտալիզացիան | Ընդհանուր պարտքային պարտատոմսեր | Բանկերի ակտիվներ | Պարտատոմսեր, բաժնետոմսեր և բանկերի ակտիվներ | Պարտատոմսեր, բաժնետոմսեր և բանկերի ակտիվներ (ՀՆԱ %) |
|------------------------------------------|-----------------|-------------------------------|-----------------------------------|---------------------------------|------------------|---------------------------------------------|-----------------------------------------------------|
| <b>Աշխարհ</b>                            | <b>74,699.3</b> | <b>12,129.7</b>               | <b>62,552.0</b>                   | <b>99,788.8</b>                 | <b>120,421.6</b> | <b>282,762.4</b>                            | <b>378.5</b>                                        |
| <b>Եվրոպական Միություն (ԵՄ)</b>          | <b>16,286.9</b> | <b>570.0</b>                  | <b>12,646.3</b>                   | <b>30,072.5</b>                 | <b>44,871.4</b>  | <b>87,590.2</b>                             | <b>537.8</b>                                        |
| Եվրոյի գոտու երկրներ                     | 12,874.1        | 331.0                         | 7,539.2                           | 22,478.9                        | 32,394.2         | 62,412.3                                    | 484.8                                               |
| <b>Հյուսիսային Ամերիկա</b>               | <b>18,594.8</b> | <b>205.4</b>                  | <b>24,417.8</b>                   | <b>39,130.0</b>                 | <b>19,809.5</b>  | <b>83,357.3</b>                             | <b>448.3</b>                                        |
| Կանադա                                   | 1,826.8         | 71.8                          | 2,137.1                           | 2,187.6                         | 3,881.7          | 8,206.4                                     | 449.2                                               |
| ԱՄՆ                                      | 16,768.1        | 133.5                         | 22,280.7                          | 36,942.4                        | 15,927.8         | 75,150.9                                    | 448.2                                               |
| Ճապոնիա                                  | 4,898.5         | 1,237.2                       | 4,599.3                           | 12,243.6                        | 11,422.5         | 28,265.4                                    | 577.0                                               |
| <b>ԵՄ երկրներ</b>                        |                 |                               |                                   |                                 |                  |                                             |                                                     |
| Ավստրիա                                  | 416.1           | 12.5                          | 121.8                             | 658.8                           | 1,502.8          | 2,283.4                                     | 548.8                                               |
| Բելգիա                                   | 508.3           | 18.1                          | 366.7                             | 776.5                           | 1,162.6          | 2,305.8                                     | 453.7                                               |
| Դանիա                                    | 330.6           | 86.1                          | 320.4                             | 901.0                           | 1,174.9          | 2,396.3                                     | 724.8                                               |
| Ֆինլանդիա                                | 267.4           | 9.4                           | 218.1                             | 310.4                           | 544.3            | 1,072.8                                     | 401.2                                               |
| Ֆրանսիա                                  | 2,807.3         | 50.8                          | 2,140.1                           | 4,756.7                         | 8,178.3          | 15,075.0                                    | 537.0                                               |
| Գերմանիա                                 | 3,636.0         | 67.4                          | 2,030.4                           | 4,356.9                         | 8,281.5          | 14,668.8                                    | 403.4                                               |
| Հունաստան                                | 241.8           | 1.4                           | 82.6                              | 222.1                           | 560.9            | 865.6                                       | 358.0                                               |
| Իռլանդիա                                 | 232.2           | 1.4                           | 168.1                             | 1,195.6                         | 1,021.4          | 2,385.1                                     | 1,027.4                                             |
| Իտալիա                                   | 2,072.0         | 50.8                          | 631.1                             | 4,074.3                         | 2,986.2          | 7,691.6                                     | 371.2                                               |
| Լյուքսեմբուրգ                            | 60.4            | 0.9                           | 78.6                              | 841.5                           | 983.8            | 1,903.9                                     | 3,152.1                                             |
| Նիդերլանդներ                             | 853.8           | 22.6                          | 818.6                             | 2,377.8                         | 2,514.8          | 5,711.2                                     | 668.9                                               |
| Պորտուգալիա                              | 220.1           | 2.8                           | 85.9                              | 395.5                           | 636.4            | 1,117.7                                     | 507.9                                               |
| Իսպանիա                                  | 1,358.7         | 35.4                          | 774.8                             | 2,389.2                         | 3,834.4          | 6,998.3                                     | 515.1                                               |
| Շվեդիա                                   | 558.9           | 60.5                          | 751.3                             | 848.9                           | 1,019.6          | 2,619.8                                     | 468.7                                               |
| Միացյալ Թագավորություն                   | 2,523.2         | 92.4                          | 4,035.4                           | 5,843.8                         | 10,282.6         | 20,161.7                                    | 799.0                                               |
| Նոր արդյունաբերականացված ասիական երկրներ | <b>2,365.5</b>  | <b>1,342.5</b>                | <b>6,252.7</b>                    | <b>2,566.8</b>                  | <b>5,228.7</b>   | <b>14,048.1</b>                             | <b>593.9</b>                                        |
| <b>Անցումային երկրներ, այդ թվում՝</b>    | <b>28,913.0</b> | <b>7,995.2</b>                | <b>11,232.7</b>                   | <b>11,226.4</b>                 | <b>31,782.5</b>  | <b>54,241.6</b>                             | <b>187.6</b>                                        |
| Ասիա                                     | 13,750.4        | 4,679.1                       | 6,024.8                           | 5,796.6                         | 22,612.2         | 34,433.6                                    | 250.4                                               |
| Լատինական Ամերիկա և Կարիբներ             | 5,748.7         | 802.9                         | 2,183.6                           | 3,564.8                         | 3,761.2          | 9,509.6                                     | 165.4                                               |
| Միջին Արևելք և Հյուսիսային Աֆրիկա        | 3,127.3         | 1,396.8                       | 1,114.3                           | 236.6                           | 1,927.5          | 3,278.4                                     | 104.8                                               |
| Ենթասահարային Աֆրիկա                     | 1,575.9         | 204.2                         | 609.1                             | 244.7                           | 579.6            | 1,433.4                                     | 91.0                                                |
| Եվրոպա                                   | 4,710.7         | 912.2                         | 1,301.0                           | 1,383.6                         | 2,901.9          | 5,586.5                                     | 118.6                                               |

Աղբյուրը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ:

<sup>8</sup> **Ծանոթություն՝** ԱՄՀ հետագա տարիների հրապարակումներում նմանատիպ հաշվարկները բացակայում են, ինչպես նաև աղյուսակային տվյալները, այդ իսկ պատճառով ներկայացված են 2013թ.-ի աղյուսակային տվյալները: Global Financial Stability Report October 2014, Risk Taking, Liquidity, and Shadow Banking, Curbing Excess while Promoting Growth, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 163. <http://www.imf.org/external/pubs/ft/gfsr/2014/02/pdf/text.pdf>.

Անդրադառնալով Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից 2016 թվականի ապրիլին հրապարակված մեկ այլ «Համաշխարհային տնտեսության տեսլականը» (WEO-World Economic Outlook<sup>9</sup>) զեկույցին, որը վերնագրված է «(Չափազանց դանդաղ է չափից ավելի երկար ժամանակ» նկատում ենք, որ համաշխարհային տնտեսության մեջ վերջին տարիների դանդաղող աճի միտումները գրեթե պահպանվում են: Սա նշանակում է, որ համաշխարհային տնտեսության և առանձին տարածաշրջանների զարգացման միտումները դանդաղում են, իսկ որ ամենավատն է դա ձգձգվում է երկար ժամանակ: Կարելի է վստահաբար ասել, որ դա ոչ այլ ինչ է, քան 2008-2010թթ.-ների համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներից մնացած ժառանգություն:

Նախ և առաջ, պետք է նշել, որ համաշխարհային տնտեսական զարգացումներն իրենց ազդեցությունն են թողնում նաև ֆինանսական համակարգի, այդ թվում՝ համաշխարհային տոկոսադրույքների նվազման միտումների և բանկային համակարգի մարժայի ու եկամտաբերության վրա, իսկ դա նշանակում է ուսումնասիրելով համաշխարհային տնտեսության զարգացման միտումները տրամաբանական կապ է ստեղծվում նաև համաշխարհային բանկային և, ընդհանրապես, ֆինանսական համակարգերի զարգացման վերաբերյալ:

Համաշխարհային տնտեսության մեջ աճի տեմպերի դանդաղումը հանգեցրել է նրան, որ կանխատեսումները տարեց տարի ստանում են ավելի վատատեսական ուղղվածություն, օրինակ, եթե 2010թ.-ին աշխարհում տնտեսական աճը կազմել է 5.4%, ապա 2015թ.-ին այն իջել է մինչև 3.1%: 2016թ.-ին կանխատեսվում է 3.2%-անոց աճ, իսկ մինչև 2021թ.-ը տնտեսական աճը չի գերազանցի 4%-ի սահմանագիծը, դա նշանակում է, որ մուտք ենք գործել ցածր տնտեսական աճի տասնամյակ: Մյուս կողմից դա նաև ենթադրում է նաև, որ տարբեր ներդրումային ծրագրերը կսառեցվեն, խոշոր նախագծերը կդադարեցվեն, բանկերի կողմից վարկավորման ծավալները կկրճատվեն և կսկսվի ցածր տոկոսադրույքների ժամանակահատվածը: Դրանում մենք կհամոզվենք նաև ուսումնասիրելով միջինժամկետ բազելյան սցենարի ցուցանիշները:

<sup>9</sup> World Economic Outlook April 2016, Too slow for Too long, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 230. <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2016/01/>

Դոլարային արտահայտությամբ 2016թ.-ին Համաշխարհային թողարկումը կամ որ ընդունված է անվանել համաշխարհային ՀՆԱ-ն շուկայական գներով կհասնի մոտ 74 տրիլիոն ԱՄՆ դոլարին, իսկ դա մոտ է 2012թ.-ի ցուցանիշին: 2021 թվականին շուկայական գներով համաշխարհային ՀՆԱ-ն կհասնի մոտ 96.4 տրիլիոն ԱՄՆ դոլարի, իսկ համարժեքային գնողունակության պարիտետով կամ (PPP-ով) այն կգերազանցի 155 տրիլիոն ԱՄՆ դոլարը<sup>10</sup>: Ստացվում է նաև, որ աշխարհում սպասվում է թանկ դոլարի ժամանակահատված, քանի որ դոլարային արտահայտությամբ համաշխարհային ՀՆԱ-ն աճում է ավելի դանդաղ, դեռ ավելին՝ հետընթաց է արձանագրում, իսկ գնողունակության պարիտետով այն աճում է:

Անդրադառնալով տարածաշրջանային կամ ռեգիոնալ աճի տեմպերին նկատում ենք, որ ԱՊՀ տարածաշրջանում դեռևս շարունակվում են արձանագրվել բացասական միտումներ, 2015թ.-ին գրանցվել է 2.8% տնտեսական անկում, իսկ 2016թ.-ին կանխատեսվում է 1.1%-անոց անկում, և միայն 2021թ.-ին աճի տեմպերը կմոտենան 2.4%-ի, իսկ դա նշանակում է, որ ակնկալել առաջիկա 5 տարիների համար ԱՊՀ տարածաշրջանում առաջանցիկ զարգացումներ գրեթե անհնար է: Սա բացասական է, քանի որ ՀՀ բանկային համակարգն իր գործընկերային հարաբերությունների առումով առավել մեծ չափով ինտեգրված է ԱՊՀ բանկային համակարգի հետ, քանի որ օրինակ՝ մի շարք ռուսական բանկեր Հայաստանում ունեն մասնաճյուղեր, իսկ դա նաև հարված է Հայաստանում առկա օտարերկրյա կապիտալով գործող բանկերին: Խնդրահարույց վերջինս նաև նրանով, որ ՌԴ տնտեսության մեջ առաջացող ցանկացած ֆինանսական ցնցում մագնիսի պես դեպի ռուսաստանյան բանկեր է տանում ԱՊՀ երկրների պահուստները՝ դրանով իսկ հարված հասցնելով գործընկեր երկրներին:

Վերլուծելով և գնահատական տալով ԱՄՀ կողմից վերոնշյալ զեկույցում ներկայացված կանխատեսումներին ԱՊՀ և ԵԱՏՄ երկրների համար, նկատում ենք կառուցվածքային լուրջ տեղաշարժերի և ՀՆԱ-ի փոփոխությունների միտումներ:

ԱՊՀ տարածաշրջանում 2016թ.-ին կանխատեսվում է, որ բացասական աճի միտումներ են արձանագրելու Ադրբեջանը՝ -3.0%, Բելառուսը՝ -2.7% և Ռուսաստանի Դաշնությունը՝ -1.8%: Չնայած նավթի գների աճի պարագայում ՌԴ տնտեսական աճի

<sup>10</sup> World Economic Outlook April 2016, Too slow for Too long, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 168. <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2016/01/>

տեմպերը կարող են վերականգնվել և արդեն 2017թ.-ին կհասնեն 1%-ի<sup>11</sup>: Հետաքրքիր է նաև այն, որ ըստ ԱՄՀ կանխատեսումների Հայաստանի տնտեսական աճի տեմպերը 2016թ.-ին կլինի 1.9%-ի շրջանակներում, իսկ 2021թ.-ին կկազմեն մոտ 4%: Այսինքն՝ դրանք շատ մոտ են իրականությանը, քանի որ այդ ցուցանիշների վերաբերյալ արդեն առկա է նաև տարբեր պաշտոնական շրջանակներում արվող նախնական կանխատեսումները: Ինչ վերաբերում է Ադրբեջանին՝ առաջիկա 5 տարիներին այս երկրում աճի տեմպերը չեն գերազանցի անգամ 2%-ի մակարդակը: Իհարկե, այս կանխատեսումները հրապարակվել են ապրիլի 12-ի դրությամբ և ամենայն հավանականությամբ առաջացած ռազմական իրավիճակի գործոնները, ինչպես նաև վերջինով պայմանավորված բացասական սցենարները հաշվի չեն առնվել, իսկ դա նշանակում է, որ իրական պատկերը, հատկապես, Ադրբեջանի համար լինելու է ավելի տխուր: Հայաստանի համար բացասական է նաև այն, որ Ռուսաստանի կանխատեսվող աճի տեմպերը ևս ցածր են, իսկ դա իր հերթին կարող է հանգեցնել տրանսֆերտների ծավալի կրճատման, որն ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 2016թ.-ին կարող է հասնել 140 մլն դոլարի, այսինքն՝ ՀՀ ֆինանսական համակարգը զրկվում է լրացուցիչ ռեսուրսներից դրանով իսկ բախվելով ֆինանսական ռեսուրսների սղության հետ, որն արտահայտվում է նաև պետական պարտքի ավելացման, բյուջեի պակասուրդի, ինչպես նաև հարկային եկամուտների հավաքագրման թերակատարման ձևով:

ԵԱՏՄ գործընկերներից Բելառուսից և Ղազախստանից ևս լուրջ ակնկալիքներ առաջիկայում չենք կարող ունենալ, քանի որ Բելառուսին սպասվում է բացասական աճի միտումներ, իսկ Ղազախստանում աճի տեմպերը գրեթե զրոյական, իսկ դա նշանակում է ԵԱՏՄ-ի ընձեռած հնարավորություններն առաջիկա 5 տարիներին այնքան էլ մեծ չեն լինելու:

Աշխարհում ամենաարագ զարգացող տարածաշրջանն առաջիկա 5 տարիներին կլինի անցումային և զարգացող Ասիայի տարածաշրջանը, այսինքն՝ համաշխարհային լոկոմոտիվի դերն առաջիկայում ինչպես և վերջին տարիների ընթացքում պատկանելու է այս տարածաշրջանին: Դա է նաև այն հիմնական պատճառը, որ շատ երկրներ իրենց հիմնական գործընկերային հարաբերությունները փորձում են կառուցել համա-

<sup>11</sup> World Economic Outlook April 2016, Too slow for Too long, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 172. <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2016/01/>

գործակցելով այնպիսի ասիական հսկաների հետ, ինչպիսիք են Չինաստանը, Հնդկաստանը, Հարավային Կորեան և այլն: Այսինքն՝ ՀՀ բանկային համակարգը ևս պետք է իր զարգացման գործընկերային հարաբերությունները փորձի զարգացնել ասիական բանկերի հետ, քանի որ վերջիններիս ֆինանսական հնարավորությունները առաջիկայում մեծանալու են:

Համաշխարհային տնտեսության մյուս խոշոր միավորը՝ Եվրոպական Միությունը կունենա մոտ 1.8-1.9%-անոց տնտեսական աճ, իսկ Եվրոյի Գոտու երկրներում 2016թ.-ին կարձանագրվի՝ 1.5-1.6%-անոց աճ, այս տարածաշրջանում առկա են տնտեսական, քաղաքական, ինչպես նաև միգրացիոն հիմնախնդիրներ, որոնց ազդեցության տակ եվրոպական տարածաշրջանը շատ դժվարությամբ է զարգանում՝ դրված է Բրեքսիթի (BR-EXIT) կամ Մեծ Բրիտանիայի ԵՄ-ից դուրս գալու խնդիրը, Հունաստանի տնտեսական ցուցանիշները շարունակում են շեղվել նախանշված միտումներից, Իտալիայում սկիզբ է առել բանկային ճգնաժամ, և մյուս կողմից միլիոնից ավելի միգրանտների ծախսերը լուրջ սոցիալական բեռ են դարձել եվրոպացի հարկատուների համար: Հարկ է նշել, որ լրջագույն խնդիրների առաջ են կանգնած Դոյչե բանկը և եվրոպական մի շարք բանկեր, և անգամ քննարկվում էր եվրոպական բանկային ճգնաժամի առաջ կանգնելու վտանգի հարցը: Դեռ ավելին, կա նաև տարբերակ, որ Մեծ Բրիտանիայի ԵՄ-ից առանձնանալու հանրաքվեի արդյունքները կարող են լուրջ հարված հասցնել Եվրոպական տնտեսությանը և, հատկապես, բանկային համակարգին: Դա կթուլացնի նաև Լոնդոնի դիրքերը, ինչպես նաև կհանգեցնի ֆինանսական համակարգի աշխատողների դեպի ասիական տարածաշրջան և, հատկապես, Սինգապուր տեղափոխվելուն:

Այս ֆոնի վրա Եվրոպական կենտրոնական բանկի կողմից կիրառված բացասական տոկոսադրույքները ևս չեն տալիս իրենց դրական ազդեցությունը, քանի որ ներդրողների մեծ մասն իրենց գումարները նախընտրում են տեղափոխել ԱՄՆ խուսափելով բացասական տոկոսադրույքների դիմաց վճարումներից: Այս մասին վերջերս բավականին հետաքրքիր հոդված էր Փրոջեքթ Սինդիքեյթում (Project Syndicate) ներկայացրել 2006թ.-ի Նոբելյան մրցանակակիր Ջոզեֆ Ստիգլիցը, փորձելով ցույց տալ համաշխարհային հզոր կենտրոնական բանկերի և սովորական առևտրային

բանկերի քաղաքականությունների միջև առկա տարբերությունները<sup>12</sup>: Նմանատիպ ռիսկերի առաջ է կանգնած նաև Ճապոնիան, որտեղ ևս աննախադեպ ցածր տոկոսադրույքները հանգեցրել են կապիտալի արտահոսքի: Այսինքն՝ համաշխարհային ֆինանսական համակարգը բաժանվել է 2 բևեռների, որոնցից մեկում՝ զարգացող երկրներում առկա են բարձր տոկոսադրույքներ ու ռիսկեր, ինչպես նաև վստահության ցածր մակարդակ, իսկ մյուս կողմից զարգացած երկրներն են, որտեղ ներդրումները խթանելու և ինֆլյացիա առաջացնելու համար դիմում են աննախադեպ քայլերի՝ տոկոսադրույքներն իջեցնելով 0-ից ցածր կամ բացասական մակարդակի վրա: Պատկերավոր ասած նման դրամավարկային քաղաքականությունը նմանեցում են նաև «ուղղաթիռով փող բաժանելու»<sup>13</sup> հետ:

Իհարկե, տարածաշրջանային տնտեսական ու աշխարհատնտեսական (գեոէկոնոմիկ) հիմնահարցերն այսքանով չեն սահմանափակվում և պահանջում են լուրջ վերլուծություններ և ուսումնասիրություններ, իսկ Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումները որոշակի լույս են սփռում և պատկերացում տալիս սպասվելիք համաշխարհային տնտեսական փոփոխությունների վերաբերյալ:

Կապիտալիզմի շարժիչ ուժը հանդիսացող վարկերն ու տոկոսադրույքներն այն գործիքներն են, որոնք զարգացող երկրների հաշվին հնարավորություն են տալիս հզորացնել իրենց տնտեսությունները զարգացած երկրներին, քանի որ համաշխարհային ֆինանսական հոսքերը զարգացող երկրներ են հասնում անցնելով մի շարք միջնորդ բանկերի միջև և ներդրվում են բարձր տոկոսադրույքներով: Սպառողներից կամ սովորական վարկ վերցնողներից շատերն այդքան հեռու չեն էլ մտածում, իսկ փաստն այն է, որ ԱՄՆ-ում՝ Դաշնային պահուստային համակարգը, ԵՄ՝ Եվրոպայում կենտրոնական բանկը տոկոսադրույքները հասցրել են զրոյական մակարդակի, իսկ անցումային, զարգացող, այդ թվում՝ Հայաստանի նման տնտեսություններում բարձր տոկոսադրույքները չեն թողնում, որ երկրի տնտեսությունը զարգանա: Այստեղ, իհարկե, լրջագույն խնդիրներից է մնում վարկավորման տոկոսադրույքների և ձեռնարկությունների շահութաբերության միջև առկա տարբերությունները:

<sup>12</sup> <http://www.vestifinance.ru/articles/69844> [Վերջին մուտք 24.10.2016թ.]:

<sup>13</sup> <http://www.cnbc.com/2016/08/02/no-helicopter-money-japan-disappoints-markets-with-new-fiscal-plan.html> [Վերջին մուտք 24.10.2016թ.]:

Հարկ ենք համարում նաև, անդրադառնալ ՀՀ բանկային համակարգի զարգացման առանձնահատկություններին և հիմնախնդիրներին, քանի որ վերջիններիս ուսումնասիրությունը ստեղծում է այն հնարավոր հիմքերը, որի վրա պետք է կառուցել ՀՀ բանկային համակարգի ֆինանսական նորաստեղծությունների ներդրման տրամաբանությունը:

Հայաստանի Հանրապետությունում բանկային համակարգի և բանկային ծառայությունների ձևավորումն ու զարգացումը համընկավ անցումային տնտեսության և տնտեսական վերափոխումների ժամանակաշրջանի հետ, զգալի չափով պայմանավորելով բանկային համակարգի և ծառայությունների զարգացման առանձնահատկությունները: Գործնականում բանկը և բանկային համակարգն անհնար է տարանջատել բանկային ծառայություններից: Սակայն ակնհայտ է նաև, որ բանկային համակարգի զարգացման միայն որոշակի փուլում է հնարավոր բանկի սովերենության որոշումը և բանկային ծառայությունների լիարժեք մատուցումը:

Ընդհանրապես, աշխարհում բանկային ոլորտի զարգացումն անհնար է տարանջատել փոխատվական կապիտալի շուկայի զարգացումից, որոնք փոխապայմանավորում և փոխլրացնում են միմյանց: ՀՀ բանկային համակարգի և փոխատվական կապիտալի շուկայի զարգացումն առնվազն կարելի է ներկայացնել չորս փուլերով՝

- ՀՀ բանկային համակարգի և փոխատվական կապիտալի շուկայի կայացման փուլ (1991-2000թթ.):
- ՀՀ բանկային համակարգի և փոխատվական կապիտալի շուկայի զարգացման փուլ (2001-2008թթ.):
- ՀՀ բանկային համակարգի հետճգնաժամային զարգացումների փուլ (2009-2013թթ.)
- ՀՀ բանկային համակարգի միավորման, կլանման կամ խոշորացումների փուլ (2014թ.-ից մինչև օրս):

ՀՀ բանկային համակարգի և փոխատվական կապիտալի շուկայի կայացման փուլ (1991-2000թթ.): ՀՀ բանկային համակարգի և փոխատվական կապիտալի շուկայի զարգացման առաջին փուլի հիմնական բնութագրիչներն են՝

- Ֆինանսական ճգնաժամը և բարձր գնաճը, իսկ 1990-ականների սկզբին նաև՝ հիպերինֆլացիայի դրսևորումները:
- Դրամական բարեփոխում (ռեֆորմ) և ազգային արժույթի փոխարժեքային բարձր տատանումներ:
- ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող գների կայունության և դրան միտված կոշտ հակահիպերինֆլացիոն քաղաքականություն՝ պահուստային բարձր նորմատիվների սահմանում, բարձր տոկոսադրույքային (վերաֆինանսավորման) քաղաքականություն և զսպողական քաղաքականության գերակայություն:
- ՀՀ-ում մեծ թվով բանկային և ոչ բանկային ֆինանսական ինստիտուտների առաջացում (առանձին տարիներին՝ հատկապես 90-ականներին դրանց թիվը գերազանցում էր 50-ը), բանկային և ոչ բանկային ֆինանսական հիմքի վրա բազմաթիվ ֆինանսական բուրգերի առաջացում ու փլուզում:
- 1998-2000թթ. մի շարք բանկերի սնանկացում (Արմենիա, Նոյ, Երևանկրեդիտ և այլն) և բանկային համակարգի առողջացում:
- Վճարահաշվարկային և դեպոզիտային ծառայությունների մատուցում: Առևտրի վարկավորում և պետական բարձր եկամտաբեր արժեթղթերի առք ու վաճառքի միջոցով ակնհայտ սպեկուլյատիվ ներդրումային գործունեություն:
- Կարճաժամկետ վարկերի գերակայություն և վարկային պորտֆելների ցածր դիվերսիֆիկացում, խնդրահարույց վարկերի բարձր տեսակարար կշիռ:
- Բանկային օրենսդրության ընդունում, վերանայում և ընդլայնում, նորմատիվային դաշտի ձևավորում, այդ թվում՝ Բազել-1-ի նորմատիվների կիրառմամբ:

Փուլի ձեռքբերումներից պետք է համարել ՀՀ բանկային համակարգի և բանկային ոլորտի բավականաչափ որակյալ օրենսդրության ձևավորումը: Բանկային ծառայությունները գերազանցապես վճարահաշվարկային և դեպոզիտային բնույթի էին: Վարկային ծառայությունները սահմանափակվում էին պետության սպեկուլյատիվ վարկավորմամբ և կարճաժամկետ առևտրային վարկերի տրամադրմամբ: Բավական է ասել, որ բանկերի վարկային պորտֆելի ավելի քան 90%-ը, իսկ առանձին բանկերի դեպքում՝ գրեթե 100%-ը, մինչև 1 տարի ժամկետայնությամբ վարկեր էին: Այս փուլում բանկային վարկ-իրական տնտեսություն կապը շատ թույլ էր, եթե չասենք բացակայում



էր: Բանկերը գերադասում էին կուտակված իրացվելիությունը տեղաբաշխել պետական արժեթղթերում և, փաստորեն, նախապատվում էին սպեկուլյատիվ ներդրումները՝ բարձր տոկոսներով փոխատվություն տալով պետությանը:

ՀՀ բանկային համակարգի և փոխատվական կապիտալի շուկայի զարգացման փուլ (2001-2008թթ), որը համընկավ ֆինանսական շուկայի արժեթղթային հատվածի որոշակի զարգացման, իսկ մակրոտնտեսական մակարդակում բարձր և կայուն տնտեսական աճի հետ:

Դիտարկվող ժամանակահատվածն աչքի է ընկնում բանկային ոլորտի և նրա կողմից մատուցվող ծառայությունների ու բանկային ապրանքների (պրոդուկտների) բավական լուրջ ձեռքբերումներով.

- ՀՀ ԿԲ-ը չափավորեց հակաինֆլյացիոն քաղաքականությունը, մասնավորապես վերաֆինանսավորման տոկոսադրույքը 40-50%-ից իջավ մինչև 17-18%, իսկ այնուհետև 7,5-8%:
- Բանկային ոլորտի առողջացում և «գրպանային» և պրոբլեմային բանկերից համակարգի մաքրում: ՀՀ առևտրային բանկերը լուրջ առաջընթաց արձանագրեցին գրեթե բոլոր ցուցանիշներով՝ ընդհանուր ակտիվներ, ընդհանուր կապիտալ, պարտավորություններ, ըստ ակտիվների և ըստ կապիտալի եկամտաբերության ցուցանիշների աճ և այլն:
- Խնայողական հաստատությունների ոլորտում արձանագրվեց համալրում, հանձինս վարկային կազմակերպությունների, ինչի համար խթան հանդիսացավ 2002թ. «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի<sup>14</sup> ընդունումը: Նկատենք սակայն, որ սահմանափակ ակտիվներ ունեցող և միկրովարկավորման տիրույթը զբաղեցող վարկային կազմակերպությունները, չեն դարձել և չեն կարող դառնալ առևտրային բանկերի լուրջ մրցակիցներ բանկային ծառայությունների շուկայում:
- 2003-2004թթ.-ից սկզբնավորվեց և լուրջ առաջխաղացում գրանցվեց հիփոթեքային վարկավորման շուկայում: 2007թ.-ի հիփոթեքային վարկավորման գումարային մեծությունը գերազանցեց 100 մլրդ դրամի սահմանագիծը: Նկատվեց վարկավորման

<sup>14</sup> «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք ՀՀ ՊՏ 2002.07.03/23(198):

ծավալների աճ և վարկավորման պորտֆելներում երկարաժամկետ վարկերի տեսակարար կշռի ավելացում, ընդհուպ մինչև առանձին պորտֆելների 60% և ավելի:

- 2005թ.-ից գործարկվեց բանկային դեպոզիտների ապահովագրման համակարգը, որը զգալի չափով նվազեցրեց ավանդների հետ կապված ռիսկերը և ընդլայնեց դեպոզիտային ու վարկային ծառայություններ մատուցելու բանկերի հնարավորությունները:
- Բանկերի պասիվաակտիվային գործառնությունների զգալի ակտիվացում և բանկային նոր ծառայությունների մատուցում՝ հայրենական վճարաքարտային համակարգի ներդրումից մինչև առանձին բանկերի կողմից միջազգային վճարային համակարգերին մասնակցությունը և վարկային քարտերի թողարկումը:
- ՀՀ բանկային ոլորտ օտարերկրյա կապիտալի հոսքի ավելացում և մինչև 100% մասնակցությամբ առևտրային բանկերի հիմնադրում (HSBC<sup>15</sup>, VTB<sup>16</sup>, ProCredit bank, Areximbank-Gazprombank Group և այլն): Միաժամանակ բանկերի մեծ մասի ընդհանուր կապիտալում ավելացավ օտարերկրյա կապիտալը: Օտարերկրյա բանկային կապիտալի և բանկային մենեջմենթի մուտքը դրական ազդեցություն ունեցավ ՀՀ առևտրային բանկերի ծառայությունների ընդլայնման և որակի բարձրացման վրա:

ՀՀ տնտեսության բարձր աճի փուլ մտնելը, ձեռնարկությունների և բնակչության եկամուտների ավելացումը, ավանդների ապահովագրման համակարգի ներդրումը, օտարերկրյա բանկային կապիտալի մեծածավալ մուտքը և միջբանկային մրցակցության սրումը, լուրջ խթան դարձան նոր բանկային ծառայությունների մատուցման համար: ՀՀ բանկային ծառայությունների սպեկտրն ընդգրկում էր վճարաքարտային ծառայությունների մատուցումից, տարատեսակ հաշիվների բացումից, սպառողական վարկավորումից մինչև ավտո և հիփոթեքային վարկերի տրամադրումը:

ՀՀ բանկային համակարգի հետճգնաժամային զարգացումների փուլ (2009-2013թթ.): ՀՀ տնտեսության և բանկային համակարգի համար լուրջ փորձություն էր 2008-2009թթ. համաշխարհային ճգնաժամը: Մակրոտնտեսական առումով 2008թ.-ին արձանագրվեց տնտեսական աճի տեմպի կրկնակի անկում, իսկ 2009թ.-ին 14,1%

<sup>15</sup> <https://www.hsbc.am/1/2/am/hy/> [Վերջին մուտք 25.11.2016թ.]:

<sup>16</sup> <http://www.vtb.am/> [Վերջին մուտք 25.11.2016թ.]:

անկում: ՀՀ բանկային համակարգը ճգնաժամի ազդեցության տիրույթում հայտնվեց 2008թ.-ի չորրորդ եռամսյակում, որը շարունակվեց մինչև 2009թ.-ի առաջին կեսը, երբ արձանագրվեց վարկավորման ծավալների զգալի նվազում և բանկային ցուցանիշների անկում:

ՀՀ բանկային համակարգում ֆինանսական ճգնաժամի հետևանքով դրսևորվեցին հետևյալ միտումները՝

- Նվազեց վարկային ներդրումների աճը՝ 2008թ.-ի երրորդ եռամսյակում կազմելով 41,2%, իսկ չորրորդում՝ ընդամենը 3,7%:
- Կտրուկ նվազեցին սպառողական և հիփոթեքային վարկավորման ծավալները: Մասնավորապես, 2009թ.-ի երկրորդ և երրորդ եռամսյակներին սպառողական վարկավորումը նվազեց 25 մլրդ. դրամով: Հիփոթեկային վարկավորման չնչին՝ 262 մլն. դրամ աճ գրանցվեց միայն 2009թ.-ի երրորդ եռամսյակին՝ կազմելով 83,3 մլրդ. դրամ, մինչդեռ տարվա սկզբին այն կազմում էր 86,3 մլրդ. դրամ:
- Նվազեց բանկերի վարկային պորտֆելի որակը, մասնավորապես չաշխատող վարկերը կազմեցին տեղաբաշխված վարկերի մոտ 8%-ը: Արձանագրվեց վարկերի տոկոսադրույքների բարձրացում:
- Մեծացավ բանկային համակարգում պարտավորությունների և ակտիվների ժամկետային անհամապատասխանությունը<sup>17</sup>:

2009թ.-ին ՀՀ բանկային համակարգի եկամտաբերության ցուցանիշները զգալի չափով նվազեցին, մնալով, սակայն դրական տիրույթում: Բանկային ակտիվների շահութաբերության մակարդակը (ROA) կազմեց 1,26%, իսկ կապիտալի եկամտաբերության մակարդակը (ROE)՝ 6,08%<sup>18</sup>, ինչը կրկնակի անգամ ցածր էր ճգնաժամին նախորդող և հաջորդող ժամանակաշրջանների համապատասխան ցուցանիշներից:

Բանկերի վարկավորումը սկսեց աճել 2009թ.-ի երրորդ եռամսյակում՝ 55 մլրդ. դրամի չափով, իսկ պորտֆելի ընդհանուր մեծությունը կազմեց 690 մլրդ. դրամ: Նկատենք, որ վարկավորման աճը գերազանցապես պայմանավորված էր բանկերում արտաքին աղբյուրներից պետության կողմից ներգրավված միջոցների տեղաբաշխմամբ:

<sup>17</sup> ՀՀ կենտրոնական բանկ, Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսական հատվածների, ֆինանսական շուկայի տոկոսադրույքները, հունվար-մարտ 2009թ.:

<sup>18</sup> Հայաստանի բանկային համակարգը 2009թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ. Հայաստանի բանկերի միություն, Երևան, Ապրիլ, 2010, էջ 3:

Պատահական չէ, որ երրորդ եռամսյակում վարկերի գրեթե կեսը՝ 22 մլրդ. դրամ, ուղղվեց արդյունաբերության ոլորտ, այդ թվում՝ ոչ մեծ ձեռնարկությունների ֆինանսավորմանը: Հիփոթեքային վարկավորման աճին նպաստեց 2009թ. հունիսին Կենտրոնական բանկի կողմից «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ<sup>19</sup> հիմնադրումը, որն իրականացնում է հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորում:

2010-2012թթ. ՀՀ տնտեսության, ֆինանսական համակարգի և բանկային ոլորտի համար հետճգնաժամային վերականգնման և զարգացման ժամանակահատված էր, ընդ որում, բանկային ոլորտի զարգացումն անհամեմատ ավելի արագ էր տեղի ունենում, քան ֆինանսական համակարգի և տնտեսության: Դրա մասին են վկայում ՀՀ ՀՆԱ-ի (դոլարային ՀՆԱ) աճի տեմպերը, վարկավորման և ավանդների աճի, ինչպես նաև բանկերի կապիտալիզացիայի աճի ցուցանիշները, որոնք առավել մանրամասն կուսումնասիրենք հետազոտության մյուս ենթահարցերում: ՀՀ տնտեսության հետճգնաժամային վերականգնումը սպասվածից ավելի դանդաղ էր: Դրան չի նպաստում արտաքին անբարենպաստ զարգացումների պահպանումը և ներքին ներդրումային միջավայրի բարձր ռիսկերն ու ցածր գրավչությունը:

Ճգնաժամային տիրույթում բանկային ռիսկերի աճով պայմանավորված նկատվեց ակտիվապասիվային և բանկային ծառայությունների ակտիվության նվազում, մասնավորապես հիփոթեքային վարկավորման մասով: Սակայն հետճգնաժամային տիրույթում արագ վերելքը և հաճախորդներին պահպանելու և շուկաներն ընդարձակելու ցանկությամբ պայմանավորված մրցակցության աճը, նպաստեցին բանկային նոր ծառայությունների և ապրանքների (պրոդուկտների) ի հայտ գալուն: Այդ առումով կարելի է առանձնացնել խնայողական և կուտակային նոր հաշիվների առաջարկումը, նոր քարտային ծրագրերի իրականացումը, խնայողական և կուտակային ավելի գրավիչ հաշիվների առաջարկումը, ընթացիկ հաշիվների հիմքի վրա օվերդրաֆտային սխեմաների գործարկումը, վարկային քարտերի թողարկումը, լիզինգային և ֆակտորինգային ծառայությունների մատուցումը:

ՀՀ բանկային համակարգի միավորման կամ խոշորացումների փուլ (2014թ.-ից մինչև օրս): Այս փուլում ոչ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին 2014թ.-ի դեկտեմ-

<sup>19</sup> <http://www.nmc.am/> [Վերջին մուտք 25.11.2016թ.]:

բերին, քանի որ արձանագրվեց դրամի կտրուկ արժեզրկում, որի արդյունքում անգամ բյուջեի հիմքում դրված փոխարժեքից առաջացավ հսկայական տարբերություն: Հետաքրքիր փաստերից էր նաև այն, որ հենց այդ ժամանակահատվածում սկսվեց խոսվել և արդեն իսկ հետագայում կյանքի կոչվել առևտրային բանկերի կապիտալիզացիայի ավելացման, ինչպես նաև միավորման կամ խոշորացման գաղափարը, քանի որ շատ դեպքերում 30 մլրդ դրամի սահմանագիծը որոշ բանկերի համար անհասանելի էր: Այս փուլի տրամաբանական շարունակությունը եղավ այն, որ դեռևս 2016թ.-ի մարտի դրությամբ ՀՀ բանկային համակարգի վարկային պորտֆելը չէր վերադարձել 2014թ.-ի դեկտեմբերի մակարդակին, իսկ միավորման գործընթացի արդյունքում գրանցվել է միավորման երկու դեպք, այսինքն՝ չորս բանկեր իրենց կապիտալների միավորման գործարքներ են կնքել:

ՀՀ բանկային համակարգի փուլային զարգացումը, ի տարբերություն տնտեսության և ֆինանսական համակարգի մյուս հատվածների և՛ քանակական, և՛ որակական առումով վերընթաց բնույթ է կրել, բացառությամբ որոշ իրավիճակների:

Աղյուսակ 1.1.2

**ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները  
2006-2016թթ.<sup>20 \*</sup>**

հազար դրամ

|                   | Ընդհանուր<br>ակտիվներ | Ընդհանուր<br>պարտավորու-<br>թյուններ | Հաշվեկշռային<br>ընդհանուր<br>կապիտալ | Ընթացիկ<br>ժամանակաշրջանի<br>չբաշխված<br>շահույթ (վնաս)** | Նախորդ<br>ժամանակաշրջանի<br>չբաշխված<br>շահույթ (վնաս)** |
|-------------------|-----------------------|--------------------------------------|--------------------------------------|-----------------------------------------------------------|----------------------------------------------------------|
| <b>31.12.2006</b> | 524 634 072           | 404 362 097                          | 120 271 975                          | 16 418 010                                                | 12 406 486                                               |
| <b>31.12.2007</b> | 764 389 939           | 592 576 251                          | 171 813 689                          | 18 235 423                                                | 20 694 114                                               |
| <b>31.12.2008</b> | 1 024 232 261         | 788 542 414                          | 235 689 847                          | 28 011 277                                                | 37 191 188                                               |
| <b>31.12.2009</b> | 1 325 963 488         | 1 047 579 966                        | 278 383 522                          | 8 969 666                                                 | 55 768 602                                               |
| <b>31.12.2010</b> | 1 560 472 467         | 1 241 521 006                        | 318 951 461                          | 30 468 438                                                | 51 481 736                                               |
| <b>31.12.2011</b> | 2 066 722 761         | 1 710 796 794                        | 355 925 967                          | 31 424 467                                                | 53 950 173                                               |
| <b>31.12.2012</b> | 2 470 631 226         | 2 077 042 203                        | 393 589 023                          | 42 821 279                                                | 66 191 242                                               |
| <b>31.12.2013</b> | 2 943 734 392         | 2 487 701 871                        | 456 032 521                          | 37 928 881                                                | 98 209 091                                               |
| <b>31.12.2014</b> | 3 410 922 738         | 2 941 802 920                        | 469 119 818                          | 21 195 062                                                | 108 335 132                                              |
| <b>31.12.2015</b> | 3 457 080 811         | 2 943 030 970                        | 514 049 841                          | (20 356 731)                                              | 122 137 908                                              |
| <b>30.9.2016</b>  | 3 553 606 098         | 2 982 638 088                        | 570 968 010                          | 8 429 537                                                 | 98 722 602                                               |

\* Տվյալները վերցված են բանկերի ամսական հաշվետվություններից:

\*\* Տվյալները ներկայացված են կուտակային:

<sup>20</sup> <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx> [Վերջին մուտք 25.11.2016թ.]:

Այսպես, ՀՀ բանկային համակարգին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների ավելի, քան 90%-ը<sup>21</sup>:

2016թ.-ի 10 ամիսների ընթացքում ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն աճել են 98 մլրդ դրամով և կազմել 3 տրլն 553 մլրդ դրամ, ընդ որում ակտիվների կազմում հիմնականում ավելացել են տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները: 2015 թվականի ընթացքում ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը ավելացել է մոտ 56 մլրդ դրամով և կազմել 570 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի աճի հետ մեկտեղ ընթացիկ ժամանակահատվածի չբաշխված շահույթ (վնաս) ցուցանիշով արձանագրվել է 8.4 մլրդ դրամի հասնող շահույթ, իսկ միակ վնասով դեպքն արձանագրվել է 2006թ.-ից հետո միայն 2015թ.-ին՝ մոտ 20.4 մլրդ դրամ:

Աղյուսակ 1.1.3

**ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական հաշվեկշռային ցուցանիշները 2006-2016թթ.<sup>22\*</sup>**

հազար դրամ

|                   | Ընդհանուր ակտիվներ | Ընդհանուր պարտավորություններ | Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ | Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ (վնաս)** | Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ (վնաս)** |
|-------------------|--------------------|------------------------------|--------------------------------|--------------------------------------------------|-------------------------------------------------|
| <b>31.12.2006</b> | 20 588 830         | 12 132 726                   | 8 456 104                      | 105 944                                          | (188 787)                                       |
| <b>31.12.2007</b> | 43 375 330         | 30 889 496                   | 12 485 834                     | 1 816 492                                        | (532 395)                                       |
| <b>31.12.2008</b> | 65 816 602         | 47 761 082                   | 18 055 520                     | 2 997 313                                        | 531 697                                         |
| <b>31.12.2009</b> | 75 822 821         | 49 573 440                   | 26 249 381                     | 2 585 136                                        | 3 318 727                                       |
| <b>31.12.2010</b> | 87 194 889         | 51 229 670                   | 35 965 132                     | 4 254 959                                        | 5 314 287                                       |
| <b>31.12.2011</b> | 123 850 974        | 77 006 457                   | 46 844 518                     | 2 766 763                                        | 5 904 156                                       |
| <b>31.12.2012</b> | 168 530 773        | 105 653 830                  | 62 877 084                     | 4 645 344                                        | 6 336 255                                       |
| <b>31.12.2013</b> | 209 841 599        | 132 243 167                  | 77 598 432                     | 5 746 469                                        | 8 419 572                                       |
| <b>31.12.2014</b> | 269 156 880        | 159 508 741                  | 109 648 139                    | 9 861 001                                        | 11 580 066                                      |
| <b>31.12.2015</b> | 308 627 870        | 176 420 773                  | 132 207 097                    | 10 318 374                                       | 18 114 209                                      |
| <b>30.9.2016</b>  | 350 707 394        | 188 349 718                  | 162 357 676                    | 11 634 643                                       | 22 996 536                                      |

\* Տվյալները վերցված են վարկային կազմակերպությունների ամսական հաշվետվություններից:

\*\* Տվյալները ներկայացված են կուտակային:

Ինչ վերաբերում է վարկային կազմակերպություններին, ապա վերջիններիս ընդհանուր ակտիվները 2015թ.-ին կազմել են 308 մլրդ դրամ, իսկ 2016թ.-ի 10 ամիսների ընթացքում հասնելով՝ 350 մլրդ դրամի: Կարևոր ցուցանիշներից է նաև այն, որ

<sup>21</sup> <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx> [Վերջին մուտք 25.11.2016թ.]:

<sup>22</sup> <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx> [Վերջին մուտք 25.11.2016թ.]:


վարկային կազմակերպությունների պարտավորությունները 2016թ.-ին աճել են շատ ավելի դանդաղ, քան ակտիվները, այսինքն՝ ակտիվներ/պարտավորություններ մասով վարկային կազմակերպությունները հայտնվել են նպաստավոր պայմաններում:

Վերոնշյալ երկու աղյուսակների (1.1.2 և 1.1.3) տրամաբանության հիման վրա կառուցելով ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների համադրական գծապատկերը նկատում ենք, որ վարկային կազմակերպությունների դերն ավելացել է, սակայն չի գերազանցում 10%-ի մակարդակը:

Հետանկախության շրջանում ՀՀ բանկային համակարգի զարգացման մասին ամփոփ պատկերացում է տալիս ֆինանսական խորության ցուցանիշների փոփոխությունը: Դիտարկվող ժամանակահատվածում և՛ ակտիվների, և՛ ընդհանուր կապիտալի և՛ պասիվաակտիվայի գործառնությունների մասով գրանցվել է զգալի առաջընթաց:

*Գծապատկեր 1.1.1*

**ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների ակտիվների տեսակարար կշիռները 2006-2016թթ.**



Բերված ցուցանիշները վկայում է նաև, որ բանկային համակարգի զարգացումը քիչ է կոռելյացվում տնտեսության, հատկապես ավելացված արժեք ստեղծող ճյուղերի զարգացման հետ: Ակնհայտ է, որ այդ առաջընթացին զգալի չափով «օգնել է» ՀՆԱ-ի ճգնաժամային զգալի անկումը և հետճգնաժամային ժամանակահատվածում աճի տեմպերի ավելի քան եռակի նվազումը:

Նկատենք, որ առաջիկա տարիներին բանկային համակարգի և ՀՆԱ-ի աճի տեմպերի միջև զգալի խզման պահպանումը կարող է լուրջ ռիսկեր առաջացնել բանկային համակարգի համար և հաճախորդների թվի նվազման և նրանց վճարունակության անկման առումով՝ սահմանափակելով բանկային ծառայությունների շուկայի հետագա զարգացումը:

Աղյուսակ 1.1.4

**ՀՀ բանկային համակարգի ֆինանսական խորության ցուցանիշները 2007-2015թթ.<sup>23</sup>**

|                                          | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|------------------------------------------|------|------|------|------|------|------|------|------|------|
| <b>Բանկային համակարգի ակտիվներ / ՀՆԱ</b> | 24,3 | 28,7 | 42,2 | 45,1 | 54,7 | 61,8 | 69,0 | 70,3 | 68,5 |
| <b>Բանկային համակարգի վարկեր / ՀՆԱ</b>   | 13,5 | 17,8 | 23,4 | 27,4 | 33,6 | 40,2 | 42,1 | 42,7 | 39,8 |

2015թ.-ին տարածաշրջանային զարգացումներից բխող տնտեսական անորոշությունների աճի ներքո տնտեսությունում վարկային ռեսուրսների նկատմամբ պահանջարկի նվազման պայմաններում արձանագրվել է ֆինանսական միջնորդության որոշակի նվազում: Ֆինանսական համակարգի ակտիվների ու ՀՆԱ-ի և վարկերի ու ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշները նվազել են 7.0 և 5.7 տոկոսային կետով և կազմել համապատասխանաբար 76.8% և 43.4%: Ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցը դարձյալ բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 89.2%-ը: Այս համատեքստում, ֆինանսական կայունության գնահատման տեսանկյունից, առավելապես կարևորվում են բանկային համակարգի գործունեության ռիսկայնության բացահայտումն ու գնահատումը: Ապահովագրական, արժեթղթերի շուկաների և ֆինանսական համակարգի մյուս մասնակիցների մասնաբաժինները շարունակում են մնալ փոքր, և Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության վրա վերջիններիս գործունեության ազդեցությունը նշանակալի չէ<sup>24</sup>:

2015թ. ընթացքում տնտեսությանը տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ նվազել է և կազմել 39.8%-ով, իսկ առավելագույն ցուցանիշը գրանցվել է 2014թ.-ին՝ կազմելով 42.7%: Փաստը մնում է այն, որ ՀՆԱ-ի մեջ բանկային համա-

<sup>23</sup> <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx> [Վերջին մուտք 13.06.2016թ.]:

<sup>24</sup> ՀՀ կենտրոնական բանկ «Ֆինանսական կայունության հաշվետվություն» 2015, էջ 32:



կարգի ակտիվների, ինչպես նաև վարկերի տեսակարար կշիռը 2007թ.-ից սկսած բավականին աճել է, աճի պիկը գտնվել է 2014թ.-ին, իսկ 2015թ.-ը ՀՀ բանկային համակարգի համար եղել է ոչ նպաստավոր<sup>25</sup>: 2014թ.-ի դեկտեմբերի ցուցանիշը հնարավոր եղավ գերազանցել միայն 2016թ.-ի աշնանը, իսկ մինչ այդ վարկավորման ծավալները չէին վերականգնվում: Վերականգնման համար էլ հիմք է հանդիսացել ոչ թե տնտեսության, այլ հիմնականում ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը, որտեղ բանկային համակարգն ունի հսկայական տեսակարար կշիռ, քանի որ 2016թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների 149.6 մլրդ դրամ պակասուրդից 139.8 մլրդ դրամը ֆինանսավորվել է բանկային համակարգի կողմից<sup>26</sup>: Այսինքն՝ բանկային համակարգը սկսել է ծառայել պետական բյուջեի, այլ ոչ թե տնտեսության ֆինանսավորմանը: Իսկ քանի որ պետությունն ավելի վստահելի գործընկեր է, ապա բանկային համակարգն իր զարգացման վեկտորն ընտրում է ոչ թե դեպի տնտեսությունը, այլ դեպի ՊԿՊ-ների շուկան:

Հայաստանում 2015թ.-ի ընթացքում մոտ 69 մլրդ դրամով վարկերի պորտֆելի նվազումը խոսում է այն մասին, որ բանկերը կա՛մ ռեսուրսներ չեն ունեցել ավելի շատ վարկեր տալու, կա՛մ մարդիկ հասկացել են, որ նման բարձր տոկոսներով վարկեր վերցնելն ունի անհեռանկարային և վտանգավոր բնույթ: Այս տեսանկյունից նաև սկիզբ է առնել մի գործընթաց, որի արդյունքում փոքր բանկերը սկսել են միավորվել կամ կլանվել խոշոր բանկերի կողմից: Այսինքն՝ ռեսուրսների կենտրոնացման գործընթաց է սկսվել: Դա կարելի է կապել նաև ՀՀ-ում դրամական փոխանցումների և տրանսֆերտների ծավալի նվազման հետ, որը ևս կարևորագույն գործոններից է:

Համեմատելով ՀՀ բանկերի կողմից 2015թ.-ին ներգրավված ավանդները՝ նկատում ենք, որ 2014թ.-ի համեմատությամբ 2015թ.-ին 194 մլրդ դրամի ավանդներ ավելի են ներգրավվել: Սա փաստում է այն մասին, որ բանկային համակարգը սկսել է վնասով աշխատել, ներգրավում են ավանդներ սեփական խնդիրները լուծելու համար, իսկ վարկավորման համար անհրաժեշտ գումարներ չեն մնում կամ չունեն, ինչպես նաև աճել է չվերադարձվող վարկերի տեսակարար կշիռը: Կարելի է նաև ենթադրել, որ

<sup>25</sup> ՀՀ կենտրոնական բանկ «Ֆինանսական կայունության հաշվետվություն» 2015, էջ 32:

<sup>26</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-սեպտեմբերին, էջ 93: <http://armstat.am/am/?nid=82&id=1817> [Վերջին մուտք 25.11.2016թ.]:

վարկեր տրամադրելու հետ կապված առկա է խստացված ռեժիմ, ուսումնասիրում են բոլոր հնարավոր ռիսկերը, իսկ դրանց առկայության դեպքում մերժում են վարկի տրամադրումը: Նման պայմաններում ակնկալել, որ տնտեսությունը կգարգանա առաջանցիկ տեմպերով բավականին դժվար է, քանի որ վարկերի և տնտեսական աճի միջև կապն ակնհայտ է: Մնում է միայն կիրառել նորամուծական մոտեցումներ, որոնք հիմք կհանդիսանան ավելի գրավիչ պայմաններով վարկեր տրամադրելու համար:

Աղյուսակ 1.1.5

**Առևտրային բանկերի վարկերն, ըստ տնտեսության հատվածների 2010-2016թթ.<sup>27</sup>**  
(ժամանակահատվածի վերջ, մլն. ՀՀ դրամ)

| Վարկեր                                          | 2010           | 2011             | 2012             | 2013             | 2014             | 2015             | 2016/10          |
|-------------------------------------------------|----------------|------------------|------------------|------------------|------------------|------------------|------------------|
| <b>Ռեզիդենտներին</b>                            | 905 495        | 1 226 620        | 1 559 856        | 1 743 703        | 2 091 377        | 2 005 242        | 2,047,149        |
| Դրամով                                          | 393 100        | 483 654          | 560 566          | 667 184          | 714 849          | 680 908          | 704,059          |
| Արտարժույթով                                    | 512 395        | 742 966          | 999 289          | 1 076 520        | 1 376 528        | 1 324 334        | 1,343,089        |
| Այդ թվում՝                                      |                |                  |                  |                  |                  |                  |                  |
| <b>Ձեռնարկություններին</b>                      | 505 676        | 710 787          | 935 669          | 991 041          | 1 181 094        | 1 126 052        | 1,163,412        |
| Դրամով                                          | 139 179        | 153 601          | 158 761          | 182 334          | 175 480          | 179 438          | 178,810          |
| Մասնավոր                                        | 135 208        | 150 980          | 156 303          | 176 828          | 173 443          | 176 396          | 177,369          |
| Պետական                                         | 3 971          | 2 620            | 2 459            | 5 506            | 2 037            | 3 042            | 1,442            |
| Արտարժույթով                                    | 366 497        | 557 186          | 776 907          | 808 706          | 1 005 615        | 946 614          | 984,602          |
| Մասնավոր                                        | 356 034        | 537 697          | 758 752          | 789 969          | 986 549          | 923 455          | 965,428          |
| Պետական                                         | 10 463         | 19 489           | 18 155           | 18 737           | 19 065           | 23 159           | 19,174           |
| <b>Տնային տնտեսություններին</b>                 | 369 172        | 478 702          | 561 906          | 668 670          | 812 194          | 779 952          | 767,695          |
| Դրամով                                          | 237 258        | 310 179          | 375 477          | 445 816          | 506 312          | 466 558          | 471,978          |
| Արտարժույթով                                    | 131 913        | 168 522          | 186 429          | 222 854          | 305 882          | 313 394          | 295,717          |
| <b>Շահույթ չհետապնդող կազմակերպություններին</b> | 12 160         | 13 839           | 31 043           | 44 616           | 63 628           | 62 075           | 68,403           |
| Դրամով                                          | 971            | 1 383            | 4 169            | 7 454            | 7 226            | 5 045            | 13,390           |
| Արտարժույթով                                    | 11 190         | 12 456           | 26 874           | 37 162           | 56 402           | 57 030           | 55,013           |
| <b>Այլ ֆինանսական կազմակերպություններին</b>     | 18 487         | 23 293           | 31 237           | 39 377           | 34 460           | 37 162           | 47,639           |
| Դրամով                                          | 15 692         | 18 491           | 22 159           | 31 580           | 25 832           | 29 866           | 39,881           |
| Արտարժույթով                                    | 2 795          | 4 802            | 9 078            | 7 797            | 8 629            | 7 296            | 7,757            |
| <b>Ոչ ռեզիդենտներին</b>                         | 43 644         | 42 169           | 45 824           | 54 552           | 96 979           | 114 271          | 206,584          |
| Դրամով                                          | 10 541         | 11 350           | 12 708           | 13 365           | 15 881           | 46 611           | 121,409          |
| Արտարժույթով                                    | 33 102         | 30 819           | 33 116           | 41 186           | 81 099           | 67 660           | 85,174           |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐԿԵՐ</b>                          | <b>949 139</b> | <b>1 268 789</b> | <b>1 605 680</b> | <b>1 798 255</b> | <b>2 188 357</b> | <b>2 119 513</b> | <b>2,253,732</b> |

ՀՀ-ում արտարժույթով տրված վարկերը 2016թ.-ի 10 ամիսների կտրվածքով կազմել են մոտ 1 տրիլիոն 428 մլրդ դրամ, որը հսկայական մեծություն է և կազմում է ամբողջ վարկային պորտֆելի մոտ 63%-ը, իսկ դա նշանակում է, որ 1 ԱՄՆ դոլարը

<sup>27</sup> <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx> [Վերջին մուտք 25.11.2016թ.]:

յուրաքանչյուր արժևորման արդյունքում մեր վարկառուներին ստիպում է կրել վնասներ՝ բախվելով ֆինանսական խնդիրների հետ:

Պետք է նաև նշել, որ ՀՀ տնտեսության վարկավորման լավագույն ժամանակահատվածը համընկնում է 2014թ.-ի դեկտեմբերի հետ, քանի որ վարկավորման ծավալները կազմել են 2 տրիլիոն 188 մլրդ դրամ, սակայն դոլարի կտրուկ արժևորումը ամբողջ 2015թ.-ի ընթացքում ՀՀ բանկային համակարգի համար լուրջ հարված էր: Եվ միայն վերջին մի քանի ամիսների ընթացքում է վարկավորման ծավալների աճ արձանագրվել 2016թ.-ի հոկտեմբերի դրությամբ հասնելով 2 տրիլիոն 253 մլրդ դրամի:

Կորպորատիվ հատվածի կողմից վերցված վարկերը կազմել են 1 տրիլիոն 163 մլրդ դրամ, որից 984 մլրդ արտարժույթային վարկեր են, հետաքրքիր է նաև, որ 2014թ.-ին ձեռնարկությունների արտարժույթային վարկերը գերազանցել էին 1 տրիլիոն դրամի սահմանագիծը, սակայն հետագայում արդեն ավելի զգուշավոր են վերջիններս գտնվել և չեն ավելացրել իրենց արտարժույթային վարկային պորտֆելը:

Տնային տնտեսությունների վարկավորման ծավալները ևս վազել են, քանի որ 2014թ.-ին դրանք կազմել են 812 մլրդ դրամ, իսկ 2016թ.-ի հոկտեմբերին հասել են 767 մլրդ դրամի: Բանկային համակարգի կողմից արդյունավետ վարկավորում իրականացնելու համար շատ մեծ կարևորություն ունի նաև յուրաքանչյուր խմբին ցուցաբերվող մոտեցումը:

Հետաքրքիր է նաև ուսումնասիրել ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրվող ավանդների վիճակագրությունը:

Բանկային համակարգի լրջագույն խնդիրներից է այն, որ ավանդներն աճում են ավելի արագ, քան վարկերը: Բանկերը շատ զգուշությամբ են վարկ տալիս: Այս միտումը միայն փոխվել է 2016թ.-ի ապրիլին, քանի որ ավանդների չափը 2016թ.-ի հոկտեմբերին կազմել էր 2 տրիլիոն 175 մլրդ դրամ, որից մոտ 1 տրիլիոն 410 մլրդ դրամի չափով դրված են արտարժույթային ավանդներ: Հետաքրքիր մեկ ցուցանիշ ևս ավանդների և վարկերի տարբերությունը ընդամենը 78 մլրդ դրամ է (2.253 վարկ-2.175 ավանդ տրլն դրամ):

Վարկերի և ավանդների տարբերությունը մի քանի տարի առաջ 2012թ.-ին կազմել է մոտ 420 մլրդ դրամ, ինչ է ստացվում Հայաստանի տնտեսությունը չի

կարողանում «մարսել» վերցրած ավանդները, որի արդյունքում ավանդները մոտենում են վարկավորման ցուցանիշին:

Աղյուսակ 1.1.6

**Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների  
2012-2016թթ.<sup>28</sup>**

**(ժամանակահատվածի վերջ, մլն. ՀՀ դրամ)**

| <b>ԱՎԱՆԴՆԵՐ</b>                                                                                                        | <b>2012</b>      | <b>2013</b>      | <b>2014</b>      | <b>2015</b>      | <b>2016/10</b>   |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------|------------------|------------------|------------------|------------------|
| <b>Ոչ ռեզիդենտներից</b>                                                                                                | 262,391          | 463,593          | 437,780          | 449,263          | 508,680          |
| Արտարժույթով                                                                                                           | 244,200          | 443,736          | 411,370          | 391,485          | 387,166          |
| Դրամով                                                                                                                 | 18,191           | 19,857           | 26,411           | 57,778           | 121,514          |
| <b>Ռեզիդենտներից</b>                                                                                                   | 949,754          | 1,148,849        | 1,319,733        | 1,501,844        | 1,667,027        |
| <b>Դրամով</b>                                                                                                          | 348,487          | 460,278          | 472,970          | 536,069          | 643,957          |
| Ցախահանջ (ներառյալ՝ հաշիվները)                                                                                         | 159,147          | 195,628          | 180,543          | 210,040          | 220,515          |
| Ձեռնարկություններից                                                                                                    | 71,379           | 90,960           | 78,684           | 87,652           | 89,565           |
| Տնային տնտեսություններից                                                                                               | 63,223           | 77,551           | 71,419           | 84,448           | 89,632           |
| Շահույթ չհետապնդող<br>կազմակերպություններից                                                                            | 21,829           | 23,928           | 25,584           | 30,773           | 35,195           |
| Այլ ֆինանսական կազմակերպություններից                                                                                   | 2,716            | 3,190            | 4,855            | 7,166            | 6,123            |
| <b>Ժամկետային</b>                                                                                                      | 189,339          | 264,651          | 292,427          | 326,029          | 423,442          |
| Ձեռնարկություններից                                                                                                    | 18,979           | 33,762           | 38,878           | 35,887           | 62,637           |
| Տնային տնտեսություններից                                                                                               | 134,116          | 183,273          | 186,093          | 203,991          | 248,509          |
| Շահույթ չհետապնդող<br>կազմակերպություններից                                                                            | 12,355           | 14,000           | 17,164           | 16,042           | 23,513           |
| Այլ ֆինանսական կազմակերպություններից                                                                                   | 23,489           | 32,915           | 48,691           | 68,334           | 88,480           |
| Ռեպո համաձայնագրերի գծով<br>պարտավորություններ ռեզիդենտների<br>հանդեպ (բացառությամբ միջբանկային<br>գործառնությունների) | 400              | 700              | 1,602            | 1,775            | 302              |
| <b>Արտարժույթով</b>                                                                                                    | 601,267          | 688,571          | 846,763          | 965,776          | 1,023,071        |
| Ցախահանջ (ներառյալ՝ հաշիվները)                                                                                         | 149,044          | 146,400          | 209,052          | 240,397          | 241,212          |
| Ձեռնարկություններից                                                                                                    | 72,153           | 59,935           | 107,664          | 133,132          | 120,141          |
| Տնային տնտեսություններից                                                                                               | 68,314           | 70,727           | 85,641           | 90,973           | 97,072           |
| Շահույթ չհետապնդող<br>կազմակերպություններից                                                                            | 6,905            | 10,957           | 11,208           | 13,052           | 14,772           |
| Այլ ֆինանսական կազմակերպություններից                                                                                   | 1,672            | 4,781            | 4,540            | 3,240            | 9,227            |
| <b>Ժամկետային</b>                                                                                                      | 452,223          | 542,171          | 637,711          | 725,379          | 781,859          |
| Ձեռնարկություններից                                                                                                    | 55,176           | 54,401           | 57,058           | 67,446           | 91,788           |
| Տնային տնտեսություններից                                                                                               | 372,695          | 458,676          | 550,999          | 626,547          | 657,797          |
| Շահույթ չհետապնդող<br>կազմակերպություններից                                                                            | 15,413           | 19,291           | 16,668           | 20,950           | 21,232           |
| Այլ ֆինանսական կազմակերպություններից                                                                                   | 8,939            | 9,803            | 12,986           | 10,436           | 11,042           |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱՎԱՆԴՆԵՐ</b>                                                                                               | <b>1,212,145</b> | <b>1,612,442</b> | <b>1,757,514</b> | <b>1,951,107</b> | <b>2,175,708</b> |

<sup>28</sup> <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx> [Վերջին մուտք 25.11.2016թ.]:

Հետաքրքիր է նաև, որ 2016թ.-ի ապրիլին ավանդների նվազեցման փաստ գրանցվեց, որն ամենայն հավանականությամբ պայմանավորված էր լարված ռազմական իրավիճակով և տնտեսության ու բանկային համակարգի նկատմամբ վստահության անկմամբ, քանի որ, եթե առկա է ռազմական և քաղաքական ռիսկ, ապա տնտեսությունից և բանկային համակարգից կապիտալի արտահոսքն անխուսափելի է, որով էլ պայմանավորված է վստահության անկումը:

Բարձր տոկոսադրույքները և վարկավորման ծավալների կրճատումն ազդում են տնտեսական աճի վրա, իսկ մյուս կողմից մարդկանց խնայողությունները տնտեսության մեջ չգտնելով ներդրումների համար համապատասխան նպաստավոր ոլորտներ տեղաբաշխվում են բանկերում ավանդների տեսքով, որի լավագույն վկայությունը ձեռնարկությունների և տնային տնտեսությունների կողմից դրված ավանդների ցուցանշի աճն է: Այս միտումները փաստում են, որ Հայաստանում բանկային համակարգում հասունանում են որոշակի խնդիրներ, որոնց լուծման տարբերակները շատ դեպքերում ոչ թե պայմանավորված են առանձին առևտրային բանկերի գործունեության հետ, այլ համակարգային բնույթ ունեն:

Վերլուծելով ՀՀ միջազգային պահուստների միտումները, որոնք ներկայացրել են տարեվերջյան ցուցանիշներով (դեկտեմբեր) նկատում ենք, որ դրանք ամենաշատն են եղել 2013թ.-ին՝ կազմելով 2 մլրդ 251 մլն ԱՄՆ դոլար, իսկ հետագայում նվազել են, իսկ 2016թ.-ի 10 ամիսների ընթացքում հասել են 1 մլրդ 839 մլն ԱՄՆ դոլարի: Այսինքն՝ միայն 2015թ.-ի դեկտեմբերի համեմատությամբ աճը կազմել է 64 մլն ԱՄՆ դոլար:

*Աղյուսակ 1.1.7*  
**ՀՀ միջազգային պահուստների կառուցվածքը 2008-2016թթ.<sup>29</sup>**  
(մլն. ԱՄՆ դոլար)

|                           | 2008   | 2009   | 2010   | 2011   | 2012   | 2013   | 2014   | 2015   | 2016/10 |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|---------|
|                           | 1406,8 | 2003,7 | 1865,8 | 1932,5 | 1799,4 | 2251,6 | 1489,4 | 1775,3 | 1839,1  |
| Ոսկի                      | 0      | 0      | 0      | 0      | 0      | 0      | 0      | 0,0    | 0.0     |
| ՀՓԻ ԱՄՀ-ում               | 2,9    | 124,7  | 33,5   | 57,0   | 31,7   | 1,9    | 6,2    | 2,9    | 7.3     |
| Պահուստային դիրքը ԱՄՀ-ում | 0      | 0      | 0      | 0      | 0      | 0      | 0      | 0,0    | 0.0     |
| Արտարժույթ                | 1403,9 | 1879,0 | 1832,3 | 1875,4 | 1767,7 | 2249,7 | 1483,2 | 1772,4 | 1831,9  |

Միջազգային պահուստների ուսումնասիրությունն ավելի նպատակահարմար է իրականացնել ամիսների կտրվածքով, քանի որ տնտեսության մեջ, երբեմն, գրանց-

<sup>29</sup> <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> [Վերջին մուտք 25.11.2016թ.]:

վում են ճգնաժամային իրավիճակներ, որոնց հաղթահարման համար Կենտրոնական բանկը ստիպված է լինում օգտագործել իր միջազգային պահուստները:

Իհարկե, միջազգային պահուստների հիման վրա կարելի է պատկերացում կազմել կոնկրետ երկրի բանկային համակարգի վերաբերյալ, քանի որ պահուստների մեծությունն իրենից ներկայացնում է նաև բանկային համակարգի «անվտանգության բարձրկը»: Մյուս կողմից դա նաև վճարային հաշվեկշռի կարգավորման մասին կարող է փաստել:

Իհարկե, ՀՀ և համաշխարհային բանկային համակարգերի զարգացման միտումներն ու հիմնախնդիրներն այսքանով չեն սահմանափակվում, դրանք սկսած առանձին տոկոսադրույքներից, իրավական կարգավորումներից, մինչև ոլորտային վարկավորումները կարելի է մանրամասն դիտարկել՝ փորձելով վեր հանել առկա հնարավոր զարգացումները, սակայն փաստը մնում է այն, որ այս հիմնախնդիրներին հարկավոր է գտնել արդյունավետ լուծումներ, ինչպես նաև զարգացնել այնպիսի մոդելներ, որոնք շահավետ կլինեն և՛ առևտրային բանկերի, և՛ ձեռնարկությունների, և՛ տնային տնտեսությունների համար: Մյուս կողմից բանկային համակարգում կիրառվող ցանկացած նորամուծություն պետք է ծառայի ոչ միայն բանկի հարստացմանը, այլ ուղղված լինի իրական տնտեսական աճին ու զարգացմանը:

## **1.2. Ֆինանսական նորաստեղծությունների տեսական հիմնահարցերը բանկային համակարգում**

Ինովացիա (նորամուծություն) հասկացությունը (անգլերեն՝ Innovation) առաջին անգամ գիտական հետազոտություններում հայտնվել է 20-րդ դարում և ժամանակի ընթացքում վերաիմաստավորվել է: Հայտնի ավստրիացի տնտեսագետ Յ. Ա. Շումպետերը (1883-1950թթ.) իր «Տնտեսական զարգացման տեսություն» աշխատության մեջ առաջին անգամ քննարկել է ինովացիայի և ինովացիոն գործունեության հետ առնչվող խնդիրները<sup>30</sup>:

Ցանկացած երկիր կարող է առաջնային դիրք գրավել, եթե ունի նկատելի մրցակցային առավելություններ և թողարկվող արտադրանքի մեծ ծավալներ, այդ իսկ պատ-

<sup>30</sup> Шумпетер И., Теория экономического развития. Общ. ред. Милейковского А.Г. М., Прогресс 1982, 455с.

ճառով ինովացիաներն անհրաժեշտ ու պարտադիր են: Յուրաքանչյուր երկրի զարգացման շարժիչ ուժը տեխնոլոգիական և տեղեկատվական զարգացման մակարդակն է և երկիրը, անկախ իր տնտեսության վարման եղանակից ու ձևից, անհնար է պատկերացնել առանց ինովացիաների: Վերջիններս տնտեսական կյանքի առաջընթացի կարևոր գրավականն են: Հետևաբար, դրանց ներդրման մեխանիզմների բացահայտման կարևորությունը և ուսումնասիրությունն այժմեական և ակնհայտ է դառնում:

Խնդիրն առավել մեծ արդիականություն է ստանում բանկային ինովացիաների էությանն ու նշանակությանն առնչվող հարցերի ուսումնասիրության համատեքստում, քանի որ բանկային համակարգի զարգացման գործում ֆինանսական նորաստեղծություններն ունեն իրենց ուրույն դերակատարումը և նիշան (խորշը):

Բանկային ինովացիաներն իրենցից ներկայացնում են բանկի գործունեության տարբեր կողմերի, այդ թվում՝ նաև մրցակիցների նվաճումների, վերլուծության հիման վրա իրականացվող անընդհատ նորացման գործընթաց: Բանկային նորամուծությունն իր բովանդակությամբ բնորոշվում է հետևյալ կերպ.

- բանկային նորամուծություն է համարվում այն նորույթը, որն առաջին անգամ է հայտնվում տվյալ երկրի ֆինանսական շուկայում, այսինքն՝ տվյալ բանկում, մշակվել է բանկի կողմից ինքնուրույն, նախկինում չի ունեցել իր համանմանը և այդ նորույթն ուղղված է հաճախորդի նոր պահանջների բավարարմանը և բանկին ապահովում է լրացուցիչ եկամուտ,
- բանկային նորամուծություն կարող է լինել արտասահմանյան բանկային շուկայում առկա արտադրանքը կամ ծառայությունը, որը սակայն առաջին անգամ է կիրառվում տվյալ երկրի բանկային ոլորտում,
- բանկային նորամուծություն են համարվում այն ֆինանսական և այլ գործառնությունները, որոնք կարող են իրացվել ինչպես արտաքին միջավայրում՝ ֆինանսական շուկայում, այնպես էլ բանկի ներսում տարբեր գործառնությունների տեսքով<sup>31</sup>,
- ցանկացած արտադրանք կամ ծառայություն, որը ներդրվել է բանկի կողմից շուկայի վերլուծության և շուկայում արդեն եղած արտադրանքի կամ ծառայության

<sup>31</sup> W.Scott Frame, Lawrence J. White, Federal Reserve Bank Of Atlanta, Working Paper 2002-12 July 2002, p. 5.

առևտրային իրացվելիության գնահատման հիման վրա կարող է դառնալ նորամուծություն<sup>32</sup>:

Այս բնորոշումները բավականին մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ շատ դեպքերում անգամ գիտական բանավեճ գոյություն ունի թե ինչը համարել նորամուծություն, փաստացի մեկն այստեղ նա է, որ անկախ նրանից դա ստեղծվել է տվյալ երկրի բանկային համակարգում, թե փոխառնվել է այլ երկրի բանկային համակարգից կարևորագույն բաղադրիչը, որպես այդպիսին մնում է եկամուտների ավելացումը և հաճախորդների սպասարկման որակի բարելավումը, դա կլինի վերջիններիս ժամանակի խնայողության, ծախսերի կրճատման, եկամուտների ավելացման, թե հարմարավետ պայմաններում ծառայությունների մատուցման տեսքով:

Շուկայում իրացվող նոր բանկային արտադրանքը և ծառայությունն իրենց ամբողջությամբ կազմում են բանկային ինովացիան: Ընդհանրացնելով կարելի է ասել, որ բանկային ինովացիան կամ բանկային նոր արտադրանքի և ծառայությունների ամբողջությունը, բանկի գործունեության հետևանք է, որն ուղղված է լրացուցիչ եկամուտների ստացմանը՝ ռեսուրսային ներուժի տեղաբաշխման և ձևավորման համար բարենպաստ պայմանների ստեղծման գործընթացում, այն ինովացիաների օգնությամբ, որոնք հաճախորդների համար ապահովում են շահույթ<sup>33</sup>:

Բանկային ինովացիաներին հատուկ են՝ նորույթը, շուկայական պահանջարկի բավարարումը և առևտրային իրացումը: «Նորամուծություն» հասկացությունն ընդունելի է բանկային գործունեության բոլոր ոլորտների նկատմամբ: Այն ապահովում է որոշակի տնտեսական կամ ռազմավարական արդյունք, ինչպես օրինակ՝ բանկի հաճախորդների թվի ավելացումը, շուկայում մասնաբաժնի աճը, որևէ գործառնության իրականացման ծախսերի կրճատումը և այլն, կամ պայմաններ են ստեղծվում բոլոր վերը նշվածների համար: Ինովացիոն գործընթացը, այսինքն՝ այն գործընթացը, որն ընդգրկում է ինովացիաների ստեղծման, յուրացման և տարածման գործընթացը, ներառում է բանկային գործունեության բոլոր կողմերը՝ հայեցակարգի մշակումից կամ գաղափարից մինչև դրա գործնական իրացումը:

<sup>32</sup> О стратегии развития банковского сектора Российской Федерации// Вестник Банка России. 2002, N5 (583), с. 17-30.

<sup>33</sup> Дериг Ханс – Ульрих. Универсальный банк – банк будущего. Финансовая стратегия на рубеже века. Пер. с нем.- М. Международные отношения, 2001, 384 с. (304 - 305).



Այսինքն՝ նորամուծությունների ներդրման գաղափարախոսությունը պետք է ունենա հայեցակարգային հիմքեր, դրված լինի բանկի ֆինանսական զարգացման ռազմավարության մեջ, իսկ նորամուծական մտածելակերպը պետք է դրված լինի յուրաքանչյուր աշխատողի գործունեության մեջ:

Ֆինանսական շուկայում անընդմեջ ի հայտ են գալիս ամենատարբեր նոր բանկային արտադրանքներ և գործառնություններ: Բանկային ինովացիաների ի հայտ գալը պայմանավորված է երեք հիմնական պատճառներով՝

1. գիտական մտքի անընդմեջ շարժով և աճով, ինչպես նաև մրցակիցներից առաջ անցնելու ձգտումով,
2. բանկային համակարգում պարբերաբար առաջացող ճգնաժամերով (ինչպես մեկ բանկի ներսում, այնպես էլ երկրի ամբողջ բանկային համակարգում), ինչը հանդիսանում է որպես շարժառիթ ֆինանսական մտքի աճի և բանկի (բանկային համակարգի) ֆինանսական կայունության համար,
3. ֆինանսական շուկայի գործունեության ոլորտի ընդլայնումը երկրի սահմաններից դուրս, որը տեղեկատվություն է տալիս այլ երկրներում կիրառվող նոր բանկային մեթոդների և արդյունքների վերաբերյալ:

Բանկի արդյունավետությունը և մրցունակությունը շուկայում մեծամասամբ կախված են նոր բանկային արդյունքների և տեխնոլոգիաների (գործընթացների) ներդրումից: Ինչպես նշեցինք, շուկայում իրացվող նոր արտադրանքը, արդյունքը կամ տեխնոլոգիան համարվում է նորամուծություն: Ինովացիաները, որոնք գործում են ֆինանսական ոլորտում կոչվում են ֆինանսական նորամուծություններ: Ֆինանսական ինովացիաների գերակշիռ մասը ստեղծվում է բանկերի կողմից բանկային արտադրանքի, արդյունքի կամ տեխնոլոգիայի (գործառնությունների) տեսքով: Դրանք կոչվում են բանկային նորամուծություններ <sup>34</sup>:

Ըստ էության, բանկային ինովացիան նոր բանկային գործառնության (տեխնոլոգիայի) իրացումն է կամ բանկի ինովացիոն գործունեության վերջնական արդյունքը: Ընդհանրացնելով կարելի է արձանագրել, որ բանկային ինովացիայի լայն հասկացության ներքո ենթադրվում է մի արդյունք, որը ենթակա է իրացման շուկայում բանկային ար-

<sup>34</sup> W. Scott Frame, Lawrence J. White, Federal Reserve Bank Of Atlanta, Working Paper 2002-12 July 2002, p. 3.

տադրանքի և բանկային գործառնության տեսքով (բանկային պլաստիկ քարտ, խնայողական գրքույկ, ճանապարհային չեկ, էլեկտրոնային դրամապանակ, վարկային, ավանդային գործառնություն, բանկային այլ ծառայություններ և այլն)<sup>35</sup>:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կառուցվածքային բարեփոխումների ներկա փուլում օբյեկտիվորեն անհրաժեշտ է, որպեսզի կառավարման մարմիններն իրենց մշտական ուշադրության կենտրոնում պահեն երկրում կատարվող ինովացիոն գործընթացները: Ավելին, այս բնագավառում բանկային գործունեությունը նույնպես պետք է ուղղված լինի ինովացիաների ստեղծման, ներդրման և տարածման համընդհանուր խրախուսմանը: Ինչպես վկայում է համաշխարհային փորձը, որքան ցածր է երկրի գարգացման մակարդակը, այնքան մեծ է երկրի կառավարման մարմինների դերը ենթակառուցվածքների ստեղծման, ռեսուրսների կենտրոնացման, տնտեսական զարգացման գերակա ուղղությունների ընտրության և այլ բնագավառներում: Ներկայումս, համաշխարհային տնտեսությունում երկրի դիրքը մեծապես կախված է տվյալ երկրում ինովացիոն ոլորտի զարգացման մակարդակից:

Շուկայական տնտեսությունում ինովացիոն գործունեությունը դառնում է ֆինանսական ռեսուրսների հավաքագրման և վերաբաշխման կարևոր ուղի: Այն իրականացվում է ինովացիաների վարկավորման միջոցով: Այդ գործընթացի հիմնական սուբյեկտներ են վարկային կազմակերպություններն ու բանկերը: Բանկային համակարգի տարբեր սուբյեկտների միջև ծագում և ձևավորվում են բազմաթիվ հարաբերություններ, որտեղ դրսևորվում է յուրաքանչյուրի շահը և նրանց գործունեության արդյունավետության անհրաժեշտությունը: Վերջինս կարելի է որոշել ոչ միայն բանկային գործառնությունների որակով, այլև տնտեսական գործունեության սուբյեկտների արդյունքով: Նրանցից է կախված ներդրման արդյունավետությունը, վարկերի վերադարձելիությունը և ֆինանսավարկային հարաբերությունների բոլոր մասնակիցների ակտիվությունը: Առևտրային բանկերում իրականացվող ինովացիոն գործընթացները կարող են էապես բարելավել տնտեսության մյուս ոլորտների զարգացման ցուցանիշները:

Նորամուծություններն առևտրային բանկերի զարգացման, կայունության ապահովման և մրցունակության բարձրացման կարևոր միջոց են: Անխզելի կապ գոյություն ունի

<sup>35</sup> W. Scott Frame, Lawrence J. White, Federal Reserve Bank Of Atlanta, Working Paper 2002-12 July 2002, p. 4.

Ֆինանսավարկային հաստատությունների մրցակցային դիրքերի, գործունեության արդյունավետության և նրանց նորամուծական ներուժի միջև:

Նորամուծական գործունեության հայտնի տեսաբան Բ. Թվիսը նշում է, որ մարտահրավերները վերաբերում են ոչ միայն նորամուծությանը, որպես այդպիսին, այլ առավելապես գիտատեխնիկական նորամուծությունների դեպի շահույթը միտված արդյունավետ կառավարմանը<sup>36</sup>:

Հայաստանի նման տնտեսություն ունեցող երկրներում շուկայական կարգուկանոնը և զարգացման ինովացիոն ձևին անցումը դեռևս էական կատարելագործման կարիք ունեն:

Հայրենական բանկային կառույցները զարգացման որոշակի փուլում կարող են պատրաստ չլինել արտասահմանյան կառույցների հետ մրցակցել նույնիսկ ներքին շուկայում: Այս հարցի լուծման ուղին կարող է լինել ինովացիոն գործընթացների կազմակերպումն ու կարգավորումը: Առևտրային բանկերում ինովացիոն գործընթացների ձևավորման համար չափազանց կարևոր է կառավարման և կարգավորման շուկայական ժամանակակից մեխանիզմների ընտրությունը: Հայտնի է, որ յուրաքանչյուր գործընթաց տեղի է ունենում միայն օժանդակող (ֆինանսական, տեղեկատվական, ծրագրային և այլ) համակարգերի առկայությամբ: Կարգավորումն առևտրային բանկի ինովացիոն քաղաքականության իրականացման ճանապարհ է, որտեղ տարրերի ամբողջությունը և դրանց փոխադարձ կապը մեծ ազդեցություն են ունենում լիարժեք զարգացման վրա: Այս պատճառով, կարելի է ասել, որ ուշադրությունը կենտրոնացնելով ինովացիոն բանկային գործընթացի տարրերի փոխազդեցության կազմակերպման և կարգավորման մեկ տարբերակի վրա, բանկն իրեն զրկում է այդ գործիքն արդյունավետ օգտագործելու հնարավորությունից:

Առևտրային բանկերի համար ինովացիաների բնագավառը շատ ընդարձակ է և ունի մի շարք առանձնահատկություններ:

Նախ, առևտրային բանկերն անցումային տնտեսության պայմաններում նախընտրում են գործունեության այն բնագավառների զարգացումը, որոնք բարձր և արագ տնտեսական աճ են ապահովում: Հայտնի է, որ ձեռնարկատիրական գործունեության մեջ

<sup>36</sup> Твисс Б., Управление научно-техническими нововведениями. М. Экономика, 1989, с. 223.

ինովացիաներին բնորոշ է առևտրային արդյունքի, շահույթի ստացումը: Հաճախ, ինչպես ցույց է տալիս արտասահմանյան փորձը, բանկային նոր գործիքների կիրառումը կարող է բերել ավելի մեծ տնտեսական արդյունք, քան արդեն կիրառվողները:

Երկրորդ՝ բանկային ոլորտում ձևավորվել է այնպիսի իրավիճակ, երբ բանկերը (հատկապես՝ փոքրերը) հարկադրված են կատարել նորամուծություններ և վարել ակտիվ ինովացիոն քաղաքականություն, որպեսզի ապահովեն իրենց մրցունակությունը: Օգտագործելով նոր գործիքներ՝ բանկը կարող է գրավել լրացուցիչ շուկաներ:

Բանկային ծառայությունների շուկայի մրցակցությունը՝ որպես շուկայական հարաբերությունների կարևոր տարր, բանկային ինովացիոն գործունեությունը պայմանավորող գլխավոր գործոններից մեկն է: Ամբողջ բանկային համակարգը մշտապես կապված է ինովացիաների հետ: Բանկին անհրաժեշտ է ոչ միայն հստակ և արագ արձագանք ինովացիոն միտումներին, այլև պետք է ազդել հաճախորդների ցանցի վրա՝ իր նորարարության հանդեպ նրանց արագ փոխարձագանքման նպատակով: Բանկային նորամուծությունները դառնում են առևտրային հաջողության գրավական և բանկի լավագույն մրցակցային ռազմավարությունը դառնում է «առաջանցիկության» ռազմավարությունը: Ընդ որում, առաջանցիկությունը «ժամանակի մեջ» ուղղված է ոչ միայն նոր գործիքների արագ ներդրմանը, վաճառահանման համակարգի կատարելագործմանը, շուկայի նոր հատվածների յուրացմանը, նոր հաճախորդների ներգրավմանը, այլև նոր ծառայությունների արագ զարգացմանը: Ժամանակի մեջ առաջ անցնելով մրցակիցներից՝ բանկը հաջող գործունեության հիմք է դնում:

Բանկի հաջողությունը նրա մրցունակության մեջ է: Բանկային ծառայությունների շուկայի փոփոխություններին, որքան արագ է արձագանքում բանկը, այնքան ավելի արագ է առավելություններ ձեռք բերում մյուս բանկերի համեմատ: Նոր բանկային ծառայություններին անհրաժեշտ են ոչ միայն գրավչություն, այլև մրցակցային պայքարին զուգահեռ դրանք, բանկի հաճախորդներին պետք է տրամադրվեն ավելի արագ ժամկետներում, քան մրցակից մյուս բանկերում: «Ժամանակի մեջ մրցակցություն» տերմինը կիրառվում է այնպիսի քաղաքականության իրականացման համար, որն ուղղված է կառավարման և կարգավորման նոր մոդելների արագ զարգացմանը, նոր ծառայությունների ներգրավմանը: Այլ խոսքով, բանկերը կարող են նախընտրել նոր ծառայությունների ներդրումն

ավելի էժան և նույնիսկ ավելի որակյալ ծառայությունների ստեղծումից: Վերջինիս, հիմնավորումն այն է, որ հաշվի է առնվում ոչ թե դրանց որակը կամ էժանությունը, այլ հնարավոր շահութաբերությունը, ինչպես նաև դրանց ստեղծման վրա ծախսվելիք ժամանակը:

Երրորդ, բնակչությանը մատուցվող ծառայությունների շուկայում բանկային նորամուծությունները ներդրման միջավայր են բերում կայունության տարրեր և թողնում են սոցիալ-տնտեսական դրական արդյունք, կողմնորոշված են դեպի հասարակության ու առանձին անհատների պահանջների բավարարումը: Շուկայում հաջողություն ունենալու, լրացուցիչ հաճախորդներ ներգրավելու և պահպանելու համար բանկերը պարտավոր են հաշվի առնել հաճախորդների առանձնահատկությունները և բավարարել նրանց պահանջումները: Մեծ հասարակական օգտակարություն ունեցող ինովացիաների՝ բանկային սոցիալական ինովացիաների իրականացումը, բանկի հաջողության կարևորագույն չափորոշիչներից մեկն է: Այսպիսով, բանկերի հաջող ինովացիոն գործունեությունը կարող է դրական դեր խաղալ սոցիալական իմաստով և նպաստել սոցիալ-տնտեսական կայունությանը:

Բանկային համակարգի կողմից նորամուծական մոտեցումների հիման վրա զարգացման ուղղությունների որդեգրումն ունի կարևոր նշանակություն: Այս համատեքստում բավականին դժվար է բաժանարար առանցք տանել բանկերի կողմից կիրառվող նորամուծական ֆինանսական գործիքների միջև: Դրա հիմնական բարդությունը պայմանավորված է նրանով, որ բանկերից շատերը նորաստեղծական ֆինանսական գործիքները կիրառում են տեխնոլոգիական նորամուծական գործիքների հետ միաժամանակ կամ վերջիններիս միջոցով: Այսինքն՝ միջդիսցիպլինար հարթությունում այստեղ միավորվում են, տեխնոլոգիաները, նորամուծությունները և ֆինանսները:

Օրինակ՝ բանկային համակարգում տեխնոլոգիական նորամուծությունների շարքում են դասակարգվում՝ տարբեր դեբետային և կրեդիտային քարտերը, ինչպես նաև բանկոմատները (ATMs): Իսկ օրինակ՝ Ֆայնենշլ թայմզի ֆինանսական տերմինաբանական բառարանում բերվում են այնպիսի «ֆինանսական նորամուծությունների» օրինակներ ինչպիսիք են՝ հեղջ ֆոնդերը, եղանակային ածանցյալները (դերիվատիվները), որոնք կարելի է կիրառել գյուղատնտեսական վարկերի ապահովագրության կամ ֆյուչերսային գործարքների բնագավառում: Կիրառվում են նաև այնպիսի «ֆինանսական

նորամուծություններ», ինչպիսիք են՝ փոխարժեքային առևտրային ֆոնդերը (exchange traded funds), իսլամական պարտատոմսերը (Սուկուկ), վերադարձվող մորթգեյջային արժեթղթերը (mortgage-backed securities), անուղղակի պարտքային պարտատոմսերը (collateralised debt obligations (CDOs)) և այլն<sup>37</sup>:

Այնուամենայնիվ, ատենախոսության թեմայի տրամաբանությունից ելնելով, փորձենք այդ առանցքը տանել և որոշակի տարանջատում իրականացնել նորաստեղծական ֆինանսական գործիքների տեսանկյունից: Սակայն նախապես նշենք, որ այստեղ մի բան ակնհայտ է, որ մեծամասամբ բանկերը վերցնում են տեխնոլոգիական նորամուծությունները և վերջինիս վրա ավելացնում են ֆինանսական բաղադրիչ, որի արդյունքում դրանք վերածվում են ֆինանսական նորամուծությունների կամ նորաստեղծությունների<sup>38</sup>:

Բանկային համակարգի կողմից կիրառվող նման գործիքների շարքին են դասվում այն ֆինանսական նորաստեղծությունները, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական միջնորդության և տնտեսական աճի վրա: Ֆինանսական նորաստեղծությունների հաջորդ խումբն առնչվում է խնայողության նորմայի ավելացման հետ, այսինքն՝ գործիքների համախումբ, որոնք իրենց բնույթով ստիպում են մարդկանց վերանայել իրենց վարքագիծը (վարքաբանական ֆինանսների տեսություն<sup>39</sup>), որն էլ իր հերթին հանգեցնում է խնայողության նորմայի աճին<sup>40</sup>: Այսպես, բանկերն առաջարկելով ոչ ավանդական կամ նոր տեխնոլոգիաների վրա հիմնվող ծառայություններ հնարավորություն են տալիս հաճախորդներին ունենալ որոշակի օգուտներ, և մյուս կողմից, տեղաբաշխելով իրենց խնայողություններն առաջարկվող նոր ծառայություններում բանկերը դիվերսիֆիկացնում են իրենց եկամտի աղբյուրները, իսկ վերջինս թույլ է տալիս իջեցնել տոկոսադրույքները կամ մարժան:

Իհարկե, շատ հետաքրքիր տրամաբանական կապ գոյություն ունի նաև բանկային համակարգի կամ առևտրային բանկերի կողմից ֆինանսական նորամուծությունների կամ, ընդհանրապես, նորամուծական զարգացմանը հասնելու տեսանկյունից,

<sup>37</sup> <http://lexicon.ft.com/Term?term=financial-innovation>

<sup>38</sup> Frame W.S., White L.J. (2012) Technological change, financial innovation and diffusion in banking, in Berger A.N., Molyneux P. and Wilson J.O.S. (eds), The Oxford Handbook of banking. pp. 184-186.

<sup>39</sup> [http://www.investopedia.com/university/behavioral\\_finance/behavioral11.asp](http://www.investopedia.com/university/behavioral_finance/behavioral11.asp)

<sup>40</sup> Berger A.N., Hasan I., KLAPPER L, (2005) Further Evidence on the Link between Finance and Growth, An International Analysis of Community Banking and Economic Performance, Journal of Financial Services Research, pp. 21-24.

քանի որ դրա համար անհրաժեշտ է անցնել 3 հաջորդական փուլեր: Դրանցից առաջինն ազատականացումն է, որին հաջորդում է արդիականացումը, իսկ արդեն երրորդ փուլում բանկային համակարգը մուտք է գործում նորամուծական զարգացման փուլ: Հարկ է նաև նշել, որ բանկային համակարգը ոչ միայն նորամուծություններ ստեղծող է, այլ հանդիսանում է նաև մյուս ոլորտների, այդ թվում՝ նաև այլ ֆինանսական ինստիտուտների կողմից ստեղծված նորաստեղծությունների կիրառողը, դա է նաև պատճառներից մեկը, որ շատ դեպքերում բանկերի կողմից կիրառվող ֆինանսական նորաստեղծությունները չունեն բանկային ծագում և վերագրվում են այլ ֆինանսական ինստիտուտների, օրինակ՝ բորսաներում կիրառվող արտարժույթային կամ արժեթղթային ածանցյալներ:

Բանկային համակարգի ինովացիաները շատ դեպքերում կիրառվում են առանց հանրային մեծ ընդգրկվածություն ունենալու կամ տարբեր հրապարակումներում տեղ գտնելու, օրինակ՝ վերջերս բավականին մեծ կիրառություն են սկսել ստանալ վարկային դեֆոլտային սվոփերը (credit default swaps (CDS)) կամ արժեթղթավորումը (securitization)<sup>41</sup>.

Իհարկե, բանկային համակարգում նորամուծությունները կարող են իրականացվել մի շարք ուղղություններով, այդ թվում՝

1. Խմբերի կազմակերպման մոդելով, որի պարագայում տեղի են ունենում խմբերի կառուցվածքի նորամուծական փոփոխություններ, վերանայվում է ակտիվների կառավարման մոտեցումը, օրինակ՝ ստեղծվում են միավորումներ, տեղի է ունենում խոշորացում (<< բանկային համակարգի օրինակը), լիզինգային և բանկային բիզնեսն է միավորվում, ստեղծվում են ֆինանսաարդյունաբերական խմբեր (կորեական և ճապոնական մոդել) և այլն:
2. Կազմակերպական կառուցվածքի փոփոխություն, որի պարագայում բանկի գործունեությունը գործառնական առումով, ինչպես նաև համապատասխան կազմակերպական կառուցվածքից ելնելով դրվում է նորամուծական հիմքերի վրա:

---

<sup>41</sup> Tufano, P. (2003) Financial Innovation, in G.M. Constantines, M. Harris, and R. Stulz, eds. Handbook of the Economics of Finance, Vol. 1a: Corporate Finance, Amsterdam, Elsevier, pp. 48-52.

3. Օպերացիոն համակարգեր, որոնք ներառում են օպերացիոն համակարգերի, պրոցեսինգային կենտրոնների արտաքին և ներքին վերահսկողության, տարբեր փոփոխությունների նորամուծական մոտեցումների հիման վրա իրականացումը:
4. Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաները (ICT), այս տեխնոլոգիաները կիրառվում են օրինակ՝ օնլայն բանկինգի ժամանակ մատնահետքի կամ հեռահոսային բանկինգի ժամանակ ծայնի ճանաչման համար և կրճատում են ռիսկերը:
5. Առաքման ուղիներ, որոնք կարող են բանկերի համար ստեղծել էլեկտրոնային բանկային ծառայությունների մատուցման նորամուծական համակարգ կամ առանց մասնաճյուղերի ծառայությունների մատուցման ժամանակակից կենտրոն:
6. Պրոդուկտներ կամ ծառայություններ: Այս կատեգորիայի ներքո հասկացվում են բոլոր նոր պրոդուկտները, այդ թվում՝ նոր հիփոթեքային վարկը կամ մորթեյջային պայմանագիրը, որոնք դասական ֆինանսական նորամուծություններ են:

81 եվրոպական բանկերի շրջանակում կատարված հետազոտությունից<sup>42</sup> պարզ է դառնում, միայն 2005-2008թթ. նախաճգնաժամային ժամանակահատվածում նշված 6 ոլորտներում մշակվել և կյանքի է կոչվել 783 նորամուծություն, որից՝ միայն 200-ը (26%) պրոդուկտների կամ ծառայությունների մասով: Այսինքն՝ բանկային նորամուծությունների տիրույթը, ինչպես նաև դրա բաղադրիչային ընդգրկվածությունը բավականին լայն է: Հայաստանում նման համապարփակ և ոլորտային հետազոտության հնարավորություն կարող է ունենալ միայն գուցե ՀՀ ԿԲ-ն, սակայն ՀՀ բանկային համակարգի վերաբերյալ նման գիտական հետազոտություն դեռևս չկա, անգամ բացակայում է նորամուծություններին առնչվող վիճակագրությունը, թե տարեկան ըստ ոլորտների և, ընդհանրապես, քանի նորամուծություններ են կիրառվել բանկերի կողմից, ինչքան գումար է ծախսվել դրա վրա և ինչպիսի արդյունք է դա ապահովել:

Իհարկե, այստեղ կա մեկ դրական կողմ այն է, որ անգամ ժամանակին Շումպետերն էր ասում, որ խոշոր ֆիրմաներն ավելի մեծ հնարավորություն ունեն նորամուծություններ մշակել, իսկ դա նշանակում է, որ ՀՀ բանկային համակարգում խոշոր խաղացողների ձևավորումը գուցե նպաստի նաև նորամուծական բանկային

<sup>42</sup> Financial innovation in banking F. Arnaboldi\*, B. Rossignoli, Department of Law “Cesare Beccaria”, University of Milan and Centre for Research in Banking and Finance, University of Modena and Reggio Emilia, 30 p.



համակարգի և ֆինանսական նորաստեղծությունների ավելացմանը: Սա, իհարկե, դասական մոտեցման և այլ հավասար պայմաններում, քանի ոչ չի բացառվում, որ ՀՀ-ում բանկերի խոշորացման հիմքում բանկային համակարգում առկա ռիսկերը թաքցնելուն ուղղված քայլ էր դրված:

Հարկ է նշել, որ ցանկացած ֆինանսական նորամուծություն ունի նաև իր «կյանքի պարբերաշրջանը (ցիկլը)», որը կարող է ի հայտ գալուց հետո շատ կարճ ժամանակահատվածում մրցակիցների կողմից ավարտին հասցվել՝ առաջարկելով ավելի շահավետ տարբերակ, օրինակ՝ վարկերի միջբանկային տեղաշարժ ապահովելու գործիքը, այն է՝ գոյություն ունեցող վարկի արտարժույթը փոխելու և տոկոսադրույքի 1-2% իջեցնելու հնարավորություն տալով: Իհարկե, բանկային ֆինանսական նորաստեղծություններն այդքան էլ հեշտ գործիքներ չեն, որ յուրաքանչյուր աշխատողի կողմից կարողանան մշակվել, իսկ դա նշանակում է, որ դրա համար բանկերին անհրաժեշտ են նաև բարձր որակավորում, մասնագիտական գիտելիքներ և նորամուծական մտածելակերպ ունեցող, ինչպես նաև բարձր վարձատրվող աշխատողներ, որոնք ունակ կլինեն մշակել նոր պրոդուկտներ և ծառայություններ<sup>43</sup>:

Ինովացիոն գործընթացների կարգավորմանն ուղղված քաղաքականությունը նպատակ ունի լուծել տնտեսության զարգացման ընթացիկ և հեռանկարային խնդիրները:

Այդ քաղաքականությունը ներառում է արտադրանքի և ծառայության նոր տեսակների թողարկման, նոր տեխնոլոգիաների ներդրման և դրանց հիման վրա վաճառահանման շուկաների ընդլայնման նպատակով արտադրության վրա ազդեցության ձևերի, մեթոդների և ուղղությունների ամբողջությունը:

ՀՀ պետական ինովացիոն քաղաքականության հիմնական ուղղությունները նախանշված են «Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման 2005-2010 թթ. ծրագրում», որտեղ ընդգծվում է, որ ինովացիոն հիմքի վրա կարող է կայուն տնտեսական աճ ապահովվել հիմնարար հետազոտությունների և կիրառական մշակումների, գիտության և արտադրության զարգացման, դրանց միջև գործնական կապերի խորացման միջոցով <sup>44</sup>:

<sup>43</sup> Lerner J., Tufano P. (2011) The Consequences of Financial Innovation: A Counterfactual Research Agenda, NBER Working Paper 16780, February p. 85. Mohnen P., Roller L.H. (2005) Complementarities in innovation policy. European Economic Review 49, pp. 1431-1450.

<sup>44</sup> «ՀՀ-ում ինովացիոն համակարգի ձևավորման 2005-2010թթ. ծրագրի մասին» ՀՀ կառավարության N 1729-Ն որոշում, ՀՀ ՊՏ 2005.11.16/71(443) Հոդ.1354, հավելված 1, էջ 1:

Ազգային ինովացիոն համակարգը փոխկապակցված ինստիտուտների համակարգ է, որն ունի ինովացիոն գործընթացների վրա ներազդելու պետության կողմից սահմանված ներքին կառուցվածք և որի գործունեությունն ուղղված է գիտելիքների և տեխնոլոգիաների ստեղծմանը, պահպանմանն ու փոխանցմանը:

Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման մասին ծրագրի հիմնական նպատակը երկրի տնտեսության տեխնոլոգիական մակարդակի հազեցվածության բարձրացմանը, ինովացիոն արդյունքի ներքին ու արտաքին շուկաներում մրցունակության և այդ հիմքի վրա կայուն տնտեսական զարգացման փուլին անցնելուն նպաստելն է: ՀՀ ինովացիոն համակարգի շարունակական զարգացումն ապահովելու, իրականացվող պետական քաղաքականության հիմնադրույթներն ամրագրելու և դրանց հիման վրա կոնկրետ միջոցառումներ մշակելու և իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված ՀՀ-ում մշակվել և Կառավարության համապատասխան որոշումներով ընդունվել են ինովացիոն գործունեության հայեցակարգը և գերակա ուղղությունները:

Իհարկե, դրանք նաև ունեն իրենց թերությունները, քանի որ ունեն միակողմանի ուղղվածություն, չեն ընդգրկում գիտության և տնտեսության բոլոր ոլորտները, իսկ ինովացիաները պետք է թափանցեն բոլոր ոլորտներ և ունենան փոխկապակցված զարգացում, իսկ, օրինակ՝ ֆիզիկայի բնագավառում միայն արագացուցչի վրա ներդրումներ կատարելով և հասնելով ինովացիաների ստեղծման սկզբունքորեն նոր մակարդակի, դա դեռևս չի նշանակում, որ տնտեսության մյուս ոլորտների համար դա կարող է լուրջ լոկոմոտիվի դեր կատարել:

Ինովացիոն հայեցակարգի նպատակը երկրի կայուն և անվտանգ զարգացման և մրցունակության բարձրացման գործում բարենպաստ ինովացիոն միջավայրի, ինչպես նաև համաշխարհային տնտեսական համակարգում տնտեսական և գործընկերային գրավչություն ունեցող ինովացիոն ազգային համակարգի հետևողական ձևավորումն է:

Այստեղ ևս գոյություն ունեն մի շարք վիճելի հարցեր, քանի որ ազգային մակարդակում գիտությունն արդեն վաղուց չի սահմանափակվում, անհարժեշտ է ունենալ միջազգային գիտական և ինովացիոն խոշոր հետազոտական կենտրոնների հետ համագործակցող համակարգ և վեր կանգնել ազգային մակարդակից, այսինքն՝ վերազգային ինովացիոն մոդելների տրամաբանությունն է հարկավոր որդեգրել, իսկ ՀՀ-

ում դրա փոխարեն ազգային ինովացիոն համակարգ են փորձում ձևավորել: Դա պետք է կամ հիմնվի միջազգային փորձի տեղայնացման ինչ-որ մոդելի կրկնօրինակման վրա, որը դժվար թե մրցունակություն ապահովի, կա՛մ սկզբունքորեն նոր համակարգ լինի, որի գաղափարը ևս իրատեսական դժվար թե լինի:

«Հայաստանի Հանրապետությունում ազգային ինովացիոն համակարգի ձևավորման 2005-2010թթ. ծրագրի» համատեքստում առաջին քայլը կատարվեց 2006թ. մայիսի 23-ին, երբ ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվեց «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը<sup>45</sup>: Այն, ըստ էության, ոլորտը կարգավորող հիմնական փաստաթուղթն է, որով սահմանվում են ինովացիոն գործունեության իրավական հիմքերը, տեսակները, սուբյեկտները, ինովացիոն գործունեությանը պետական աջակցության նպատակը, խնդիրները, ուղղությունները, ինովացիոն գործունեության ֆինանսավորման աղբյուրները և այլն:

Այս ծրագրի իրականացման շրջանակներում ինովացիոն քաղաքականության վարման և ինովացիոն ենթակառուցվածքի ձևավորման ճանապարհին կարևոր է դառնում զարգացած երկրների փորձի ուսումնասիրությունը: Առավել ուսանելի և հետաքրքիր են գիտական հետազոտությունները բարձրակարգ ապրանքների և ծառայությունների վերաձելու գործընթացում ծագած խնդիրների ուսումնասիրումը: ՀՀ-ում գիտական հետազոտությունների և մշակումների կազմակերպման և կարգավորման գործընթացների ուսումնասիրությունը և քննարկումն անհրաժեշտ է ինովացիոն քաղաքականության ձևավորման նպատակով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրոնիկայի և այլ ոլորտների գիտական հայտնագործություններն ու նվաճումները հանգեցրել են նրան, որ տնտեսության տարբեր ոլորտների, այդ թվում՝ ծառայությունների, տեխնոլոգիական բազայի փոփոխությունները կատարվում են չափազանց արագ և անսպասելի, նույնիսկ մեկ արտադրանքի արտադրության կամ ծառայությունների մատուցման շրջանակներում ավելացել է օգտագործվող տեխնոլոգիաների բազմատեսակությունը: Շուկայի յուրաքանչյուր մասնակից պետք է մշտապես որոնի հերթական տեխնոլոգիական ճեղքման ուղղությունը: Իր հատվածում, առաջատար ընկերությունը, եթե ժամանակին չհայտնաբերի նոր, կարևոր ռեսուրսը կամ

<sup>45</sup> «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2006.06.28/33 (488):

շուկայի չգրադեցված հատվածը, ապա մրցակիցները կօգտվեն դրանից և ձեռք կբերեն որոշակի առավելություններ <sup>46</sup>:

Ներկայումս մրցակցային առավելություններ են ստանում այն ընկերությունները, որոնք առաջարկվող բազմաթիվ տարբերակներից առավել արդյունավետ են կազմակերպում անհրաժեշտ տեխնոլոգիաների ընտրությունը: Տնտեսական զարգացման ընթացքում միշտ չէ, որ հաղթող են դառնում այն սուբյեկտները, որոնք իրենք են մշակում տեխնոլոգիաները: Համաշխարհային պրակտիկայում այժմ կան ձևավորված կայքեր, որոնք ծրագրավորողների, քիմիական արդյունաբերության ոլորտի և, ընդհանրապես, իրենց ընկերություններում առաջացած խնդիրներն առաջարկում են լայն հանրությանը: Օրինակ՝ նման պրակտիկա է կիրառում Պրոկտեր ընդ Գեմբլ (P&G<sup>47</sup>) ընկերությունը, նման գաղափարների հիման վրա է ծնվել Լինուքս (LINUX) օպերացիոն համակարգը և այլն<sup>48</sup>: Այսինքն՝ սեփական հետազոտությունների (R&D) վրա ծախսեր անելու փոխարեն նախընտրում են առաջարկություններ ներկայացնել, որոնց լուծումը տվողներին վճարում են, պահպանում վերջիններիս հեղինակային իրավունքները, և որ ամենակարևորն է դա արվում է շատ ավելի քիչ ծախսերով:

Հետազոտական աշխատանքով կուտակված ներուժի իրացումը, կարող է որոշիչ դառնալ, բազմաթիվ ոլորտներում հաջողության հասնելու համար: Ինտերնետի համար ծրագրային ապահովման ստեղծումը կամ էլ չիպերի արտադրությունը, բիզնեսի տարբեր տեսակներ են: Նման չեն նաև դեղագործությունը և ֆինանսական լիզինգի ներդրումը: Սակայն այդ բոլոր ոլորտներն էլ ունեն ընդհանուր հիմնախնդիրներ, այն է՝ նոր տեխնոլոգիաների ստեղծումը, և դրանց կիրառման հնարավոր շրջանակների բացահայտումը: Այս դեպքում, չափազանց կարևոր է դառնում տնտեսավարողի ընդունակությունը՝ օպտիմալ կերպով ինտեգրել ունեցած տեխնոլոգիաները: Ձևավորելով այնպիսի գործընթացներ, որտեղ հետազոտական հենքը զուգակցվում է գոյություն ունեցող և զարգացող շուկաների միտումների հետ՝ տնտեսավարողներն իրենց և ամբողջ երկրի համար բարենպաստ դիրքեր են ապահովում՝ մշտապես բարդացող բարձր տեխնոլոգիական աշխարհում:

<sup>46</sup> Управление высокотехнологичным бизнесом: Пер.с англ. – М.: Альпина Бизнес Букс, 2007, 256. (Серия “Классика Harvard Bussiness Review”), с. 23.

<sup>47</sup> <http://us.pg.com/> [Վերջին մուտք 25.03.2016թ.]:

<sup>48</sup> Хау Дж., Краудсорсинг. Коллективный разум-будущее бизнеса / Джефф Хау; Пер. с англ. –М.: «Альпина Паблишер», 2012, с. 67.

Կարելի է պնդել, որ ՀՀ-ում գրեթե բոլոր առևտրային բանկերը ներդնում են արևմտյան առաջադիմական բանկային տեխնոլոգիաներ, որոնք ընկած են բանկային համակարգի առաջընթացի հիմքում: Դրա պարզագույն օրինակն է առանձին քարտերի (Master, Visa և այլն) կիրառությունը, ավելի բարդ օրինակներից է վճարումային Arca համակարգի ձևավորումը: Օրինակ՝ Ռուսաստանը վերջերս ձևավորեց իր սեփական վճարումային համակարգը<sup>49</sup>, քանի որ արևմտյան պատժամիջոցների արդյունքում ի հայտ եկան նաև վերջինիս բանկային համակարգի սուվերենության խնդիրներ և սեփական վճարումային համակարգ չունենալու գործոնը դժվարություններ ստեղծեց: Խնդրի լուծման տարբերակներից էր նաև Չինաստանի վճարումային համակարգին ինտեգրումը<sup>50</sup>, սակայն նախընտրությունը տրվեց սեփական համակարգ ստեղծելուն:

Կարևոր է ևս մեկ անգամ նշել, որ առևտրային բանկերն ակտիվ ինովացիոն ինստիտուտներից մեկն են, որոնք կարող են ապահովել տնտեսական կայունություն և նպաստել սոցիալական հիմնախնդիրների լուծմանը:

Շուկայական կառույցների համակարգի կենտրոնական օղակներից մեկի՝ բանկերի հաջող զարգացումն ինովացիաների իրականացման հիման վրա կնպաստի բնակչության պահանջմունքների բավարարմանը:

Ինովացիոն նախագծերը միտված են ապահովելու լրացուցիչ շահույթ, ձեռներեց-նորարարի կենսունակությունը մրցակցային միջավայրում, և ինովացիոն քաղաքականությունը կարող է դառնալ գլխավոր ռազմավարական նպատակին հասնելու միջոց: Ներկայումս գերակշռում են այն բանկերը, որոնց ռազմավարությունն ուղղված է սեփական շուկայի ընդարձակմանը:

Բանկերի ինովացիոն քաղաքականությունը (որպես բնակչությանը մատուցվող ծառայությունների շուկայում բանկային ինովացիաների կառավարման և կարգավորման միջոց) համարվում է կազմակերպական, կարգավորող և վերահսկող միջոցառումների համալիր, որը կապված է նոր բանկային արդյունքների, ինովացիոն մեթոդների ներդրման հետ, և որն ապահովում է բանկերի կողմից ինովացիոն պարբերաշրջանի հաջող իրականացում: Այն իր հերթին միտված է.

<sup>49</sup> <http://www.nspk.ru/> [Վերջին մուտք 26.05.2016թ.]:

<sup>50</sup> <http://www.centralbanking.com/central-banking/official-record/1429840/pboc-china-payment-system-development-report> [Վերջին մուտք 26.05.2016թ.]:

- բանկերի զարգացմանն ուղղված սեփական երկարաժամկետ նպատակների իրականացմանը, հաճախորդների բազայի ընդլայնմանը, մրցունակության բարձրացմանը, եկամտաբերության և արդյունավետության աճին,
- բնակչության պահանջմունքների և սոցիալ-տնտեսական նպատակների համալիր բավարարմանը ու սոցիալ-տնտեսական զարգացման կայունությանը:

Առևտրային բանկերի ինովացիոն գործունեության և ինովացիոն քաղաքականության ուսումնասիրությունը կարող է լինել մասնավոր ձեռնարկատիրական սուբյեկտների ինքնուրույն «ներքին» ինովացիոն քաղաքականության օրինակ, այն քաղաքականության, որի անհրաժեշտությունը և միջոցառումների շարքը թելադրված են շուկայական կողմնորոշիչներով և, որը պայմանավորված է շուկայում հաջող գործունեության ներքին ձեռնարկատիրական խթաններով:

Բնակչությանը տրամադրվող ծառայությունների շուկայում բանկերի ինովացիոն քաղաքականության ձևավորումն ու իրականացումը պետք է լինի արդյունավետ մի կողմից բանկերի, մյուս կողմից բնակչության՝ որպես դրա իրականացման օբյեկտի համար: Դրա պարզ օրինակներից է կենսաթոշակների վճարման քարտային համակարգը, վերջինս արդյունավետ է բանկերի համար, քանի որ ցպահանջ գումարների մի ամբողջ բազա է ստեղծվում, մյուս կողմից իրացվում են մեծ թվով քարտեր և աճում է բաժանորդների թիվը: Հաճախորդի տեսանկյունից դա ևս նպաստավոր է, քանի որ գումարներն իրենց են հասնում առանց միջնորդի, առանց որևէ լուրս կորստի կամ ուշացումների, սակայն առկա խնդիրներից մեկը մնում է այն, որ թոշակառուների մեծ մասն ունեն բանկոմատից օգտվելու խնդիրներ, այսինքն՝ կիրառված նորամուծությունը լիարժեք ծառայել է իր նպատակին, բացառությամբ վերջին թերության, որը ևս շտկելի է: Դեռ ավելին, հաճախորդների այդ ստվար զանգվածի ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացման պարագայում նրանք ևս կարող են օգտվել բանկերի կողմից առաջարկվող ծառայություններից: Այս մոտեցումն, իհարկե, ավելի հեռանկարային է և մի քիչ դժվար կիրառելի ներկայիս սերնդի թոշակառուների համար, սակայն ապագայում այն ավելի մեծ կիրառություն և ընդգրկվածություն է ունենալու:

Ներկայումս չկա բազմակողմ համալիր մոտեցում ինովացիաների նկատմամբ, որոնք իրականացվում են և պետք է իրականացվեն տնտեսության բոլոր ոլորտներում:

ինովացիոն միջոցառումները ներկայումս էլ կառավարման և կարգավորման ոլորտում ներառվում են գիտատեխնիկական քաղաքականության միջոցառումների հետ կապվածության շնորհիվ:

Բանկային համակարգում ինովացիոն գործունեության կառավարման ու կարգավորման միջոցառումների վերլուծության հետ մեկտեղ հետաքրքրություն է ներկայացնում ինովացիոն գործընթացի զարգացման հնարավոր ուղղությունների բացահայտումը: Այստեղ կարևոր է դառնում այդ ոլորտի միջազգային փորձի ուսումնասիրությունը և լավագույն տարբերակների ներդրումը:

Վերը նշված մտահանգումներից ելնելով, կարելի է առանձնացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների շուկայում բանկերի ինովացիոն քաղաքականության արդի տնտեսական և քաղաքական իրավիճակին առավել բնորոշ ուղղությունները, որոնք պայմանավորված են ինովացիոն քաղաքականության ձևավորման ընդհանուր սկզբունքներով և բանկային ինովացիաների առանձնահատկություններով: Այդ ուղղություններից են՝

1. Համապատասխան նորույթի որոնումը, որն ունակ է վերածվել բանկային ինովացիայի՝ որպես տվյալ քաղաքականության արդյունավետության գրավական ինչպես սուբյեկտի՝ բանկի, այնպես էլ դրա օբյեկտի՝ բնակչության համար: Դրա համար ինովացիան պետք է համարժեքորեն ընկալվի բնակչության կողմից, ում պահանջները կարող են առավելագույնս բավարարվել: Միայն այդպիսի նորույթները կհասնեն իրենց կենսապարբերաշրջանի վերջին փուլին, որտեղ կիրացվեն կայուն, մշտապես գործող տարրերով և կծառայեն որպես ինովացիոն զարգացման հիմք:
2. Շուկայի ընկալունակության սահմանումը բանկի կողմից իրականացվող ինովացիաների նկատմամբ՝ դրանց ներդրման միջավայրի և դրա հիման վրա ինովացիոն բանկային ծառայությունների շուկայում սպառողների կողմից համապատասխանորեն ընկալվող ռազմավարական նախաձեռնությունների ուսումնասիրման ուղիով: Բանկային նորույթների ներդրումն այսօր կապվում է շուկայի պահանջների և նոր ծառայությունների պահանջարկի հետ, այսինքն՝ փաստորեն իրացվում է ինովացիոն գործունեության զարգացման մարքեթինգային<sup>51</sup> մոտեցումը, որը հենց ինքը, ըստ էության

<sup>51</sup> Garcia A., The relevance of marketing in the success of innovations, IPTS working paper on Corporate R&D and innovation - No. 09/2011, Luxembourg: Publications Office of the European Union© European Union, Printed in Spain, 2011, 26 p.

նորամուծություն է մեր տնտեսության համար: Բանկային մարքեթինգի պահանջները պայմանավորում են բանկային ծառայությունների մշակման, յուրացման, առողջացման անհրաժեշտությունը: Դրանք այն ծառայություններն են, որ գրավում են սպառողներին, բավարարում են նրանց պահանջները և միևնույն ժամանակ առավել արդյունավետ մեթոդների կիրառման շնորհիվ, ապահովում են շահույթ: Բանկային ծառայությունների շուկայի հետազոտությունն առաջին հերթին նպաստում է շուկայի առանձին հատվածներում բանկային ծառայությունների իրական ներուժային սպառողների բացահայտմանը և ներգրավմանը:

Բանկային ծառայությունների իրական ներուժային սպառողների բացահայտման և ներգրավման մոտեցման հիմնական եղանակներից է՝

- ա) մշտական շփումը հաճախորդների հետ, որը ենթադրում է.
  - սպառողական նախապատվությունների պարբերական ուսումնասիրություն, որը թույլ է տալիս բացահայտել կոնկրետ բանկային ծառայությունների պահանջարկի առանձնահատկությունները,
  - ներուժային պահանջների բացահայտում (սպասվող պահանջարկի պարամետրերի կանխատեսում), ինչը թույլ է տալիս որոշել ապագայում առավել հեռանկարային սպառողական հատվածները,
  - ոչ ավանդական բանկային ծառայություններից օգտվող սպառողների շարժառիթների ուսումնասիրություն, ինչը հնարավորություն է ընձեռում որոշել նրանց ինովացիոն վարքի առանձնահատկությունները,
- բ) տվյալ բանկի ծառայություններից օգտվելու դեպքում, այլ վարկային հաստատությունների ծառայությունների համեմատ, հաճախորդի համար որոշակի արտոնությունների ձևավորումը,
- գ) սպառողական պահանջարկի ձևավորման վրա ակտիվ ազդեցություն ունենալը (սպառման խթանման նպատակով գովազդային միջոցառումների մշակում և անցկացում), երկրի քաղաքական և տնտեսական իրավիճակի ազդեցության հնարավոր փոփոխությունների գնահատումը:

Ներդրումային միջավայրի հետազոտությունը, որպես ռազմավարության մշակման պարտադիր տարր, պետք է անցկացվի ինովացիոն կենսապարբերաշրջանի առաջին



փուլում, այսինքն՝ այն նորույթի որոնման փուլում, որը հետագայում վերաժվելու է ինովացիայի՝ այն յուրացնելուց և տարածելուց հետո, երբ կունենա առևտրային հաջողություն: Իսկ հայտնի է, որ վերջինս ինովացիայի հիմնական հատկանիշն է և անփոխարինելի գիծը: Միաժամանակ պետք է ուսումնասիրվեն հասարակության ինովացիոն ներուժային օբյեկտ հանդիսացող մասի պահանջմունքները: Կարևոր է նաև հասարակության մեջ պահանջարկ ունեցող նորույթների նախանշանների և ներդրման հնարավորությունների բացահայտումը, որը ենթադրում է նորույթի ներուժային սպառողների նախընտրությունների և շարժառիթների ուսումնասիրություն: Այդ հիմնահարցերն առավել մանրամասն սոցիոլոգիական հարցումների միջոցով ուսումնասիրել ենք ատենախոսության 3-րդ գլխում:

Բանկային ծառայությունների շուկայում հետազոտությունների անցկացման հիմքում ընկած է բանկային ծառայությունների նկատմամբ առաջարկի և պահանջարկի վերլուծություն տեղական, ազգային և միջազգային շուկաներում, և ամենից առաջ դրա այն հատվածներում, որոնք ըստ բանկի ռազմավարության առաջնային են:

Ռազմավարության մշակման նպատակի իրականացման համար բանկը պետք է ունենա շուկայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման մշակված համակարգ, ինչպես նաև դրա հետազոտության արդյունքների վերլուծության, բանկային արդյունքների մշակման, իրացման և ծառայությունների մատուցումն ապահովող նոր համակարգ:

Ռազմավարության ձևավորման խնդիրները բանկին ուղղորդում են դեպի ծառայությունների իրացման պայմանների մշակման ուսումնասիրություն, որի արդյունքները կարող են դրվել բանկի ինովացիոն գործունեության հիմքում:

Իհարկե, այստեղ կարող են ստեղծվել բանկի գործունեության գնահատման համակարգեր, տվյալների և առաջարկությունների առցանց (օնլայն) հավաքագրման կամ ընդունման մեխանիզմներ: Օրինակ՝ նման պրակտիկա է կիրառվում ռուսական ամենախոշոր բանկի՝ Սբերբանկի կողմից<sup>52</sup>, որից հետո ամենահետաքրքիր և բանկի ու հաճախորդների շահերից բխող նորամուծությունները և առաջարկությունները կյանքի են կոչվում: Այսինքն՝ երկխոսությունը և փոխհամաձայնեցված լուծումների որոնումը ոչ թե պետք է գտնվի միայն բանկերի անձնակազմի և ղեկավարության գործունեության շրջանակներում, այլ դրան պետք է հնարավորություն ընձեռել մասնակցել նաև

<sup>52</sup> Хау Дж., Краудсорсинг. Коллективный разум-будущее бизнеса / Джефф Хау; Пер. с англ. –М.: “Альпина Паблишер”, 2012, с. 89.

հաճախորդներին: Սակայն փաստը մնում է այն, որ շատ դեպքերում հաճախորդների հետ հաշվի նստելու պրակտիկան կամ կորպորատիվ մշակույթը Հայաստանում բացակայում է:

Շուկայի այսպիսի համալիր ուսումնասիրություններն, ընդհանուր առմամբ, կարող են ապահովել բանկային ինովացիոն քաղաքականության արդյունավետ ձևավորումը և իրացումը: Այն հնարավորություն կտա խուսափել չարդարացված ծախսերից և ռիսկից, որը կապված է շուկայում չհետազոտված և չնախապատրաստված նորույթների ներդրման անորոշության հետ: Դա բացատրվում է նրանով, որ պատկերացում կազմելով հաճախորդների և, ընդհանրապես, բանկային ծառայություններից օգտվողների վարքագծի վերաբերյալ կարելի է ավելի հեշտ ու ճիշտ որոշումներ կայացնել ինովացիաների ներդրման վերաբերյալ: Այս խնդիրների լուծմամբ է զբաղվում, հատկապես, վարքաբանական տնտեսագիտությունը, որի ժամանակակից տեսություններն արդեն իսկ ստեղծել են ներդրումնաբերական նորագույն ուղղությունը:

Ինովացիաների կիրառման կարևորագույն բաղադրիչներից է նաև ինովացիաների փորձնական (պիլոտային) ծրագրերի իրականացումը: Տվյալ ծրագրերը պետք է իրականացվեն ինովացիաների կենսապարբերաշրջանի «յուրացման» փուլում, քանի որ հակառակ պարագայում դրանք կլինեն շատ թանկ և լայն կիրառություն չեն ստանա: Այս միջոցառումն անհրաժեշտ է, որովհետև բանկային ինովացիաների իրականացման հետևանքների տնտեսական արդյունավետությունն անորոշ է, կապված այն բանի հետ, որ դրանց միայն իրական, փաստացի իրագործումը կարող է փոփոխություններ ենթադրել: Ինովացիոն նախագծի տնտեսական արդյունավետությունն անմիջականորեն կապված է ներդրումների արդյունավետության համալիր գնահատման հետ, քանի որ նախագիծն այդ դեպքում գնահատվում է, որպես ներդրման օբյեկտ:

3. Ինովացիոն գործունեությանը խոչընդոտող գործոնների բացահայտումը, դրանց ազդեցության սահմանափակումը և ինովացիաներին նպաստող գործիքների օգտագործումը:

Խոչընդոտող գործոնները դասակարգվում են հետևյալ կերպ.

- Խոչընդոտող կազմակերպական գործոններ, որոնք կապված են տարբեր ստորաբաժանումների միջև հակասությունների, հաղորդակցման ցանցի անբավարար զարգաց-

ման, ղեկավարության թույլ օժանդակության, բյուրոկրատիզմի, կայացած հարաբերությունները պահպանելու ձգտման հետ:

- Անձնական-հոգեբանական խոչընդոտներ, որոնք առավելապես վերաբերում են մարդու կողմից սեփական պահանջմունքների բավարարմանը սպառնացող թվացյալ «վտանգին»:

Վերջինիս վերաբերյալ պետք է նշել, որ հասարակության յուրաքանչյուր անդամի իրապես անհրաժեշտ է կայունություն և աշխատանքի նկատմամբ վստահություն: Ինովացիաները, սովորաբար, ընկալվում են որպես ինչ-որ նոր անձանոթ, անհանգստություն և տագնապ առաջացնող երևույթ: Ավելին, ինովացիան նշանակում է, որ մարդը պետք է փոխի իր վարքագիծը և շրջապատի հետ արդեն ձևավորված հարաբերությունները, շփման սովորական եղանակը, այն փոխարինի նոր և անսովոր մտածողությամբ:

4. Քաղաքական ռիսկի հաշվառում: Անցումային երկրներին բնորոշ է այս գործոնը: Իհարկե, մեծ կարևորություն ունեն նաև մյուս ռիսկերը, տնտեսականը, սոցիալականը և այլն, սակայն այս պարագայում քաղաքական ռիսկի ազդեցության շրջանակը բավականին մեծ է:

Բնակչության վստահությունը բանկերի հանդեպ ուղղակիորեն կախված է իշխանությանը վստահելու աստիճանից<sup>53</sup>: Այդպիսի մի շարք հետազոտություններ կան, ինչպես նաև հարցումներ են անցկացվել Բլումբերգ գործակալության կողմից և հստակ ցույց է տրվել կապը կառավարության և բանկային համակարգի վստահության միջև, իսկ դա, հատկապես, նկատելիորեն փոփոխվել է 2007-2012թթ. ընթացքում՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցություններով:

Այդ իսկ պատճառով բանկերի բոլոր ջանքերը մեկ ակնթարթում կարող են դառնալ ապարդյուն՝ իշխանությունների ոչ հիմնավոր գործողությունների հետևանքով: Այս պատճառով, ինովացիոն քաղաքականության շրջանակներում, բանկերը, այսպես թե այնպես, պետք է հաշվի առնեն իրենց հանդեպ բնակչության վստահության գործոնը:

Առևտրային բանկերի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով՝ ինովացիոն քաղաքականությունը բանկերում պետք է ապահովի՝

<sup>53</sup> <http://www.bloomberg.com/news/articles/2014-04-03/correlations-trust-in-government-trust-in-banks>

- բանկային ծառայությունների նկատմամբ բնակչության պահանջմունքների առավել լրիվ և ժամանակին բավարարումը,
- բանկի մրցունակությունը սպասարկվող ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացման ուղղությամբ,
- ավանդական տեխնոլոգիայով կառավարման և նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ կատարվող ջանքերի միջև հավասարակշռություն: Պահպանելով բանկային սպասարկման ավանդական տեխնոլոգիան՝ միաժամանակ անհրաժեշտ է ռեսուրսների մի մասն ուղղել սպասարկման նոր ձևերի ներդրմանը,
- բանկի ճկունությունը՝ համատեղելու արմատական, ծրագրային նորամուծությունները՝ աստիճանական, պարբերաբար իրականացվող ինովացիաների հետ,
- զարգացման արտաքին և ներքին տարրերի փոխազդեցության կազմակերպումը, որտեղ գլխավոր տարր է ինովացիաների շուկայի վերաբերյալ տեղեկատվությունը և ինովացիոն նախագծի ընտրությունը:

Իհարկե, վերոնշյալ կետերը կյանքի կոչելը հաջողվում է ոչ բոլոր բանկերին և, հատկապես, կազմակերպություններին, հակառակ պարագայում նորամուծությունների կիրառման արդյունքում մրցակցային առավելության կհասնեին բոլորը:

Կարելի է եզրակացնել, որ ինչպես ՀՀ ամբողջ տնտեսությունում, այնպես էլ բանկային համակարգում անհրաժեշտ է մշակել զարգացման որակապես «նոր մոդել», որտեղ ինովացիոն տնտեսության բաղադրատարրերը հանդես են գալիս և՛ որպես նպատակ, և՛ որպես տնտեսական վերափոխումների գլխավոր գործոն՝ բնականաբար հաշվի առնելով սոցիալ-տնտեսական ներդաշնակության և շուկայական արդյունավետության խնդիրները: Այսինքն՝ սպառողական տնտեսության մոդելից պետք է անցում կատարվի ինովացիոն տնտեսության ֆինանսավորման մոդելի, իսկ եթե բանկերի վարկավորման պորտֆելում մեծ տեսակարար կշիռ ունենան սպառողական վարկերը՝ դրական զարգացումներ ապագայում դժվար թե ակնկալվի: Անհրաժեշտ է բանկային համակարգն ուղղորդել ոչ միայն ինովացիոն ապրանքների և ծառայությունների ստեղծմանը, այլ դրանք հիմնականում ուղղորդել տնտեսությանը գիտելիքահենք և ինովացիոն զարգացման ուղղվածություն տալուն:

### **1.3. Բանկային համակարգում ֆինանսական զարգացածության և նորաստեղծությունների միջազգային փորձի վերլուծությունը**

Յուրաքանչյուր երկրի բանկային համակարգի վերլուծությունը, ինչպես նաև դրա զարգացածությունը հնարավոր է գնահատել հաշվի առնելով երկրի ընդհանուր ֆինանսական զարգացածությունը: Իհարկե, բանկային համակարգն այս առումով լուրջ դեր է կատարում, քանի որ այն հանդիսանում է ֆինանսական համակարգի կարևորագույն բաղկացուցիչներից մեկը և շատ դեպքերում իր ֆինանսական համակարգի ակտիվները կենտրոնանում են հենց բանկային համակարգում<sup>54</sup>:

Բանկային համակարգի ֆինանսական զարգացածության և ինովացիաների կամ նորաստեղծությունների կիրառության կապը բավականին սերտ է, քանի որ ժամանակակից ֆինանսական զարգացած համակարգն առանց նորագույն տեխնոլոգիական լուծումների, ինչպես նաև ֆինանսական նորամուծությունների կիրառության գոյություն ունենալ չի կարող:

Համաշխարհային տնտեսության մեջ նորամուծությունների համակարգում առաջատար երկրները նաև կենտրոնանում են ֆինանսական համակարգում ստեղծվելիք նոր ապրանքների (պրոդուկտների), ինչպես նաև տեխնոլոգիական լուծումների վրա, իսկ որ ամենակարևորն է ֆինանսական համակարգի առաջատարները նաև առաջատար դիրքեր ունեն իրենց ստեղծած տեղեկատվական համակարգի նորամուծություններով, որոնք տարբեր տեխնոլոգիաների միջոցով թափանցել են նաև բանկային համակարգ՝ ապահովելով վերջիններիս առաջատար դիրքերը համաշխարհային ֆինանսական կենտրոններ լինելու տեսանկյունից:

Այս ամենը թույլ է տալիս, որպեսզի առանձնացնենք այն հիմնախնդիրները, որոնց ուսումնասիրության տրամաբանական հաջորդականությունը դրված է այս հիմնահարցի ուսումնասիրության հիմքում՝

- Ֆինանսական զարգացածության համաթվի միջոցով ուսումնասիրել և վերլուծել համաշխարհային ֆինանսական համակարգում առաջատար տեղ և դիրք ունեցող երկրները (մեզա մակարդակ):

<sup>54</sup> Կիրակոսյան Ա., «Բանկային համակարգի ֆինանսական զարգացածության և նորաստեղծությունների միջազգային փորձի վերլուծությունը»: // Ֆինանսներ և էկոնոմիկա: Երևան # 7-8 (191-192) 2016, էջեր 55-59:

- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) անցումային զեկույցների մեթոդաբանության հիման վրա վերլուծել անցումային և զարգացող երկրների ֆինանսական համակարգերի և, հատկապես, բանկային համակարգերի զարգացածության մակարդակը (մակրո մակարդակ):
- Շարժական (մոբայլ) ֆինանսական ծառայությունների զարգացման միտումների, ինչպես նաև անցումային և զարգացող երկրների փորձի հիման վրա՝ վերլուծել դրանց տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում (միկրո մակարդակ):

Մյուս կողմից, յուրաքանչյուր երկրում ֆինանսական նորաստեղծությունների և, մասնավորապես, բանկային համակարգում դրանց կիրառության հարցերի ուսումնասիրության ժամանակ կրկին անգամ բախվում են ամբողջ երկրի մասշտաբով ֆինանսական զարգացածության հիմնահարցերի, ինչպես նաև երկրի նորամուծական ուղղվածության հետ, քանի որ երկրի նորամուծական ուղղվածության մեջ իրենց կարևոր տեղն ու դերն ունեն ֆինանսական և, հատկապես, բանկային համակարգում արվող կամ կիրառվող ֆինանսական նորամուծությունները:

Ֆինանսական համակարգի նորամուծությունների ուսումնասիրության համար նպատակահարմար է կիրառել ընդհանուրից մասնավորի անցման մոտեցումը, քանի որ որպես այդպիսին անհրաժեշտ է բացահայտել, որ երկրներն են համարվում ֆինանսապես առավել զարգացած, իսկ դա տալիս է նաև մի քանի այլ հարցերի պատասխաններ, այն է՝ երկրի ֆինանսական զարգացածությունը նաև պայմանավորվում է առանձին ոլորտներում ֆինանսական նորամուծությունների կամ ինովացիաների ներդրմամբ: Հարկ է նշել, որ ֆինանսական համակարգի որոշ ենթահամակարգերում կիրառվող նորամուծությունների հարցում ետ մնալով, առանձին երկրներ կարող են հանրագումարային արդյունքում հայտնվել ֆինանսական զարգացածությամբ առաջատարի դերում:

Փորձելով գտնել վերոնշյալ հարցերի պատասխանը՝ տարբեր համաթվերի կամ ինդեքսների միջոցով ստանում ենք հետևյալ պատկերը, այն է՝ Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2009-2012թթ. ընթացքում հաշվարկվել է ֆինանսական զարգացածության համաթիվ (Financial Development Index)<sup>55</sup>:


<sup>55</sup> The Financial Development Report 2012, World Economic Forum. Geneva, Switzerland, World Economic Forum USA Inc. New York, USA, 424 p., [http://www3.weforum.org/docs/WEF\\_FinancialDevelopmentReport\\_2012.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_FinancialDevelopmentReport_2012.pdf).

Ֆինանսական զարգացածության համաթվի միջոցով Համաշխարհային տնտեսական համաժողովի (ֆորում) փորձագետները փորձել են համապատասխան մեթոդաբանության հիման վրա գնահատական տալ առանձին երկրների ֆինանսական ոլորտի զարգացածության վերաբերյալ:

Համաթիվը բաղկացած է 7 հենասյուներից, որոնք խմբավորված են երեք խմբերում, և որոնց հիման վրա էլ հաշվարկվում է համաթիվը: Հետաքրքիր փաստերից է այն, որ նշված հենասյուներում հաշվարկվում են 121 ցուցանիշներ: Համաթիվը փորձում է գնահատական տալ հետևյալ ոլորտների զարգացածության վերաբերյալ:

Գծապատկեր 1.3.1

### Ֆինանսական զարգացածության համաթվի կառուցվածքը



**Աղբյուրը՝** Համաշխարհային տնտեսական համաժողով (ֆորում) World Economic Forum: The Financial Development Report 2012, World Economic Forum. Geneva, Switzerland, World Economic Forum USA Inc. New York, USA, p. 5, [http://www3.weforum.org/docs/WEF\\_FinancialDevelopmentReport\\_2012.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_FinancialDevelopmentReport_2012.pdf).  
FDI-Financial Development Index.

Այս համաթիվն ունի բավականին առավելություններ և տալիս է ֆինանսական զարգացածության իրական պատկերը, ցավոք այն 2012թ.-ից հետո չի հաշվարկել, և մյուս կողմից այս համաթվի 62 երկրների մեջ Հայաստանը բացակայում է: Դա կարող է ունենալ մի քանի բացատրություն, այն է՝ չի իրականացվել ընդլայնված վերլուծություն, որի արդյունքում հետազոտության մեջ ընդգրկվել են սահմանափակ թվով երկրներ: Հնարավոր տարբերակներից է նաև, որ ընտրվել են հարաբերականորեն բարձր ֆինանսական զարգացածություն ունեցող երկրներ, որոնց մեջ Հայաստանը չի մտել:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաթվի առաջատա-

րների տասնյակը գրեթե անփոփոխ է մնում, կարող ենք հստակ առանձնացնել, թե ֆինանսական զարգացածության առումով, որ երկրների փորձն է հարկավոր ուսումնասիրել և տեղայնացնել:

Իհարկե, կարող է հարց առաջանալ, այն է՝ ինչքանով է ճիշտ ուսումնասիրել շատ ավելի բարձր զարգացածության աստիճան ունեցող երկրների ֆինանսական փորձը և այն փորձել տեղայնացնել ՀՀ-ում: Այս հարցի պատասխանը թաքնված է նորամուծական կամ ինովացիոն հենքի վրա ֆինանսական զարգացած համակարգ ունենալու մեջ: Եթե մենք փորձենք տեղայնացնել միջին կամ ցածր զարգացածության ֆինանսական համակարգ ունեցող երկրների փորձը, ապա դրանով կբացառենք համաշխարհային զարգացած ֆինանսական համակարգի մաս կազմելու մեր բոլոր ցանկությունները:

Ֆինանսական զարգացածության համաթվով աշխարհում 2012թ.-ին առաջին տեղում է գտնվել Հոնկոնգը, որին հաջորդել է ԱՄՆ-ը, 3-րդ և 4-րդ հորիզոնականում են եղել Միացյալ Թագավորությունը և Սինգապուրը: Իհարկե, տրամաբանությունն ակնհայտ է, քանի որ այս երկրներն ունեն համաշխարհային առաջատար ֆինանսական կենտրոնների տասնամյակների պատմություն, որի արդյունքում էլ հայտնվել են առաջատար դիրքերում<sup>56</sup>:

Անդրադառնալով կոնկրետ բանկային համակարգում ծառայություններ մատուցող առաջատար երկրներին պետք է նշել, որ այդ երկրների տասնյակն, ըստ վերոնշյալ զեկույցի, կրկին գլխավորել է Հոնկոնգը, իսկ 2-րդ և 3-րդ հորիզոնականում են գտնվել՝ Միացյալ Թագավորությունը և Ճապոնիան<sup>57</sup>:

Բանկային համակարգում ծառայություններ մատուցող առաջատար երկրների ցանկում նկատվում են որոշակի տարբերություններ ընդհանուր վարկանիշային ցանկի համեմատությամբ, այսինքն՝ եթե ընդհանուր ֆինանսական զարգացածության տեսանկյունից հետաքրքրություն էին ներկայացնում, օրինակ՝ ԱՄՆ-ը, Կանադան կամ Շվեյցարիան, ապա բանկային ֆինանսական ծառայությունների աշխարհագրությունն այլ է, քանի որ այստեղ հայտնվել են օրինակ՝ Իսպանիան, Նորվեգիան, իսկ Սինգապուրի նման հզոր երկիրը եզրափակում է տասնյակը: Այսինքն՝ մեր կողմից առաջ

<sup>56</sup> The Financial Development Report 2012, World Economic Forum. Geneva, Switzerland, World Economic Forum USA Inc. New York, USA, p. 13, [http://www3.weforum.org/docs/WEF\\_FinancialDevelopmentReport\\_2012.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_FinancialDevelopmentReport_2012.pdf).

<sup>57</sup> The Financial Development Report 2012, World Economic Forum. Geneva, Switzerland, World Economic Forum USA Inc. New York, USA, p. 14, [http://www3.weforum.org/docs/WEF\\_FinancialDevelopmentReport\\_2012.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_FinancialDevelopmentReport_2012.pdf).



քաշված այն մոտեցումը, որ ֆինանսական զարգացածության հիման վրա կարելի է նաև պատկերացում կազմել բանկային համակարգի զարգացածության մասին հիմնականում իր մեջ ունի ճշմարտության հատիկ, բայց որոշ երկրների պարագայում այս մոտեցումը կարող է ճիշտ լինել վերապահումներով:

Բանկային ֆինանսական ծառայությունների զարգացածության գնահատման համար Ֆինանսական զարգացածության համաթվի 4-րդ բաժնում, որպես մեթոդաբանական հիմք, օգտագործվում են 14 ցուցանիշներ, դրանք են՝

Բաժին IV. Բանկային ֆինանսական ծառայություններ<sup>58</sup>

01. Բանկային ավանդների պահուստավորումը ՀՆԱ-ի նկատմամբ:
02. ԿԲ ընդհանուր ակտիվները ՀՆԱ-ի նկատմամբ:
03. Ֆինանսական համակարգի ավանդները ՀՆԱ-ի նկատմամբ:
04. M2-ը ՀՆԱ-ի նկատմամբ:
05. Մասնավոր վարկերը ՀՆԱ-ի նկատմամբ:
06. Բանկային ավանդները ՀՆԱ-ի նկատմամբ:
07. Դրամական շուկայի գործիքները ՀՆԱ-ի նկատմամբ:
08. Ընդհանուր շահութաբերությունը ցուցանիշը:
09. Բանկի վերադիր ծախսերը:
10. Հանրային սեփականությունը բանկերում:
11. Բանկերի ակտիվների գործառնական ծախսերը:
12. Բանկի չաշխատող վարկերն ընդհանուր վարկերի մեջ:
13. Մասնավոր վարկային բյուրոյի ծածկույթը:
14. Հանրային վարկային ռեգիստրի ծածկույթը:

Այս ցուցանիշներից բացի կարևոր նշանակություն ունի նաև բանկի ֆինանսական կայունության ցուցանիշների համակարգը, որը հիմնականում առնչվում է բանկային ճգնաժամերի հաճախականության, ֆինանսական ուժեղ ցուցանիշներ ունենալու, անշարժ գույքի շուկայի «փուչիկների», ինչպես նաև բանկային ճգնաժամերի ժամանակ արդյունքների և կորուստների հետ: Իհարկե, մեր կողմից նախանշվող ցուցանիշներն այսքանով չեն սահմանափակվում և կան մի շարք այլ ցուցանիշներ, որոնցից ելնելով

<sup>58</sup> The Financial Development Report 2012, World Economic Forum. Geneva, Switzerland, World Economic Forum USA Inc. New York, USA, pp. 352-358, [http://www3.weforum.org/docs/WEF\\_FinancialDevelopmentReport\\_2012.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_FinancialDevelopmentReport_2012.pdf).

կարելի է պատկերացում կազմել բանկային համակարգի զարգացածության վերաբերյալ:

Ենթակառուցվածքների զարգացածության վերաբերյալ ավելի ընդլայնված հետազոտություններ ունի նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ): ՎՋԵԲ-ի անցումային զեկույցների (Transition report) հիմնական տրամաբանությունը կառուցվում է առանձին անցումային և զարգացող երկրների ենթակառուցվածքների զարգացման միտումների ուսումնասիրության վրա, որտեղ մշակված է հստակ մեթոդաբանություն, որի միջոցով հնարավոր է պատկերացում կազմել այս կամ այն տնտեսության մեջ կոնկրետ ոլորտի զարգացման տեմպերի ու տրամաբանության վերաբերյալ:

Իհարկե, կարևոր է նաև գնահատել տնտեսությունների անցումային գործընթացն ու ցուցանիշների համակարգը, որը յուրահատուկ պատկերացում է տալիս առանձին երկրների տնտեսություններում տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերի վերաբերյալ: Շատ կարևոր գործոն է, թե երկիրը զարգացման որ փուլում է գտնվում, տարբեր համակարգերում և ենթակառուցվածքներում բարեփոխումների ինչպիսի արդյունքներ է ապահովել, ինչպիսի հեռանկարներ կան տնտեսության զարգացման և բարեփոխումների հետ կապված: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից մշակված ամփոփ մեթոդաբանությունն արտացոլում է կոնկրետ երկրների ենթակառուցվածքների կառուցվածքային տեղաշարժերի արդյունքների ցուցանիշները<sup>59</sup>: Չանդրադառնալով անցումային տնտեսության բոլոր ոլորտներին՝ փորձենք միանգամից ներկայացնել մեզ հետաքրքրող ֆինանսական ոլորտի և, հատկապես, բանկային համակարգի բարեփոխումները, քանի որ ոլորտի զարգացման գնահատականը կարող է տրամաբանական կապ ստեղծել նաև ոլորտում իրականացված բարեփոխումների և ներդրված նորամուծությունների վերաբերյալ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) անցումային զեկույցների (Transition report) մեջ բանկային համակարգի բարեփոխումները բնութագրվում են անցումային հինգ մակարդակներով:

<sup>59</sup> Процесс перехода и показатели стран СНГ и Монголии, Извлечения из Доклада о процессе перехода за 2008 год, Европейский банк реконструкции и развития (EBRD), [www.ebrd.com](http://www.ebrd.com), с. 72-79.

Բանկային բարեփոխումները և տոկոսադրույքների ազատականացումը<sup>60</sup>.

«1» Բացի երկմակարդակ համակարգի ստեղծումից, մնացած արդյունքները չափազանց համեստ են:

«2» Տոկոսադրույքների և վարկավորման նշանակալի ազատականացում, վարչական վարկավորման և տոկոսադրույքների վերին շեմի հաստատման սահմանափակ պրակտիկայի կիրառություն:

«3» Էական առաջընթաց բանկերի կայացման ապահովման և պրոդենցիալ վերահսկման ու կարգավորման հիմքերի ձևավորման բնագավառում, տոկոսադրույքների լրիվ ազատականացում՝ վերաֆինանսավորման էժան ռեսուրսների նկատմամբ աննշան արտոնյալ թույլտվության պայմաններում, մասնավոր ձեռնարկությունների վարկավորման խոշոր ծավալներ և մասնավոր բանկերի մեծաքանակ առկայություն:

«4» Բանկային գործունեության կարգավորման նորմերի և օրենքների նշանակալի մոտեցում БМР (BIS)<sup>61</sup>-ստանդարտներին, բանկային ոլորտում իրական մրցակցություն և պրոդենցիալ վերահսկողության արդյունավետություն, մասնավոր ձեռնարկությունների խոշոր ծավալներով շտապ վարկավորում, ֆինանսական համակարգի էական խորացում:

«4+» Առաջավոր արդյունաբերական երկրների ստանդարտներ և ցուցանիշներ. բանկային գործունեության կարգավորման օրենքների և նորմերի լրիվ համապատասխանություն ՄՀԲ-ի ստանդարտներին, բանկային ծառայությունների ամբողջ համալիրի մատուցում մրցակցային հիմունքներով:

Նշված հինգ գնահատականներից ամեն մեկն ունի բանկային համակարգի զարգացման որոշակի փուլում գտնվելու հանգամանքն արտացոլելու ունակություն:

Իսկ այժմ փորձենք նաև անդրադառնալ արդեն իսկ գործնական ցուցանիշների վերլուծությանը:

<sup>60</sup> Процесс перехода и показатели стран СНГ и Монголии, Извлечения из Доклада о процессе перехода за 2008 год, Европейский банк реконструкции и развития (EBRD), [www.ebrd.com](http://www.ebrd.com), с. 101. <http://www.ebrd.com/news/publications/transition-report/ebd-transition-report-201516.html>

<sup>61</sup> БМР- Банк международных расчетов - Միջազգային հաշվարկների բանկ (ՄՀԲ) <https://www.bis.org/>: **Ծանոթություն.** Միջազգային հաշվարկների բանկի (ՄՀԲ) կողմից բավականին լուրջ վերլուծություններ և վիճակագրական տվյալներ են հրապարակվում ամբողջ աշխարհի բանկային համակարգի վերաբերյալ, որոնք հստակ պատկերացում են տալիս նաև բանկային համակարգի զարգացման միտումների մասին:

**Ոլորտային անցումային ցուցանիշները. ֆինանսական ոլորտի անցումային ցուցանիշներն անցումային երկրներում, 2015թ.-ին<sup>62</sup>**

|                                                   | Բանկային<br>ոլորտ | Ապահովա-<br>գրություն և այլ<br>ֆինանսական<br>ծառայություններ | ՓՄՁ-ների<br>ֆինան-<br>սավորում | Մասնավոր<br>սեփակա-<br>նություն | Կապիտալի<br>շուկաներ |
|---------------------------------------------------|-------------------|--------------------------------------------------------------|--------------------------------|---------------------------------|----------------------|
| <b>Կենտրոնական Եվրոպա<br/>և բալկանյան երկրներ</b> |                   |                                                              |                                |                                 |                      |
| Խորվաթիա                                          | 3+                | 3+                                                           | 3-                             | 2+                              | 3+                   |
| Էստոնիա                                           | 4-                | 3+                                                           | 3+                             | 3-                              | 3                    |
| Հունգարիա                                         | 3                 | 3                                                            | 3                              | 3                               | 3+                   |
| Լատվիա                                            | 3+                | 3+                                                           | 3                              | 2+                              | 3+                   |
| Լիտվա                                             | 3+                | 3+                                                           | 3                              | 2+                              | 3                    |
| Լեհաստան                                          | 4-                | 3+                                                           | 3                              | 3+                              | 4-                   |
| Սլովակիա                                          | 4-                | 3+                                                           | 4-                             | 2+                              | 3                    |
| Սլովենիա                                          | 3                 | 3+                                                           | 3-                             | 3-                              | 3+                   |
| <b>Հարավ-արևելյան<br/>Եվրոպա</b>                  |                   |                                                              |                                |                                 |                      |
| Ալբանիա                                           | 3-                | 2                                                            | 3-                             | 1                               | 2-                   |
| Բոսնիա և Հերցեգովինա                              | 3-                | 2+                                                           | 2+                             | 2-                              | 2                    |
| Բուլղարիա                                         | 3                 | 3+                                                           | 3                              | 3-                              | 3-                   |
| Մակեդոնիա                                         | 3-                | 3-                                                           | 3                              | 1                               | 2-                   |
| Կոսովո                                            | 2+                | 2                                                            | 3-                             | 1                               | 1                    |
| Մոնտենեգրո                                        | 3-                | 2+                                                           | 3                              | 1                               | 2                    |
| Ռումինիա                                          | 3                 | 3+                                                           | 3                              | 3-                              | 3-                   |
| Սերբիա                                            | 3-                | 3                                                            | 3                              | 2                               | 2                    |
| Թուրքիա                                           | 3+                | 3                                                            | 3                              | 3-                              | 4                    |
| <b>Արևելյան Եվրոպա<br/>և Կովկաս</b>               |                   |                                                              |                                |                                 |                      |
| Հայաստան                                          | 2+                | 2                                                            | 2+                             | 1                               | 2                    |
| Ադրբեջան                                          | 2                 | 2                                                            | 2                              | 1                               | 2-                   |
| Բելառուս                                          | 2                 | 2                                                            | 2                              | 1                               | 2-                   |
| Վրաստան                                           | 3-                | 2                                                            | 3-                             | 1                               | 2-                   |
| Մոլդովա                                           | 2+                | 2+                                                           | 2                              | 2-                              | 2                    |
| Ուկրաինա                                          | 3-                | 2+                                                           | 2+                             | 2                               | 2                    |
| Ռուսաստան                                         | 3-                | 3-                                                           | 2                              | 2+                              | 4-                   |
| <b>Կենտրոնական Ասիա</b>                           |                   |                                                              |                                |                                 |                      |
| Ղազախստան                                         | 2+                | 2+                                                           | 2                              | 2-                              | 2                    |
| Ղրղզստան                                          | 2                 | 2-                                                           | 2-                             | 1                               | 2-                   |
| Մոնղոլիա                                          | 2+                | 2                                                            | 2+                             | 2-                              | 2-                   |
| Տաջիկստան                                         | 2                 | 2-                                                           | 2-                             | 1                               | 1                    |
| Թուրքմենստան                                      | 1                 | 2-                                                           | 1                              | 1                               | 1                    |
| Ուզբեկստան                                        | 1                 | 2                                                            | 1                              | 1                               | 1                    |

Ներկայացված աղյուսակ 1.3.1-ում ընդգրկվել են ՎՋԵԲ-ի կողմից հրապարակված

<sup>62</sup> Transition Report 2015-16, Rebalancing Finance, tr-ebrd.com, 102 p. [www.ebrd.org](http://www.ebrd.org) (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ):

2015թ.-ի ֆինանսական ոլորտի անցումային ցուցանիշները, որոնցից, իհարկե, մեզ հետաքրքրում է բանկային ոլորտը, սակայն հաշվի առնելով նաև մյուս փոխկապակցված ոլորտներն՝ աղյուսակային տվյալների վերլուծությունը փորձենք ներկայացնել այդ համատեքստում:

Ներկայացված երկրների ցանկում ամենաբարձր գնահատականը բանկային զարգացման ոլորտում «4-» ունեն էստոնիան, Լեհաստանը և Սլովենիան, «3+» զարգացման մակարդակ են ապահովել՝ Խորվաթիան, Թուրքիան, Լատվիան և Լիտվան: Հարկ ենք համարում նշել, որ բավականին շատ է խոսվում, որ Հայաստանն ունի զարգացած բանկային համակարգ, այս ոլորտում մենք արձանագրել ենք լուրջ առաջընթաց և արդյունքներ, սակայն փաստը մնում է այն, որ Հայաստանի բանկային ոլորտի զարգացումը ՎՋԵԲ-ի կողմից գնահատվել է ընդամենը «2+»: Նմանատիպ վարկանիշ ունեն նաև Կոսովոն, Մոլդովան, Ղազախստանը և Մոնղոլիան: Օրինակ՝ ԵԱՏՄ երկրների շրջանակում ՀՀ-ից բարձր վարկանիշ կամ զարգացման մակարդակ բանկային ոլորտում ունի միայն Ռուսաստանը «3-», իսկ Բելոռուսիան և Ղրղզստանը «2» միավորով մեկ քայլով հետ են գտնվում Հայաստանից և Ղազախստանից: Հետաքրքիր փաստերից է նաև այն, որ Վրաստանն իր բանկային ոլորտի բարեփոխումներով առաջ է անցել Հայաստանից և ունի «3-» վարկանիշ: Պետք է նշել, որ Հայաստանի բանկային համակարգի զարգացածությունը համադրական առումով թույլ է, իսկ դա առաջին հերթին կապվում է բարձր տոկոսադրույքների հետ, քանի որ ՀՀ բանկային համակարգի տոկոսադրույքները նպաստավոր պայմաններ չեն ստեղծում գործարարության զարգացման համար: Մյուս կողմից, գործառնական առումով բանկերը ծառայում են ոչ թե տնտեսությանը, այլ հանդես են գալիս որպես առանձին ինստիտուցիոնալ միավոր, որը զարգանում է հնարավորինս իր վրա չկրելով տնտեսական բացասական զարգացումները և ռիսկերը:

Եթե փորձենք ըստ ՎՋԵԲ-ի չափանիշների հասկանալ քանի փոքր քայլ է մնում Հայաստանին զարգացած բանկային համակարգ ունենալու համար, ապա նախ պետք է մենք անցնենք «3-», «3», «3+», «4-», «4» և «4+» փուլերով, իհարկե նախորդ էջում մեր կողմից ներկայացված դասակարգումն ավելի խոշորացված խմբերով է, իսկ հաջորդական քայլերով անցնելու դեպքում փուլերն ավելի շատ են:

Փաստացի կարող ենք ենթադրել, որ դրա համար անհրաժեշտ է լինելու հսկայական ժամանակահատված և ջանքեր, իսկ առանց նման փուլային զարգացման տրամաբանության ակնկալել նաև, որ բանկային համակարգն իր զարգացման տեմպերով հանդերձ տնտեսության զարգացման մեջ սկսելու է լուրջ դեր խաղալ մենք չենք կարող: Մյուս կողմից, եթե փորձենք հիմք ընդունել այն հանգամանքը, թե որ երկրների փորձն է հարկավոր տեղայնացնել, ապա եթե պետք է շարժվենք յուրաքանչյուր հաջորդ վարկանիշային մակարդակին հասնելու տրամաբանությամբ, ապա պետք է ընտրենք այդ երկրների ցանկը, իսկ եթե նպատակ ունենք ոչ թե աստիճանական զարգացում ապահովել այլ թռիչքաձև, ապա անհրաժեշտ է անցում կատարել «4-» վարկանիշ ունեցող անցումային երկրների փորձի ուսումնասիրությանը: Դրանից բարձր մակարդակի անցում կատարելիս անհրաժեշտ է ուսումնասիրել Ֆինանսական զարգացածության համաթվի (FDI) երկրների տասնյակի փորձը: Իսկ կան արդյո՞ք հայեցակարգային այն մոտեցումներ, որոնց հիման վրա մեր բանկային համակարգի զարգացածությունը մոտեցվելու է այդ չափանիշներին, կամ արդյո՞ք առկա է այն ճանապարհային քարտեզը, որը հիմք է հանդիսանալու ՀՀ բանկային համակարգի ներկան զարգացած բանկային համակարգ ունենալու ապագայի հետ կապելու համար:

Սրանք հարցադրումներ են, որոնք պահանջում են ինստիտուցիոնալ լուծումներ, այսինքն՝ սկսած առանձին օրենքներից, մինչև առանձին գործընթացների կանոնակարգումը և այլն: Եվ իհարկե, այդ լուծումների մեծ մասը գտնվում է նաև ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորամուծությունների ներդրման հարթությունում:

Ապահովագրական և ֆինանսական ծառայությունների ոլորտի առաջատարներն են հանդիսանում «3+» միավորով հիմնականում բալթյան երկրները, ինչպես նաև Ռումինիան, Բուլղարիան և այլն, իսկ ՀՀ-ն ունի այս բնագավառում 2 վարկանիշ կամ բավականին հետ է առաջատար համարվելուց: ԵԱՏՄ երկրներից ՌԴ-ն ունի «3-», Ղազախստանը՝ «2+», Բելառուսը՝ «2», իսկ Ղրղզստանը՝ «2-» վարկանիշ:

ՓՄՁ-ների ֆինանսավորման ոլորտում ՀՀ-ի վարկանիշը «2+» է: Սա ևս կարևորագույն ոլորտներից է, քանի որ բանկային համակարգն իր անբաժանելի դերն է խաղում այստեղ և ոլորտի զարգացման խնդիրները մեծ կարևորություն ունեն յուրաքանչյուր երկրի համար:

Մասնավոր սեփականության հարցերում Հայաստանն ունի «1», իսկ կապիտալի շուկայում «2» վարկանիշ, իհարկե, այս ոլորտներից յուրաքանչյուրն իր անուղղակի մասնակցությունն ունի նաև բանկային համակարգի զարգացման գործում և ընդհանուր ֆինանսական ոլորտը զարգացնել առանց մյուս ենթակառուցվածքային տարրերի անհնար է, իսկ դա նշանակում է, որ Հայաստանն իր ֆինանսական ոլորտում միջին հաշվով ունի «2»-ից մի քիչ ցածր վարկանիշ, որն էլ փաստում է համակարգի միջինից էլ ցածր զարգացածություն և անցումային մի շարք փուլեր դեռևս ապագայում անցնելու հեռանկարի մասին<sup>63</sup>:

Ցավալի է նաև այն, որ տարիներով այս միտումները էականորեն չեն փոխվում որոշ երկրներում և զարգացման փոխարեն առկա են լճացման միտումներ:

Հաշվի առնելով ՎՋԵԲ-ի կողմից ՀՀ ֆինանսական ոլորտին տրված գնահատականները՝ գտնում ենք, որ 3-ից 4+ մակարդակի ՀՀ ֆինանսական համակարգը հասցնելու համար անհրաժեշտ է.

- բանկային ոլորտում իրական մրցակցություն և պրուդենցիալ վերահսկողության արդյունավետության ապահովում,
- իրականացնել տոկոսադրույքների լրիվ ազատականացում՝ վերաֆինանսավորման էժան ռեսուրսների նկատմամբ աննշան արտոնյալ թույլտվության պայմաններում,
- մասնավոր ձեռնարկությունների խոշոր ծավալներով շտապ վարկավորման համակարգի ներդրում,
- ֆինանսական համակարգի էական խոշորացում՝ միավորման կամ կապիտալի ներգրավման եղանակով,
- առաջավոր արդյունաբերական երկրների ստանդարտների և ցուցանիշների բանկային գործունեության կարգավորման նորմերի և օրենքների համապատասխանեցում Բազել 3 և ՄՀԲ (*Банк международных расчетов* (БМР)-Միջազգային հաշվարկների բանկ (ՄՀԲ)) ստանդարտներին,
- բանկային ծառայությունների ամբողջ համալիրի մատուցում՝ մրցակցային հիմունքներով:

Նշված քայլերը վերաշարադրվել և որոշակի փոփոխությունների են ենթարկվել

<sup>63</sup> Transition Report 2015-16, Rebalancing Finance, tr-ebrd.com, 102 p. [www.ebrd.org](http://www.ebrd.org)

մեր կողմից՝ ուսումնասիրելով անցումային երկրների բանկային համակարգի զարգացման փորձը: Իհարկե, այս քայլերով ֆինանսական համակարգի զարգացման ընթացքը չի կարելի համարել ավարտված, քանի որ իրականում ֆինանսական համակարգի միայն մեկ բաղադրիչն է կազմում բանկային համակարգը: Եվ անհրաժեշտ է նաև կայացնել ֆինանսական մյուս ինստիտուտները (բորսայական համակարգը, ներդրումային հիմնադրամները, վարկային կազմակերպությունները, ակտիվների կառավարման ֆոնդերը և այլն) ևս՝ ապահովելով նրանց միջև արդյունավետ փոխգործակցություն և նորարարական հիմքերի վրա զարգացում:

Հարկ է նշել, որ ֆինանսական նորամուծությունների համակարգի արդյունավետ գործունեության հիմքում պետք է դրվի իրական տնտեսությունը, քանի որ համաշխարհային տնտեսության մեջ ֆինանսական զարգացման առանձին մոդելներ և սխեմաներ կիրառելով ձևավորվում են նաև ֆինանսական բուրգեր: Սա նշանակում է, որ ֆինանսական համակարգի նկատմամբ պետք է իրականացվի լուրջ վերահսկողություն և այն որպես համակարգ ոչ թե պետք է լինի ինքնուրույն գործառնվող, այլ իրական տնտեսությանը սպասարկող՝ ֆինանսաարդյունաբերական խմբերի մոդելով:

Իհարկե, ժամանակակից բանկային համակարգում մեծ կիրառական նշանակություն են այժմ սկսում ստանալ բջջային կապի կամ շարժական (մոբայլ) ֆինանսական ծառայությունները, որոնք սկսում են ընդլայնվել և ներթափանցել յուրաքանչյուր մարդու անձնական կյանք: Իհարկե, առկա են որոշակի անվստահության հիմնահարց, սակայն այս ոլորտը ևս մեծ հետաքրքրություն է ներկայացնում, որն էլ հիմք է հանդիսացել 2011թ.-ին Համաշխարհային տնտեսական համաժողովի<sup>64</sup> և Բոստոնի խորհրդատվական խմբի<sup>65</sup> կողմից համատեղ հետազոտություն կատարելու և հստակ մեթոդաբանություն մշակելու ու զեկույց հրապարակելու համար<sup>66</sup>:

Այսինքն՝ եթե առկա է որոշակի տրամաբանություն, որ անհրաժեշտ է ֆինանսական զարգացածությունից մակրո կամ մեզա հարթությունից անցում կատարել բանկային համակարգ, ապա բջջային կապի կամ շարժական (մոբայլ) ֆինանսական ծառայությունների մատուցումն արդեն իսկ դիտարկվում է զարգացածության միկրո

<sup>64</sup> <https://www.weforum.org/> [Վերջին մուտք 10.12.2016թ.]:

<sup>65</sup> <https://www.bcg.com/> [Վերջին մուտք 10.12.2016թ.]:

<sup>66</sup> The Mobile Financial Services Development Report 2011, World Economic Forum. Geneva, Switzerland, World Economic Forum USA Inc. New York, USA, 223p., [http://www3.weforum.org/docs/WEF\\_MFSD\\_Report\\_2011.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_MFSD_Report_2011.pdf)




մակարդակի տարր: Հետևաբար, մեր կողմից ուսումնասիրվող հիմնահարցերի միջազգային փորձի միկրո մակարդակն անմիջականորեն առնչվում է նաև մոբայլ կամ բջջային ֆինանսական ծառայությունների հետ:

Ստորև ներկայացված գծապատկերը բավականին հետաքրքիր ձևով ակնհայտ է դարձնում առանձին ոլորտների միջև տրամաբանական կապերը, նախանշում թե շարժական ֆինանսական ծառայությունների զարգացման վերլուծության համար ինչպիսի բաղադրիչների վրա է հարկավոր ուշադրություն դարձնել:

Գծապատկեր 1.3.2

Շարժական (մոբայլ) ֆինանսական ծառայությունների զարգացումը



**Աղբյուր՝** Համաշխարհային տնտեսական համաժողով (Ֆորում): The Mobile Financial Services Development Report 2011, World Economic Forum. Geneva, Switzerland, World Economic Forum USA Inc. New York, USA, p. 5, [http://www3.weforum.org/docs/WEF\\_MFSD\\_Report\\_2011.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_MFSD_Report_2011.pdf)

Առաջին հերթին պետք է նշել, որ մենք գործ ունենք 4 հենասյուների հետ, որոնք են՝

1. Ինստիտուցիոնալ միջավայրը:
2. Շուկայական միջավայրը:
3. Վերջնական սպառողների միջավայրը:
4. Ադապտացիան և հասանելիությունը:

Այս չորս հենասյուներն իրենց հերթին բաժանվում են յոթ ոլորտների, որոնցից յուրաքանչյուրը մյուսին չի զիջում իր կարևորությամբ:

Շատ մեծ կարևորություն ունի, օրինակ՝ շուկայի մրցունակություն, որտեղ էլ հենց անդրադարձ է կատարվում ոլորտի նորարարություններին կամ ինովացիաներին, քանի որ այս բնագավառում առանց նորամուծությունների ոչինչ իրականություն չի դառնում: Եվ չնայած 2011թ.-ին է միայն նմանատիպ հետազոտություն արվել, սակայն մշակվել է այն կայուն մեթոդաբանական և հայեցակարգային բազան, որի վրա հիմնվելով կարելի է ուսումնասիրել այս կամ այն երկրի շարժական ֆինանսական ծառայությունների զարգացման ընթացքը:

### Աղյուսակ 1.3.2

#### Երկրների հարաբերական կատարողականն ըստ բջջային ֆինանսական ծառայությունների էկոհամակարգի յոթ հենասյուների<sup>67</sup>

|                  | Կարգավորվող<br>համամաս-<br>նություններ | Սպառողների<br>պաշտպա-<br>նությունը | Շուկայի<br>մրցունա-<br>կություն | Շուկայի<br>կատալիզա-<br>տորներ | Վերջնական<br>սպառողների<br>վերագինում և<br>հասանելիություն | Բաշխման և<br>գործակա-<br>լական ցանց | Ադապտացիա<br>և հասանե-<br>լիություն |
|------------------|----------------------------------------|------------------------------------|---------------------------------|--------------------------------|------------------------------------------------------------|-------------------------------------|-------------------------------------|
| Աֆղանստան        | □                                      | □                                  | n/a                             | ■                              | □                                                          | □                                   | □                                   |
| Արգենտինա        | ■                                      | □                                  | □                               | ■                              | ■                                                          | ■                                   | ■                                   |
| Բանգլադեշ        | ■                                      | ■                                  | ■                               | ■                              | □                                                          | □                                   | ■                                   |
| Բրազիլիա         | □                                      | ■                                  | □                               | □                              | ■                                                          | □                                   | ■                                   |
| Չինաստան         | □                                      | ■                                  | ■                               | □                              | □                                                          | n/a                                 | n/a                                 |
| Կոլումբիա        | ■                                      | ■                                  | ■                               | □                              | □                                                          | □                                   | n/a                                 |
| Գանա             | □                                      | □                                  | ■                               | □                              | □                                                          | □                                   | □                                   |
| Հայիթի           | ■                                      | ■                                  | n/a                             | □                              | ■                                                          | □                                   | n/a                                 |
| Հնդկաստան        | □                                      | □                                  | ■                               | □                              | □                                                          | ■                                   | □                                   |
| Ինդոնեզիա        | ■                                      | □                                  | □                               | □                              | ■                                                          | ■                                   | □                                   |
| Քենյա            | □                                      | □                                  | □                               | ■                              | □                                                          | ■                                   | ■                                   |
| Մալայզիա         | ■                                      | □                                  | ■                               | ■                              | ■                                                          | □                                   | □                                   |
| Մեքսիկա          | □                                      | □                                  | □                               | □                              | □                                                          | ■                                   | n/a                                 |
| Նիգերիա          | □                                      | □                                  | ■                               | □                              | ■                                                          | □                                   | □                                   |
| Պակիստան         | ■                                      | ■                                  | □                               | ■                              | ■                                                          | ■                                   | □                                   |
| Պերու            | □                                      | ■                                  | □                               | ■                              | □                                                          | □                                   | n/a                                 |
| Ֆիլիպիններ       | □                                      | □                                  | □                               | ■                              | □                                                          | □                                   | ■                                   |
| Հարավային Աֆրիկա | □                                      | □                                  | □                               | □                              | □                                                          | □                                   | □                                   |
| Տանզանիա         | □                                      | ■                                  | □                               | □                              | ■                                                          | □                                   | ■                                   |
| Ուգանդա          | ■                                      | □                                  | □                               | □                              | □                                                          | ■                                   | □                                   |

Աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական համաժողով:

Նշում՝ ■ = մրցակցային առավելություն □ = չեզոք ■ = մրցակցային թերություն

Փորձենք վերլուծել նաև առանձին երկրների գործնական տվյալները վերոնշյալ համաթվի կտրվածքով, այս փորձը կարող է բավականին օգտակար լինել, քանի որ որոշ երկրների առավելությունները հաշվի առնելով կարելի է հասկանալ, թե ինչպես

<sup>67</sup> The Mobile Financial Services Development Report 2011, World Economic Forum. Geneva, Switzerland, World Economic Forum USA Inc. New York, USA, p. 13, [http://www3.weforum.org/docs/WEF\\_MFSD\\_Report\\_2011.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_MFSD_Report_2011.pdf)

կարելի է ապագայում արձանագրել հաջողություններ, քանի որ նշված երկրների բջջային ֆինանսական ծառայությունների զարգացածության մակարդակը դժվար թե էականորեն տարբերվի ՀՀ-ում այս ոլորտի զարգացման տեմպերից: Օրինակ՝ Արգենտինան մրցակցային առավելություններ ունի այս ծառայությունների սպառողներին հասանելիության և բաշխման ու գործակալական ցանցերի ձևավորման մեջ, Չինաստանը շուկայի մեծության հաշվին մրցակցային առավելությունների է հասել այդ առումով, Ֆիլիպինները կարողացել է լավ կիրառել շուկայի կատալիզատորները և այլն:

Այսպիսով՝ ֆինանսական զարգացածությունից մինչև առանձին բջջային ֆինանսական ծառայություններ մատուցելու համակարգը բավականին բարդ և ընդգրկուն մեխանիզմ է, և իր մեջ պարունակում է մի շարք տարրեր, որի արդյունքում բավականին դժվար է անգամ կառուցել համակարգի հայեցակարգային բուրգը կամ աստիճանակարգված սխեման: Այնուամենայնիվ, փորձելով համադրել մի շարք տեսամեթոդաբանական հարցեր կապված բանկային և ֆինանսական համակարգի ծառայությունների ու նորամուծությունների հետ, ինչպես նաև համաթվերի կամ ինդեքսների միջոցով վերլուծելով առանձին երկրների փորձը, պետք է փորձել դրանք տեղայնացնել ՀՀ ֆինանսական և, հատկապես, բանկային համակարգի զարգացման և նորամուծությունների ներդրման հիմնահարցերի լուծման ժամանակ:

## **ԳԼՈՒԽ II. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՈՐԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ**

### **ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

#### **2.1. ՀՀ առևտրային բանկերի կողմից մատուցվող**

#### **ծառայությունների վերլուծությունը**

Ներկայումս փոփոխվում են բանկային ծառայությունների նկատմամբ պահանջարկի բնութագրերը՝ խոշոր ձեռնարկությունները և կազմակերպությունները տիրապետում են համապատասխան տեղեկատվության, միջոցների, անձնակազմի, որը բավարար է բարդ ֆինանսական սխեմաներն ինքնուրույն կազմակերպելու համար: Բանկերը կարող են եկամուտներ ստանալ այդ ոլորտից, եթե օգտվեն «մասշտաբի էֆեկտից», և առաջարկեն ավելի էժան ծառայություն՝ սպասարկման ավելի բարձր որակի պայմաններում: Եկամուտ կարող է ապահովել նաև յուրահատուկ ծառայության մատուցումը: Օրինակ՝ առանձնահատուկ տեխնոլոգիաների օգտագործումը, ինչպես ֆինանսական գործառնությունների կազմակերպման ընթացքում, այնպես էլ տեխնիկական նորույթների ներդրման մեջ: Ցանկացած դեպքում բանկից պահանջվում է գործունեության ակտիվացում և գիտատեխնիկական առաջադիմության նորագույն նվաճումների օգտագործում:

Բանկային ծառայությունն առևտրային բանկի, որպես հաճախորդի պահանջների բավարարման գործընթացի, գործունեության հետևանք է<sup>68</sup>:

Կախված դասակարգման չափանիշներից, առևտրային բանկերում կարող են լինել ծառայությունների տարբեր խմբեր (Աղյուսակ 2.1.1):

Բանկային արտադրանքի ներքո հասկացվում է փաստաթղթային ձևակերպում ստացած, համակարգված՝ կազմակերպական, տեխնիկական, տեխնոլոգիական, ֆինանսական, տեղեկատվական և իրավական ընթացակարգերի ամբողջությունը, որը կազմում է որոշակի եղանակով կամ տեխնոլոգիայով ծառայության մատուցման կանոնակարգը<sup>69</sup>:

Տարբերում են պարզ բանկային արտադրանք, (որն իրացվում է բանկի մեկ ստորաբաժանման կողմից հաճախորդին մեկ ծառայություն մատուցելով) և բարդ (դրա իրացմանը կարող են մասնակցել բանկի մի քանի ստորաբաժանում՝ համալիր ծառայություն մատուցելով): Նորույթի չափանիշով առանձնացնում են ավանդական բանկային

<sup>68</sup> Масленченко Ю.С., Дубанков А.П., Экономика банка. Разработка по управлению финансовой деятельностью банка. – М.: Издательская группа “БДЦ - пресс”, 2002, с. 39.

<sup>69</sup> Иванов А.Н., Банковские услуги: зарубежный и российский опыт. – М.: Финансы и статистика, 2002, с. 19.

արտադրանք (բաղկացած են առևտրային բանկի ստանդարտ, ելքային բազմաթիվ հիմնական և լրացուցիչ ծառայություններից) և ինովացիոն (մշակվում են ոչ ստանդարտ, անհատական կամ նոր բանկային ծառայությունների և տեխնոլոգիաների հիման վրա):

Աղյուսակ 2.1.1

**Բանկային ծառայությունների դասակարգումը**

| Դասակարգման հատկանիշը                          | Բանկային ծառայությունների խմբերը                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |
|------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Մատուցվող ծառայությունների ծավալը և բնույթը    | <ul style="list-style-type: none"> <li>Հասարակ-ենթադրում են մեկ բանկային արտադրանքի իրացում, որը բավարարում է հաճախորդի մասնագիտացված պահանջմունքը:</li> <li>Համալիր-ենթադրում է բարդ-բանկային արտադրանքի իրացումը, որը բավարարում է հաճախորդի համալիր պահանջմունքը:</li> </ul>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |
| Ծառայությունների մատուցման պայմանները          | <ul style="list-style-type: none"> <li>Չանգվածային-մատուցվում են առևտրային բանկի կողմից բոլոր հաճախորդներին առաջարկվող պայմաններով:</li> <li>Խմբային-մատուցվում են հաճախորդների որոշակի խմբերի բավարարվող պայմաններով:</li> <li>Անհատական-ենթադրում են մատուցման հատուկ պայմաններ, որ մշակվել են որոշակի հաճախորդների համար:</li> </ul>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       |
| Մատուցվող ծառայությունների փոխգործունեությունը | <ul style="list-style-type: none"> <li>Ուղեկցող-կարող են ուղեկցել հիմնական ծառայության մատուցումը:</li> <li>Կապակցված-այնպիսի ծառայություններ, որոնց մատուցման համար անհրաժեշտ է տրամադրել մի շարք այլ ծառայություններ:</li> <li>Անկախ-ծառայություններ, որոնք կապված չեն միմյանց հետ և իրականացվում են զուգահեռաբար:</li> <li>Ծառայությունների փաթեթ-ծառայություններ, որոնք միավորված են մեկ անբաժան տեխնոլոգիական շղթայով:</li> </ul>                                                                                                                                                                                                                                                                                                        |
| Ծառայությունների մատուցման եղանակը             | <ul style="list-style-type: none"> <li>Ռեսուրսային-ծառայություններ հաճախորդի միջոցների ներգրավման և տեղաբաշխման ուղղությամբ:</li> <li>Տրանսֆորմացված-ծառայություններ, որոնք հանգեցվում են հաճախորդի դրամական միջոցների ձևափոխության:</li> <li>Հաշվարկային-հաճախորդների ազատ դրամական միջոցների պահպանում, դրանց ազատ տնօրինման պայմաններով, կանխիկ և անկանխիկ ձևերով ընթացիկ տեղաշարժերի իրականացման համար:</li> <li>Դրամարկղային-կանխիկ դրամական միջոցների սպասարկում:</li> <li>Դեպոզիտային-նյութական միջոցների պահպանում և ինկասացիա:</li> <li>Ապահովման-ծառայություններ, որոնք ապահովում են հաճախորդների գործողությունները (օրինակ՝ պլաստիկ քարտերի տրամադրումը):</li> <li>Ոչ ֆինանսական-խորհրդատվական բնույթի ծառայություններ:</li> </ul> |

Բանկային գործառնությունը (լատ. operatio-գործողություն) ենթադրում է գործողությունների մի ընթացք, որն ուղղված է լուծելու որոշակի խնդիր բանկային կապիտալի կառավարման հարցում<sup>70</sup>: Բանկային գործառնությունների շարքին են դասվում դրամական միջոցների շարժի և արժեթղթերի բաշխման գործընթացների կառավարումն ու

<sup>70</sup> W. Scott Frame, Lawrence J. White, Federal Reserve Bank Of Atlanta, Working Paper 2002-12 July 2002, p. 8.

կանոնակարգումը, ակտիվների արդյունավետ տեղաբաշխումն ու կառավարումը վարկային և այլ գործառնությունների տեսքով, ֆինանսական ցուցանիշների պլանավորման մեթոդի, տարբեր տեսակի ֆինանսական պլանների մեթոդաբանության ընտրությունը, աշխատանքների ճիշտ կազմակերպումն ու վերահսկողությունը և այլ գործառնություններ:

Բանկային գործառնությունը բանկի աշխատողների փոխադարձորեն կապված գործունեությունն է հաճախորդի սպասարկման և պահանջմունքների բավարարման ուղղությամբ, որն իրենից ներկայացնում է բանկային արտադրանքն իրողության վերածելու ձև:

Ներկայումս ՀՀ առևտրային բանկերի կողմից հաճախորդների մատուցվող ծառայությունները կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի՝

1. ավանդական բանկային ծառայություններ,
2. Ժամանակակից բանկային ծառայություններ:

Ավանդական բանկային ծառայությունները իրենց մեջ ներառում են՝

- հաճախորդի անունից, իրենց ռիսկով ավանդների ընդունում,
- վարկերի տրամադրում,
- հաշվարկադրամակրղային ծառայությունների մատուցում,
- վճարահաշվարկային ծառայությունների մատուցում,
- բանկային հաշիվների բացում և վարում,
- արտարժույթային գործարքներ,
- պահառուական գործառնություններ,
- դրամական փոխանցումներ:

Ժամանակակից բանկային ծառայություններին են դասվում՝

- հեռահար բանկային սպասարկում,
- խորհրդատվական ծառայություններ,
- առևտրի ֆինանսավորում,
- հատուկ վարկավորման ծրագրեր,
- բանկային երաշխիքների տրամադրում,
- ֆակտորինգ,
- լիզինգ,
- և այլն:

Առևտրային բանկերի հետագա գործունեության ընդլայնման և զարգացման վրա նշանակալի ազդեցություն կունենան ՀՀ տնտեսությունում առկա հետևյալ գործոնները՝

- տնտեսական աճը,
- գնաճային սպասումները,
- մասնավոր տրանսֆերտները,
- տոկոսադրույքների սպրեդը,
- բանկերի միջև մրցակցության ուժեղացումը,
- ստվերային տնտեսության բարձր մակարդակը,
- ապահովագրական շուկայի զարգացումը և այլն:

Զարգացած երկրների փորձը վկայում է, որ բանկային ծառայությունների զարգացման հիմնական ուղղություններից մեկը կապված է վճարային էլեկտրոնային տեխնոլոգիաների զարգացման և էլեկտրոնային փողերի ներդրման հետ:

Համաձայն էլեկտրոնային փողեր թողարկող կազմակերպությունների (EMI) վերաբերյալ Եվրոմիության հրահանգի (EU Directive 2009/110/)' «էլեկտրոնային փողերն իրենցից ներկայացնում են թողարկողի պարտավորությամբ սահմանափակված դրամական միջոցներ, որոնք տրվում են հաճախորդի կողմից փոխանցված միջոցների փոխարեն, գրառվում էլեկտրոնային սարքավորման (համակարգչի կամ միկրոչիպի) վրա և ընդունվում են վճարման թողարկողից տարբեր ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից»<sup>71</sup>: Եվրոհրահանգը կարգավորման հիմնական սուբյեկտ է համարում «էլեկտրոնային փողերի ինստիտուտը»՝ վարկային կազմակերպությունից տարբեր իրավաբանական անձ, որը թողարկում է վճարային միջոցներ էլեկտրոնային փողերի ձևով<sup>72</sup>:

Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի<sup>73</sup> «էլեկտրոնային փողը թողարկողի նկատմամբ դրամական պահանջ արտահայտող դրամական արժեքն է, որը՝

- պահվում է էլեկտրոնային սարքի վրա,

<sup>71</sup> Кочергин Д. А., Электронные деньги. Учебник ЦИПСИР, 2011, с 11.

<sup>72</sup> Կիրակոսյան Ա., «էլեկտրոնային փողերի դերը և արդիականությունը բանկային համակարգում», Այլընտրանք եռամսյա գիտական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր, Երևան 2015 #4, էջեր 41-53:

<sup>73</sup> «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2004.12.28/72(371) հոդված 3:

- թողարկվում է ստացված դրամական միջոցների դիմաց, որոնց արժողությունը չի կարող ավելի փոքր լինել, քան թողարկված էլեկտրոնային փողի արժեքը,
- ընդունվում է որպես վճարամիջոց թողարկողից տարբերվող այլ անձանց կողմից.
- շահառուն վճարման ստացման վերջնական հասցեատերն է»:

Դժվար չէ նկատել, որ բերված սահմանումը նույնությամբ փոխառնված է Եվրոհրահանգի բերված սահմանումից:

Ըստ էության, էլեկտրոնային փողն իրենից ներկայացնում է էլեկտրոնային եղանակով գրառված դրամական արժեք: Հաճախորդը գնում է էլեկտրոնային արժեք, որը պակասեցվում է յուրաքանչյուր գործարքի ժամանակ:

Աղյուսակ 2.1.2.-ում ներկայացվում է էլեկտրոնային փողերի և կանխիկի առավելությունների և թերությունների համեմատական վերլուծությունը:

Աղյուսակ 2.1.2

#### Էլեկտրոնային փողերի առավելությունները և թերությունները<sup>74</sup>

| Առավելությունները                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | Թերությունները                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <ul style="list-style-type: none"> <li>• անձի նույնականացում (pin-ի կիրառություն),</li> <li>• շրջանառությունն ավելի էժան է,</li> <li>• մանրի հետ կապված խնդիրներ,</li> <li>• մաքրությունը,</li> <li>• այն կարող է փոխանցվել ցանցի միջոցով (օրինակ՝ ինտերնետի),</li> <li>• հնարավոր է՝ տոկոսների ստացում,</li> <li>• հնարավոր է՝ վճարումներ առանց անմիջական շփման,</li> <li>• հնարավոր է՝ վերալիցքավորում հեռախոսի, ինտերնետի և այլնի միջոցով:</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>• պահանջում է որոշակի տեխնիկական սարքավորումներ,</li> <li>• էլեկտրոնային փողեր օգտագործողները չեն կարող հայտնաբերել խարդախությունները,</li> <li>• խարդախությունը կարող է առաջացնել համակարգային ռիսկ,</li> <li>• անվտանգության միջոցառումները շատ թանկ են,</li> <li>• անանունության հետ կապված կոնֆլիկտները,</li> <li>• հարմար չէ փողը տանը պահելու համար:</li> </ul> |

#### Կանխիկի առավելությունները և թերությունները

| Առավելությունները                                                                                                                                                                                                                                                                                                                 | Թերությունները                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <ul style="list-style-type: none"> <li>• չի պահանջում տեխնիկական սարքավորումներ,</li> <li>• վճարումը բավականին պարզ է,</li> <li>• կեղծիքներն ավելի հեշտ է հայտնաբերել,</li> <li>• համակարգային ռիսկն աննշան է,</li> <li>• ապահովվում է վերջնականությունը,</li> <li>• հարմար է փողը տանը, այլ ոչ բանկում պահելու համար:</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>• այն կարող է կորել կամ գողացվել,</li> <li>• կանխիկի շրջանառությունը թանկ է,</li> <li>• մանրի խնդիր կարող է առաջանալ,</li> <li>• կեղծիքները շատ են,</li> <li>• լայնորեն կիրառվում է անօրինական գործառնություններում,</li> <li>• կեղտոտ է և կարող է հիվանդությունների տարածման աղբի հանդիսանալ,</li> <li>• կանխիկը տոկոսներ չի բերում:</li> </ul> |

<sup>74</sup> Кочергин Д. А., Электронные деньги. Учебник ЦИПСИР, 2011, с 25.



Էլեկտրոնային փողերի առաջացման սկզբնական շրջանում առաջարկվում էր դրանց թողարկումը թույլատրել միայն կենտրոնական բանկերին: Սակայն Եվրախորհուրդն ուներ իր ուրույն դիրքորոշումը հետապնդելով մի շարք նպատակներ՝

- իրականացնել եվրոյով փոքրածավալ միջազգային փոխանցումներ, նախքան թղթադրամների և մետաղադրամների հայտնվելը,
- խթանել էլեկտրոնային առևտրի զարգացումը,
- ստեղծել համապատասխան իրավական դաշտ,
- խրախուսել շուկա նոր մուտք գործողներին (ոչ բանկ կազմակերպություններին),
- խթանել մրցակցությունը և էլեկտրոնային փողերի բնագավառում նորարարությունները:

Եվրամիությունում առաջ քաշվեց նոր տիպի կազմակերպություն՝ էլեկտրոնային փողեր թողարկող կազմակերպություն (EMI) ստեղծման գաղափարը, ավելի թեթև վերահսկողությամբ, քան այլ վարկային կազմակերպությունների վերահսկողությունը: Մի երկրում լիցենզիա ստացած EMI-ն ունենում էր անձնագիր և իրավունք էր ստանում էլեկտրոնային փողեր թողարկել նաև Եվրամիության այլ երկրներում: Եվրոպական կենտրոնական բանկը (ԵԿԲ) համաձայն չէր այս դիրքորոշման հետ: Էլեկտրոնային փողերին վերաբերող 1998թ. իր զեկույցում ԵԿԲ-ը ներկայացրեց էլեկտրոնային փողերի և դրանց վերահսկողության վերաբերյալ իր տեսակետը և մտահոգությունները: Սակայն ի վերջո ԵԿԲ-ը զիջեց իր դիրքերը և հավանություն տվեց վերահսկման նախնական մոդելին: Երկու տարի անցավ էլեկտրոնային փողեր թողարկող կազմակերպություններին (EMI)<sup>75</sup> վերաբերող Եվրամիության հրահանգի նախնական (1998թ.) և վերջնական (2000թ.) տարբերակների պաշտոնական հրատարակման միջև: Այս ընթացքում բանակցություններ են տարվել Եվրախորհրդի, Եվրոպառլամենտի, կենտրոնական բանկերի, ֆինանսների նախարարությունների և Եվրոպական կենտրոնական բանկի միջև: Այն ուժի մեջ մտավ 2002թ. ապրիլի 27-ին և ներառում է էլեկտրոնային փողերի և դրանք թողարկող կազմակերպությունների հստակ նկարագրությունը:

Ի տարբերություն եվրոպական շատ ԿԲ-երի, ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգն ի սկզբանե շատ հանգիստ էր վերաբերում էլեկտրոնային փողերի տա-

<sup>75</sup> European Monetary Institute, 1997, Postfach 10 20 31, D-60020 Frankfurt am Main, ISBN: 92-9166-017-5, 61 p. [https://www.ecb.europa.eu/pub/pdf/othemi/pub\\_02en.pdf](https://www.ecb.europa.eu/pub/pdf/othemi/pub_02en.pdf)

րաժմանը՝ մեկնաբանելով, որ վաղ վերահսկումը կարող է խաթարել նորարարությունների զարգացմանը: ԴՊՀ-ն պատասխանատվություն է կրում վճարային համակարգի անվտանգության և ամբողջականության համար: ԱՄՆ-ում վճարային վերահսկողությունը վերաբերվում է ոչ թե բանկային հաստատություններին, ինչպես Եվրոպայում, այլ կոնկրետ վճարային ծառայություններին: Նրանք էլեկտրոնային փողերը դիտարկում են որպես մեկ այլ վճարային ծառայություն, որն ավելի շատ նմանություն ունի ճանապարհային չեկերի, փոխանցումների հետ, քան կանխիկի:

Համաձայն էլեկտրոնային փողերի իրավական սահմանման (Article 1 of the European Parliament and Council Directive 2000/46/EC<sup>76</sup>)՝ էլեկտրոնային փողը պետք է ընդունվի որպես վճարային գործիք ոչ միայն թողարկողի, այլ նաև այլ սուբյեկտների կողմից: Դրանով էլ այն տարբերվում է սահմանափակ կիրառման շրջանակ ունեցող էլեկտրոնային վճարային գործիքներից, ինչպիսիք, օրինակ, աբոնեմտային և ակումբային քարտերը: Վերջիններս, ընդունվելով որպես վճարային գործիք միայն թողարկողների կողմից, չեն հանդիսանում էլեկտրոնային փող:

Էլեկտրոնային փողը կարող է լինել տեխնիկական սարքի, օրինակ՝ չիպի վրա գրառված արժեքի (card-based e-money) կամ համակարգչային հիշողության ձևով (PC-based e-money): Ըստ դրա՝ էլեկտրոնային փողերը լինում են.

**Քարտային:** Ներկայումս Եվրոպայում գոյություն ունի էլեկտրոնային փողերի քարտային ավելի քան 25 տարբեր սխեմաներ, որոնք մատուցվում են ֆինանսական կազմակերպությունների կողմից: Որոշ քարտային սխեմաներ թույլ են տալիս վճարումներ իրականացնել նաև ինտերնետի միջոցով: Այնուամենայնիվ, քարտային էլեկտրոնային փողերով իրականացվող գործառնությունները կազմում են Եվրամիության անկանխիկ վճարումների 0.5%-ը: Դրանք ավելի տարածված են Բելգիայում և Լյուքսեմբուրգում:

Քարտային էլեկտրոնային փողերի սխեմաների օրինակներ են՝ Mondex (Մեծ Բրիտանիա), Proton (Բելգիա), Moneo (Ֆրանսիա), Mondex, GeldKarte (Գերմանիա), MiniCASH (Լյուքսեմբուրգ) և Chipknip (Նիդեռլանդներ), ինչպես նաև՝ Chipper (Նիդեռլանդներ, Ավստրալիա), Avant (Ֆինլանդիա), Belcard (Հունաստան), Carta facile

<sup>76</sup> <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:32000L0031> [Վերջին մուտք 16.12.2016թ.]:

(Իտալիա), Cash (Շվեդիա), Cashcard (Շվեյցարիա), CLIP (գլոբալ տարածման), Visa Cash (Ավստրալիայի, Բրազիլիայի, Կանադայի, Կոլումբիայի, Հոնկոնգի, Իսլանդիայի, Ճապոնիայի, Մեքսիկայի, ԱՄՆ-ի և Եվրոպայի համատեղ ջանքերով):

Mondex (Մեծ Բրիտանիա), որն առաջին անգամ նախաձեռնվել է 1990թ. National Westminster Bank-ի կողմից: 1993թ. նրան միացավ նաև Midland Bank-ը: Տեխնիկական սպասարկումն իրականացվում էր British Telecom-ի կողմից: Mondex-ի առաջին իրական նախագիծը սկսվել է 1995թ. հուլիսին: Mondex-ը բանկերի կողմից թողարկվող քարտային էլեկտրոնային փողերի լավագույն օրինակն է:

Mondex-ի առավելություններն են՝ նրա անվտանգությունը, 2 անձանց միջև (person-to-person) փոխանցումներ իրականացնելու հնարավորությունը, արժեքի ակնթարթային փոխանցումը և բազմարժույթային հնարավորությունը (քարտը կարող է միաժամանակ կիրառվել 5 արտարժույթով): Նրա հեռախոսային և ինտերնետային հավելվածները հնարավորություն են տալիս 2 անձանց միջև փոխանցումներն իրականացնել աշխարհի ցանկացած տեղից: 1999թ. Mondex-ը դարձավ առաջին և միակ սմարթ քարտը, որն համապատասխանում է ITSEC (Information Technologies Security Evaluation Criteria) չափանիշի E6 մակարդակին, որն իրենից ներկայացնում է անվտանգության բարձրագույն մակարդակը: 2001թ. Mondex-ը նորից ստացավ անվտանգության նոր՝ EAL4+ բարձրագույն մակարդակի սերտիֆիկացում: Բլոկավորման ֆունկցիան հնարավորություն է տալիս քարտատիրոջը կանխել անօրինական մուտքը համակարգ: Կողն ընտրվում է քարտատիրոջ կողմից և կարող է ցանկացած պահի փոփոխվել նրա կողմից (օրինակ՝ եթե այն կորի կամ գողացվի):

Վերջերս նախագծեր են մշակվել էլեկտրոնային փողերի տարբեր սխեմաների համագործակցության և համատեղ կիրառման համար: Դրանցից են Ducato նախագիծը (որն ընդգրկում է Banksys-ը, Groupement des Cartes Bancaires “CB”-ն, MasterCard Europe-ը, Interpay Niderland NV-ն, Proton World-ը, Sermepa-ն, Sistema 4B-ն և Visa International-ը), ինչպես նաև GeldKarte-ի և MiniCASH-ի համատեղ նախագիծը:

**Համակարգչային:** Համակարգչային էլեկտրոնային փողերի համեմատաբար մեծ նախագծերից է E-cash-ը, որը ձևավորվել է Նիդեռլանդներում: Այն իրենից ներկայացնում է համակարգչի մեջ գրառված էլեկտրոնային փողեր, որոնց միջոցով հնա-

րավոր է կատարել ինտերնետ-վճարումներ: Այսինքն՝ E-cash-ը և նման այլ սխեմաները վիրտուալ էլեկտրոնային փողեր են, որոնք այլ կերպ անվանվում են ցանցային փողեր: Սրանց հիմնական առանձնահատկությունն այն է, որ վճարումներն իրականացվում են օգտագործողից օգտագործողին՝ առանց համակարգի կենտրոնական օպերատորի մասնակցության: Սակայն թերությունն այն է, որ տեխնիկապես անհնար է անմիջապես օգտագործել կամ վիրտուալ էլեկտրոնային փողեր ընդունող այլ օգտագործողի ուղարկել ստացված ցանցային փողերը:

Համակարգչային էլեկտրոնային փողերի սխեմաների օրինակներ են՝ PayPal, ecash, CyberCash, NetCash, Internetcash (ԱՄՆ), DuoCash (ԱՄՆ), AMADIGI (Մեծ Բրիտանիա), Virtual Cash (Իսպանիա), Cybertarjeta (Իսպանիա), Cartio Micropayments (Նիդեռլանդներ և ամբողջ աշխարհ), Digi Gold (գլոբալ), Safetrader (ամբողջ աշխարհ) և այլն:

PayPal Inc.-ն ունի լիցենզիա ԱՄՆ-ի 29 նահանգների բանկերի և ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող հաստատությունների կողմից: Բացվում է 3 տիպի հաշիվ՝ անձնական (Personal Account), հիմնական (Premier Account) և բիզնես (Business Account): Համակարգ մուտքագրված միջոցները պահվում են Wells Fargo բանկի հաշիվների վրա: Գրանցման համար անհրաժեշտ է լրացնել դիմումը, բացել վերոնշյալ հաշիվներից մեկը և մուտքագրել գումար: Հաշիվը կարելի է համալրել բանկային փոխանցմամբ կամ վճարային քարտի միջոցով: PayPal-ով օգտվելու համար հատուկ ծրագրային ապահովում անհրաժեշտ չէ, քանի որ բոլոր գործընթացներն իրականացվում են ինտերնետ կայքի միջոցով: Հաշվի անվտանգության ապահովման համար կիրառվում են օգտագործողների գաղտնաբառեր, իսկ կայքին միացումն ապահովվում է SSL պրոտոկոլի միջոցով (128-բիթ և ավելի):

PayPal-ն իր օգտագործողներին առաջարկում է հետևյալ տիպի ծառայություններ՝

- վճարման իրականացում (Send Money),
- վճարում ստանալու հարցում/հայց (Money Request),
- ինտերնետ կայքի ծառայություններ (Web Tools),
- աճուրդային առևտրի իրականացման ծառայություններ (Auction Tools), այս ծառայությունը լինում է 2 տեսակի՝ վճարումը ստանալու ավտոմատ հարցումներ (Auto-

matic Payment Request) և աճուրդը հաղթողների կողմից վճարման իրականացում անմիջականորեն աճուրդն իրականացնող կայքից (Instant Purchase for Auctions):

Մատուցվող ծառայությունների ցանկը կարող է կրճատվել/սահմանափակվել՝ կապված PayPal վճարային համակարգի կողմից տվյալ երկրի/տարածաշրջանի հետ աշխատելու ցանկության և վստահության մակարդակից:

Հետխորհրդային տարածքում առավել հայտնի համակարգերից է WebMoney Transfer-ը, որը 1998թ.-ին հիմնադրված միջազգային հաշվարկների և քիզնեսի համացանցային համակարգ է: Համակարգի օպերատոր է հանդիսանում WM Transfer Ltd. կազմակերպությունը, որը ֆինանսական կազմակերպություն չէ և չի իրականացնում ֆինանսական գործառնություններ, բացառությամբ՝ WebMoney Transfer համակարգի ապարատա-ծրագրային համալիրի պրոցեսինգի:

Համակարգով մատուցվում են բազմաթիվ ծառայություններ, որոնց թվում՝ փոխարկման, վարկավորման, թվային չեկերի տրամադրման, հեռախոսային հաշիվների վճարման, արբիտրաժի, տրաստային, հավաստագրման, ատեստավորման և այլ տեսակի ծառայություններ: Համակարգում շրջանառվում են մի քանի տեսակի արժույթներին համարժեք էլեկտրոնային միավորներ/քսակներ, որոնցից յուրաքանչյուրի գծով թողարկումն իրականացնում է առանձին երաշխավորող-կազմակերպություն: Վերջինս պահպանում և կառավարում է թողարկված էլեկտրոնային միավորները, գույքային պատասխանատվություն կրում դրանց համար, սահմանում փոխարկման հարաբերակցությունը, ապահովում տվյալ երկրում դրանց շրջանառության և կիրառման իրավական հիմնավորումները:

Համակարգի բոլոր մասնակիցներին տրվում է միասնական ինտերֆեյսներ՝ երաշխավորողների մոտ էլեկտրոնային քսակների ձևով պահվող իրենց արժեքները կառավարելու համար.

- R քսակ WMR- ռուսական ռուբլով ըստ ներկայացնողի բանկային չեկ,
- Z քսակ WMZ- ԱՄՆ դոլարով ապրանքների գնման նվիրատվության սերտիֆիկատ,
- E քսակ WME- եվրոյով ըստ ներկայացնողի բանկային չեկ,
- B քսակ WMB-բելառուսական էլեկտրոնային փող և այլն:

Համակարգով գործունեության իրականացման համար անհրաժեշտ է ունենալ Keeper ծրագիրը, որը կախված մասնակցի տեխնիկական հնարավորություններից, գործունեության բնույթից և նախասիրություններից կարող է լինել 3 տեսակի՝

- WM Keeper Classic, որն իրենից ներկայացնում է առանձին ծրագիր և տեղադրվում մասնակցի համակարգչի մեջ,
- WM Keeper Light, որն իրենից ներկայացնում է web-հավելված, որը չի պահանջում ծրագրային ապահովման տեղադրում մասնակցի համակարգչի մեջ, և գործունեության արդյունքը մասնակցի բրաուզեր է փոխանցվում պաշտպանված https-կապի միջոցով,
- Telepat, որը նախատեսված է մոբայլ սարքավորումների միջոցով իրական ժամանակում հաշվարկների իրականացման համար:

Գոյություն ունեն էլեկտրոնային փողերի թողարկման հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք մտահոգում են կենտրոնական բանկերին:

Դրանք են՝

- ✓ անվտանգությունը,
- ✓ իրավական հարաբերությունները,
- ✓ պրոդենցիալ հարցեր/վերահսկողություն,
- ✓ փողերի լվացման հետ կապված խնդիրներ,
- ✓ թողարկման (էմիսիոն) եկամտի կորուստը,
- ✓ դրամավարկային քաղաքականության իրականացումը և դրամական ագրեգատների կիրառման արդյունավետությունը,
- ✓ վճարային համակարգի հսկողությունը (oversight),
- ✓ երկրների միջև փոխանցումների իրականացման հետ կապված խնդիրներ:

ՀՀ-ում էլեկտրոնային փողերի թողարկման կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, այդ թվում՝

- 1) էլեկտրոնային փողերի թողարկումը վճարահաշվարկային ծառայություն է, որն ունի իր առանձնահատկությունները և ենթակա է համապատասխան կարգավորման:

- 2) Էլեկտրոնային փողերի թողարկումը նման է դեպոզիտային և/կամ դրամական փոխանցումների գործունեությանը, ինչպես նաև ենթադրում է վճարային գործիքի թողարկում:
- 3) Էլեկտրոնային փողերի թողարկման նկատմամբ ոչ բանկ կազմակերպությունների կողմից ներկայացվող պահանջարկը: Միջազգային փորձը վկայում է, որ Էլեկտրոնային փողերի թողարկման նկատմամբ բանկերի հետաքրքրվածությունը մեծ չէ և առաջարկը ներկայացվում է հիմնականում ոչ բանկ կազմակերպությունների կողմից, որոնք մասնագիտացված են այս բնագավառում:
- 4) ՀՀ-ում Էլեկտրոնային փողերի նկատմամբ արագ աճող պահանջարկը հանրության կողմից:
- 5) Էլեկտրոնային առևտրի զարգացման խթանումը:
- 6) SS բնագավառի զարգացմանն ուղղված ՀՀ քաղաքականությունը:
- 7) Միջազգային տնտեսական և վճարային ինտեգրման և իրավական դաշտերի համադրման ՀՀ քաղաքականությունը:

Մինչև ժամանակակից նորամուծական ՀՀ բանկային ծառայությունների վերլուծությանն անդրադառնալը համառոտ պատմական ակնարկ կատարենք նաև ՀՀ բանկային համակարգում տեղի ունեցած վերջին 2 տարիների միավորման գործընթացին, քանի որ այն անմիջականորեն հետազայում իր ազդեցությունն է թողնելու նաև մատուցվող ծառայությունների փոփոխության առումով:

2014 թվականի դեկտեմբերին ՀՀ ԿԲ-ն փոխեց առևտրային բանկերի ընդհանուր (նորմատիվային) կապիտալի նվազագույն չափը՝ 5 մլրդ դրամից դարձնելով 30 մլրդ դրամ, ինչպես նաև պահանջ դրվեց, որ գործող բանկերը մինչև 2017թ.-ի հունվարի 1-ը բավարարեին նշված պայմանին: Այսինքն՝ բանկերի առաջ դրված երկընտրանքները քիչ էին, այն է՝ հայթայթել լրացուցիչ դրամական միջոցներ և ավելացնել ընդհանուր կապիտալի չափը, կա՛մ միաձուլվել այլ բանկի հետ կա՛մ բանկի հայտնվել գործունեությունը դադարեցնող բանկի կարգավիճակում:

Միաձուլման առաջին գործարքների մասին ԶԼՄ-ներում առաջին հրապարակումները հայտնվեցին 2015թ.-ի դեկտեմբերին, սակայն դե-յուրը կամ իրավական հիմքեր ստացան դրանք 2016թ.-ի ընթացքում:

Առաջին միավորումը «ՊրոԿրեդիտ Բանկ» էր, որը գնվեց «Ինեկոբանկի» կողմից (2016թ.-ի մայիսի 10-ին ՀՀ ԿԲ-ն ուժը կորցրած ճանաչեց «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ բանկային գործունեության լիցենզիան):

Հաջորդը միավորումը՝ 2016թ.-ի ամռանը տեղի ունեցավ «Հայէկոնոմբանկը»-ի և ղազախական ԲՏԱ-Հայաստան բանկի միջև, իսկ գործարքն ավարտվեց օգոստոսի 24-ին, երբ ՀՀ ԿԲ-ն ուժը կորցրած ճանաչեց ԲՏԱ-Հայաստան բանկի լիցենզիան:

Ձեռք բերվող մյուս բանկը դարձավ «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» բանկը՝ կլանվելով «Արդշինբանկի» կողմից: 2016թ.-ի հոկտեմբերի 7-ին ավարտվեց «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ի «Ռեզիոն» Ֆինանսական արդյունաբերական կորպորացիայի կողմից ձեռքբերման գործարքը:

2016թ.- նոյեմբերի 26-ին հայտնի դարձավ, որ «Զարգացման հայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերությունը միանում է «Արարատբանկին»: ՀՀ ԿԲ-ն դեկտեմբերի հայտարարեց, որ ԿԲ խորհուրդը դեկտեմբերի 15-ին հաստատել և գրանցել է «Արարատբանկի» (պահպանվող բանկ) և «Զարգացման հայկական բանկի» (միացող բանկ) միացման պայմանագիրը:

Այսպիսով, Հայաստանյան առևտրային բանկերի թիվը պակասեց 4-ով և բանկային ոլորտը 2017 թվականը մտավ 17 բանկով:

Իհարկե, ստորև ներկայացված վերլուծության շրջանակներում անդրադարձ ենք կատարել նաև միավորվող բանկերի կողմից մատուցվող ծառայություններին, քանի որ ենթադրվում է, որ այդ ծառայությունները որոշակի փոփոխությունների արդյունքում, ամենայն հավանականությամբ, կմատուցվեն արդեն միավորված մոդելով:

Այժմ ներկայացնենք նաև ՀՀ առանձին բանկերի կողմից առաջարկվող ժամանակակից նորամուծական բանկային ծառայությունների վերլուծությունը: Հարկ ենք համարում նշել, որ տվյալների հավաքագրման համար հիմք են հանդիսացել ՀՀ-ում գործող և միավորվող առևտրային բանկերի կայքերում տեղադրված տվյալները: Մյուս կողմից ցանկանում ենք նաև նշել, որ որոշ բանկերի այդ ընթացքում կնքել են նաև միավորման գործարքներ այլ բանկերի հետ, սակայն վերջիններիս կայքերում պահպանվել են նրանց կողմից առաջարկվող ծառայությունների վերաբերյալ տվյալները:



**Ամերիա բանկի** կողմից ժամանակակից նորամուծական ծառայությունների բնագավառում առաջարկվում են երեք տիպի ծառայություններ՝

- Ամերիա օնլայն բանկինգ համակարգ (Ameria Online Banking)<sup>77</sup>,
- Ամերիա մոբայլ կամ բջջային բանկինգ (Ameria Mobile Banking),
- Ամերիա հեռախոսային բանկինգ:

Ինտերնետ բանկինգը (online.ameriabank.am) բանկի հաճախորդների հեռահար սպասարկման համակարգ է, որը թույլ է տալիս աշխարհի ցանկացած կետից, ցանկացած պահի, ինտերնետի միջոցով օգտվել բանկային հիմնական ծառայություններից՝ առանց բանկ այցելելու: Համակարգի անվտանգությունն ապահովվելու համար Ամերիա բանկի կողմից ընտրված են ժամանակակից միջոցներ, որոնք ապահովում են իրականացվող գործարքների անվտանգությունը, իսկ փոխանցվող տեղեկատվությունն ամբողջությամբ գաղտնագրվում են SSL արձանագրության միջոցով: Գործարքների ստորագրման և հաճախորդների նույնականացման համար կիրառվում են VASCO Data Security ընկերության Digipass սարքերը (token) կամ, այժմ արդեն, նոր ծրագրային ապահովում՝ AmeriaToken հավելվածը:

Ֆիզիկական անձանց համար նախատեսված այս համակարգը հնարավորություն է տալիս դիտել՝ բանկային հաշիվների ընթացիկ մնացորդներն ու շրջանառությունը, վարկերի մնացորդներն ու մարման ժամանակացույցը, ավանդների մնացորդներն ու կուտակված տոկոսները, արտարժույթային փոխարժեքները: Գործարքների առումով հնարավոր է կատարել փոխանցումներ ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս, կատարել արտարժույթային փոխանակումներ, վարկերի մարումներ, ինչպես նաև կոմունալ վճարումներ: Ինտերնետ-բանկինգի ֆունկցիոնալ կամ գործառնական հնարավորությունները ներառում են՝

- կանխիկ գումարի տրամադրման հայտի հնարավորություն,
- պլաստիկ քարտ թողարկելու և վերաթողարկելու հայտի հնարավորություն,
- տեղեկանքների և այլ փաստաթղթերի ստացման հայտի հնարավորություն,
- պլաստիկ քարտով կատարվող գործառնությունների մասին հաղորդագրության միջոցով ծանուցվելու կամ ծանուցվելուց հրաժարվելու հնարավորություն,

<sup>77</sup> <http://www.ameriabank.am/content.aspx?id=online+ameriabank+retail&table=productlistmenu&page=99&lang=33>  
[Վերջին մուտք 18.12.2016թ.]:

- անձնական տեղեկատվության փոփոխության հնարավորություն,
- առանց Digipass սարքի համակարգ մուտք գործելու հնարավորություն,
- Ucom-ի վճարումներ կատարելու հնարավորություն,
- նորություններ ցույց տալու հնարավորություն,
- ՀԾ-Ինտերնետ բանկ համակարգի մուտքային էջի ինտերֆեյսը, ըստ ցանկության ձևափոխելու հնարավորություն,
- հաշվի գործառնությունների դիտման և ֆիլտրման հնարավորություն,
- փաստաթղթերի ցուցակում/փնտրման պայմաններում ավելացել է հաշիվ սյուն/փնտրման պայման,
- նոր վճարումների ժամանակ լռելյայն հաշիվ ցույց տալու հնարավորություն,
- փաստաթղթերի և նամակների ցուցակներում հաստատված և մերժված փաստաթղթերը առանձին գույներով տարբերակելու հնարավորություն,
- փաստաթղթերի ձևանմուշներում ձևանմուշների ֆիլտրման հնարավորություն,
- փաստաթղթերում և նամակներում դաշտերի վրա դրանց ճիշտ լրացման վերաբերյալ նշումներ (Tooltip) ցույց տալու հնարավորություն,
- որոշ պատուհաններում Collapse/Expand (տրոհել/ընդարձակել) անելու հնարավորություն,
- հաշվի քաղվածքում օվերդրաֆտի շարժն ընդհանուր շարժի մեջ ներառելու հնարավորություն:

Ամերիա բանկի կողմից առաջարկվող Ameria Mobile Banking-ը հիմնականում հասցեագրված է կորպորատիվ հաճախորդներին, իսկ հիմնական գաղափարն այստեղ «Բանկն այնտեղ է, որտեղ Ձեզ հարմար է» մոտեցումն է կիրառվում: Կորպորատիվ հաճախորդներին տրամադրվում է Ամերիա մոբայլ բանկինգի անվճար հավելված՝ IOS և Android սարքերով:

Նշված հավելվածի միջոցով հնարավոր է կատարել գրեթե բոլոր գործարքները, որոնք իրականացվում են նաև Ինտերնետ-բանկինգի միջոցով: Ամերիա մոբայլ բանկինգ հավելվածը հնարավոր է բեռնել և տեղադրել համապատասխան օնլայն խանութից (App Store, Google Play Store), որից հետո մուտքագրելով օգտագործողի անունն ու գաղտնաբառը համակարգը կարելի է գործարկել:

Ամերիա հեռախոսային բանկինգը հաճախորդների հեռահար սպասարկման ծառայություն է, որը թույլ է տալիս աշխարհի ցանկացած կետից հեռախոսակապի միջոցով օգտվել մի շարք բանկային ծառայություններից՝ առանց բանկ այցելելու: Ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է ընդամենը մեկ անգամ այցելել բանկ և ստորագրել պայմանագիրը, որից հետո բանկի կողմից հաղորդագրությամբ կուղարկվի Ամերիա հեռախոսային բանկինգ ծառայության գաղտնաբառը Ձեր նշած բջջային հեռախոսահամարին: Հեռախոսային բանկինգ ծառայության միջոցով կարելի է օգտվել հաշիվների, ավանդների, վճարային քարտերի հետ կապված գործողություններից և այլն:

Իհարկե, այստեղ տվյալ ծառայությունների համառոտ նկարագիրն ենք տալիս, քանի որ անգամ այդ ծառայությունները լիարժեք պատկերացնելու համար, որոշ բանկեր հրապարակում են նաև համապատասխան ուղեցույցներ, որոնք ծառայություններից օգտվելու բոլոր մանրամասները նկարագրում են:

Այսպիսով՝ իր այս ծառայություններով Ամերիա բանկը բանկային նորամուծությունների բնագավառում ՀՀ-ում զբաղեցնում է առաջատար դիրքեր, իսկ դա ցույց է տալիս, որ վերջինս ունի նաև ծառայությունների այս շուկայում գործունեության հստակ ռազմավարություն:

**Էյչ-Էս-Բի-Սի բանկը** շարունակաբար աշխատում է որպեսզի օնլայն գործարքների համար ապահովի անվտանգության բարձր ստանդարտներ: Ինտերնետային բանկային գործառնությունները պաշտպանելու համար Էյչ-Էս-Բի-Սի-ն օգտագործում է 128-բիթ SSL կանխագրումը, որը հանդիսանում է ներկայիս ամենաապահով տեխնոլոգիաներից մեկը: Ավելին, համակարգ մուտք գործելը և ինտերնետային բանկային ծառայության միջոցով բազմազան գործարքների իրականացումը լրացուցիչ պաշտպանված են անվտանգության սարքի օգտագործմամբ<sup>78</sup>: Ինտերնետային և հեռախոսային բանկային ծառայությունները հնարավորություն են տալիս իրականացնել ամենօրյա բանկային գործառնությունները՝ հաշիվների վճարում, վճարումների դադարեցում, հաշվի մնացորդի դիտում և փոխանցումներ դեպի աշխարհի ցանկացած կետ: Մյուս կողմից HSBCnet տեղեկատվական և գործառնական պորտալի միջոցով հնարավոր է

<sup>78</sup> <http://www.hsbc.am/1/2/am/hy/sitemap> [Վերջին մուտք 19.12.2016թ.]:

կառավարել և կատարել միջազգային փոխանցումներ, ինչպես նաև կատարել ներդրումներ, այսինքն՝ գործիքներ, որոնք օգնում են կորպորատիվ հաճախորդներին միջազգային բիզնեսի ընդլայնման հարցում: Հեռախոսային բանկային ծառայությունները ևս մեծ առավելություններ են տալիս: Չկրկնվելու համար նշենք, որ Էյչ-Էս-Բի-Սի բանկը ևս առաջարկում է գրեթե նույն ծառայությունները, ինչ Ամերիան, սակայն ավելի խստացված և անվտանգության ռեժիմներով:

**«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ն Հայաստանում** առաջարկում էր ArexiMobile (մոբայլ-բանկինգ) ծառայություններ<sup>79</sup>: Հեռախոսների և պլանշետների համար առաջարկվող այս հավելվածը գործում էր բանկի ինտերնետ բանկինգի հետ միասին: Հավելվածից օգտվելու համար պետք էր բեռնել ArexiMobile հավելվածը, մեկ անգամ այցելել բանկ, կնքել ինտերնետ բանկինգի ծառայությունից օգտվելու պայմանագիր և հենց տեղում ստացած օգտագործողի անվան և գաղտնաբառի միջոցով մուտք գործել հավելված: Այս բանկի կողմից առաջարկվում էր նաև Ինտերնետ-էքվայրինգ: Վերջինս առաջին էր, որը հավաստագրվել է Visa ընկերության կողմից՝ Ինտերնետի համաշխարհային ցանցում Visa քարտերի էքվայրինգ իրականացնելու նպատակով:

Ինտերնետ-էքվայրինգի առաջին նախագծի մեկնարկումը նպատակ ուներ նպաստելու երկրում էլեկտրոնային առևտրի զարգացմանը, ինչպես նաև օժանդակելու Հայաստանի առևտրի և սպասարկման ձեռնարկություններին՝ մուտք գործել էլեկտրոնային առևտրի համաշխարհային շուկա: Ինտերնետ-էքվայրինգը ժամանակակից, հուսալի և անվտանգ մեխանիզմ է, որը թույլ է տալիս համացանցում Visa և MasterCard վճարային քարտերով կատարել վճարումներ ապրանքների և ծառայությունների դիմաց: Այդ քարտերով առցանց վճարումների լրացուցիչ պաշտպանությունը ապահովվում է Verified by Visa (VbV) վճարումների հավաստագրման տեխնոլոգիայի կիրառման շնորհիվ: Համացանցում վճարում կատարելու համար “Verified by Visa” և “MasterCard Secure Code” համակարգերի քարտապանը նշում է հատուկ կոդ և այդպիսով հաստատում է, որ գնումը կատարվում է վերջինիս կողմից:

<sup>79</sup> **Ծանոթություն.** «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» բանկը՝ կլանվելով միավորվել է «Արդշինբանկի» հետ: [http://ecom.areximbank.am/?page\\_id=237](http://ecom.areximbank.am/?page_id=237) [Վերջին մուտք 19.12.2016թ.]:

Ինտերնետ-էքվայրինգ ծառայության մեկնարկի շնորհիվ հայաստանյան սպառողները, ինչպես նաև ամբողջ աշխարհում Visa և MasterCard քարտապանները կարող են արագ և հեշտությամբ վճարել ապրանքների և ծառայությունների դիմաց՝ Visa և MasterCard քարտերով վճարումներ ընդունող երկրի ցանկացած օնլայն խանութում, իսկ առևտրի և սպասարկման ձեռնարկություններին հնարավորություն է ընձեռնվում ստանալ անկանխիկ գումարներ՝ տրամադրված ապրանքների և ծառայությունների դիմաց:

Ինտերնետ-էքվայրինգը թույլ է տալիս էապես ընդլայնել ավանդական առևտրի հնարավորությունները, նպաստում է էլեկտրոնային առևտրի զարգացմանը և առաջարկում է մի շարք առավելություններ ինչպես առևտրի և սպասարկման ձեռնարկությունների, այնպես էլ՝ սպառողների համար: Նշեք նաև, որ ինտերնետ-էքվայրինգն ունի նաև մի շարք առավելությունները առևտրի և սպասարկման ձեռնարկությունների համար:

Ենթադրվում է նաև, որ այս ծառայությունը հետագայում կշարունակի մատուցվել «Արդշինբանկի» կողմից, քանի որ այն լուրջ մրցակցային առավելություններ է տալիս:

Իհարկե, պետք է նշել, որ ՀՀ-ում գործող մյուս բանկերը ևս իրենց զարգացման և մարքեթինգային քաղաքականության շրջանակներում ընդլայնում են իրենց ժամանակակից բանկային ծառայությունները, որոնք տեխնոլոգիական յուրահատուկ լուծումներ են ներկայացնում:

Այսպես, Կոնվերս բանկի կողմից առաջարկվում է SMS-CONVERSE ծառայությունը, ներդրվել է նաև Converse Bank Ինտերնետ բանկ համակարգը, ինչպես նաև լայն կիրառություն են սկսում ստանալ eCommerce և mConverse բանկը Ձեր սմարթֆոնում համակարգերը և այլն <sup>80</sup>:

Բավականին հետաքրքիր «Բիբլիոս օնլայն» համակարգ է առաջակում Բիբլիոս բանկը, որի կայքում նաև տեղադրված է ՀԾ-Ինտերնետբանկ օգտագործողի ձեռնարկը<sup>81</sup>, որտեղ մանրամասն բացատրվում են համակարգի գործողության բոլոր հնարավորությունները: Իհարկե, նման ձեռնարկների անհրաժեշտությունը բավականին մեծ է, քանի որ ֆինանսական գրագիտության, ինչպես նաև ժամանակակից

<sup>80</sup> <https://www.conversebank.am/hy/mconverse/> [Վերջին մուտք 20.12.2016թ.]:

<sup>81</sup> Հայկական ծրագրեր, ՀԾ-Ինտերնետբանկ, օգտագործողի ձեռնարկ, Տարբերակ 4.16.0, 11.01.16, 119 էջ:  
[https://online.byblosbankarmenia.am/InternetBank/Resources/Files/Login/hy-AM/InternetBank\\_UserGuide.pdf](https://online.byblosbankarmenia.am/InternetBank/Resources/Files/Login/hy-AM/InternetBank_UserGuide.pdf)

ֆինանսական ծառայություններից օգտվելու բացը հնարավոր է լրացրել, կա՛մ ինքնուրույն կրթվելու կա՛մ առանձին դասընթացների միջոցով, իսկ նման ծառայություններ առաջարկողների համար անհրաժեշտ նախապայման է նաև հաճախորդների տեղեկացվածության և ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացումը:

Միավորման գործընթացն ավարտած «Զարգացման հայկական բանկի» կողմից ստեղծվել էր ADB-mobile բջջային հավելվածը, որը հնարավորություն էր տալիս հաճախորդներին աշխարհի ցանկացած կետից շուրջօրյա կապի մեջ լինել բանկի հետ՝ իրենց սմարթֆոնների և պլանշետների միջոցով<sup>82</sup>: Այս համատեքստում, միջնաժամկետ հեռանկարում «Արարատբանկը», որին միացել է «Զարգացման հայկական բանկը» կուժեղացնի իր դերը բանկինգի շուկայում: Դասական բանկին գույքահեռ, պլանավորվում է նաև զարգացնել թվային (digital) և ներդրումային (investment) բանկինգի ուղղությունները, չի բացառվում նաև, որ ADB-mobile բջջային հավելվածը ապագայում նաև կիրառվի հենց այս շրջանակներում:

Նմանատիպ հավելված է մշակել նաև Պրոմեթեյ բանկը հնարավորություն ընձեռելով առանց բանկ այցելելու կառավարել սեփական բանկային հաշիվները՝ Prometey Mobile բջջային հավելվածի միջոցով<sup>83</sup>:

Հարկ է նշել, որ ՀՀ բանկերն ունեն լուրջ խնդիրներ առկա ենթակառուցվածքների զարգացման մասով: ՀՀ բանկերից շատերի տեխնոլոգիական թերզարգացածության պատճառը նրանց կախվածությունն է բանկային լուծումների որոշակի մատակարարներից: Այսպես, հայկական բանկերի մոտ կեսը, որպես գործառնական հիմնական համակարգ կիրառում է «Հայկական ծրագրերը»: Որոշ բանկեր, այդ թվում՝ խոշորները կիրառում են մեկ այլ տեղական լուծում՝ «Էլսոֆթը», իսկ մի քանիսն օգտագործում են սեփական կամ մայր ընկերության մշակած ծրագրերը: Տեխնոլոգիական թերզարգացածության մեջ մեղքի իր բաժինն ունի նաև մեր պրոցեսինգային ընկերությունը: Չնայած նշված բոլոր ընկերությունները փորձում են զարգացնել իրենց լուծումները սեփական օրակարգի շրջանակներում, ամեն դեպքում ստեղծվում են որոշակի

<sup>82</sup> <http://www.armdb.com/mobile-banking.html> [Վերջին մուտք 20.12.2016թ.]:

<sup>83</sup> <https://www.prometeybank.am/services/individuals/remote-management-system-retail/prometey-mobile.html> [Վերջին մուտք 20.12.2016թ.]:

պայմաններ, որոնց պատճառով բանկերն ի վիճակի չենք լինում ժամանակին արձագանքել փոփոխություններին և ներդնել նոր տեխնոլոգիաներ<sup>84</sup>:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաշխարհային ֆինանսական համակարգն այժմ ընթանում է սկզբունքորեն նոր ծառայությունների մատուցման ենթակառուցվածքների ձևավորման ճանապարհով, դրա մասին են վկայում Համաշխարհային տնտեսական համաժողովի փորձագետների կողմից Ապագա ֆինանսական ենթակառուցվածքների վերաբերյալ արված հետազոտությունները<sup>85</sup>: Նշված հետազոտության շրջանակներում մանրամասն գծապատկերներով ներկայացված են ցանկացած գործարքի կատարելագործման և զարգացման, ինչպես նաև ապագա ֆինանսական ծառայությունների զարգացման պլատֆորմների միջոցով կիրառման հնարավորությունները:

Այսպիսով՝ ՀՀ-ում բանկային ծառայությունների զարգացման ընթացքը, դրանց տեսակների ընդլայնումը կապված են միջազգային բանկային համակարգում տեղի ունեցող միտումներով: Այս համակարգի էական առանձնահատկություններից մեկն այն է, որ աշխարհն անցում է կատարում էլեկտրոնային փողերի համակարգի, որոնց ընդլայնման գործում իրենց կարևոր դերը շատ երկրներում ունեն նաև առևտրային բանկերը: Այս փորձի տեղայնացման հնարավորությունները բավականին մեծ են, իհարկե, առկա թերությունները և առավելությունները, ինչպես նաև ռիսկային գործոնները հաշվի առնելու պարագայում:

---

<sup>84</sup> <http://arka.am/am/news/interview/ ameriabanknki achxataksi harcazruyc/> [Վերջին մուտք 22.12.2016թ.]:

<sup>85</sup> The future of financial infrastructure, An ambitious look at how blockchain can reshape financial services, Prepared in collaboration with Deloitte Part of the Future of Financial Services Series, August 2016, 130 p.

## 2.2. Ժամանակակից բանկային ծառայությունների ներդրման և զարգացման հետ կապված ռիսկերը ՀՀ-ում

Համաշխարհային տնտեսությունն այժմ գտնվում է մի շարք ռիսկերի ազդեցության տակ, դրանք կարող են ընդգրկել ամբողջ համաշխարհային տնտեսությունը, բախվել առանձին տարածաշրջանների կամ երկրների տնտեսություններին: Դա է նաև պատճառներից մեկը, որ շատ դեպքերում այս կամ այն երկրում տեղի ունեցող իրադարձությունները և տնտեսական զարգացումները բացատրվում են ոչ միայն ներքին, այլ նաև տարածաշրջանային և համաշխարհային զարգացումների համատեքստում:

Համաշխարհային տնտեսության մեջ վերջերս ամենաարդիական թեմաներից է հանդիսանում փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումը, որի դեմ պայքար են մղում համաշխարհային գերտերությունները՝ փորձելով կանխել օրեցօր ահագնացող այս չարիքը: Այսինքն՝ համաշխարհային ֆինանսական և բանկային համակարգը շատ դեպքերում կարող են գործիք հանդիսանալ նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համար: Վերջինս ամենավտանգավոր ռիսկերից է, որն իր բացասական ազդեցությունը կարող է թողնել բանկային նորամուծական ծառայությունների զարգացման, ինչպես նաև երկրի բանկային համակարգի զարգացման վրա: Նմանատիպ ռիսկերից չի հաջողվում խուսանավել ո՛չ զարգացած և ո՛չ էլ զարգացող երկրներին, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաների և ֆինանսական նորամուծությունների կիրառման ծավալների ընդլայնումը համաշխարհային ֆինանսական և բանկային համակարգերում, ինչպես նաև օֆշորային գոտիների կամ «հարկային դրախտների»<sup>86</sup> ստեղծումը գործունեության ավելի լայն հնարավորություններ ու դաշտ են ստեղծում ահաբեկիչների համար<sup>87</sup>:

Վերջին տասնամյակների ընթացքում մենք ականատես եղանք մի շարք ահաբեկչական դեպքերի, սակայն ամենամտահոգիչն այն է, որ դրանք իրականացվեցին այնպիսի խաղաղ երկրներում ինչպիսիք էին ԱՄՆ-ը, Ֆրանսիան և Բելգիան և այլն: Այսպիսի դեպքերը ոչ միայն ունեն անվտանգության հիմքերը խաթարող ազդեցություն,

<sup>86</sup> Desai, Foley, Hines, "The demand for tax haven operations", Journal of Public Economics 90 (2006), p. 514. Zucman G., "Taxing across Borders: Tracking Personal Wealth and Corporate Profits". Journal of Economic Perspectives. 28 (4): pp. 121-148.

<sup>87</sup> Financial Flows and Tax Havens: Combining to Limit the Lives of Billions of People, [http://www.gfintegrity.org/wp-content/uploads/2016/12/Financial\\_Flows-final.pdf](http://www.gfintegrity.org/wp-content/uploads/2016/12/Financial_Flows-final.pdf)



այլ նաև բացասական են ազդում նաև տնտեսական զարգացման տեմպերի և հեռանկարների վրա:

Իհարկե, կան երկրներ, որոնք լուրջ պայքարի մեխանիզմներ ունեն նաև փողերի լվացման և, հատկապես, ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի առումով, սակայն փաստը մնում է այն, որ ահաբեկիչների ֆինանսական ռեսուրսները չեն պակասում, իսկ ահաբեկչությունների աշխարհագրությունն ընդլայնվում է:

Այս համատեքստում, բավականին հետաքրքիր և համախմբված ինդեքս կամ համաթիվ է հաշվարկվում Բազելի ինստիտուտի<sup>88</sup> կողմից սկսած 2012թ.-ից: Այդ ինդեքսը կոչվում է Փողերի լվացման դեմ պայքարի կամ Բազելյան համաթիվ (Anti-Money Laundering (AML))<sup>89</sup>: Այս համաթվի մեթոդաբանության հենց առաջին բաղադրիչն առնչվում է փողերի լվացման և ահաբեկիչների ֆինանսավորման ռիսկի հետ: Այս ոլորտում լուրջ պայքար չմղելու պարագայում ահաբեկիչների ֆինանսական հզորությունը կմեծանա, իսկ ֆինանսապես հզոր ահաբեկիչները կարող են ավելացնել իրենց համակիրների թիվը, ինչպես նաև ընդլայնել իրենց գործունեության աշխարհագրությունը:

Ըստ Բազելյան AML համաթվի ամենավատ եղյակում են հայտնվել Իրանը, Աֆղանստանը և Տաջիկստանը: 149 երկրներից լավագույն երեք երկրներն են հանդիսանում՝ Ֆինլանդիան, Լիտվան և Բուլղարիան:

ԱՊՀ և ՀՀ հարևան երկրներից Ուկրաինան գտնվում է 46-րդ, Ղրղզստանը 60-րդ, Ռուսաստանի Դաշնությունը 58-րդ, Ղազախստանը՝ 71-րդ, Ադրբեջանը 118-րդ, Վրաստանը 123-րդ, իսկ Հայաստանը 128-րդ հորիզոնականում: Ստացվում է, որ այս համաթվով կամ ռիսկերի այս բնագավառում Հայաստանն ունի ամենալավ դիրքերը և անգամ գերազանցում է ոչ միայն իր բոլոր հիմնական գործընկերներին ու հարևաններին այլ նաև այնպիսի հզոր ֆինանսական համակարգ ունեցող երկրների, ինչպիսիք են՝ Ճապոնիան՝ 76, Գերմանիան՝ 92, Շվեյցարիան՝ 88, Սինգապուրը՝ 111 և այլն<sup>90</sup>:

Սա փաստում է այն մասին, որ այս բնագավառում Հայաստանի որդեգրած քաղաքականությունը բավականին կոշտ է, որի արդյունքում ունենք դիրքային առավել-

<sup>88</sup> <https://www.baselgovernance.org/>

<sup>89</sup> Basel AML Index 2016 Report, Basel, Switzerland, Basel Institute on Governance, 27 July 2016, 26 p. [https://index.baselgovernance.org/sites/index/documents/Basel\\_AML\\_Index\\_Report\\_2016.pdf](https://index.baselgovernance.org/sites/index/documents/Basel_AML_Index_Report_2016.pdf)

<sup>90</sup> Basel AML Index 2016 Report, Basel, Switzerland, Basel Institute on Governance, 27 July 2016, p. 5 [https://index.baselgovernance.org/sites/index/documents/Basel\\_AML\\_Index\\_Report\\_2016.pdf](https://index.baselgovernance.org/sites/index/documents/Basel_AML_Index_Report_2016.pdf)

լություն: Դա կարող է նաև նպաստել բանկային համակարգի վստահության մակարդակի ավելացման և ներդրումների ներգրավմանը:

Աղյուսակ 2.2.1

**Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի  
Բազելյան AML համաթիվը կամ ինդեքսը 2016թ.<sup>91</sup>**

0 = ցածր ռիսկ, 10 = բարձր ռիսկ

| Երկիր                  | Ընդհանուր միավոր | 2016թ.-ի վարկանիշ |
|------------------------|------------------|-------------------|
| Իրան                   | 8.61             | 1                 |
| Աֆղանստան              | 8.51             | 2                 |
| Տաջիկստան              | 8.19             | 3                 |
| Չինաստան               | 6.70             | 39                |
| Ուկրաինա               | 6.57             | 46                |
| Թուրքիա                | 6.55             | 47                |
| Ռուսաստան              | 6.22             | 58                |
| Ղրղզստան               | 6.21             | 60                |
| Ղազախստան              | 5.88             | 71                |
| Ճապոնիա                | 5.76             | 76                |
| Շվեյցարիա              | 5.46             | 88                |
| Գերմանիա               | 5.33             | 92                |
| ԱՄՆ                    | 5.17             | 97                |
| Ֆրանսիա                | 5.03             | 103               |
| Սինգապուր              | 4.91             | 111               |
| Ադրբեջան               | 4.84             | 118               |
| Միացյալ Թագավորություն | 4.77             | 121               |
| Վրաստան                | 4.71             | 123               |
| Հայաստան               | 4.63             | 128               |
| Էստոնիա                | 3.82             | 147               |
| Լիտվա                  | 3.62             | 148               |
| Ֆինլանդիա              | 3.05             | 149               |

Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի հարևաններից Իրանը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վարկանիշով աշխարհում առաջինն է, իսկ հսկայական զբոսաշրջային հոսքն Իրանից այդ առումով կարող է նաև իր մեջ վտանգներ պարունակել, ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այն գտնվում է 47-րդ հորիզոնականում:

<sup>91</sup> <https://index.baselgovernance.org/ranking>. **Ծանոթություն.** տվյալների ամբողջական աղյուսակը ներկայացված է ատենախոսության հավելված մասում:

Հետաքրքիր փաստերից է նաև այն, որ աշխարհում ահաբեկչության և փողերի լվացման դեմ առաջամարտիկի դեր ստանձնած և պայքար մղող ԱՄՆ-ը գտնվում է 97-րդ հորիզոնականում: Ստացվում է այնպես, որ ահաբեկչության և փողերի լվացման դեմ պայքար մղող երկրները շատ դեպքերում հայտնվում են ահաբեկիչների թիրախում, իսկ թե ինչու է դա այդպես բավականին դժվար է օբյեկտիվ գնահատական տալ:

Ահաբեկչության դեմ պայքարը, հատկապես, սահմանային անցակետերի կրկին վերազինումը Եվրոպայի համար առաջիկա 10 տարիներին ըստ տարբեր փորձագիտական գնահատականների, կարող է արժենալ մոտ 100 մլրդ եվրո, իսկ դա նշանակում է, որ բաց սահմանների և միասնական Եվրոպայի գաղափարը կարող է մտնել փակուղու՝ հանգեցնելով լուրջ ֆինանսական ծախսերի և տնտեսական ակտիվության դանդաղեցման: Դրա ապացույցներից է նաև Եվրոպական Միության կազմից դուրս գալու ցանկություն ունեցող Միացյալ Թագավորության կողմից անցկացված հանրաքվեն, որն անգամ կարող է համաշխարհային ֆինանսական վերադասավորումների հանգեցնել, քանի որ Լոնդոնը դրանով կարող է կորցնել իր առաջատարի դիրքերը: Նման իրավիճակներ են առկա նաև Իսպանիայում և Իտալիայում:

Այսինքն՝ համաշխարհային տնտեսությանը Միջին Արևելքից և Եվրոպայից լուրջ ռիսկեր են սպառնում, որոնց վերաբերյալ բավականին լուրջ հետազոտություն են իրականացրել նաև Համաշխարհային տնտեսական համաժողովի փորձագետները: Յուրաքանչյուր տարի հրապարակելով Համաշխարհային ռիսկերի զեկույցը՝ վերջիններս արդեն 11-րդ անգամ ներկայացնում են համաշխարհային ռիսկերը, դրանց տեսակները, աշխարհագրությունը և այլն<sup>92</sup>:

Այս տեսանկյունից գոյությունի նաև աշխարհի փակ և կոնֆլիկտային սահմանների քարտեզ հասկացությունը, իսկ նման փակ և չգործող միջպետական սահմանների ընդլայնումը հանգեցում է համաշխարհային տնտեսության մեջ, առևտրի ծավալների կրճատմանը, ներդրումներ նվազմանը, տնտեսական աճի և զարգացման տեմպերի դանդաղեցմանը և այլ:

Այնուամենայնիվ, քննարկելով համաշխարհային ռիսկերի տեսակները նկատում ենք, որ դրանք բաժանված են 6 մեծ խմբերի՝

<sup>92</sup> The Global Risks Report 2016, 11th Edition is published by the World Economic Forum, Cologny/Geneva, Switzerland, 103 p. [http://www3.weforum.org/docs/GRR/WEF\\_GRR16.pdf](http://www3.weforum.org/docs/GRR/WEF_GRR16.pdf)

- տնտեսական,
- բնապահպանական,
- աշխարհաքաղաքական կամ գեոպոլիտիկ,
- սոցիետալ (սոցիալ-տնտեսական),
- տեխնոլոգիական:

Իհարկե, նշված ռիսկերից, որոնք համաշխարհային տնտեսության վրա էական ազդեցություն կունենան հիմնականում մեզ հետաքրքրում են՝ տնտեսական, սոցիետալ և տեխնոլոգիական ռիսկերը: Համաշխարհային տնտեսության վրա տնտեսական ռիսկերից 2016թ.-ին կանխատեսվում էր, որ ավելի շատ ազդելու են էներգիայի գնային ցնցումները, բյուջետային ճգնաժամերը, ինչպես նաև ակտիվների «փուչիկների» պայթյունները, սոցիետալ ռիսկերից հիմնականում նշվում էին՝ ջրային ռեսուրսների հետ կապված ճգնաժամերը, ինչպես նաև մեծ մասշտաբների հասնող ոչ իրենց կամքով սեփական երկիրը լքած միգրացիոն հոսքերը, տեխնոլոգիական ռիսկերից էին՝ տվյալների բազաների հետ կապված գողությունները և խարդախությունները<sup>93</sup>:

Իհարկե, նշված ռիսկերն աշխարհի տարբեր մասերում ունենում են տարբեր դրսևորումներ, օրինակ՝ ամենամեծ մասշտաբների հասնող ռիսկը կապված էր գործազրկության հետ, հաջորդ տնտեսական ռիսկը, որին բախվեց աշխարհը կապված է բյուջետային ճգնաժամի հետ: Նկատվեց նաև, որոշ խոշոր ընկերությունների ակտիվների կրճատում, որը հայտնի է նաև ակտիվների «փուչիկների» պայթյուն անվամբ, առկա էր նաև դեֆլյացիոն ռիսկ, քանի որ, հատկապես, ԵՄ մի շարք երկրներում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում և այլն գրանցվեցին գնանկման լուրջ միտումներ: Իհարկե, դրա հակառակ ռիսկն էլ անկառավարելի ինֆլյացիան էր, որը գրանցվել է և արդեն երկար ժամանակ շարունակվում է անկառավարելի մնալ Ջիմբաբվեում: Ձախողումներ գրանցվեցին նաև ֆինանսական մեխանիզմների և ինստիտուտների գործունեության մեջ, օրինակ՝ Դոյչե բանկի հետ կապված դեպքերն ու երեք բանկերի (JPMorgan, HSBC և Credit Agricole) ներգրավվածությամբ՝ Euribor<sup>94</sup> տոկոսադրույքի հետ կապված սկան-

<sup>93</sup> The Global Risks Report 2016, 11th Edition is published by the World Economic Forum, Cologny/Geneva, Switzerland, pp. 3-4, [http://www3.weforum.org/docs/GRR/WEF\\_GRR16.pdf](http://www3.weforum.org/docs/GRR/WEF_GRR16.pdf)

<sup>94</sup> [https://www.bloomberg.com/news/articles/2016-12-07/jpmorgan-hsbc-credit-agricole-fined-521-million-over-euribor?cmpid=socialflow-facebook-business&utm\\_content=business&utm\\_campaign=socialfloworganic&utm\\_source=facebook&utm\\_medium=social](https://www.bloomberg.com/news/articles/2016-12-07/jpmorgan-hsbc-credit-agricole-fined-521-million-over-euribor?cmpid=socialflow-facebook-business&utm_content=business&utm_campaign=socialfloworganic&utm_source=facebook&utm_medium=social)

դալները և այլն: Անօրինական առևտրի հետ կապված ռիսկերը, որոնք հրապարակվում են նաև Գլոբալ ֆայնենշլ ինթեգրիթի կազմակերպության տարբեր զեկույցներում<sup>95</sup>:

Սոցիետալ բնագավառի ռիսկերից աշխարհում բավականին մեծ տարածում գտան 2016թ.-ին՝ մեծ մասշտաբների հասնող ոչ իրենց կամքով սեփական երկիրը լքած միգրացիոն հոսքերը, ջրի և սննդի հետ կապված ռիսկերը, ինչպես նաև սոցիալական անհավասարության խորացման երևույթները և այլն:

Տեխնոլոգիաների բնագավառում 2016թ.-ին հիմնականում ի հայտ եկած ռիսկերն արտահայտվեցին տարբեր կիբերհանցագործությունների, տվյալների բազաների հետ կապված գողությունների և խարդախությունների և որոշ կարևոր նշանակություն ունեցող տեղեկատվական տեխնոլոգիական կենտրոնների ծախսողումների հետ և այլն<sup>96</sup>:

Հետաքրքիր է նաև, որ նման ռիսկային իրավիճակներ 2016թ.-ի ընթացքում ի հայտ եկան նաև Հայաստանում, իսկ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված «ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2016-2018թթ.-ի» զեկույցում առկա են նաև 2016-2018թթ. համաշխարհային և Հայաստանի տնտեսության վերաբերյալ որոշակի կանխատեսումներ<sup>97</sup>:

Այսպես՝ միջազգային շուկաներում 2016-2018թթ. համար կանխատեսվում է՝

- Համաշխարհային տնտեսական աճի դանդաղող տեմպերի խնդիրն մենք արդեն անդրադարձել ենք և համամիտ ենք, որ իրականում նման միտումներ սպասվում են, քանի որ դրանք համընկնում են նաև մի շարք միջազգային կազմակերպությունների՝ ԱՄՀ-ի, ՀԲ-ի, ՎԶԵԲ-ի կանխատեսումների հետ և այլն:
- Գործընկեր երկրների տնտեսական և ֆինանսական վիճակի վատթարացումները ևս հավանական սցենարներից է, քանի որ, հատկապես, ԵԱՏՄ երկրներում դրական զարգացումներ չեն ակնկալվում, իսկ ԵՄ-ում ևս հասունանում են մի շարք ճգնաժամեր՝ բանկային, ֆինանսական և անգամ միասնականության խնդիրներ:

<sup>95</sup> <http://www.gfintegrity.org/reports/> [Վերջին մուտք 26.12.2016թ.]:

<sup>96</sup> The Global Risks Report 2016, 11th Edition is published by the World Economic Forum, Cologny/Geneva, Switzerland, pp. 3-4, [http://www3.weforum.org/docs/GRR/WEF\\_GRR16.pdf](http://www3.weforum.org/docs/GRR/WEF_GRR16.pdf)

<sup>97</sup> ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2016-2018թթ., ըստ ՀՀ առևտրային բանկերի 2016-2018թթ. հեռանկարային զարգացման ծրագրերի, ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կայունության և զարգացման վարչություն, Ֆինանսական համակարգի կանխատեսումների քաժին, Երևան, 2016թ., 33 էջ:

[https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/BizPlaN2016\\_%20Final%20%20Public25.07.pdf](https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/BizPlaN2016_%20Final%20%20Public25.07.pdf):

- Միջազգային շուկաներում գների փոփոխությունների առումով, հիմնականում առկա են էներգակիրների գնային շուկի ռիսկեր, իսկ դա նաև առկա էր Համաշխարհային տնտեսական համաժողովի կանխատեսումներում: Մյուս կողմից համաշխարհային տնտեսության մեջ ակտիվության անկումը կհանգեցնի նաև դեֆլյացիոն շուկերի, որի պարագայում հումքի և պարենի գնանկում ևս չի բացառվում:
- Միջազգային շուկաներում տոկոսադրույքների քաղաքականությունը, այն է՝ ցածր և բացասական տոկոսադրույքներն են մեծ դեր խաղալու, քանի որ չեն բացառվում նաև փոփոխությունները Euribor և Libor տոկոսադրույքների հետ կապված: Այստեղ, իհարկե, հակված ենք նաև հավատալ ԱՄՀ-ի բազելյան սցենարի կանխատեսումներին, որտեղ որոշակի տոկոսադրույքների աճ է նախատեսվում<sup>98</sup>:  
*ՀՀ տնտեսությունում բանկերի կանխատեսումներից կարող ենք նշել հետևյալը:*
- ՀՀ տնտեսության չափավոր աճի միտումն, իհարկե, հնարավոր է չպահպանվի և առաջիկա տարիներին գտնվենք ցածր աճի տիրույթում, քանի որ կանխատեսումները, որոնք դրված են ՀՀ պետական բյուջեի մասին 2017թ.-ի ուղերձում շեղվում են իրականությունից: Նման կանխատեսումներ են արել նաև ՀԲ-ի փորձագետները՝ 2016թ.-ի համար վերանայելով իրենց կանխատեսումները ՀՆԱ-ի համար մինչև 0%<sup>99</sup>:

Աղյուսակ 2.2.2

**Տնտեսության ճյուղերի իրական աճերը 2013-2017թթ. (ավելացված արժեքով)<sup>100</sup>**

|                                        | 2013  | 2014  | 2015  | 2016  | 2017  |
|----------------------------------------|-------|-------|-------|-------|-------|
|                                        | փաստ. | փաստ. | փաստ. | կանխ. | կանխ. |
| ՀՆԱ                                    | 3.3   | 3.6   | 3.0   | 2.4   | 3.2   |
| Արդյունաբերություն                     | 6.3   | -0.9  | 7.6   | 5.0   | 5.5   |
| Գյուղատնտեսություն                     | 7.6   | 6.1   | 13.2  | 4.0   | 4.0   |
| Շինարարություն                         | -7.4  | -4.5  | -3.1  | -1.5  | 0.0   |
| Ծառայություններ                        | 3.1   | 6.7   | 0.6   | 2.6   | 2.8   |
| Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ) | 3.6   | 1.8   | -5.1  | -2.0  | 3.0   |

<sup>98</sup> World Economic Outlook April 2016, Too slow for Too long, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 220 <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2016/01/>

<sup>99</sup> <http://www.aravot.am/2016/12/09/835430/> [Վերջին մուտք 27.12.2016թ.]:


<sup>100</sup> Հայաստանի Հանրապետության Կառավարության, 2017թ. սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին զեկույց (Ուղերձ), էջ 66-67:

ՀՀ-ում մակրոտնտեսական ցուցանիշները շարունակում են մնալ ահազանգող, քանի որ թեկուզ առկա են որոշակի տնտեսական աճի միտումներ և 2016թ.-ի 10 ամսում ընդամենը 100.4%, որն, ի դեպ, սկսած մարտ ամսից նվազման միտում է դրսևորում<sup>101</sup>: Եվ սա այն պարագայում, որ ՀՀ պետական բյուջեի ուղերձում կանխատեսվում է 2016թ.-ը փակել 2.4%, իսկ 2017թ.-՝ 3.4% աճով:

2016թ.-ի 10 ամիսները նպաստավոր են եղել արտահանման առումով, քանի որ այն հասել է 1 մլրդ 453 մլն ԱՄՆ դոլարի, սա կարելի է բացատրել դրական կողմերից մեկը համարել: 10 ամսում գյուղատնտեսությունն անկում է ապրել -7.3%-ով, իսկ դա նշանակում է, որ այս տարի գյուղատնտեսության հաշվին աճ ապահովելը հնարավոր չի լինի: Շինարարության անկումը կազմել է -9.8% նախորդ տարվա 10 ամիսների համեմատությամբ, իսկ դա ևս մեկ փաստ է այն մասին, որ տնտեսությունը զարգացման իր լոկոմոտիվներից մեկն այդպես էլ 2008թ.-ից սկսած ուշքի չի կարողանում բերել, դեռ ավելին, 2017թ.-ի պետական բյուջեով կրկնակի կրճատել են պետական շինարարության ծավալները:

Գծապատկեր 2.2.1

**Տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված և կանխատեսվող ՀՆԱ-ի իրական աճին նպաստման չափերը 2013-2017թթ.<sup>102</sup>**



<sup>101</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-հոկտեմբերին, էջ 7:

<sup>102</sup> Հայաստանի Հանրապետության Կառավարության, 2017թ. սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին զեկույց (Ուղերձ), էջեր 66-67:

- Տրանսֆերտների դանդաղ աճը ևս հնարավոր սցենարներից է, սակայն 2016թ.-ի վերջի ենթ մոտենում, սակայն նման միտումներ դեռևս չեն գրանցվում, դեռ ավելին, կանխատեսվում է 140 մլն դոլարի հասնող նվազում: Մնում է միայն հուսալ, որ այդ միտումները կվերականգնվեն 2017-2018թթ. ընթացքում, քանի որ 2016թ.-ն այդ առումով դրական զարգացումներ չի նախանշում: Իսկ դա նշանակում է, որ բանկային համակարգում կանխատեսվող ցուցանիշները ևս շեղվելու են հիմնական միտումներից:

Աղյուսակ 2.2.3

**Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի  
2013-2016թթ.<sup>103</sup>**

մլն ԱՄՆ դոլար

|                                                                                                 | 2013          | 2014          | 2015          | 2016 Q1      | 2016 Q2      |
|-------------------------------------------------------------------------------------------------|---------------|---------------|---------------|--------------|--------------|
| <b>Դրամական փոխանցումներ ՀՀ</b>                                                                 | <b>2159.6</b> | <b>2025.8</b> | <b>1430.3</b> | <b>208.3</b> | <b>306.1</b> |
| Աշխատողների զուտ աշխատավարձ                                                                     | 939.2         | 891.7         | 638.1         | 67.9         | 134.6        |
| Աշխատողների աշխատավարձ                                                                          | 1209.4        | 1148.3        | 821.8         | 87.4         | 173.4        |
| Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտներ | 187.3         | 177.9         | 127.3         | 14.7         | 26.9         |
| Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված եկամուտներ      | 241.3         | 229.1         | 163.9         | 18.9         | 34.6         |
| Անձնական տրանսֆերտներ                                                                           | 963.9         | 909.6         | 649.0         | 123.8        | 141.6        |
| Կապիտալ տրանսֆերտներ                                                                            | 69.2          | 46.7          | 15.9          | 2.0          | 3.0          |

- Բնակչության իրական եկամուտների փոփոխության ցուցանիշն իսկապես կարող է անկում ապրել, ինչպես և կանխատեսվում է, քանի որ տնտեսական ցածր աճը տանելու է աղքատության մակարդակի բարձրացման, ինչպես նաև եկամուտների կրճատման:
- Գնաճի չափավոր մակարդակը կպահպանվի, դեռ ավելին համաշխարհային գնանկման և դեֆլյացիոն միտումների ֆոնի ներքո չի բացառվում նաև, որ կգրանցվի դեֆլյացիա:
- Միասնական մաքսային գոտում ընդգրկվելու արդյունքում ապրանքաշրջանառության աճը հնարավոր միտումներից է, քանի որ 2015թ.-ին գրանցված 1 մլրդ 170 մլն դոլարանոց ներմուծման անկման արդյունքում ստեղծվել է «ցածր բազայի

<sup>103</sup> <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> [Վերջին մուտք 24.12.2016թ.]:



էֆեկտ», իսկ արտահանման ծավալների 2016թ.-ին գրանցված աճի մոտ 20%-անոց տեմպերը պահպանվելու պարագայում կնպաստեն ապրանքաշրջանառության ծավալների աճին:

ՀՀ ֆինանսաբանկային հատվածում առաջիկա 2 տարիներին սպասվում են՝

- Բանկերի հիմնական ցուցանիշների կայուն աճը հավանական, սակայն այժմ ռիսկային սցենարներից է, քանի որ տնտեսական զարգացումները հնարավոր է դրան չնպաստեն:
- Դոլարայնացման մակարդակը կմնա բարձր և՛ վարկավորման, և՛ ավանդադրման բնագավառում, քանի որ այս ուղղությամբ էական քայլեր չեն արվում: Իհարկե, այստեղ անհրաժեշտ է փոխել կիրառվող գործիքակազմը, այդ հարցին մենք անդրադարձել ենք մեր հետագա հարցադրումներում:
- Տոկոսադրույքների առումով հստակ կանխատեսումներ տալը դժվար է, քանի որ համաշխարհային միտումների և ՀՀ ներքին զարգացումների միջև առկա են էական տարբերություններ:

#### Աղյուսակ 2.3.4

ՀՀ ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2013-2016 թվականներին<sup>104</sup>

|                              | 2013  |       | 2014  |       | 2015  |       | 2016  |       |       |       |       |       |       |
|------------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|
|                              | VII   | XII   | VII   | XII   | VII   | XII   | I     | II    | III   | IV    | V     | VI    | VII   |
| Վարկերի միջին տոկոսադրույք   | 16.07 | 15.04 | 15.76 | 16.21 | 18.18 | 15.96 | 16.96 | 19.18 | 19.11 | 17.94 | 18.14 | 16.66 | 17.50 |
| Ավանդների միջին տոկոսադրույք | 10.08 | 10.42 | 10.27 | 12.53 | 14.44 | 14.09 | 13.35 | 11.44 | 11.45 | 10.77 | 12.20 | 12.81 | 12.37 |

- Դրամային ռեսուրսների աճը հիմնականում կապվում է կենսաթոշակային և ապահովագրական համակարգերի միջոցով:
- Ֆինանսական հատվածում մրցակցության խորացումն առաջիկայում ՀՀ-ում լինելու է կարևոր, քանի որ արդեն իսկ ՀՀ ԱՎԾ տվյալներով բնակչության թիվը նվազելով հատել է 3 մլն մարդու սահմանագիծը, իսկ դա նշանակում է պայքար նոր հաճախորդների համար:

Համաշխարհային և հայաստանյան ռիսկերի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ առաջիկա տարիներին հնարավոր

<sup>104</sup> Հայաստանի Հանրապետության Կառավարության, 2017թ. սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին զեկույց (Ուղերձ), էջ 77:

է որ չլինեն նպաստավոր պայմաններ ՀՀ բանկային համակարգում ժամանակակից բանկային ծառայությունների ներդրման և մյուս կողմից այդ ծառայություններից օգտվող հաճախորդների թվի ավելացման առումով, իսկ ինչ վերաբերում է այդ գործընթացում ծագող ռիսկերին և խնդիրներին, ապա տնտեսական ոչ նպաստավոր պայմանները միկրոմակարդակում կարող են ևս բացասական միտումներ հաղորդել:

Այսպես, անդրադառնանք Համաշխարհային տնտեսական համաժողովի ֆինանսական նորամուծությունների և ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման կամ ապագայի վերաբերյալ կատարված կանխատեսումներին, և ըստ այդմ ներկայացված 3 զեկույցներին: Ներկայացված զեկույցներից առաջինը վերնագրված է՝ Ֆինանսական ծառայությունների ապագան<sup>105</sup>, որի հենքի վրա հետագայում տպագրված են ևս երկու զեկույցներ՝ Ֆինանսական ենթակառուցվածքների ապագան<sup>106</sup> և Թվային նույնականացման նախագիծը<sup>107</sup>: Ստացվում է, որ ֆինանսական ծառայությունների զարգացման և այդ ոլորտում նորամուծությունների կիրառման հիմնական տրամաբանությունը կառուցվելու է ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև թվային նույնականացման խնդիրների լուծման տրամաբանությունից ելնելով:

Փորձելով դասակարգել բանկերի կողմից մատուցվող հիմնական ֆինանսական ծառայությունները ստանում ենք հետևյալ ֆունկցիոնալ խմբերի դասակարգումը՝

1. Վճարումներ:
2. Ապահովագրություն:
3. Ավանդներ և վարկավորում:
4. Կապիտալի ավելացում կամ աճ:
5. Ներդրումների կառավարում:
6. Շուկայի տրամադրում և ընդլայնում:

Այս 6 ոլորտների համար առանձնացված են 11 նորամուծական կլաստերներ (կլաստերների գծապատկերները բերված են հավելված մասում), որոնք միմյանց միջև

<sup>105</sup> The Future of Financial Services, How disruptive innovations are reshaping the way financial services are structured, provisioned and consumed, Prepared in collaboration with Deloitte, Final Report, June 2015, 178 p. [http://www3.weforum.org/docs/WEF\\_The\\_future\\_of\\_financial\\_services.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_The_future_of_financial_services.pdf).

<sup>106</sup> The future of financial infrastructure, An ambitious look at how blockchain can reshape financial services, Prepared in collaboration with Deloitte Part of the Future of Financial Services Series, August 2016, 130 p. [http://www3.weforum.org/docs/WEF\\_The\\_future\\_of\\_financial\\_infrastructure.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_The_future_of_financial_infrastructure.pdf)

<sup>107</sup> A Blueprint for Digital Identity The Role of Financial Institutions in Building Digital Identity, Prepared in collaboration with Deloitte Part of the Future of Financial Services Series, August 2016, 108 p. [http://www3.weforum.org/docs/WEF\\_A\\_Blueprint\\_for\\_Digital\\_Identity.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_A_Blueprint_for_Digital_Identity.pdf)

փոխկապակցված լինելով հանդերձ ապագայում էական ազդեցություն են ունենալու ֆինանսական ծառայությունների մատուցման վրա<sup>108</sup>:

Վճարումներ:

1. Անկանխիկ աշխարհ: Համաշխարհային տնտեսությունն ընթանում է անկանխիկ գործարքների նորամուծական ծառայությունների մատուցման ճանապարհով, որի համար առաջնային նշանակություն են ունենալու՝ բջջային կամ մոբայլ վճարումները, ինտեգրացված բիլլինգը, ինչպես նաև ապագա սերնդի անվտանգության համակարգերը: Դա նշանակում, որ հաճախորդների վարքագծի վրա դա ունենալու է էական ազդեցություն, քանի որ անկանխիկ վճարումների համակարգը, հատկապես, զարգացող երկրների համար դեռևս երկար ճանապարհ ունի անցնելու:
2. Զարգացող վճարման մեխանիզմներ: Այս մեխանիզմը գործարկվելու է կրիպտոգրաֆիական պրոտոկոլների կամ արժույթների միջոցով, ինչպիսին օրինակ՝ բիթքոիններն են, կիրառվելու է նաև P2P տրանսֆերների կամ փոխանցման մեխանիզմը, որն իրենից ներկայացնում է հեռախոսից հեռախոս կամ մարդուց մարդ դրամական փոխանցումների մոդելը, և մոբայլ կամ բջջային փողերի ստեղծում, որն իրենից ենթադրում է բջջային հեռախոսի վերածումը էլեկտրոնային դրամապանակի: Շատ բանկեր այս խնդիրը փորձում են լուծել կապ ստեղծելով քարտերի և էլեկտրոնային վճարման մեխանիզմների միջև:

Ապահովագրություն:

3. Ապահովագրության ապաագրեգացում: Այս կլաստերում ապագայում հիմնականում սպասվում են հետևյալ միտումները՝ ապաագրեգացված բաշխում, տնտեսության մասնատում, ինքն իրեն վարվող ավտոմեքենաներ և կապիտալի նոր սերնդի բարեփոխումների կյանքի կոչում:
4. Կապակցված ապահովագրություն: Այս կլաստերն իրենից ներկայացնելու է խելացի և էժան սենսորային համակարգեր, կրիչներ, ինտերնետային իրեր, ինչպես նաև ստանդարտացված պլատֆորմներ, որից կարող են օգտվել ապահովագրվողները:

---

<sup>108</sup> [http://www3.weforum.org/docs/WEF\\_The\\_future\\_of\\_financial\\_services.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_The_future_of_financial_services.pdf), The Future of Financial Services, How disruptive innovations are reshaping the way financial services are structured, provisioned and consumed, Prepared in collaboration with Deloitte, Final Report, June 2015, pp. 15-21.

Այսինքն՝ մարդկանց վրա առանձին սարքեր տեղադրելով ստանում են տեղեկատվություն վերջիններիս ռիսկային իրավիճակների վերաբերյալ:

Ավանդներ և վարկավորում:

**5.** Այլընտրանքային վարկավորում: Այն իրենից ներկայացնում է առանց միջնորդների մարդկանց միջև միմյանց վարկավորում, ավտոմատացված պրոցեսինգային կենտրոնների ստեղծում, ինչպես նաև այլընտրանքային դատական համակարգի և հաշտարարի մոդելի մշակում:

**6.** Հաճախորդների նախընտրությունների տեղափոխում: Այն իրենից ներկայացնում է վիրտուալ բանկինգի համակարգի ստեղծում, բանկային համակարգի վերածումը պլատֆորմի, ինչպես նաև մոբայլ բանկինգի էվոլյուցիան հաջորդ զարգացման փուլերում:

Կապիտալի ավելացում կամ աճ:

**7.** Քրաուդֆոնդինգ: Այս կլաստերում հիմնականում լիազորված ներդրողների ուղղորդման հարցն է բարձրացվում, ինչպես նաև կրկին դրվում է այլընտրանքային դատական համակարգ և ունենալու հաշտարարի մոդել ունենալու գաղափարը:

Ներդրումների կառավարում:

**8.** Լիազորված ներդրողներ: Այս կլաստերում հիմնականում շեշտը դրվում է սոցիալական (ցանցերի) միջոցով առևտրի, ավտոմատացված խորհուրդների և բարեկեցության կառավարման համակարգերի, ինչպես նաև մանրածախ ալգորիթմական առևտրի վրա:

**9.** Գործընթացների էքստերնալիզացիա: Այս կլաստերում հիմնականում շեշտը դրվում է առաջանցիկ վերլուծությունների, բնական լեզուների, գործընթացները, որպես ծառայություն համակարգերի, ինչպես նաև ընդունակություններով կիսվելու վրա:

Շուկայի տրամադրում:

**10.** Խելացի և արագագործ մեքենասարքավորումներ: Այս ինովացիոն կլաստերում նախատեսվում են տվյալներին մուտք ունեցող մեքենասարքավորումներ, արհեստական ինտելեկտ և մեքենասարքավորումների ուսուցում, ինչպես նաև մեծ տվյալների բազաների կիրառում:

**11.** Նոր շուկայի պլատֆորմներ: Այս վերջին ինովացիոն ֆինանսական կլաստերում

հիմնականում նախատեսվում են կամ սպասվող միտումներն են ֆիքսված եկամուտների համակարգի ստեղծումը, ֆոնդերի կամ ֆոնդերի ֆոնդի ձևավորումը, մասնավոր և վենչուրային կապիտալի բաժանումը, մասնավոր ընկերությունների մասնաբաժինների ստեղծումը, ինչպես նաև ապրանքների և դերիվատիվների կամ ածանցյալների պայմանագրերի կնքումը:

Ինչպես է էվոլյուցիան ապակենտրոնացված կամ ոչ ավանդական վճարային սխեմաների փոխելու ավանդական ֆինանսական հաստատությունների դերը, դա մնում է բավականին հետաքրքիր հարցադրումների շարքում, սակայն ինչպես տեսնում ենք, արդեն իսկ նախանշվում են ինովացիոն ֆինանսական ծառայությունների հիմնական 11 կլաստերները, որոնք գործելու են աշխարհում: Գլխավոր ռիսկերից այս առումով կարելի համարել այն, որ տեխնոլոգիական և ֆինանսական զարգացածության բնագավառում մեծ առաջընթաց չունենալու պարագայում ՀՀ-ն երկար ժամանակ դեռևս կմնա ավանդական ֆինանսական ծառայություններ մատուցող բանկային համակարգ և չնչին նորամուծություններ ունեցողների շարքում:

Մենք նաև, որ ֆինանսական ծառայությունների ինտեգրացիան ակտիվ կերպով իր մեջ ներառում է նաև ապահովագրական ծառայությունները, իսկ դա նշանակում է, որ սկսելու են գործել փոխկապակցված բանկային և ապահովագրական ծառայություններ:

Հարկ է նշել, որ այժմ մեծ տարածում է ստանում ժամանակակից բանկային ծառայություններից օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգ ծառայությունները, որոնց իրականացման ժամանակ առաջանում են մի շարք ռիսկեր:

Օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի ծառայությունների մատուցման ժամանակ կարող են առաջանալ ինչպես ցանկացած վճարահաշվարկային համակարգում առաջացող բնորոշ ռիսկեր, այնպես էլ յուրահատուկ ռիսկեր: Ռիսկը կարելի է բնութագրել որպես սպասվող կամ անսպասելի՝ հանկարծահաս իրավիճակներում ծագող կորուստ կամ դրա ծագման հնարավորություն, որի նվազեցման համար պետք է իրականացնել մի շարք կանխարգելիչ և սահմանափակող միջոցառումներ: Ինչպես հայտնի է բանկային համակարգում առանձնացվում են մի քանի տեսակի ռիսկեր,

դրանցից հիմնական են հանդիսանում հինգը՝ գործառնական ռիսկ, իրավական ռիսկ, ռազմավարական ռիսկ, բարի համբավի ռիսկ և իրացվելիության ռիսկ:

Նշված երեք ծառայությունների ամենահավանական ռիսկը՝ *գործառնական ռիսկ*ն է, որը կարող է առաջանալ<sup>109</sup>.

- տեղեկատվական հոսքերի, ներբանկային գործառույթների և գործընթացների, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության ապահովման ոչ պատշաճ կազմակերպման պատճառով՝ ինչպես բանկի, այնպես էլ ծառայություններ մատուցողների մոտ,
- բանկի կողմից ծառայությունների իրականացման համար օգտագործվող տեղեկատվական համակարգերի գործունեության ռեժիմների խախտման պատճառով, որոնք կապված են վթարների, մերժումների, ծրագրային ապահովման և սարքավորումների խափանման հետ՝ ինչպես բանկի, այնպես էլ ծառայություններ մատուցողների մոտ,
- օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի իրականացման ժամանակ բանկի կողմից օգտագործվող ապարատածրագրային ապահովման աշխատանքի խափանումների և/կամ սխալների պատճառով, որոնք կարող են բերել տվյալների ամբողջականության խախտմանը,
- օնլայն, ինտերնետ և մոբայլ տեխնոլոգիաների կիրառմամբ բանկի տեղեկատվական ռեսուրսներին անօրինական մուտք գործելու պատճառով, այդ թվում՝ հանցավոր գործողություններ կատարելու համար,
- տեղեկատվական համակարգերի և տեղեկատվա-հեռահաղորդակցական ցանցերի ոչ բավարար արտադրողականության և պաշտպանվածության պատճառով,
- բանկի, վերջինիս հաճախորդների կամ ծառայություններ մատուցողների աշխատակիցների, այդ թվում՝ օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի իրականացման ծրագրային ապահովման և սարքերի մշակողի սխալների, ինչպես նաև վերջիններիս կատարման հնարավորության ոչ բավարար հսկողության մակարդակի պատճառով,

<sup>109</sup> Best Practices for Managing Bank Transaction Risk, Using a “Continuous Data Analytics” Approach Co-authored by: Focus Technology Group. <http://ithandbook.ffiec.gov/it-booklets/e-banking/e-banking-risks/transactionoperations-risk.aspx?prev=1>

- ծառայություններ մատուցողների կողմից բանկի նկատմամբ պայմանագրային պարտավորությունների չկատարման պատճառով,
- բանկի կողմից իր հաճախորդների նկատմամբ ձեռքբերված պարտավորությունների չկատարում օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի իրականացման համար նախատեսված ապարատաձրագրային ապահովման համապատասխան որակի չապահովման պատճառով,
- էլեկտրոնային թվային ստորագրության բանալիի անօրինական օգտագործման միջոցով դրամական միջոցների շորթման պատճառով:

*Գործառնական ռիսկերի հետևանքով կարող է տեղի ունենալ՝*

- Կոնֆիդենցիալ տեղեկատվության հափշտակում և տարածում (usurpation and disclosure of confidential information):
- Սպասարկման խափանում (disruption of service):
- Վճարային տեղեկատվության անօրինական ձևափոխություն (մոդիֆիկացիա) (illicit modification of payment information):
- Կեղծումներ (counterfaiting):
- Գործառնության կրկնակի ձևակերպում (transaction replay):

Օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի իրականացման ժամանակ *իրավական ռիսկի* առաջացման պատճառները կարող են լինել<sup>110</sup>

- բանկի կողմից երկրում գործող օրենսդրության, այդ թվում՝ նորմատիվային ակտերի պահանջների խախտումը,
- իրավական համակարգի անկատարությունը (մոբայլ բանկինգի կիրառմամբ բանկային հեռահար սպասարկման որոշ հարցերի և կողմերի պատասխանատվությունը կանոնակարգված չլինելը, այդ թվում՝ միջազգային բանկային ծառայությունների մատուցման ժամանակ),
- գաղտնի տեղեկատվության մշակման, փոխանցման և պահպանման ժամանակ անօրինական մուտքի՝ ինչպես բանկի, այնպես էլ ծառայություններ մատուցողների մոտ,
- բանկի ներքին փաստաթղթերի անհամապատասխանությունը երկրի օրենսդրությանը, այդ թվում՝ նորմատիվային և այլ ակտերին, ինչպես նաև բանկի անըն-

<sup>110</sup> <http://ithandbook.ffiec.gov/it-booklets/e-banking/e-banking-risks/compliancelegal-risk.aspx> [Վերջին մուտք 10.12.2016թ.]:

դունակությունը ժամանակին համապատասխանեցնել իր գործունեությունը և ներքին փաստաթղթերը օրենսդրության փոփոխություններին,

- նոր տեխնոլոգիաների մշակման և ներդրման ժամանակ իրավական աշխատանքի անարդյունավետ կազմակերպում, որը բերում է բանկի աշխատակիցների և կառավարող մարմնի գործողությունների սխալների,
- բանկի կողմից ծառայություններ մատուցողների հետ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու ժամանակ՝ բանկային և այլ տեղեկատվության մշակումը, փոխանցումը և պահպանումն իրականացնելու, այդ թվում՝ իրականացման ժամանակ ծառայություններ մատուցողի կողմից սպասարկման պարտավորությունների չկատարելու համար պատասխանատվության սահմանման իրավական հարցերի ոչ բավարար մշակում,
- բանկի կողմից հաճախորդների հետ օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու ժամանակ, այդ թվում՝ կողմերի միջև պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության սահմանման իրավական հարցերի ոչ բավարար մշակում,
- պայմանագրային դրույթների խախտում ինչպես բանկի, այնպես էլ նրա հաճախորդների և կոնտրգործակալների կողմից:

Հաշվի առնելով, որ օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի զարգացման գործում կարևոր նշանակություն ունի ոլորտի կանոնակարգվածությունը՝ բանկերը ծառայությունների մատուցման նոր մոդելների զարգացման գործընթացում ներդրումներ կկատարեն միայն այն դեպքում, երբ վստահ լինեն, որ իրավահարաբերությունները բոլոր մասնակիցների միջև կանոնակարգված են և պայմանագրային բազան բավականին կանոնակարգված, կանխատեսելի և ընդունակ ապահովելու համապատասխան իրավական ազդեցությունը:

Որպես կանոն օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի իրականացման ժամանակ *ռազմավարական ռիսկի* առաջացման պատճառ կարող է հանդիսանալ բանկի կառավարման մարմնի կողմից նշված ծառայություններ ներդրման, ուղեկցման և



զարգացման վերաբերյալ սխալ որոշումներ կայացնելու արդյունքում առաջացած հնարավոր կորուստները, որոնք պայմանավորված են<sup>111</sup>

- օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի կիրառումը նախատեսող զարգացման ռազմավարական ծրագրի բացակայությունով կամ թերությունով,
- բանկի կողմից սահմանված ռազմավարական նպատակներին հասնելու անհնարինությունով՝ անհրաժեշտ ռեսուրսների բացակայության կամ ողջ ծավալով չապահովման (ֆինանսական, ապրանքատեխնիկական, մարդկային) և օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի մատուցման ներքո կազմակերպչական միջոցառումների չապահովմամբ,
- օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի ներդրման և ուղեկցման համար կատարած չափազանց ծախսերով և/կամ նրանց անարդյունավետությամբ, ինչպես նաև արդեն շահագործման հանձնված բանկային սպասարկման տեխնոլոգիաներից և բանկի համապատասխան տեղեկատվական համակարգերից ստիպված հրաժարվելու պատճառով,
- օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի մատուցման ծառայությունների տեսակի կամ նրանց մատուցումն ապահովող տեխնիկական լուծումների սխալ ընտրությամբ:

*Քարի համբավի ռիսկ*<sup>112</sup>: Օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի իրականացման ժամանակ բարի համբավի ռիսկի առաջացման պատճառները կարող են հանդիսանալ՝

- բանկի հաճախորդների տվյալների, իրենց հաշիվների և դեպոզիտների վերաբերյալ տվյալների ոչնչացումը՝ օգտագործվող սարքավորումների անսարքության հետ կապված, ինչպես բանկի, այնպես էլ ծառայություններ մատուցողների մոտ,
- բանկի մոտ պահվող գաղտնի տեղեկատվության արտահոսք, այդ թվում՝ բանկային գաղտնիքի խախտում (ցանցային գրոհների, բանկի տեղեկատվական ռեսուրսներին չլիազորված մուտքի և այլ պատճառներով),
- բանկին անօրինական գործունեության մեջ ներգրավվելու պատճառով՝ օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի իրականացման ժամանակ հաճախորդներին

<sup>111</sup> Կիրակոսյան Ա., «Մոբայլ բանկինգը և դրա զարգացման խնդիրները», Այլընտրանք եռամսյա գիտական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր, Երևան 2015 #4, էջեր 176-183: <http://www.mbaknol.com/business-finance/strategic-risk-in-e-banking/>

<sup>112</sup> Basel Committee on Banking, Supervision Risk Management, Principles for Electronic Banking , July 2003, 35p. <http://www.bis.org/publ/bcbs98.pdf>

նույնականացման, բացահայտման և դրամական միջոցներից օգտվելու լիազորված անձի բացահայտման, սեփական ստորագրության նմանօրինակը օգտագործելու, կողերի, գաղտնաբառերի և այլ միջոցների օգտագործման, ինչպես նաև հավաստագրման և նույնականացման վերաբերյալ սխալների բացահայտման ոչ պատշաճ կատարմամբ,

- օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի իրականացման ժամանակ բանկի մոտ առաջացած կոնֆլիկտը հիմնադիրների, հաճախորդների և կոնտրոլորականների, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց հետ,
- հաճախորդի կողմից տրված բացասական գնահատականը բանկի հեռահար բանկային ծառայության մատուցմանը:

Բարի համբավի ռիսկ կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ նրա կողմից մատուցվող օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի ծառայությունները հարմար չեն օգտագործողի համար և շատ դանդաղ են:

*Իրացվելիության ռիսկի* առաջացման պատճառ կարող է հանդիսանալ<sup>113</sup>

- օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի մատուցման ժամանակ իրացվելիության կառավարման թերությունները, որոնք խոչընդոտում են բանկի կողմից իր հաճախորդների առջև ստանձնած պարտավորությունների ժամանակին և լիովին կատարմանը,
- բացասական ազդեցություն ունեն բանկի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման վրա՝ մոբայլ բանկինգի մատուցման ժամանակ կիրառվող հեռահաղորդակցման կապի գործընթացի խափանման դեպքում,
- բարձր իրացվելի ակտիվների իրացման անհնարինություն՝ օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի իրականացումն ապահովող համակարգի խափանման պատճառով,
- օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի իրականացումն ապահովող համակարգի օգտագործումն անօրինական գործարքների իրականացման համար, որոնց արդյունքում բանկին և նրա հաճախորդներին վնաս է հասցվում:

Օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի ծառայության մատուցման դեպքում հաճախորդին ավելի հեշտ հասանելի են դառնում իր միջոցները, և նա կարող է

<sup>113</sup> <http://ithandbook.ffiec.gov/it-booklets/e-banking/e-banking-risks/liquidity,-interest-rate,-pricemarket-risks.aspx?prev=1>  
[Վերջին մուտք 12.12.2016թ.]:

ցանկացած պահի օգտվել դրանցից, որն իր հերթին կարող է տվյալ պահին անսպասելի լինել բանկի համար: Այդ դեպքում բանկը կկանգնի իրացվելիության ռիսկի առաջ: Ուստի, այն իր ռազմավարության մշակման ժամանակ պետք է միջոցառումներ ձեռնարկի՝ իրացվելիության ռիսկից ապահովագրվելու համար:

24 ժամյա ռեժիմում բանկային ծառայություններից օգտվելիս ավելի է մեծանում հանցագործների՝ տարատեսակ մեթոդներ կիրառելով *փողերի լվացում* իրականացնելու հնարավորությունը: Քանի որ նրանք բանկային ծառայություններից օգտվում են առանց բանկ հաճախելու և գործառնությունները կարող են իրականացվել աշխարհի ցանկացած տեղից և շատ մեծ արագությամբ՝ հաշվին գումար մուտքագրելուց հետո՝ կարելի է փոխանցել ցանկացած անձի: Մասնագետները նշում են, որ գործնականում շատ դժվար է պարզել, թե ով է տնօրինում հաշիվը: Բացի այդ, հնարավոր չէ ստույգ որոշել, թե որտեղ է գտնվում հաճախորդը, որն իրականացնում է գործառնությունը:

Անշուշտ, հնարավոր չէ լիովին զերծ մնալ նշված ռիսկերից, սակայն պետք է մշակել ռիսկերի նվազեցմանն ու կանխարգելմանն ուղղված այնպիսի միջոցառումներ, որոնք անիմաստ կդարձնեն զեղծարարությունները:

Օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի ծառայություններ մատուցող ֆինանսական կազմակերպությունը պետք է ունենա հստակ մշակված արդյունավետ գործող ռիսկերի կառավարման համակարգ: Այն պետք է բացահայտի, գնահատի, ուսումնասիրի և վերահսկի համակարգին բնորոշ բոլոր հնարավոր ռիսկերը:

Համակարգի անվտանգությունն ապահովվում է հասանելիության և իրավասությունների վերահսկման մեխանիզմների կիրառման վրա: Այն իր մեջ ներառում է հետևյալ խնդիրների լուծումը՝

- նույնականացում (իդենտիֆիկացիա)՝ համակարգին միացած անձի նույնականացում համակարգի հաճախորդի հետ. գործառնության բոլոր մասնակիցները պետք է համոզված լինեն, որ մնացած մասնակիցները հենց այն անձիք են, ում անվան տակ կատարում են գործառնությունները,
- հեղինակայնացում՝ միացողի իրավասությունների հաստատում,

- փոխանցվող տեղեկատվության գաղտնիություն. տեղեկատվության պահման և փոխանցման ժամանակ այն լրիվ կամ մասամբ չպետք է ընկնի երրորդ անձանց ձեռքը),
- տեղեկատվության ամբողջականություն՝ փոխանցվող տեղեկատվության աղավաղման բացառում. տեղեկատվության պահման և փոխանցման ժամանակ այն պետք է պաշտպանված լինի չարտոնված աղավաղումից,
- գործարքի նոտարական վավերացում՝ բոլոր մասնակիցների համար իրենց կողմից կատարված գործառնություններից հրաժարվելու անհնարինություն,
- գաղտնիության (կոնֆիդենցիալության) ապահովում՝ բոլոր մասնակիցների համար գործառնության կատարման ընթացքում այլ մասնակիցների մասին ստացված տեղեկատվության օգտագործման անհնարինություն:

Բանկային հեռակա սպասարկման համակարգերի շահագործման ժամանակ ֆինանսական ինստիտուտները կանգնում են մի շարք դժվարությունների առաջ՝ կապված կապի տարբեր միջոցներով բարձր մակարդակի և ունիվերսալ սպասարկման ապահովման հետ: Խնդիրն ավելի է բարդանում, երբ ֆինանսական ինստիտուտը կիրառում է մի քանի տեղեկատվական համակարգեր, որոնք հիմնված են տարբեր հենքերի վրա, և որոնց մի մասը կարող է մատուցվել այլ կազմակերպությունների կողմից: Բանկային համակարգի սպասարկման համակարգերի (ԲՀՍՀ) ռազմավարության մշակման ժամանակ ֆինանսական կազմակերպությունը պետք է հաշվի առնի, որ տեղեկատվական տեխնոլոգիաները փոփոխվում են այնպիսի արագությամբ, որ հասանելիության նոր ուղիների և միջոցների առաջացումը կարող է համընկնել տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման ցիկլերի հետ:

Սեփական ուժերով ԲՀՍՀ-ի մշակման դեպքում ֆինանսական ինստիտուտները պետք է լավ ուսումնասիրեն և հստակ ընկալեն նոր տեխնոլոգիաների ներդրման հետ կապված բոլոր ասպեկտները, որն իր հերթին ռիսկ է պարունակում: Բացի այդ, նրանք պետք է հաշվի առնեն նաև սեփական տեղեկատվական տեխնոլոգիաների հետ այդ տեխնոլոգիաների ինտեգրման հետ կապված բոլոր խնդիրները:

Իհարկե, բանկը ԲՀՍՀ-ն կարող է ստեղծել նաև արտաքին ռեսուրսների միջոցով, այն՝ է աութսորսինգ (outsourcing) կամ՝ պատվիրակում իրականացնել, որին ընդհանուր

սխեմայում մասնակցում են հետևյալ սուբյեկտները՝ մասնակից բանկը, հաճախորդը, աուսորսերը կամ մասնագիտացված ընկերությունը, ինչպես նաև հաշվարկային բանկը: Մասնավոր դեպքերում աուսորսերի և հաշվարկային բանկի ֆունկցիաները կարող են համատեղվել և իրականացվել հաշվարկային բանկի կողմից:

Այլ բանկերի հաճախորդների սպասարկման վերոնշյալ տեխնոլոգիայի հիմքում ընկած է աշխատանքի բաժանումը, որը հակառակ դեպքում ընկնում է միայն բանկի վրա: Մասնակից բանկն ինքն իր համար որոշում է մատուցվող ֆինանսական ծառայությունների շրջանակը, պայմանագրեր կնքում հաճախորդների հետ, վարում նրանց հաշիվները, իրականացնում դրամարկղային գործառնություններ, վարում իր սակագնային քաղաքականությունը: Աուսորսինգի առարկա կարող է հանդիսանալ ինչպես ծրագրային ապահովման, այնպես էլ ենթակառուցվածքի աուսորսինգը: 2-րդ դեպքում աուսորսերին են փոխանցվում պրոցեսինգային կենտրոնի ֆունկցիաները (տեղեկատվական և տեխնիկական սպասարկում, մասնակցի հաճախորդների կողմից հեռակա կարգադրությունների գրանցում և մշակում): Մասնակցի հաճախորդների հեռակա կարգադրությունների հիման վրա կատարվող հաշվարկներն իրականացվում են հաշվարկային բանկի կողմից: Աուսորսերն ու հաշվարկային բանկը սպասարկման վճարներ են գանձում մասնակցից՝ համաձայն իրենց սակագների:

Աուսորսերի միջոցով իրականացվող բանկային հեռակա սպասարկումն ունի մի շարք առավելություններ՝

1. նոր ծառայությունների ներմուծման համար անհրաժեշտ ծախսերի նվազեցում,
2. հարմար և ժամանակակից ծառայության մատուցման միջոցով հաճախորդների զանգվածային ներգրավում,
3. ԲՀՍՀ-ի և քարտային ծրագրերի վրա հիմնված աշխատավարձային սխեմաների մշակում,
4. սպասարկման դիմաց միջնորդավճարի գանձում,
5. հաճախորդներին աուսորսեր-բանկի և այլ մասնակից-բանկերի միասնական մանրաձախ ցանցից օգտվելու հնարավորության ընձեռում:

Ինտեգրված համակարգերը պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝

- Ունիվերսալություն. համակարգը պետք է աշխատի տարբեր համակարգերի, հասանելիության և ծածկագրման միջոցների հետ համատեղ: Համակարգը պետք է ունենա զարգացած և ճկուն ինտերֆեյս այլ ֆինանսական կազմակերպությունների հետ աշխատելու համար:
- Ճկունություն. ծառայությունների ցանկը յուրաքանչյուր դեպքում կարող է տարբեր լինել, որը ժամանակի ընթացքում կարող է անընդհատ փոփոխվել և լրացվել: Բացի այդ, համակարգը պետք է հաշվի առնի հաճախորդներին անհատական մոտեցում ցույց տալու հնարավորությունը: Այսպիսով՝ համակարգը պետք է ապահովի բոլոր փոփոխությունների նկատմամբ համապատասխան ճկունություն:
- Ամբողջականություն և անընդհատություն. ԲՀՍ տարբեր տարատեսակները պետք է համատեղվեն և կոմբինացվեն, որոնց համար պետք է կիրառվի ԲՀՍ-ի միայն մեկ սերվեր:
- Գաղտնիություն. համակարգում պահվող տեղեկատվությունը պետք է հասանելի լինի միայն համապատասխան իրավասություն ունեցող անձանց, իսկ ծրագրային ապահովումը չպետք է ունենա կողմնակի մուտքի հնարավորություն (back-door):
- Նորացման հնարավորություն. բացի ճկունությունից, համակարգը պետք է ունենա նաև փոփոխությունների ենթարկման հնարավորություն տվող կցվող սարքավորումներ (միջոցներ), որոնք կարող են անընդհատ հզորացվել:
- Պարզություն. համակարգը պետք է ունենա հեշտ ընկալվող և անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող ինտերֆեյս, և հաճախորդը պետք է կարողանա հեշտությամբ օգտվել ինտերնետ բանկինգի ծառայություններից: Բացի այդ, համակարգը պետք է պարզ լինի նաև այդ ծառայությունները մատուցողների համար:
- Արագ արձագանքման կապ. պետք է առկա լինի շուրջօրյա տեղեկատվական օգնության ծառայություն (helpdesk):

Այսպիսով՝ օնլայն, ինտերնետ և մոբայլ բանկինգի կիրառման լայն դաշտը ՀՀ բնակային համակարգում հնարավորություն կտա ընդլայնել բանկային նորամուծական ծառայությունների դաշտը: Օրինակ՝ «Ամերիա» խորհրդատվական ընկերությանն անցկացրած ուսումնասիրության համաձայն՝ Հայաստանում գործող 21 բանկերից միայն 2014թ.-ին միայն երեքը չունենին օնլայն-բանկինգի ծառայություն, որը

նախատեսված է ֆիզիկական անձանց համար: Միաժամանակ ընկերության կողմից երկրի 11 քաղաքներում կազմակերպված հարցումը ցույց է տվել, որ բանկերի հաճախորդների շրջանում օնլայն-բանկինգից օգտվողների մասնաբաժինը 2014թ.- ին կազմել է 2%՝ 2013 թ.-ին գրանցված 1,3%-ի համեմատ<sup>114</sup>: Իսկ դա արդեն իսկ ցուցանիշ է, որ առնվազն 97-98%-անոց հաճախորդների բազա կարող է ներառվել այս համակարգում, սակայն մյուս կողմից այնպես չէ, որ գործնականում կարելի է հաճախորդներին ամբողջությամբ ներառել այս համակարգում, քանի որ համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ օնլայն-բանկինգի ծառայությունների օգտագործման համաշխարհային ցուցանիշը կազմում է 28%, ընդ որում առավել ակտիվ են Հյուսիսային Ամերիկայի (48%) և Եվրոպայի (37,8%) օգտատերերը: Իսկ օնլայն-բանկինգի ամենաակտիվ օգտատերերը բնակվում են Իսլանդիայում (91%)<sup>115</sup>:

Իհարկե, այս ցուցանիշները ոգեշնչող են, սակայն ռիսկերը և տնտեսական աճի ցածր տեմպերը, ինչպես նաև նորամուծական տնտեսություն չունենալու գործոնները խոչընդոտ են հանդիսանալու ՀՀ-ում նման բանկային համակարգ ունենալու համար:

### **2.3. ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծություններին ներդրման հեռանկարների վերլուծությունը**

ՀՀ առևտրային բանկերի վերջին տարիների գործունեության արդյունքների վերլուծությունը, մեր կողմից, թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ բանկային համակարգի կարևոր տարր հանդիսացող առևտրային բանկերը դրսևորել են կայուն առաջընթաց, ապահովել են հիմնական ցուցանիշների բարձր աճ, և ամենակարևորը, որ հիմնական ցուցանիշների աճ ապահովել են գրեթե բոլոր առևտրային բանկերը: ՀՀ առևտրային բանկերի գործունեության զարգացման ներկա տեմպերն ու շարունակական ընդլայնումը ելակետ են հանդիսանում զարգացման կայուն միտումներ ապահովելու համար, չնայած առկա են նաև ոչ համաչափ և դրական զարգացումներ, որոնք կարող են ապագայում խոչընդոտ հանդիսանալ ՀՀ առևտրային բանկերի համար:

<sup>114</sup> [http://arka.am/am/news/analytics/ bank\\_tvajin\\_texnologia/](http://arka.am/am/news/analytics/ bank_tvajin_texnologia/) [Վերջին մուտք 10.10.2016թ.]:

<sup>115</sup> Global banking outlook 2015 Transforming banking for the next generation 2015 EYGM Limited, 40 p. <http://www.ey.com/Publication/vwLUAssets/EY-global-banking-outlook-2015-transforming-banking-for-the-next-generation/%24FILE/EY-global-banking-outlook-2015-transforming-banking-for-the-next-generation.pdf>

ՀՀ առևտրային բանկերն իրենց գործունեության ընդլայնման և զարգացման նպատակները և ուղղությունները ներկայացնում են իրենց հեռանկարային զարգացման ծրագրերով, որտեղ հիմնականում նպատակադրել են արդեն իսկ որդեգրած ռազմավարությունների շարունակում: Այդ մասին է վկայում նաև ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված «ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2016-2018թթ.-ի» ամփոփ զեկույցը, որտեղ ներկայացված են ՀՀ առևտրային բանկերի 2016-2018թթ. հեռանկարային զարգացման համադրված ծրագրերը<sup>116</sup>:

Առևտրային բանկերի նպատակների շարքում շարունակում են գերակշռել դեռևս նախորդ տարիներին նախանշված մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ դիրքերի պահպանում, ակտիվների աճ, վարկային ներդրումների աճ, ցածր ռիսկային վարկային պորտֆելի ապահովում, կապիտալի համալրում, պլաստիկ քարտերով գործառնությունների աճ, շահույթի աճ և այլն: Որպես վարկավորման առավել գրավիչ ոլորտ դիտարկելով հիփոթեքային և սպառողական վարկավորումը՝ առևտրային բանկերից շատերը նպատակադրել են այդ ոլորտներ ուղղվող միջոցների զգալի աճ ապահովել:

Առևտրային բանկերի գործունեության արդյունավետության բարձրացման և ընդլայնման համար առաջիկա տարիների ընթացքում կարևոր նշանակություն կունենա միջազգային ֆինանսական կազմակերպություններից միջոցների ներգրավումը և միջազգային վարկային ծրագրերում մասնակցությունը, որն առևտրային բանկերին հնարավորություն կտա ապահովել ընդունելի մակարդակի զուտ տոկոսային եկամուտ:

Ներկա պայմաններում բանկային համակարգում ձևավորվող մրցակցությունը բանկերին դրդում է այդ մրցակցությունը տեղափոխել որակական առավելությունների ոլորտ, որի արդյունքում առաջիկա տարիների համար բանկերն այնպիսի նպատակներ են առաջ քաշել, ինչպիսիք են՝ հաճախորդների սպասարկման որակի բարձրացումը, կադրերի որակավորման բարձրացումը և կադրային քաղաքականության կատարելագործումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործումը, բանկային ծառայությունների և գործիքների արդիականացումը ու ընդլայնումը, տեխնիկական

<sup>116</sup> ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2016-2018թթ., ըստ ՀՀ առևտրային բանկերի 2016-2018թթ. հեռանկարային զարգացման ծրագրերի, ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կայունության և զարգացման վարչություն, Ֆինանսական համակարգի կանխատեսումների քաժին, Երևան, 2016թ., 33 էջ:

[https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/BizPlaN2016\\_%20Final%20%20Public25.07.pdf](https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/BizPlaN2016_%20Final%20%20Public25.07.pdf):



հագեցվածության ու մասնաշենքային բարելավումը և այլն: Առևտրային բանկերը սկսել են առանձնակի ուշադրություն դարձնել կառավարման արդյունավետության և ռիսկերի կառավարման որակին, որի մասին վկայում են հեռանկարում բանկերի այնպիսի նպատակադրումները, ինչպիսիք են՝ ճկուն և արտաքին միջավայրի փոփոխություններին արագորեն արձագանքող արդյունավետ կառավարման համակարգերի ներդրումը, կորպորատիվ և ռազմավարական կառավարման սկզբունքների կատարելագործումը, Բազել 3-ի սկզբունքներին համապատասխան ներքին կանոնակարգումն ու բանկային ռիսկերի կառավարումը:

Իհարկե, համաշխարհային տնտեսության ինտեգրացվածության աստիճանի բարձրացման հետ մեկտեղ, իր կարևորագույն դերն է սկսում խաղալ նաև ֆինանսական ինտեգրվածությունը: Բանկային համակարգի ինտեգրվածությունը, ինչպես նաև ֆինանսական կապիտալի ազատ տեղաշարժն ու հոսքերը ենթադրում են նաև, որ ՀՀ բանկային համակարգում, ոչ միայն պետք է կարևորվի ներքին մրցակցային պայքարը, այլ դա պետք է տարածվի նաև տարածաշրջանային, հատկապես (ԵԱՏՄ և ԱՊՀ) շրջանակներում, այնպես էլ համաշխարհային մակարդակում: Չնայած հարկ ենք համարում նշել, որ Հայաստանը համաշխարհային կամ գլոբալ խաղացող չէ, իսկ դա նշանակում է, որ որպես փոքր բաց տնտեսություն, Հայաստանն իր վրա է կրում համաշխարհային ֆինանսական և բանկային համակարգում տեղի ունեցող ազդեցությունները:


Վերլուծելով ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների ներդրման հեռանկարները՝ նախ և առաջ պետք է նշել, որ դրանք հիմնվում են որոշակի ներքին և արտաքին տնտեսական զարգացումների վրա: Այսպես՝ ֆինանսական նորաստեղծությունների ներդրման արդյունքում առաջին հերթին ձգտում է շահեկան դիրքում հայտնվել հենց բանկային համակարգը, այսինքն՝ ապահովել որոշակի շահույթ, ընդլայնել իր վարկային և ավանդային պորտֆելները, մեծացնել ակտիվները և այլն: Այս համատեքստում՝ հնարավոր տարբերակներից է մնում է նաև այն, որ բանկային համակարգի աճը չի ուղեկցվում իրական ՀՆԱ-ի աճով, կամ առաջանում են էական տարբերություններ, իսկ դա փաստում է, որ ներդրված ֆինանսական նորաստեղծությունները ծառայում են ոչ թե իրական տնտեսության, այլ միայն բանկային

համակարգի զարգացմանը և ամենայն հավանականությամբ հեռանկարային զարգացումները նույնպես ունենալու են նմանատիպ ուղղվածություն:

Ներկայացված գծապատկեր 2.3.1.-ից նկատում ենք, որ ՀՀ բանկային համակարգի միջնորդության ծավալները 2003-2015թթ.-ի ընթացքում գրեթե եռապատկվել են:

Գծապատկեր 2.3.1

**ՀՀ բանկային համակարգի միջնորդության միտումները 2003-2015թթ.<sup>117</sup>**



**Աղբյուրը՝** ՀՀ կենտրոնական բանկ: <https://www.cba.am/AM/SitePages/statrealsector.aspx>.

Այսինքն՝ ստացվում է, որ միայն 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ընկած ժամանակահատվածում մեր բանկային համակարգն աճել է երկու անգամ ավելի արագ, քան ՀՆԱ-ն՝ իր ակտիվների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ հասցնելով 28-ից մինչև 68,5%: Գրեթե նմանատիպ պատկեր է տիրում նաև ավանդների և վարկերի մասով, իսկ դա նշանակում է, որ բանկային համակարգն ունի առավել մեծ ինքնուրույնություն և կոռելյացիան տնտեսության զարգացման հետ թույլ է արտահայտված:

Հաշվի առնելով վերոնշյալ միտումները՝ պետք է վերանայել բանկային համակարգի զարգացման մոդելը (դրա մասին մենք արդեն իսկ խոսել ենք ատենախոսության առաջին գլխի շրջանակներում) և բանկային համակարգի հետագա զարգացումն ուղղորդել դեպի տնտեսության զարգացմանը, այն է՝ տնտեսական աճի ապահովմանը: Այսինքն՝ ցանկացած նորաստեղծություն ֆինանսական համակարգում պետք է ուղղված լինի ոչ միայն բանկի շահութաբերության բարձրացմանը, այլ նաև

<sup>117</sup> Գծապատկերը կազմվել է մեր կողմից ՀՀ ԿԲ ինտերնետային կայքից վերցված առցանց տվյալների հիման վրա:

տնտեսության զարգացմանը: Սա կարելի է համարել սկզբունքային մոտեցում բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների ներդրման տեսանկյունից, քանի որ ֆինանսական նորաստեղծությունների կիրառման ժամանակ պետք է դրված լինեն երկու առաջնահերթ հարցեր, ինչ կտա դա բանկային համակարգին կամ բանկին, իսկ որպես երկրորդ հարց, ինչքանով է դա նպաստելու ՀՆԱ-ի աճին կամ տնտեսության զարգացմանը: Սակայն այստեղ հակասություն կա, քանի որ առևտրային բանկերից շատերին դա չի հետաքրքրում և վերջիններիս համար շահույթի և ՀՆԱ-ի միջև ընտրության խնդիր գոյություն չունի, այսինքն՝ այս խնդրի կարգավորման գործում առավել մեծ դերակատարում պետք է ունենա ՀՀ կենտրոնական բանկը, որի հիմնական խնդիրն էլ սահմանափակվում է գնաճի կարգավորմամբ: Սա ևս ստեղծում է մի իրավիճակ, երբ ՀՀ կենտրոնական բանկի գործառույթների մեջ ևս տնտեսական աճի կամ զարգացումն ապահովելու խնդիր դրված չէ:

Համաշխարհային պրակտիկայում բավականին լուրջ հետազոտություններ<sup>118</sup> կան, որոնք ցույց են տալիս բանկային համակարգի և ՀՆԱ-ի աճի միջև կոռելյացիոն կապը, ինչպես նաև ոչ համահունչ զարգացման հետևանքները: Իսկ Ասիական զարգացման բանկի մասնագետների կողմից անգամ փորձ է արվել կապ ստեղծել նաև մեկ այլ գործոնի հետ, այն է՝ աղքատության կրճատման, այսինքն՝ երեք տրամաբանական գործոններ կապակցվել են իրար հետ:

Հետաքրքիր հետազոտություններից է նաև Միջազգային հաշվարկների բանկի մասնագետների հետազոտությունը, որտեղ կարևոր նշանակություն է տրվում ֆինանսական համակարգի կառուցվածքի և աճի հիմնախնդիրներին<sup>119</sup>:

Այս մոտեցման յուրահատկությունը կայանում է նրանում, որ առողջ ֆինանսական համակարգ ունենալու պարագայում, որը նաև ենթադրում է կայունություն, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և ճիշտ տեղաբաշխում՝ տնտեսական աճը շատ ավելի մեծ հավանականություն կա, որ կլինի առաջանցիկ տեմպերով:


<sup>118</sup> Juzhong Zhuang, Herath Gunatilake, Yoko Niimi, Muhammad Ehsan Khan, Yi Jiang, Rana Hasan, Niny Khor, Anneli S. Lagman-Martin, Pamela Bracey, and Biao Huang, Financial Sector Development, Economic Growth, and Poverty Reduction: A Literature Review, No. 173 | October 2009, ADB Economics Working Paper Series, 46 p. <http://www.adb.org/sites/default/files/publication/28391/economics-wp173.pdf>

<sup>119</sup> Financial structure and growth, BIS Quarterly Review, March 2014, 15 p. [http://www.bis.org/publ/qtrpdf/r\\_qt1403e.pdf](http://www.bis.org/publ/qtrpdf/r_qt1403e.pdf)

Ստորև ներկայացված գծապատկեր 2.3.2-ից երևում է, որ Հայաստանը բանկային միջնորդության առումով ունի միջին դիրքեր, և որ առաջիկայում բանկային միջնորդությունների տեսակարար կշիռը կարող է աճել: Մնում է միայն հուսալ, որ դա կուղեկցվի նաև ՀՆԱ-ի աճով: 2.3.2 գծապատկերում բանկային միջնորդության կամ վարկեր/ՀՆԱ ցուցանիշով առաջատարը Թուրքիան է՝ 70.1%, իսկ հետնապահը՝ Տաջիկստանը՝ 19.9% ցուցանիշով:

Գծապատկեր 2.3.2

**ՀՀ, ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների բանկային միջնորդության համեմատականը 2015թ.-ին<sup>120</sup>**



**Աղբյուրը՝** Համաշխարհային բանկ: <http://databank.worldbank.org/data/reports.aspx?source=2&country=ARM>

Համաշխարհային ֆինանսական գրականության մեջ հանդիպում են մի շարք հեղինակներ, որոնք հետազոտություններ են արել ֆինանսական միջնորդությունների բնագավառում: Դրանցից հայտնի են Զ. Թոբինը<sup>121</sup>, Ա. Ալեքսիսը<sup>122</sup>, Բ. Բեռնանկեն<sup>123</sup>, Ա. Գրինսպենը, Զ. Ելենը, Տ. Գայտները, Գ. Պոլսոնը, Մ. Սպենսը<sup>124</sup>, Ս. Ֆիշերը<sup>125</sup> և

<sup>120</sup> Գծապատկերը կազմվել է մեր կողմից Համաշխարհային բանկի ինտերնետային կայքի առցանց տվյալների շտեմարանից վերցված վիճակագրական ցուցանիշների հիման վրա:

<sup>121</sup> Tobin J. (1969). "A General Equilibrium Approach to Monetary Theory". Journal of Money, Credit, and Banking. 1.1 (1), pp. 15–29. Tobin, James (1992). "money," The New Palgrave Dictionary of Finance and Money, v. 2, pp. 770–779

<sup>122</sup> Akerlof, George A. (1970). "The Market for 'Lemons': Quality Uncertainty and the Market Mechanism". Quarterly Journal of Economics. The MIT Press. 84 (3): pp. 488–500.

<sup>123</sup> Bernanke B., "Non-Monetary Effects of the Financial Crisis in the Propagation of the Great Depression", American Economic Review, 73 (June 1983), pp. 257–76.

<sup>124</sup> Spence M., The Next Convergence: The Future of Economic Growth in a Multispeed World. New York: Farrar, Straus and Giroux. May 2011.

<sup>125</sup> Fischer S., The Life of an Internationally Renowned Economist, Citigroup, August 13, 2004.

այլոք: Նշված հեղինակները, շատ դեպքերում ամերիկյան տնտեսության բազայի և ֆինանսատնտեսական համակարգի զարգացման մոտեցումներից ելնելով են ձևավորել իրենց հայացքները, զարգացրել են պահպանողական և կենտրոնացված ձևով ֆինանսական և բանկային համակարգի կառավարման տեսությունը՝ ազատ մրցակցության պայմաններում: Իհարկե, սրանք տեսաբաններ և միաժամանակ պրակտիկ մասնագետներ են, որոնց մշակած մոտեցումների և գաղափարների վրա է այժմ կառավարվում և վերահսկվում շատ երկրների ազգային, ինչպես նաև միջազգային կամ համաշխարհային ֆինանսական համակարգը:

Իհարկե, նշված հեղինակներից շատերն ունեն իրենց սեփական մոտեցումներն ամբողջ երկրի ֆինանսական և բանկային համակարգի ձևավորման, վերջինիս տնտեսության մեջ ունեցած զարգացման վերաբերյալ և այլն: Կարելի է նաև այդ մոտեցումներն ամբողջությամբ ներկայացնել որպես ֆինանսական միջնորդության ժամանակակից տեսությունների և մոդելների գաղափարական հիմքեր:


Ֆինանսական համակարգի զարգացման համաշխարհային փորձի ուսումնասիրությունը շատ կարևոր է դիտարկել առանձին երկրներում, որից կարելի է նաև դասեր քաղել Հայաստանի համար: Իհարկե, այստեղ մենք կբախվենք երեք հիմնական դասակարգումների հետ, այն է՝ երկրներ, որոնք ունեն պահպանողական ֆինանսական համակարգ<sup>126</sup>, երկրներ, որոնք ունեն անցումային համակարգ և ազատականացված կամ լիբերալ համակարգ: Այստեղ նաև ի հայտ է գալիս երկրի ֆինանսական նորաստեղծությունների կիրառության հակվածության հարցը, քանի որ, օրինակ՝ պահպանողական ֆինանսական համակարգ ունեցող երկրներն առավել հակված են կայունության և անգամ իրենց ֆինանսական զարգացածության բարձր մակարդակի պարագայում ոչ բոլոր նորամուծություններն են հեշտությամբ կիրառում, իսկ ազատական համակարգ ունեցողները հեշտությամբ վերցնում են այս կամ այն երկրների փորձը և նորամուծությունները՝ շատ դեպքերում սեփական ժողովրդին դնելով դժվարին ֆինանսական դրության մեջ, դա է վկայում նաև մի շարք անցումային երկրների անցած ուղին: Սա փաստում է նաև, որ ոչ բոլոր ֆինանսական նորաստեղծությունները կարող են ապահովել դրական զարգացումներ և արդյունք:

<sup>126</sup> The Origins of Bank-Based and Market-Based Financial Systems: Germany, Japan, and the United States. Discussion paper. January 2001, [https://www.wzb.eu/sites/default/files/u13/vitols\\_dp\\_i01-302.pdf](https://www.wzb.eu/sites/default/files/u13/vitols_dp_i01-302.pdf)

Ուսումնասիրելով նաև առանձին երկրների բանկային համակարգում առկա վարկերի կառուցվածքը նկատում ենք, որ ֆինանսական միջնորդության հետագա խորացման համար Հայաստանում խթան է լինելու երկարաժամկետ վարկերի ավելացումը, քանի որ ֆինանսական և բանկային համակարգի զարգացումն առանց երկարաժամկետ վարկավորման անհնար է պատկերացնել, իսկ ինչքան «կարճ» փողերի հետ են գործ ունենում վարկառուներն, այնքան դա խոսում է նաև վստահության պակասի մասին, մյուս կողմից կարճաժամկետ վարկավորման հաշվին խոշոր նախագծեր ֆինանսավորելը գրեթե անհնարին է դառնում, քանի որ խոշոր նախագծերն ունեն նաև ետգնման երկար ժամանակահատված, իսկ դա վերջիններիս ֆինանսավորումը դարձնում է անհնար՝ ստիպելով հրաժարվել նման նախաձեռնից:

Գծապատկեր 2.3.3

**ՀՀ առևտրային բանկերի ավանդներն ըստ ժամկետայնության 2007-2015թթ.<sup>127</sup>**



**Աղբյուրը՝** ՀՀ կենտրոնական բանկ: <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Հայաստանում 5 տարուց ավելի վարկերի տեսակարար կշիռը կազմում է մոտ 15%, իսկ եվրոպական երկրներում՝ 60-80%, դա նշանակում է, որ ֆինանսական նորաստեղծությունների մեծ մասը բանկային համակարգում պետք է ուղղել վարկային ընդհանուր պորտֆելի առողջացմանը և վերջինիս երկարաժամկետ բնույթ տալուն:


Իհարկե, վարկային պորտֆելի առողջացման համար անհրաժեշտ է ունենալ նաև երկարաժամկետ ավանդների պորտֆել, իսկ դրա բացակայությունը շատ դեպքերում զրկում է բանկային համակարգին «երկար» փողեր ունենալու հնարավորությունից: ՀՀ բանկային համակարգի ավանդներում գերակշռում են մինչև 1 տարի

<sup>127</sup> Գծապատկերը կազմվել է մեր կողմից ՀՀ ԿԲ ինտերնետային կայքից վերցված առցանց տվյալների հիման վրա:

ժամկետով ավանդները, իսկ 5 տարուց ավելի ավանդատուները շատ չնչին տեսակարար կշիռ են կազմում: Բանկերի համար այս տեսանկյունից կարող են առաջանալ իրացվելիության ռիսկեր, եթե վերջիններս փորձեն կարճաժամկետ ավանդները տեղաբաշխել երկարաժամկետ վարկային նախագծերում:

Գծապատկեր 2.3.4

ՀՀ առևտրային բանկերի վարկերն ըստ ժամկետայնության 2007-2015թթ.<sup>128</sup>



Աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ: <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Ուսումնասիրելով վարկերի ժամկետայնության կառուցվածքը նկատում ենք, որ վարկերում գերակշռում են 1 տարուց ավելի ժամկետով վարկերը, սակայն փաստը մնում է նաև այն, որ առևտրային բանկերը ստիպված են նաև կարճաժամկետ ավանդները տեղաբաշխել ավելի երկարաժամկետ վարկերում՝ իրենց վրա կրելով ավանդների և վարկերի ժամկետայնության տարբերության հաշվին առաջացող իրացվելիության ռիսկը:


Այսինքն՝ ցանկացած բանկի համար կարևորագույն խնդիր է մնում իրացվելիության նմանատիպ ռիսկերից խուսափելը, քանի որ համաշխարհային բանկային համակարգում ի հայտ եկող բանկային ճգնաժամերի մեծ մասը հենց նմանատիպ բնույթ կամ պատճառահետևանքային կապ ունեն:

<sup>128</sup> Գծապատկերը կազմվել է մեր կողմից ՀՀ ԿԲ ինտերնետային կայքից վերցված առցանց տվյալների հիման վրա:

Հայաստանում ֆինանսական ծառայությունների հասանելիությունը 2007-2015թթ. ընթացքում կտրուկ աճել է: Գրեթե 3 անգամ այս ծառայությունների առաջանցիկ աճը փաստում է ֆինանսական ներգրավվածության կարևորագույն խնդրի լուծման մասին:

Գծապատկեր 2.3.5

**Ֆինանսական ներգրավվածություն: Ֆինանսական ծառայությունների հասանելիության միտումները ՀՀ-ում, 2007-2015թթ.<sup>129</sup>**



**Աղբյուրը՝** ՀՀ կենտրոնական բանկ: <https://www.cba.am/am/SitePages/fscintroduction.aspx>

Իհարկե, ֆիզիկական անձանց բանկային հաշիվների քանակական կողմը կարևոր ցուցանիշ է, սակայն իր կարևորությամբ չի զիջում նաև դրանց օգտագործման հաճախականությունը: Այսինքն՝ այնպես ինչպես կարող են գոյություն ունենալ գրանցված, բայց չգործող ԱԶ-ներ կամ ՍՊԸ-ներ, այնպես էլ կարող են լինել առկա բանկային հաշիվներ:

Պետք է նշել, որ բանկային հաշիվներ ունենալու համար կատարվում են որոշակի տարեկան վճարումներ, իսկ դա նշանակում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից բանկային հաշիվները չօգտագործվելու պարագայում դրանք կսառեցվեն լրացուցիչ վճարումներ դրանց դիմաց չանելու համար:

Հայաստանում բանկերն ապահովում են նաև մասնաճյուղային լայն ցանց՝ 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ֆինանսական շուկայի մասնակիցներ են


<sup>129</sup> Գծապատկերը կազմվել է մեր կողմից ՀՀ ԿԲ ինտերնետային կայքից վերցված առցանց տվյալների հիման վրա:



եղել՝ 22 բանկեր, որից 21-ը՝ առևտրային՝ 521 մասնաճյուղերով, 1-ը՝ զարգացման (Համահայկական բանկ), իսկ դա դրական միտում է<sup>130</sup>: Այդ մասին են փաստում նաև ԱՄՀ տվյալները: 100000 բնակչի հաշվով բանկային մասնաճյուղերի առաջատար է Մոնտենեգրոն՝ մոտ 42, իսկ համեմատած քիչ կամ շատ չնչին մասնաճյուղեր ունի Ուկրաինան՝ մոտ 1: Հայաստանը 22 ցուցանիշով միջին դիրքերում է գտնվում, սակայն ակնհայտ է նաև, որ այս ցուցանիշն ապագայում աճի միտում կդրսևորի:

Գծապատկեր 2.3.6

**Ֆինանսական ներգրավվածություն: ՀՀ և աշխարհի մի շարք երկրների բանկերի մասնաճյուղերի քանակը 100.000 չափահաս բնակչի հաշվով 2015թ.<sup>131</sup>**



**Աղբյուրը՝** Համաշխարհային բանկ: <http://databank.worldbank.org/data/reports.aspx?source=2&Topic=7>

Ինչպես երևում է գծապատկեր 2.3.7-ից Հայաստանի բանկային համակարգի լրջագույն խնդիրներից է մնում ավանդների և վարկերի արտարժույթային կառուցվածքը: Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ առևտրային բանկերի ավանդներում գերակշռում են արտարժույթային ավանդները, ինչով էլ պայմանավորված է արտարժույթային վարկերի խոշոր մասնաբաժինը: Այսինքն՝ ստերիլիզացիայի գործընթաց տեղի չի ունենում, իսկ արտարժույթային ռիսկերն ամբողջությամբ դրվում են վարկառուների վրա: Այս միտումները շարունակվելու պարագայում ՀՀ բանկային համակարգում առաջանալու են լուրջ

<sup>130</sup> <https://www.cba.am/am/SitePages/statintroduction.aspx> [Վերջին մուտք 10.12.2016թ.]


<sup>131</sup> Գծապատկերը կազմվել է մեր կողմից Համաշխարհային բանկի ինտերնետային կայքից վերցված աղանց տվյալների հիման վրա:

արտարժույթային ռիսկեր, քանի որ աշխարհն այժմ գտնվում է նաև «արտարժույթային պատերազմի» փուլում<sup>132</sup>:

Գծապատկեր 2.3.7

**Վարկերի և ավանդների արժույթային կառուցվածքը ՀՀ-ում 2007-2015թթ.**<sup>133</sup>

մլրդ. դրամ



**Աղբյուր՝** ՀՀ կենտրոնական բանկ: <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Տնտեսության մեջ դրլարով կամ արտարժույթով տեղաբաշխված վարկերի վերադարձելիությունը բավականին դժվար է լինելու, քանի որ վարկառուների մեծ մասը նախընտրել է ցածր տոկոսադրույքով արտարժույթային վարկ վերցնել, այլ ոչ թե բարձր տոկոսադրույքով դրամով վարկ:

Սա ևս կարևորագույն հարցերից է, որը ծառացած է ՀՀ բանկային համակարգի առաջ: Եթե առաջիկա ժամանակահատվածում այս խնդրին չտրվի հստակ լուծում, այլ շարունակվի դրլարով վարկավորումը, ամենայն հավանականությամբ չվերադարձված վարկերի բեռը դնելով բարեխիղճ վարկառուների վրա՝ տոկոսադրույքների բարձրացումը լինելու է անխուսափելի:

Իհարկե, ՀՀ ԿԲ ձեռնարկել է ապադրլարայնացմանն ուղղված որոշ միջոցառումները<sup>134</sup>

<sup>132</sup> James Mackintosh (28 September 2010). "Currency War". The Financial Times. Retrieved 11 October 2010, <https://www.ft.com/>.

<sup>133</sup> Գծապատկերը կազմվել է մեր կողմից ՀՀ ԿԲ ինտերնետային կայքից վերցված առցանց տվյալների հիման վրա:


- ❑ արտարժութային վարկերի գծով 50%-ով բարձր ռիսկի կշիռներ,
- ❑ արտարժութային վարկերի գծով հնարավոր կորուստների պահուստի ձևավորման բարձր դրույքաչափեր:

Այս միջոցառումները բանկերի համար ավելացնում են կապիտալի ծախսը (cost of capital)<sup>134</sup>՝ արտարժութային վարկավորումը դարձնելով պակաս գրավիչ բանկային քիզնեսի տեսանկյունից:

- ❑ Դրամային/ներգրաված միջոցների գծով պարտադիր պահուստավորման դրույքի նվազեցում:
- ❑ Դրամային ավանդների երաշխավորման բարձր ծածկույթի սահմանում:

Գծապատկեր 2.3.8

Վարկի տոկոսադրույքի որոշիչ հիմնական բաղադրիչները ՀՀ-ում<sup>135</sup>



Այս միջոցառումները նվազեցնում են դրամային ավանդների էֆեկտիվ ծախսատարության դրույքները և դրամային ավանդները դարձնում են առավել գրավիչ ազգաբնակչության համար: Սակայն փաստը մնում է այն, որ 65-35% հարաբերակցությունն ի օգուտ արտարժութային վարկերի և ավանդների պահպանվում է, այսինքն՝ ՀՀ ԿԲ-ի կողմից ձեռնարկված քայլերը էական արդյունք չեն տվել, այսինքն՝ անհրաժեշտ է

<sup>134</sup> «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>.


<sup>135</sup> Գծապատկերը կազմվել է մեր կողմից ՀՀ ԿԲ ինտերնետային կայքից վերցված առցանց տվյալների հիման վրա:

դիմել ավելի կտրուկ քայլերի, այն է՝ միայն արտագնա զբոսաշրջային նպատակներով ծախսվող, ինչպես նաև ներմուծման հետ կապված գործարքները ֆինանսավորել դոլարով կամ արտարժույթով, իսկ ներքին բոլոր վարկերը տրամադրել միայն դրամով՝ դրանով իսկ դանդաղ անցում կատարելով ամբողջությամբ դրամային վարկերի:

Անդրադառնալով վարկի տոկոսադրույքի որոշիչ հիմնական բաղադրիչներին նկատում ենք, որ դրանց մեջ մեծ դեր ունեն ավանդի տոկոսադրույքը և վարկային ռիսկը:

Գծապատկեր 2.3.9

**ՀՀ սպառողական վարկերի տոկոսադրույքները և մասնաբաժինը վարկային պորտֆելում 2007-2015թթ.<sup>136</sup>**



**Աղբյուրը՝** ՀՀ կենտրոնական բանկ: <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Այսինքն՝ վարկավորման բարձր տոկոսադրույքի սխեմատիկ ձևավորումը ներկայացնելով ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում վարկերի եկամտաբերությունը հասնում է մոտ 13%-ի, իսկ սա բավականին բարձր է, քանի որ իր մեջ ներառում է չվերադարձվող վարկերից սկսած մինչև հարկային բեռը: Աշխարհում կան շատ էժան փողեր, դրանք ընդհուպ հասել են զրոյական և բացասական տոկոսադրույքների, և անգամ գոյություն ունի բացասական տոկոսադրույքների քաղաքականություն (Negative Interest Rate

<sup>136</sup> Գծապատկերը կազմվել է մեր կողմից ՀՀ ԿԲ ինտերնետային կայքից վերցված առցանց տվյալների հիման վրա:

Policy (NIRP)) տերմին<sup>137</sup>, սակայն ՀՀ բանկային համակարգն իր գործունեության համար ներգրավում է թանկ փողեր, քանի որ էժան փողեր ձեռք բերելու հնարավորությունները սահմանափակ են կամ գրեթե չկան: Մյուս կողմից չի բացառվում նաև, որ զարգացած երկրներից դրամական միջոցների հոսք նկատվի դեպի զարգացող երկրներ՝ այս միտումը փոխելու համար, սակայն վստահության գործոնը ևս մեծ դեր կխաղա այդ հարցում:

ՀՀ բանկային համակարգում սպառողական վարկերի մասնաբաժինը տատանվում է 21%-ի շրջանակներում, իսկ տոկոսադրույքները՝ 20%-ի շրջակայքում են: Սպառողական վարկերի հաշվին տնտեսություն զարգացնելը ՀՀ-ի համար խիստ մտահոգիչ է, քանի որ սպառողական վարկերի հաշվին հիմնականում ձեռք են բերվում ներմուծված ապրանքներ, այսինքն՝ սա ևս արտաքին պարտքի տեսակի է վերածվում, այն էլ բավականին բարձր տոկոսադրույքներով:

Կատարված վերլուծությունների հիմնական տրամաբանությունից ելնելով՝ ներկայացնենք նաև, թե ինչպիսի ֆինանսական նորաստեղծությունների ներդրման հեռանկարներ են հնարավոր ՀՀ առևտրային բանկերում.

- Անհրաժեշտ է հնարավորինս արագ կյանքի կոչել ժամանակակից հավելվածների միջոցով բանկերի մշտական հասանելիության ապահովման համակարգը՝ դրանով իսկ մուտք գործելով բանկային ժամանակակից ծառայությունների համակարգ:
- Հաճախորդների կառուցվածքային բազայի մոդելի կիրառման հիման վրա անհրաժեշտ է հաճախորդների առանձին խմբերի համար մշակել քարտային, ինչպես նաև ծառայությունների ժամանակակից համակարգեր:
- Անհրաժեշտ է նաև ընդլայնել տեղեկատվական գովազդի, ինչպես նաև նոր ծառայությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, որից հետո նորագույն բանկային տեխնոլոգիաների կիրառման միջոցով հաճախորդներին ուղղորդված առաջարկներ ներկայացնել:
- Բանկային համակարգում մատուցվող նորագույն ծառայությունների ցանկի ընդլայնումը պետք է հիմնվի հարստության կառավարման գործիքների վրա, քանի որ

<sup>137</sup> <http://www.investopedia.com/terms/n/negative-interest-rate-policy-nirp.asp> [Վերջին մուտք 17.12.2016թ.]:

հասարակության բևեռացման պայմաններում, ապագայում այս գործիքներն ավելի մեծ կիրառություն են ունենալու:

- Բանկային նորագույն ծառայությունների ցանկի ընդլայնումը պետք է հիմնվի նաև արտարժույթային ածանցյալ գործիքների (ֆորվարդ, օպցիոն, սվոփ) կիրառման և հեջավորման համակարգերի կատարելագործման վրա, քանի որ դոլարիզացիայի մակարդը նվազեցվող քայլեր գրեթե չեն արվում, իսկ ապագայում առանց նման գործիքների կիրառության բանկային համակարգում արտարժույթային ռիսկերն ավելանալու են:
- Առաջիկա տարիներին շատ մեծ տեղ է հարկավոր հատկացնել նաև հեռավար բանկային ծառայությունների տեսակարար կշռի ավելացմանը՝ խուսափելով նաև նորագույն տեխնոլոգիաների հետ կապված զեղծարարությունների վտանգից, քանի որ այս գործոնն է հիմնականում ազդում բանկերի հաճախորդների վարքագծի վրա:

Սրանք միտումներ ու փոփոխություններ են, որոնք առաջիկա տարիներին ազդելու են ՀՀ բանկային համակարգի և ամբողջ տնտեսության վրա, այս միտումները չհաղթահարելու պարագայում բանկային համակարգում կիրառվող ցանկացած նորաստեղծություն ծառայելու է ոչ թե տնտեսության զարգացմանը, այլ բանկերի շահութաբերության ավելացմանը, իսկ ինչպես ցույց է տալիս համաշխարհային պրակտիկան բանկային համակարգը տնտեսությունից անկախ զարգանալ չի կարող և անխուսափելի կլինեն բանկային ճգնաժամերը:

### ԳԼՈՒԽ III. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՈՐԱ- ՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

#### 3.1. ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների մշակման և ներդրման ուղիները

Յուրաքանչյուր ոլորտում արդյունավետ և ճիշտ քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար, բացի տեսական մոտեցումներից անհրաժեշտ են նաև էմպիրիկ մոտեցումներ: Նման հնարավորություն են ընձեռում սոցիոլոգիական հարցումները, որոնց կիրառության շնորհիվ ատենախոսության թեմայի շրջանակներում կարելի է նաև բացահայտել ֆինանսական նորաստեղծությունների ներդրման հնարավոր ուղիներն առևտրային բանկերում:

Փորձելով բացահայտել ՀՀ բանկային համակարգում մատուցվող ծառայություններից բավարարվածության և վերջիններիս վերաբերյալ տեղեկացվածության հարցերը՝ Երևան քաղաքում սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին անցկացվել է հարցում 200 քաղաքացիների շրջանակում: Հետազոտությունն իրականացվել է տեղեկատվության հավաքման քանակական մեթոդով (հարցաթերթիկային հարցման միջոցով)<sup>138</sup>: Ընտրանքի մեծությունը որոշել ենք հետևյալ բանաձևերի օգնությամբ.

$$ss = \frac{Z^2 p(1-p)}{e^2} ,$$

$$css = \frac{ss}{1 + \frac{ss-1}{pop}}^{139} ,$$

որտեղ  $ss$  - ը ընտրանքի ծավալն է,

$Z^2$  - ը վստահելիության աստիճանին համարժեք նորմալ բաշխման արժեքն է,

$p$  - ն հետաքրքրող պատասխանների տոկոսն է, արտահայտված գործակցով,

$e$  - ն վստահելիության միջակայքն է, արտահայտված գործակցով,

$css$  - ը ճշգրտված ընտրանքն է,

<sup>138</sup> Հարցաթերթիկները կազմվել են հայերեն լեզվով: Հարցման մասնակիցներն ունեին ինչպես ազատ պատասխանի, այնպես էլ պատասխանի հնարավոր տարբերակներից մեկն ընտրելու հնարավորություն: Հետազոտությունն իրականացվել է 2015թ.-ին: Հարցումն իրականացվել է էլեկտրոնային եղանակով:

<sup>139</sup> <http://socioline.ru/rv.php>

բօր - ը գլխավոր համակցությունն է:

Ընտրանքը կազմել է 200 մարդ (գլխավոր համախմբություն ընդունելով 2016թ. 18-ից բարձր ազգաբնակչության թիվը՝ 2271500 մարդ):


Հարկ ենք համարում նշել, որ համեմատական առումով գոյություն ունեն էական տարբերություններ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի բանակային ծառայություններից օգտվողների միջև: Առկա է նաև մատուցվող ֆինանսական ծառայություններից բավարարվածության, դրանց վերաբերյալ տեղեկացվածության հիմնախնդիրներ և այլն: Այդ իսկ պատճառով մեր կողմից արված հարցման արդյունքներով կստանանք ոչ թե ամբողջ հանրապետությունում առկա պատկերը, այլ միայն Երևան քաղաքինը:

Հարցման մասնակցածների տարիքային բաշխվածությունն ունեցել է հետևյալ պատկերը, այն է՝ 18-25 տարեկաններ՝ 74.7%, 26-35 տարեկաններ՝ 14.9%, իսկ 36-ից բարձր տարիքային խումբը կազմել է մոտ 10%:

Այս տվյալներն, իհարկե, Երևան քաղաքի բնակչության տարիքային կառուցվածքի փոքր ընտրանքը իրենից չեն ներկայացնում, սակայն բավականին հետաքրքիր են այնքանով, որքանով որ բանակային ծառայություններից օգտվողների հիմնական տեսակարար կշռը կազմում են հենց երիտասարդները:

*Գծապատկեր 3.1.1*

**Նշեք խնդրեմ ձեր տարիքը (194 հարցվող)**




Հարցման միջոցով, նախ և առաջ, փորձել ենք բացահայտել բանակային ծառայություններից օգտվելու հաճախականության հարցը: 198 հարցվողներից մոտ կեսը՝ 49%-ը հաճախ օգտվում է բանակային ծառայություններից, մոտ 20%-ը՝ ամիսը մեկ անգամ, իսկ ոչ հաճախ օգտվողները կազմում են մոտ 30%: Հարցման այս արդյունքներից



կարելի է ենթադրել նաև, որ բանակային ծառայությունները շատերի առօրյա կյանքի բաղադրիչը չեն, այսինքն՝ սկսած օնլայն բանկինգից օգտվելուց, ավարտած առանձին անկանխիկ գործարքներից Երևանում դեռևս նման մշակույթը զարգացման լուրջ ներուժ ունի, քանի որ հնարավորությունները դեռևս օգտագործված չեն:

Գծապատկեր 3.1.2

### Որքան հաճախ եք օգտվում բանկային ծառայություններից (198 հարցվող)




Հաջորդ հարցով փորձել ենք հասկանալ, թե բանկային ծառայությունների, որ տեսակից են ամենաշատն օգտվում հարցվողները: Հետաքրքիր փաստեր են արձանագրվել, քանի որ հարցվողների մոտ 60%-ը օգտվում է հիմնականում փոխանցումներից: Չի բացառվում նաև, որ հարցվողների այս խմբում են կենտրոնացած նաև արտերկրից փոխանցման տարբեր համակարգով տրանսֆերտներ ստացողները: Մոտ 22% տոկոս են կազմում վարկերից օգտվողները, որը կարելի է համարել ոչ այնքան մեծ ցուցանիշ և մյուս կողմից կարելի է եզրակացնել, որ հարցվողների մի ստվար զանգված վարկեր չունի, հակառակ պարագայում վարկերի ամենամսյա վճարումների համար վերջիններս պետք է որ գործ ունենային բանկերի հետ:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ 13.8%-ը հարցվողների ունեն ավանդներ, իսկ դա փաստում է այն մասին, որ Երևանի բնակչության մեջ խնայողություններ ունեցողների տեսակարար կշիռը քիչ չէ: Այսինքն՝ այս մարդիկ իրենց ծախսերը հոգալուց հետո կարողանում են կուտակել գումարներ և ավանդների միջոցով ստանան լրացուցիչ տոկոսային եկամուտներ: Այլ բանկային ծառայությունների տեսակարար կշիռը բավականին փոքր է և չի գերազանցում 5%-ը, որից կարելի է եզրակացնել, որ բանկային համակարգը ծառայությունների բազմազանության պարագայում անգամ

դրանց լայն մասսայականությունն ապահովելու խնդիր կունենա: Մյուս կողմից կարելի է նաև եզրակացնել, որ նորամուծական կամ ինովացիոն բանկային ծառայություններ ցանկալի է առաջարկել առաջին հերթին փոխանցումների, այնուհետև վարկերի, իսկ 3-րդ հարթությունում ավանդների հետ կապված, և դրանով իսկ ծածկելով բանկային ծառայությունների մոտ 95%-ը, քանի որ այլ ծառայությունները մեծ մասսայականություն չեն վայելում:

Գծապատկեր 3.1.3

### Հատկապես, որ բանկային ծառայություններից եք օգտվում (181 հարցվող)



Բանկային ծառայությունների վերաբերյալ տեղեկացվածության հարցման շրջանակներում տրվել է՝ «Լսել եք արդյո՞ք բանկային ժամանակակից ծառայություններ տերմինը» հարցը: Այս հարցի արդյունքներից պարզ է դառել, որ հարցվողների միայն 62.1%-ն է տեղյակ դրա մասին, իսկ մոտ 38%-ը դրա մասին պատկերացումներ չունի: Այսինքն՝ ստացվում է այնպես, որ տեղեկատվության մատուցման, վերջին հասցեատերերին հասցնելու լուրջ բաց է առկա, իսկ սա փաստում է նաև ֆինանսական գրագիտության<sup>140</sup> խնդիրների մասին: Աշխարհում առկա են հետազոտություններ, որոնք համեմատության առանցք են անցկացնում ֆինանսական գրագիտության վերաբերյալ, որն, իհարկե, միայն բանկային հատվածով չի սահմանափակվում: Իսկ OECD-ի կողմից նաև ներկայացվում են նաև ֆինանսական կրթվածության և գրագիտության չափման ցուցանիշները<sup>141</sup>: Օրինակ՝ աշխարհում ֆինանսական գրագիտության չափման կամ բնակչության մեջ ֆինանսապես գրագետների տեսակարար կշռով Հայաստանն այն-


<sup>140</sup> <http://www.investopedia.com/terms/f/financial-literacy.asp> [Վերջին մուտք 10.12.2016թ.]:

<sup>141</sup> 2015 OECD/INFE toolkit for measuring financial literacy and financial inclusion.  
<http://www.oecd.org/finance/financial-education/measuringfinancialliteracy.htm>

քան էլ լավ դիրքեր չունի, քանի որ 18% բնակչությունն է ֆինանսապես գրագետ, իսկ օրինակ՝ Իսրայելում՝ 67%-ը<sup>142</sup>։ Այս հանգամանքը կարող է բավականին լուրջ վնաս հասցնել նաև ՀՀ-ում նորամուծական բանկային ծառայություններ մշակելու գործընթացին, այսինքն՝ հասարակությունն իր կրթվածության չափանիշներից ելնելով է նաև պահանջներ ներկայացնում առավել կատարելագործված ծառայություններ ունենալու համար, սակայն փաստը մնում է այն, որ բանկերը ծառայությունների նոր տեսակներ առաջարկելու պահանջ ներքևից, այն է՝ սպառողից դժվար թե ստանան՝ բացառությամբ որոշ դեպքերի։ Իսկ դա իր հերթին կարող է նաև բացասական ազդել բանկերի զարգացման և միջազգային բանկային ծառայությունների համակարգին ինտեգրվելու տեսանկյունից։

Գծապատկեր 3.1.4

**Լսել եք արդյո՞ք բանկային ժամանակակից ծառայություններ տերմինը  
(198 հարցվող)**




Հաջորդ հարցով փորձել ենք հասկանալ, թե արդյոք հարցվողները տեղյակ են բանկոմատների միջոցով կատարվող ծառայություններից, որի արդյունքները բավականին լավն են, այսինքն՝ մոտ 95%, իսկ չտեղեկացվածները՝ ընդամենը 5%։ Այստեղ, իհարկե, կասկածի տակ չդնելով հարցման արդյունքները կարող էինք տալ նաև ճշգրտող հարցեր, օրինակ՝ կարող է արդյոք բանկոմատից օգտվողը ստանալ տեղեկատվություն իր կուտակային հաշվեհամարին կատարված փոխանցումների վերաբեր-

<sup>142</sup> Financial Literacy Around the World: Leora Klapper, World Bank Development Research Group, Annamaria Lusardi, The George Washington University School of Business Peter van Oudheusden, World Bank Development Research Group, 28p. [http://gflec.org/wp-content/uploads/2015/11/Finlit\\_paper\\_16\\_F2\\_singles.pdf](http://gflec.org/wp-content/uploads/2015/11/Finlit_paper_16_F2_singles.pdf)  
<https://www.spglobal.com/corporate-responsibility/global-financial-literacy-survey>


յալ կամ տեղեկատվություն հանել քարտի վրա առկա մնացորդային գումարի վերաբերյալ և այլն: Դեռ ավելին գործնական հարթությունում կամ հենց բանկոմատի մոտ օգտվելով ծառայություններից արդյո՞ք հարցվողների դրական պատասխանաձևերի 95%-ին կհաջողվեր կատարել վճարումներ բանկոմատի միջոցով, թե ոչ: Այսինքն՝ այստեղ ամենայն հավանականությամբ մի քանի ծառայություններից օգտվելու փաստը հիմք է ընդունվել, որպես բանկոմատների միջոցով կատարվող ծառայություններից օգտվելու տեղեկացվածության հանգամանք:

*Գծապատկեր 3.1.5*


**Տեղյակ եք բանկոմատների միջոցով կատարվող ծառայություններից  
(197 հարցվող)**



Մեր հաջորդ հարցից պարզ է դառնում, որ Երևանում բանկային վճարումներ անկանխիկ եղանակով կատարողների տեսակարար կշիռը կազմում է մոտ 70%, իսկ չկատարածներին՝ 30%, այս փաստը, իհարկե, պետք է կապել նաև հաճախականության հետ, քանի որ նման ճշգրտող հարցի միջոցով կարելի էր հասկանալ, թե անկանխիկ գործարքների աճելու ներուժն ինչքան է: Իրականում, անկանխիկ գործարքներին վստահելու խնդիրը դեռևս գոյություն ունի, որի հետ կապված անհրաժեշտ է լուրջ աշխատանք տանել:

**Կատարել եք բանկային վճարումներ անկանխիկ եղանակով (196 հարցվող)**

Հարցման արդյունքները գրեթե նմանատիպ արդյունքներ են ցույց տալիս բանկի կողմից մատուցվող օնլայն ծառայությունների հարցի պարագայում: Իհարկե, այս ծառայությունները հնարավորություն են տալիս դրանցից օգտվել օրվա ցանկացած ժամի, ինչպես նաև առանց բանկ հասնելու կամ ինչպես ընդունված է ասել առանց «մաշված կոշիկների»<sup>143</sup> ծախսերի: Շատերի համար վերջինս խնայում է նաև ժամանակ, ինչպես նաև հնարավորություն է տալիս խուսափել հերթերի անհարմարություններից: Իսկ հաշվի առնելով առանձին գործարարների կողմից իրենց բիզնեսն արդյունավետ կազմելու հանգամանքը, այս մեխանիզմը պարզապես լայն հնարավորությունների դաշտ է բացում:

**Երբևէ հետաքրքրվել եք բանկի կողմից մատուցվող օնլայն ծառայություններով (197 հարցվող)**

Իհարկե, մենք փորձել ենք բացահայտել հետաքրքրվողների տեսակարար կշիռը, սակայն կարևոր է նաև հետաքրքրվածությունից բացի դրանցից օգտվողների տեսակարար կշիռը, բայց ենթադրվում է նաև, որ հետաքրքրությունը և հարմարա-

<sup>143</sup> Մենքյու Գ., Մակրոէկոնոմիկա, Երևան, «Տնտեսագետ», 1996 թ., էջ 348:


վետությունն ամենայն հավանականությամբ հետաքրքրվողներին կվերաձեն նաև օնլայն կամ առցանց ծառայությունից օգտվողների:

Ունեք արդյո՞ք պլաստիկ քարտ հարցից ակնհայտ է դառնում, որ շատ են նաև մարդիկ, որոնք ունեն մեկից ավելի քարտեր, քանի որ 193 հարցվողներից քարտ չունեն միայն 10.4%-ը, իսկ մնացած մոտ 90%-ն ունեն, այն էլ մեկից ավելի: Գերակշռում են հիմնականում Master և Visa քարտերը, որոնք կազմում են 45.6% և 53.9% համապատասխանաբար, իսկ Arca քարտ ունեցողները մոտ 19.7% են, և քանի որ հանրագումարը տեսակարար կշիռների առումով գերազանցում է 100%-ը դա նշանակում է, որ կան մարդիկ, ովքեր ունեն մեկից ավելի քարտեր: Նշենք նաև, որ շատ չնչին տեսակարար կշիռ են կազմել Ամերիկյան էքսպրես տիպի քարտերը՝ 3.6%:

Աշխարհում այժմ ընթանում է մի գործընթաց, որով փորձում են մշակել քարտերի նույնականացման մեխանիզմներ, դեռ ավելին փորձում են ստեղծել նաև այնպիսի քարտեր, որոնք մեկ չիպի վրա կկենտրոնացնեն առանձին բանկային քարտերի վրա առկա տեղեկատվությունը:

*Գծապատկեր 3.1.8*

**Ունեք արդյո՞ք պլաստիկ քարտ (193 հարցվող)**




Սրանք, իհարկե, զարգացման հեռանկարային սխեմաներ են, որոնց հետ կապված առկա են մի շարք հարցեր և ռիսկեր, սկսած բանկոմատների պահումներից, մինչև բանկոմատային ցանցերի նույնականացումը և այլն: Սակայն կյանքի դյուրինացման, ինչպես նաև բազմաթիվ քարտեր չունենալու, բոլորի կողերը հիշելու տեսանկյունից այս նախաձեռնությունը կարող է լինել բավականին օգտակար, հատկապես, սպառողի տեսանկյունից:

Հաջորդ հարցը հետաքրքիր է այնքանով, որքանով որ պատկերացում է տալիս բանկային ծառայություններից օգտվողի իր սեփական միջոցների օգտագործման ուշադրության վերաբերյալ: Հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ բանկոմատից օգտվողների մոտ 14%-ը չի էլ նայում արդյո՞ք պահվեց վերջինիցս որոշակի գումար թե ոչ, դա նշանակում է կա՛մ որ նախօրոք գիտեն, որ պահումներն ինչքան են կազմելու կամ բացակայում են, կա՛մ վերջիններիս դա չի հետաքրքրում, քանի որ չնչին գումար է կազմում և այլն: Ինչ վերաբերում է մյուս խմբին, ովքեր ուշադիր հետևում են պահվող գումարների չափերին, ապա ամենայն հավանականությամբ վերջիններս կընտրեն նաև այնպիսի բանկեր, քարտեր կամ ծառայություններ, որոնց դեպքում պահումները նվազագույն են կամ բացակայում են:

Մեր հաջորդ հարցով փորձել ենք հասկանալ արդյո՞ք բանկի հաճախորդը փորձել է փոխել սպասարկող բանկը սահմանափակ օնլայն ծառայություններ ունենալու պատճառով:


### Գծապատկեր 3.1.9

#### Երբևէ հետաքրքրվել եք բանկոմատից օգտվելու պարագայում ինչքան գումար կգանձվի (196 հարցվող)



Այսինքն՝ այստեղ ունենք մեկ խնդիր հասկանալու, այն է՝ եթե օնլայն ծառայությունների տեսականին բավարարել է հաճախորդին վերջինս չի փորձել փոխել բանկը, իսկ հակառակ պարագայում գուցե նման փորձ է արել: Սակայն այդպիսի նեղ մասնագիտական ծառայություններից օգտվողների, ինչպես նաև դրանց չնչին լինելու արդյունքում բանկ փոխած մարդկանց տեսակարար կշիռը չի գերազանցում հարցվողների՝ 9.2%-ը:

**Երբևէ փոխել եք Ձեզ սպասարկող բանկը սահմանափակ օնլայն ծառայություններ ունենալու համար (195 հարցվող)**



Մի հանգամանք, որից կարելի է եզրակացնել, որ բանկերը հիմնականում կարողանում են բավարարել օնլայն ծառայություններից օգտվողների պահանջները, իսկ դա արդեն իսկ դրական է:

Իհարկե, բանկային ծառայությունների ուսումնասիրության դաշտն այս հարցման միջոցով ամբողջությամբ բացահայտել դժվար թե հաջողվեր, սակայն հիմնական միտումների, հարցման առանձին արդյունքներից ելնելով եզրակացությունների տեսանկյունից պատկերը բավականին հետաքրքիր են:

Հարկավոր է մտածել կոնկրետ բանկային համակարգի զարգացման, ինչպես նաև ծառայությունների ընդլայնման տեսանկյունից այս դաշտի հնարավորությունները մեծացնելու մասին: Սակայն մոտ 32 տոկոս աղքատություն ունեցող, ցածր ֆինանսական գրագիտություն ունեցող երկրի բանկային համակարգի զարգացման հնարավորությունները սահմանափակվում են օբյեկտիվ և զուտ շուկայի չափերի գործոնից ելնելով: Հետևաբար, նաև անհրաժեշտ է հաճախորդների բազան ավելացնելու համար լուրջ աշխատանք տանել, որի արդյունքում բանկային համակարգում մատուցվող ծառայությունների դաշտում կարող են զարգացման և կատարելագործման, ինչպես նաև նորամուծական բանկային ծառայությունների մատուցման հորիզոններ բացվել:

ՀՀ բանկային համակարգի ծառայություններից օգտվողների շրջանակում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքներից ելնելով կարելի է նախանշել ֆինանսական նորաստեղծությունների մշակման և ներդրման հետևյալ ուղիները.

- Յուրաքանչյուր ֆինանսական նորաստեղծության մշակում պետք է անցնի լուրջ գիտահետազոտական փուլ, որի համար բանկերը պետք է նախատեսեն որոշակի գիտահետազոտական և հարցումների վրա կատարվող ծախսեր: Այս ոլորտում



անգամ որպես այդպիսին վիճակագրություն էլ չկա, որպեսզի հնարավոր լինի վերլուծել, թե ֆինանսական նորաստեղծությունների վրա ծախսված միջոցները ինչքանով են նպաստել ՀՀ բանկերի շահութաբերության ավելացմանը:

- Ֆինանսական նորաստեղծությունների մշակման հիմքում պետք է դրվեն ոչ թե միակողմանի, այն է՝ բանկի շահերը, այլ դրանք պետք է բխեն նաև վերջիններս սպառողների շահերից: Դեռ ավելին, երբեմն մենք նկատում ենք, որ մի շարք ոչ պրոֆիլային ծառայություններ (ապահովագրություն և այլն) կենտրոնանում են բանկերում՝ դրանով իսկ ազդելով նաև առանձին մասնավոր ընկերությունների կամ ԱԶ-ների գործունեության վրա: Այսինքն՝ բանկին յուրահատուկ գործառույթների արդյունքում շահույթ չապահովելու արդյունքում վերջինս մտնում է նաև գործարարության այլ ոլորտներ:
- Ֆինանսական նորաստեղծությունների մշակման փուլին պետք է հաջորդի նաև դրանց կիրառելիությունը «դաշտային փուլ», այսինքն՝ ինչքանով դա կարող է ստանալ կիրառություն հաճախորդների առանձին խմբերի մոտ՝ սկսած VIP հաճախորդներից մինչև մասսայական ծառայությունների օգտվողները:
- Անհրաժեշտ է նաև ստուգել ներդրվող ֆինանսական նորաստեղծությունների ռիսկերը, ինչպես նաև հաճախորդների ֆինանսական գրագիտության հետ դրանց համատեղելիության հարցը, քանի որ շատ մեծ է նաև հավանականությունը, որ ֆինանսական նորաստեղծությունների բարդության պատճառով դրանք կարող են դուրս մնալ հաճախորդների լայն շրջանակի ուշադրությունից:
- ՀՀ բանկերի զարգացման և միջազգային բանկային ծառայությունների համակարգին ինտեգրվելու տեսանկյունից լուրջ խոչընդոտ է հանդիսանում նաև ֆինանսական գրագիտության ցածր մակարդակը ՀՀ բնակչության շրջանակում, իսկ դա նշանակում է, որ ֆինանսական նորաստեղծությունները մշակվելու պարագայում անգամ իրացման խնդիր են ունենալու: Այսինքն՝ բանկային համակարգի զարգացման հեռանկարը նաև կապվում է ֆինանսական գրագիտության բարձրացման հետ, որով պետք է զբաղվեն ՀՀ ԿԲ-ն, առևտրային բանկերը, ինչպես նաև ԲՈՒՀ-երն ու ԶԼՄ-ները, սակայն պարզ է նաև, որ դա հսկայական ծախսերի հետ է կապված: Այսինքն՝ հաճախորդների ֆինանսական գրագիտության բարձրացումը

նաև խթան կարող է հանդիսանալ ֆինանսական նորաստեղծությունների, հատկապես, արտարժույթային ածանցյալների (դերիվատիվների) մշակման ընդլայնման համար: Ի դեպ, արտարժույթային ածանցյալների (դերիվատիվների) վերաբերյալ ՀՀ ԿԲ-ի կողմից արված նախաձեռնությունները ակնհայտ է, որ ոչ լիարժեք են ընկալվում անգամ ՀՀ ԱԺ-ում:

- Բանկային ֆինանսական նորաստեղծությունների մշակման ժամանակ առանցքային հարցերից պետք է լինի նաև ոչ միայն դրանցից օգտվելու մասսայականության, այլ նաև հաճախականության հարցը, քանի որ բանկային ծառայություններից օգտվելու հարմարավետությունը կարող է նաև ստիպել, որպեսզի դրանցից ավելի հաճախ օգտվեն:
- Բանկային ֆինանսական նորաստեղծություններն անհրաժեշտ է մշակել և ներդնել, հատկապես, փոխանցումների բնագավառում, առաջին հերթին պետք է մեծ ուշադրություն դարձնել փոխանցումների աշխարհագրությանը, որի մասին կարող է նաև տեղեկատվություն տալ ոչ միայն կոնկրետ բանկում արվող փոխանցումների աշխարհագրությունը, այլ նաև ամբողջ Հայաստանի մակարդակով կատարվող փոխանցումները: Այսինքն՝ որ երկրների համար ենք մենք գործընկեր հանդիսանում և հակառակը: Իհարկե, մեկ բանկի շրջանակներում մշակվող ֆինանսական նորաստեղծությունները փոխանցումների բնագավառում պետք է ունենան առաջարկվող պայմանների բարելավում, այն է՝ ավելի ձեռնտու փոխարժեքով արտարժույթի փոխարկում, փոխանցման ցածր տոկոսային պահումներ կամ վճարներ, արտարժույթային փոխանցումների ընդլայնված պորտֆել, աշխարհագրություն և լայն: Այսինքն՝ յուրաքանչյուր գործիք մանրամասն մշակման կարիք ունի՝ հաշվի առնելով նաև ՀՀ ԿԲ կանոնակարգումները:
- Առաջարկվող վարկային և ավանդային ծառայությունների դեպքում դրանք պետք է դասակարգել ռեզիդենտության, ըստ արժույթների, ժամկետայնության, ռիսկայնության և այլ գործոններից ելնելով, որոնք բանկերը բնականաբար իրականացնում են: Սակայն գլխավոր խնդիրներից մեկն այն է, որ այս ծառայությունները մշակելիս բանկերը մեծամասամբ հանդես են գալիս ոչ թե ռիսկը կիսողի այլ ռիսկն ամբողջությամբ սպառողի վրա դնելու մոտեցումից ելնելով: Միայն այս կետում փոքր-ինչ

հավասարակշռություն ապահովելու պարագայում կարելի է մեծ թվով ֆինանսական նորաստեղծություններ մշակել, որոնք մեծ մասսայականություն կարող են ստանալ:

- Փոխանցումներից, վարկերից և ավանդներից բացի այլ ծառայությունների մասով ֆինանսական նորաստեղծություններ կարելի է մշակել միայն VIP հաճախորդների համար, քանի որ դրանք ՀՀ-ում լայն շրջանակ չեն ընդգրկում և դրանք մշակելու ու ներդնելու վրա կատարված ծախսերը կարող են միայն արդարացվել VIP հաճախորդների համար նախատեսված լինելու դեպքում:
- Բանկային նորամուծական ծառայություններից օգտվողների շրջանակներն ընդլայնելու համար անհրաժեշտ է իրականացնել նաև որոշակի դասընթացներ: Մեր հարցումները ցույց են տալիս, որ բանկոմատից օգտվողները պատկերացումներ ունեն տարբեր ծառայությունների վերաբերյալ, սակայն տարիքային խմբի փոփոխությունը կարող է փոխել հարցումների արդյունքները, իսկ դա նշանակում է, որ, հատկապես, տարեցների համար անհրաժեշտ է կազմակերպել դասընթացներ, որպեսզի վերջիններս ինտեգրվեն բանկային ծառայությունների լայն շրջանակից օգտվող հաճախորդների խմբերին:

ՀՀ բանկային համակարգի զարգացման միտումներն ու հիմնախնդիրներն անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն տեսական հարցադրումների, այլ նաև սոցիոլոգիական հարցումների միջոցով՝ փորձելով բացահայտել վերջինիս զարգացման հեռանկարներն ու ներուժը: Սակայն փաստը մնում է այն, որ վերոնշյալ հիմնախնդիրներին հարկավոր է գտնել արդյունավետ և նորամուծական լուծումներ՝ բարձրացնելով բնակչության ֆինանսական գրագիտությունը, ինչպես նաև կիրառելով այնպիսի նորամուծական ծառայություններ, որոնք առավելագույնի կհասցնեն բանկային ծառայություններից (այդ թվում՝ առցանց ծառայություններից) օգտվողների բավարարվածությունը:

### **3.2. ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների արդյունավետության գնահատումը**

Բանկային համակարգի զարգացումն ինքնանպատակ չէ. այն պետք է միտված լինի կոնկրետ խնդիրների լուծմանը, որոնց շարքում հատուկ կարևորություն ունի բանկերի հաճախորդների սպասարկման գործընթացի արդյունավետության բարձրացում: Ըստ այդմ, բանկային համակարգի զարգացման ռազմավարության համակարգի յուրաքանչյուր բաղադրիչ պետք է դիտարկվի ու գնահատվի հենց այս տեսանկյունից: Արդ, բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների ներդրման ու գործարկման արդյունավետության գնահատման հիմքում պետք է դրվի այնպիսի չափանիշների կիրառումը, որոնք հնարավորություն կտան բնութագրել հաճախորդների սպասարկման գործընթացի արդյունավետությունը, մասնավորապես՝ ֆինանսական ծառայությունների որակն ու հաճախորդների բավարարվածության մակարդակը: Ատենախոսության սույն ենթագլխում մեր կողմից արվել է նմանօրինակ հետազոտություն: Մասնավորապես, ՀՀ բանկերի հաճախորդների շրջանում արված սոցիոլոգիական հարցման տվյալների հիման վրա, վիճակագրական տարբեր մեթոդների գործադրմամբ, իրականացվել է բանկերի կողմից մատուցվող ծառայություններից հաճախորդների բավարարվածության, դրա վրա ազդող գործոնների համալիր վերլուծություն<sup>144</sup>:

Ընդհանրապես, վերջին տարիներին համաշխարհային տնտեսության մեջ բավականին լայն տարածում է ստացել շարժական բանկային ծառայությունների մատուցումը, ընդ որում՝ բանկերի կողմից նորարարական տեխնոլոգիաների լայն կիրառությամբ:

Զարգացող երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բանկի հաճախորդը, հատկապես՝ նորամուծական ու շարժական ծառայություններից օգտվելիս անվտանգության հետ կապված մտահոգություններ է ունենում: Ուստի ակնհայտ է, որ բանկերը պետք է իրենց ուշադրությունը կենտրոնացնեն առանձին SS հավելվածների, նորարարական ծառայությունների, անվտանգության, ինչպես նաև հաճախորդների

<sup>144</sup> Կիրակոսյան Ա., «Բանկային ծառայություններից բավարարվածության և տեղեկացվածության հիմնահարցերը ՀՀ-ում», Բանբեր N 4, Երևան 2016, էջեր 104-112:

վստահության մակարդակի բարձրացման և ռիսկերի կրճատման վրա, ինչն, իր հերթին, նորարարական ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման բնագավառում առանցքային նշանակություն ունի:

Գործունեության շահութաբերության ավելացման, շուկայական մասնաբաժնի մեծացման հրամայականը ներկայումս բանկերին և ֆինանսական այլ կազմակերպություններին հարկադրում է, ի թիվս այլ քայլերի, ավանդական բանկային համակարգից անցում կատարել առանց մասնաճյուղերի բանկային ռեժիմի: Իհարկե, Հայաստանի պարագայում այն դժվար է պատկերացնել, քանի որ Հայաստանում տեղի է ունենում առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցի ընդլայնում, իսկ աշխարհում նախընտրում են մասնաճյուղերի վերացման (branchless mode<sup>145</sup>) աշխատառճ որդեգրել, ինչը ենթադրում է առավել զարգացած տեղեկատվական համակարգերի, սերվերային տնտեսությունների ձևավորում:

Ժամանակակից SS տեխնոլոգիաները, և առաջին հերթին՝ էլեկտրոնային բանկային ծառայությունները բանկերին հնարավորություն են տալիս ընդլայնել իրենց հաճախորդների բազան: Էլեկտրոնային բանկինգը հաճախորդներին հնարավորություն է տալիս անլար կապուղիներով մուտք գործել բանկային հաշիվներ, բջջային բանկային ֆինանսական ծառայությունների միջոցով կատարել հաշվեկշռի ստուգումներ, վարկային փոխանցումներ, բիզնեսի համար նախատեսված գործարքներ: Ակնհայտ է, որ հաճախորդներից տեսանկյունից բջջային ու այլ շարժական ֆինանսաբանկային ծառայությունները չափազանց հարմարավետ են, իսկ խնդիրներին էլ մեծամասամբ առնչվում են գործարքների անվտանգության հետ:

Հայաստանում հեռահաղորդակցության ոլորտը դինամիկ աճող և զարգացող ոլորտներից է, քանի որ գործող բջջային օպերատորները ապահովում են զարգացման նոր հորիզոններ և անգամ փորձում են անցում կատարել 4G+ կապի ծառայություններին: Այնուհանդերձ, աշխարհում արդեն իսկ կան տեխնոլոգիական նորամուծություններ, որոնք թույլ են տալու անցում կատարել 5G<sup>146</sup> կապի, ինչը

<sup>145</sup> Amin H., Baba R., and Muhammad M., “An analysis of mobile banking acceptance by Malaysian customers” Sunway Academic Journal 4, Universiti Malaysia Sabah, 2007, p. 28.

<sup>146</sup> <http://www.pcmag.com/article/345387/what-is-5g>

հնարավորություն կտա ապահովել առավել մեծ հասանելիություն և համաշխարհային բջջային կապի տեխնոլոգիաների նոր սերունդն է իրենից ներկայացնելու:

Վերը նշվածով հանդերձ, առանձին զարգացող երկրներում, այդ թվում՝ նաև Հայաստանում, գոյություն ունեն նոր տեխնոլոգիաների յուրացման որոշ դժվարություններ, քանի որ հաճախորդները կարող են անփորձ լինել նոր տեխնոլոգիաների կիրառման բնագավառում և դրանց հարմարեցման համար վերջիններիս կապահանջվի որոշակի ժամանակ:

Դա է նաև պատճառներից մեկը, որ մեր հարցման արդյունքները ցույց տվեցին , որ ժամանակակից բանկային ծառայությունների մասին մարդիկ տեղյակ են, սակայն կիրառելու և օգտվելու առումով շատ ավելի պասիվ դիրքերում են գտնվում, իհարկե, դա կարելի է կապել նաև հաճախորդների բավարարվածության հետ, քանի որ նման ծառայություններից օգտվելուց հետո են միայն վերջիններս սկսում արժևորել իրենց ծախսած ժամանակը, հարմարավետությունը և այլն: Հայաստանում անգամ նման մոդելներ չեն ուսումնասիրվել, որոնք ցույց կտան ժամանակակից նորամուծական ֆինանսական ծառայությունների, ինչպես նաև բջջային բանկային ծառայությունների ներդրման և հաճախորդների բավարարվածության միջև գոյություն ունեցող կապը: Այսինքն՝ անգամ մեթոդաբանական առումով այստեղ առկա է լուրջ բաց, ինչպես նաև գիտական մոտեցումների կիրառման անհրաժեշտություն:

Օրինակ՝ կարևոր հետազոտական խնդիր է հանդիսանում այն, թե ի՞նչի կհանգեցնի Հայաստանում բջջային բանկինգի զարգացումը, ինչպես նաև ինչքանո՞վ դա կբավարարի բանկերի հաճախորդների պահանջմունքները: Բացի այդ, կարևոր նշանակություն ունի նաև բանկային ծառայություններից՝ հաճախորդների բավարարվածության վրա ազդող գործոնների հետազոտությունը: Մասնավորապես, գիտական հետաքրքրություն է ներկայացնում ֆինանսաբանկային տեխնոլոգիաների զարգացման ու բանկերում դրանց ներդրման և ֆինանսաբանկային հաստատությունների ծառայություններից հաճախորդների բավարարվածության միջև առկա կապի հետազոտությունը:

Ստորև մեր կողմից իրականացվել է հետազոտություն, որն ուղղված է վերը ձևակերպված խնդիրների լուծմանը:

Ակնհայտ է, որ բանկային համակարգում նոր տեխնոլոգիաների զարգացումն ու ընդլայնումը կախված է բազմաթիվ գործոններից: Հետևաբար, այս հետազոտության համար մեր կողմից առանձնացվել են չորս այդպիսի գործոններ՝

1. կազմակերպական գործոնը,
2. տեխնոլոգիական գործոնը,
3. ռազմավարական գործոնը,
4. տնտեսական գործոնը:

Խնդիր է դրված հետազոտել, վիճակագրական վերլուծության մեթոդների գործադրմամբ գնահատել այս գործոնների ազդեցությունը բանկերի կողմից մատուցվող նորարարական ծառայություններից հաճախորդների բավարարվածության մակարդակի վրա: Այսինքն, մեր կողմից առաջարկվելու է գնահատման մեթոդ, որում մի կողմից կդիտարկվեն վերը նշված 4 գործոնները, իսկ մյուս կողմից՝ բանկային նորարարական ծառայություններից հաճախորդների բավարարվածության մակարդակը:

Հաճախորդների բավարարվածությունը չափում է, թե ընկերության կողմից մատակարարված ապրանքը կամ ծառայությունը որքանով է համապատասխանել հաճախորդների ակնկալիքներին: Ըստ այդմ՝ դյուրին օգտագործման, անվտանգության, ցածր գործառնական ծախսումների, լայն կիրառական լուծումների հնարավորությունը բարձրացնում է հաճախորդների համար առանձին բջջային (շարժական) ծառայություններ մատուցող բանկերի հավելվածների օգտակարությունը և արժեքը: Բազմաթիվ հետազոտողներ, որոնք փորձ են արել աշխարհի տարբեր երկրներում ուսումնասիրել և, հատկապես, չափել հաճախորդների բավարարվածության մակարդակը, հանգել են մեկ հիմնական եզրակացության. հաճախորդների կողմից կարևորվում է արագ և հեշտ մուտքը դեպի իրենց բանկային հաշիվներ: Հաճախորդները ընդունում են նոր տեխնոլոգիա միայն այն պարագայում, երբ այն հեշտ է հասկանալ և կիրառել գործնականում: Այսինքն՝ դյուրին ընկալվելու պարագայում դրանց օգտակարության գործոնն ունի դրական ազդեցություն և ազդում է մարդու վարքագծի և մտադրության վրա, որպեսզի վերջինս սկսի օգտվել բջջային բանկային ծառայություններից:

Մինչ քանակական գնահատման արդյունքները ներկայացնելը, հարկ է անդրադառնալ դիտարկվող գործոնների բովանդակության վերլուծությանը:

### ***Կազմակերպական գործոն***

Մրցունակ կազմակերպություններն ակտիվորեն հարմարվում են իրենց փոփոխվող ներքին և արտաքին միջավայրերին: Ժամանակի ընթացքում նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում կազմակերպությունները պետք է փորձեն բարձրացնել շահութաբերությունը և ձեռք բերեն ճանաչում: Կազմակերպության չափերը, որոնք առնչվում են վերջինիս հզորության, մեծաթիվ անձնակազմի, հաճախորդների թվի, վաճառքի ծավալների, կապիտալի հետ, առանցքային դեր ունեն նոր տեխնոլոգիաների ներդրման և կազմակերպության գործունեության դաշտի ընդլայնման առումով: Սա նշանակում է, որ առևտրային բանկերի մեծությունն իր դրական ազդեցությունն ունի նոր տեխնոլոգիաների կիրառման տեսանկյունից: Հայաստանում այժմ ակտիվ կերպով ընթանում են բանկերի խոշորացման գործընթացներ, ուստի կարելի է ակնկալել, որ ապագայում աճ կարձանագրվի նաև վերջիններիս կողմից մատուցվող նորամուծական ֆինանսական ծառայությունների մասով:

Զուտ կառավարման տեսանկյունից կենտրոնացված որոշումների կայացման բացասաբար է ազդում նոր տեխնոլոգիաների ընդլայնման հարցում, իսկ ապակենտրոնացված որոշումների կայացումն օգնում է ի հայտ բերել ավելի ստեղծագործական և նորարարական գաղափարներ:

Այն բանկերը, որոնք ձևավորել են արդյունավետ գործող կազմակերպական կառուցվածք, ինչպես նաև ստեղծել են հզոր տնտեսական հենք, որի միջոցով կարող են մատուցել ժամանակակից տեխնոլոգիաների վրա կառուցված բանկային ծառայություններ, մրցակցային առավելությունների հասնելու ավելի մեծ հնարավորություններ ունեն:

Կազմակերպական գործոնն առնչվում է կազմակերպական կառուցվածքի, մշակույթի և կառավարման ոճերի, ինչպես նաև տեղեկատվական հոսքերի հետ, որոնք իրենց անմիջական ազդեցությունը կարող են թողնել կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների որակի և հաճախորդների թվի վրա:

Եթե կազմակերպության ներսում աշխատակիցները միմյանց հետ կիսվում են նոր գաղափարներով, ապա դա նշանակում է, որ ձևավորված է առողջ ներքին միջավայր,



քանի որ սոցիալական կապերը և գաղափարների ծնունդը նպաստում են առաջընթացին՝ լուծում տալով այն բոլոր հիմնախնդիրներին, որոնք անհատական մակարդակում բավականին դժվար են հաղթահարվում:

Կազմակերպական գործոնի նկարագրությունից ելնելով կարելի է ենթադրել, որ ավելի բարձր մակարդակի կազմակերպական ճկունությունը նույնացվում է շարժական բանկային ծառայությունների մատուցման հետ, որն էլ իր հերթին հանգեցնում է հաճախորդների բավարարվածության ավելի բարձր մակարդակի (հիպոթեզ 1՝ H1):

### ***Տեխնոլոգիական գործոն***

Թվային տեխնոլոգիաների արդի դարաշրջանում ընկերությունների համար տեխնոլոգիաների անընդհատ նորացումն ու կիրառումը բավականին թանկ է, որն էլ շատ ընկերությունների հնարավորություն չի տալիս տեխնոլոգիական մրցավազքի պայմաններում առաջատարի դիրք զբաղեցնել: Բարձրագույն տեխնոլոգիական նորարարությունները, որոնց միջոցով հնարավոր է կրճատել բարդ օպերացիաները, շահավետ են բջջային կամ շարժական բանկինգի համար, քանի որ բարձրացնում են հաճախորդների վստահության մակարդակը և գոհունակությունը: Տեխնոլոգիական նորամուծություններն առաջին հերթին կրճատում են մասնաճյուղերի ծառայություններ մատուցող անձնակազմը՝ դրանից բխող աշխատավարձային ֆոնդի տնտեսումներով, կրճատվում են նաև գրասենյակային պարագաների ծախսերը: Հիմնական ներդրումներն ուղղվում են համակարգչային ենթակառուցվածքների ստեղծմանը, որի միջոցով մի քանի SS հմուտ մասնագետներ ավտոմատ կերպով հսկողության տակ են վերցնում ամբողջ գործընթացը՝ խնայելով ժամանակ և գումարներ: Շարժական բանկինգի պարագայում կարևորվում են երկու հանգամանք. 1) ծառայություն մատուցող կազմակերպությունը իրականում կա, այսինքն՝ հաճախորդները նախքան կարևոր տեղեկատվություն տրամադրելը, վստահ են, որ շփվում են իրական բանկի հետ, 2) բանկը պետք է համոզված լինի և ստանա հաճախորդի ինքնության մասին տվյալներ՝ մինչև որևէ գործարք իրականացնելը: Այստեղ մեծ դեր է խաղում նորամուծությունների ներթափանցման տեսությունը, ըստ որի հարաբերական առավելությունը, համատեղելիությունը, բարդությունը, կիրառելիությունը այն ազդող գործոններն են, որոնք նպաստում են նորարարությունների տարածմանը:

Տեխնոլոգիական գործոնի նկարագրությունը թույլ է տալիս ենթադրել, որ տեխնոլոգիական նորարարությունների հենքի վրա շարժական բանկային ծառայություններին մատուցումը հանգեցնում է հաճախորդների բավարարվածության մակարդակի բարձրացմանը (հիպոթեզ 2՝ H2):

### ***Ռազմավարական գործոն***

Հաճախորդների հավատարմությունը և հաճախորդների պահպանումը կարևոր նշանակություն ունի կամայական կազմակերպության, այդ թվում նաև՝ բանկերի համար: Իսկ տեխնոլոգիական նորարարությունների այս մրցակցային դարաշրջանում հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման հարցերը մեծ կարևորություն և նշանակություն ունեն, քանի որ հաճախորդների վստահությունը ցանկացած բիզնեսի ողնաշարն է: Առանձին ռիսկերի չեզոքացումը, անվտանգության խնդիրների լուծումը, ներգրավված հաճախորդների իսկության բացահայտումը, ինչպես նաև անլար փոխանցման կամ գործարքների բոլոր փուլերում թույլտվությունների ճիշտ կիրառությունը շարժական բանկինգի առանցքային տարրերից են: Հարկ է նշել, որ շարժական բանկինգի դյուրին օգտագործումը, գործարքի անվտանգությունը և ճշգրտությունը, ժամանակի գործոնը, հարմարավետությունը, տարբեր անհատական ծառայությունների մատուցումը, տնտեսական օգուտները, ինչպես նաև հոգեբանական գործոնները նույնացվում են բանկային առցանց գործարքների իրականացման հետ:

Այս առումով, հաճախորդների պահպանմանը կամ ներգրավմանը միտված ռազմավարության նպատակայնությունն ու արդյունավետությունը հանգեցնում է բանկի շահութաբերության կամ շուկայական մասնաբաժնի մեծացման: Առանձին հետազոտողներ պնդում են, որ բանկային համակարգում ռազմավարության հիմնական տրամաբանությունը կառուցվում է բանկերի մրցունակությունը պահպանելու և հաճախորդների թիվն ավելացնելու վրա: Կարևորվում է նաև առկա հաճախորդների պահպանման մոտեցումը, որը, առանձին իրավիճակներում ավելի տնտեսող մոդել է, քան նորերի ներգրավումը: Նվիրված կամ «երկարաժամկետ» հաճախորդներն ավելի քիչ ժամանակ են պահանջում ընկերությունից և մեծ զգայունություն չունեն գնային փոփոխությունների նկատմամբ: Այսպիսով, հաճախորդների պահպանումը և հաճախորդ-

ների բավարարվածությունն այն երկու հիմնական առաջնություններն են, որոնք պետք է դրվեն ընկերության մշակվող հեռանկարային ռազմավարության հիմքում: Ռազմավարության մշակման ժամանակ առաջնային նշանակություն ունեն նաև սպասարկման որակը, մրցակցային տարբերություններն ու առավելությունները, բարձր շահույթը և/կամ մասնաբաժինը, ինչպես նաև ցածր գները:

Մյուս կողմից, սոցիալական և տեխնոլոգիական փոփոխություններ մեծ ազդեցություն ունեն բանկերի գործունեության արդյունավետության վրա, իսկ դա նշանակում է, որ տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության համակարգի զարգացումը ստիպեցին բանկերին զարգացնել ռազմավարական մարքեթինգի գործիքների կիրառումը, քանի որ այս դաշտում, առանց վերջիններիս կիրառության, մրցակցային առավելությունների հասնելը գրեթե անհնար է:

Ռազմավարական գործոնի նկարագրությունից կարելի է ենթադրել, որ արդյունավետ հաճախորդամետ ռազմավարության մշակումը նույնացվում է բջջային կամ այլ շարժական բանկային ծառայությունների մատուցման հետ, որն էլ, իր հերթին, հանգեցնում է հաճախորդների բավարարվածության ավելի բարձր մակարդակի (հիպոթեզ 3՝ H3):

### ***Տնտեսական գործոն***

Տեխնոլոգիական առաջխաղացման կարևոր գործոններից է տնտեսական գործոնը: M-առևտրի (m-commerce) տարատեսակը հանդիսացող բջջային (շարժական) բանկային սպասարկումը նպաստում է նաև ծախսերի կատարման արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես, շարժական բանկինգը, ի տարբերություն ավանդական բանկային ծառայությունների, հաճախորդներին թույլ է տալիս կրճատել սպասարկման վրա կատարվող ծախսերը, որն էլ իր հերթին հանգեցնում է արդյունավետության աճի: Մյուս կողմից, տնտեսական գործոնը խթան է նաև բանկերի համար, որպեսզի վերջիններս օգտագործեն նորագույն տեխնոլոգիաները նոր հաճախորդներ ներգրավելու, ինչպես նաև շահույթի մարժան մեծացնելու համար: Տեխնոլոգիաների վրա հիմնված նորարարական ծառայությունների մատուցումը կարող է ծախսատար լինել բանկի համար, քանի որ պահանջում է համակարգիչների ցանցային ծածկույթի և հմուտ աշխատողների առկայություն: Սակայն բջջային տեխնոլոգիաներն

ունեն առավելություն մյուս նորարարությունների համեմատությամբ, քանի որ վերջինիս գործունեության համար առկա են համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք ստեղծվել են հեռահաղորդակցության ընկերությունների կողմից և հեշտությամբ կարող են տրամադրել բանկերին իրենց ծառայությունները մատուցելու համար:

Հարկ է նկատել, որ բջջային բանկային տեխնոլոգիաների ներդրումը միշտ չէ, որ բերում է շահույթի ավելացման, քանի որ այն առավել հաճախ հանգեցնում է ծառայությունների գների նվազեցման: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բջջային բանկինգի կիրառումը կրճատում է այնպիսի ծախսեր, ինչպիսիք են՝ գործարքային, վարչական և առաջնորդման ծախսերը: Տնտեսական ծախսերը մեծ դեր ունեն տեխնոլոգիաների կիրառության նպատակահարմարության վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Շատ են դեպքերը, երբ մեխ թվով առաջադեմ տեխնոլոգիական լուծումներ ձախողվում են՝ բարձր գործառնական ծախսերի պատճառով: Այսպիսով՝ այն տեխնոլոգիաները, որոնք պահանջում են նվազագույն ծախսեր, հեշտությամբ կիրառվում և արագ ընդունվում են հաճախորդների կողմից:

Փաստը է, որ հաճախորդների բավարարվածության բարձրացումը նշանակում է ծախսերի կրճատում, իսկ մյուս կողմից հաճախորդների բավարարվածությունը բիզնեսի շահութաբերությունը բարձրացնող գործոններից:

Վերը նշվածը հաշվի առնելով, կարելի է ձևակերպել ստուգման ենթակա նոր ենթադրություն՝ համեմատաբար բարձր տնտեսական ծախսերը հանգեցնում են բջջային բանկային ծառայություններից հաճախորդների բավարարվածության ցածր մակարդակի (հիպոթեզ 4՝ H4):

Գործոնների նկարագրությունից ու հիմնական ենթադրությունների ձևակերպումից հետո հարկ է հստակեցնել մեր կողմից առաջարկվող գնահատման մեթոդի հիմնական տրամաբանությունը:

Այսպես, առաջարկվող մեթոդով մի կողմից դիտարկվում է բանկային նորամուծական ծառայություններից հաճախորդների բավարարվածության մակարդակը: Իսկ մյուս կողմից՝ վերը նկարագրված գործոնները, որոնք, իրենց հերթին, բնութագրում են բանկի կողմից նորամուծական բանկային ծառայությունների ներմուծման ու կիրառման առանձին ասպեկտները: Այսինքն, առաջարկվող մեթոդով

փորձ է արվում գնահատել նորագույն բանկային ծառայությունների առանձին ասպեկտները նկարագրող գործոնների ու բանկային ծառայություններից հաճախորդների բավարարվածության աստիճանի փոխկապվածությունը:

Իհարկե, պետք է նշել նաև, որ նշված գործոնների վերաբերյալ այս գլխի առաջին ենթահարցի շրջանակներում անցկացվել են հարցումներ, այդ իսկ պատճառով մեր կողմից ներկայացված գնահատման մեթոդն ունի որակական ուղղվածություն, քանի որ ընդգրկում է հարցման արդյունքները: Իհարկե, հարցման արդյունքներն ավելի մեծ կիրառական նշանակություն կունենային, եթե օգտագործվեր նաև Ռենսիս Լայկերտի<sup>147</sup> կողմից առաջարկվող վարկանիշային սանդղակով հարցումների սխեման, սակայն վերջինիս կիրառման բարդության պատճառով ավելի պարզ հարցման մեխանիզմ կամ սխեմա է կիրառվել՝ պարզապես «համաձայն եմ» կամ «համաձայն չեմ» պատասխաններով:

Այժմ փորձենք նաև գծապատկերի միջոցով ներկայացնել առաջարկվող գնահատման մեթոդի հիմնական տրամաբանությունը, որ հնարավորություն է տալիս պատկերացնել առանձին գործոնների ու հաճախորդների բավարարվածության միջև առկա կապերը:

Ընդհանուր առմամբ, մեր կողմից ներկայացված գործոնները կարող են գերակա գտնվել այս կամ այն երկրի կամ կոնկրետ բանկի համար, սակայն գնահատման մեթոդի հիմնական տրամաբանությունը դրանից չի խախտվում, քանի որ բացառությամբ տնտեսական գործոնի, մյուս բոլոր գործոններն անմիջական ազդեցություն են ունենում հաճախորդների գոհունակության վրա:

Այստեղ առանձին երկրների կամ բանկերի քաղաքականությունը պետք է հիմնվի թույլ գործոններն ուժեղացնելու վրա, օրինակ, եթե հաճախորդների բավարարվածությունը տուժում է ռազմավարության թույլ լինելու արդյունքում, ապա հարցումները և գնահատման մեխանիզմը դա ցույց կտա, հետևաբար անհրաժեշտություն կառաջանա մշակել նոր հաճախորդակենտրոն ռազմավարություն:


Հետազոտվող փոփոխականների վերաբերյալ հավաքագրված վիճակագրական տվյալների հիման վրա մեր կողմից իրականացվել է նաև որոշ գործոնային

<sup>147</sup> Norman, Geoff (2010). “Likert scales, levels of measurement and the “laws” of statistics”. Advances in Health Science Education. Vol 15(5) pp. 625-632.

վերլուծություն: Վերջինները կարելի է դիտարկել որպես բանկային գործունեության առանձին ռազմավարությունների առանցքային բնութագրիչներ:

Գծապատկեր 3.2.1

**Առաջարկվող գնահատման մեթոդի քայլերի հաջորդականությունն  
ըստ գործոնների**



Այսպես, գծապատկերի 3.2.1.-ում ներկայացված գործոնների հիման վրա կարելի է առանձնացնել բանկային նորամուծական ռազմավարության երկու տարբեր մոդելներ, որոնցից առաջինն աչքի է ընկնում տեխնոլոգիական, ռազմավարական, հաճախորդների բավարարվածության ու տնտեսական գործոնների ակտիվ դերակատարմամբ: Իսկ մյուս ռազմավարությունում առանցքային դերակատարում ունի կազմակերպական գործոնը:

Գործոնների առաջին խումբը պայմանականորեն կարելի է անվանել «բիզնես գործոններ», երկրորդը՝ «գործառնական գործոններ»: Ըստ այդմ էլ, առանձնանում է բանկային նորամուծական ռազմավարության երկու մոդել՝ բիզնես մոդել և գործառնական մոդել:

Ներկայացված մեթոդով վերլուծված արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում բանկային նորամուծական ֆինանսական ծառայությունները ունեն լուրջ զարգացման հեռանկարներ: Իհարկե, դրան դեռևս խոչընդոտում են սոցիալ-տնտեսական

հիմնախնդիրները, ֆինանսական գրագիտության անբավարար մակարդակը և այլն, սակայն փաստը մնում է այն, որ ապագայում լուրջ քայլեր է հարկավոր անել այս ուղղությամբ՝ համաշխարհային ֆինանսական համակարգի զարգացմանը համահունչ ընթանալու համար: Բջջային բանկինգը, ինչպես նաև օնլայն կամ առանձին հավելվածների միջոցով մատուցվող բանկային ծառայությունները շատերի համար նոր կատեգորիաներ են, իսկ դա նշանակում է, որ հայ սպառողներից կպահանջվի որոշակի ժամանակահատված դրանց հարմարվելու, ինչպես նաև հետագայում դրանց արդյունքները զգալու պարագայում այդ ծառայություններից բավարարված լինելու համար: Մարդիկ ցանկանում են տեխնոլոգիաները ծառայեցնել իրենց կյանքի որակը բարձրացնելու համար, իսկ բանկային համակարգի հետ առնչվելով՝ ցանկանում են ստանալ արդյունավետ և արագ, ինչպես նաև հեշտ հասկանալի և օգտագործման տեսանկյունից դյուրին ծառայություններ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների մշակման, ներդրման և դրանց արդյունավետ գործարկման տեսանկյունից կարևորվում է միջազգային առաջավոր փորձի ներդրումը, ինչպես նաև հասարակության ֆինանսական գրագիտության և ներգրավվածության մակարդակի բարձրացումը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը և այլն:

Կատարված հետազոտությունների ու վերլուծությունների, ինչպես նաև թեմայի հիմնական արդյունքների շրջանակներում հանգել ենք մի շարք եզրակացությունների, ինչպես նաև վերջիններից բխող առաջարկությունների.

- Համաշխարհային ֆինանսական շուկայում, ինչպես նաև բանկային համակարգում մղվող կատաղի պայքարը ստիպում է անընդհատ կատարելագործել ֆինանսական գործիքները և մատուցվող նորարական ծառայությունները, իսկ ժամանակակից բանկային համակարգերի զարգացումն առանց ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների շրջանակներում առաջարկվող նորամուծությունների կիրառության պատկերացնելը գրեթե անհնար է:

- Առաջիկա տարիներին բանկերն իրենց մրցունակության բարձրացման գործում շեշտադրում են անելու տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով առաջարկվող ֆինանսական նորաստեղծական ծառայությունների վրա, այսինքն՝ վերաձվելու են ոչ միայն ֆինանսական այլ նաև՝ նորամուծական-տեխնոլոգիական կազմակերպությունների:

- Համաշխարհային տնտեսական համաժողովի ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ սկսվել է բացասական տոկոսադրույքների ժամանակաշրջանը, իսկ դա հանգեցնում է որոշակի ֆինանսական վերադասավորումների: Սակայն խնդիրներից մեկն այն է, որ դա տանում է նաև նրան, որ տնտեսությունը խթանելու և աճ ապահովելու գործիքները դառնում են սահմանափակ և անգամ շրջանառության մեջ առկա ազատ ֆինանսական ռեսուրսները ներդրումների չեն վերաժվում:

- ՀՀ տնտեսությունում, այնպես էլ բանկային համակարգում անհրաժեշտ է մշակել զարգացման որակապես նոր մոտեցումներ և մոդելներ, որտեղ ներդնելով նորամուծական տնտեսության բաղադրատարրեր՝ վերջիններս հանդես կգան որպես



տնտեսական վերափոխումների գլխավոր գործոն: Նորամուծությունները պետք է թափանցեն ամբողջ տնտեսության մեջ, իսկ բանկերի վարկավորման պորտֆելում մեծ տեսակարար կշիռ պետք է ունենան ոչ թե սպառողական վարկերը, այլ նորամուծական ապրանքների և ծառայությունների ստեղծմանն ուղղված վարկավորումը՝ տնտեսությանը հաղորդելով գիտելիքահենք և նորամուծական զարգացման ուղղվածություն:

